



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1909

1910

1911

1912

1875

205



2011

84
7-60

Ա. ՏԻՒՄԱ

ՊՐԱԺԼՈՆ ԳԵՐԿՈՄՍ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

Մ. ՄԱՄՈՒԻՔԵԱՆ

ՀԱՏՈՐ ՈՒԹԵՐՈՐԴ

ՏԵՐ ԵՒ ՀՐԱՏԱՐԱԿԻՑ

ՅԻԳՐԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ ՑԵՑԵԱՆ

ԶՄԻՒՌՆԻԱ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ՑԵՑԵԱՆ

— 1874 —

ՊՐԱԺԼՈՆ ԳԵՐԿՈՄՍ

Ա.

ՏԵՐԴԱՆԵՍՆ Ի՞՞ՉՊԻՍ ԿԿԵՏԱՐԻ ԹԱԳԱԽԱՐԻՆ
ՅԱՆՉԱԾՈՒՅՆ

Մինչդեռ թագաւորն այս վերջին տնօրէնութիւնները կ'ընէր
Ճշմարտութեան համնելու համար , ա՛Արդանեան՝ առանց բողէ մը
կորուսելու՝ ախոռը կ'վազէր , լապտերը պատէն վար կ'առնուր ,
ինքն անձամբ ձին կ'թամբէր , և թագաւորին նշանակած կողմը
կ'զիմէր :

Իր խոստման համեմատ՝ ոչ մարդ տեսեր և ոչ հանդիպեր էր ,
և ինչպէս արդէն ըսկնք , այնքան խղճահար եղեր էր այս մասին
որ՝ առանց ախոռապաններու և ձիազարմաններու օջնութեան պէտք
եղածն ըրած էր :

Տ'Արդանեան՝ այն անձանց կարգէն էր , որ դժուարին պարա-
գաներու մէջ՝ իրենց յատուկ արժեքը կրկնապատկելու պարձեն-
կոտութիւնն ունին :

Հինգ վայրկեան արշաւելով՝ անտառը հասաւ , իր հանդիպած
առաջին ծառին կապեց ձին , և սաբով մինչեւ բացատը մտաւ :

Այն ատեն սկսաւ հետիոտն , և լապտերը ձեռքը բռնած բռ-
լորակին ամէն մակերեսոյթը դառնալ . զնաց , եկաւ , չափեց , քըն-
նեց , և կէս ժամ այս խուզարկութիւնն ընելէն ետե՝ լոիկ մնջիկ
իր ձին առաւ և գօնդէնալո դաբձաւ ծանրաքայլ և խորհելով :

Լոի՝ իր դահճին մէջ կ'սպասէր . միայնակ էր , և թղթի մը
վրայ մատիսով՝ զիծեր կ'քաշէր , ա՛Արդանեան առաջին նայուած-
քով տեսաւ որ անհաւասար և քերթուած տողեր էին :

Ասկից հետեցուց որ ոտանաւորներ պիտի լինեն :
 Գլուխը վերցուց թաղաւորն և ա'Արդանեանը տեսաւ :
 — Լաւ ուրեմն, սպարոն — ըստ նա — միթէ ինձ լուրեր կը
 բերեմ :
 — Այս, Վեհափառ տէր :
 — Ի՞նչ տեսար :
 — Աւասիկ հաւանականութիւնը, Վեհափառ տէր — ըստ
 ա'Արդանեան :
 — Ես քեզնէ ստոյդ տեղեկութիւններ սպահանջեր էի :
 — Որչափ կարենամ ճշմարտութեան սիստի մօտենամ . իմ՝ ը-
 րած հետազօտութեանց համար օդը շատ նպաստուր էր . այս
 իրկուն անձքեց և ճամբաները թրջած էին . . . :
 — Խնդրոյն գանք, Պ. ա'Արդանեան :
 — Վեհափառ, դոք ըսեր էիք ինձ որ Ռօշէնի անտառակինն
 քառուղին մէջ մոռած ձի մը կայ . ուստի նախ ճամբաները զննե-
 լու սկսայ :
 Ճամբաները կ'ըսեմ, վասն զի քառուղին կերպնը չորս ճամ-
 բով կ'հանի մարդ :
 Իմ՝ բանած ճամբաս միայն նորակոխ հետքեր ուներ : Երկու ձի
 իրարու մօտ ճամբէն քալած են . կաւին վրայ իրենց ուժ ուղին
 որոշակի դրոշմուած էին :
 Զիաւորներէն մին միւսէն աւելի կ'արտորար : Միոյն քայլերը
 միւս ձիուն կէս երկայնութեամբն ընդ առաջ են :
 — Աւելին սանցի ես որ երկուքնին միասին գացած են — հար-
 ցուց թաղաւորը :
 — Այս, Վեհափառ : Զիերն երկու մեծ կենդանիներ են նմա-
 նափայլ, մարզի վարժ ձիեր, վասն զի կանոնաւոր շեղ զծով գար-
 ձան բոլորակին սպասնէ շը :
 — Ապօ, սպարոն :
 — Անդ, ձիաւորները պահ կայ առին անշուշտ սպայքարին
 սպայմաններն որոշելու . ձիերն անհամբէր էին : Զիաւորներէն մին
 կ'խօսէր, միւսը մասիկ կ'ընէր և պատասխան տալով կ'շատանար :
 Կը ձին ոտքովը հողը կ'քերէր, և այս ապացոյց մ'է որ մտա-
 դրութիւն ընելու գրաղած լինելով, սանձն արձակ կ'թողուր :

— Աւրեմն սպայքար մը տեղի ունեցած է :
 — Անտարակիոյս :
 — Շարունակէտ հիտող մ'ես :
 — Զիաւորներէն մին նոյն տեղը կեցաւ, մտիկ ընողը . միւսը
 բայատէն անցաւ, և նախ զնաց իր հակառակորդին դիմացը կե-
 ցաւ : Այն ատեն իր տեղին շշարժողն արշաւակի անցաւ բոլորա-
 կէն անոր երկու երրորդ լայնին առնլով, և կարծէր թէ իր
 թշնամոյն վրայ կ'քալէ, բայց միւսն անտառին բոլորակին հե-
 տեսեր էր :
 — Անունները չդիտես, այնպէս չէ :
 — Բնաւին, Վեհափառ : Միայն անտառակին բոլորակին հե-
 տեսողը սև երիվար մը կ'հեծնէր :
 — Ի՞նչպէս իմացար այդ բանը :
 — Իր պոչին մէկ քանի մազերէն որ փոսն եզրուղ մացառներուն
 վրայ մնացեր էին :
 — Շարունակէտ :
 — Իսկ միւս երիվարին գալով, դժուարութիւն չկրեցի զայն
 քննելու, վասն զի պատերազմի գաշտին վրայ տապաստ ընկեր մե-
 ռեր էր :
 — Եւ այդ ձին ինչի՞ մեռեր է :
 — Գնդակէ մը զսր քունքը ծակիեր է :
 — Այդ զնդակը հրացանակի՞ թէ ոչ հրացանի զնդակ մ'էր :
 — Հրացանակի մը : Վեհափառ : Ասկէ զատ՝ խոտին վրայ ա-
 նոր քայլափոխը տեսայ :
 — Սեւ ձիո՞ն քայլափոխը :
 — Այս, Վեհափառ :
 — Շարունակէտ, Պ. ա'Արդանեան :
 — Հիմակ որ Զեր Վեհափառութիւնն երկու հակառակորդաց
 զիրքը կ'անմնէ, պէտք է որ կայ առնող ձիաւորը թողում ար-
 շաւակի անցնող ձիաւորին վրայ խօսելու համար :
 — Խօսէ :
 — Սրացող ձիաւորին ձին մէկ հարուածով սպաննուեցաւ :
 — Աւմտի՞ դիտես այդ բանը :

— Զիտորը վար իջնելու տակն չդառ և ձիուն հետ վար ընկաւ : Ասոր սրուճքին հետքը տեսայ, զոր ձիուն տակէն մեծ ջղովլ քաշեր էր : Բիաբ, կենդանացն ծանրութենէ ճնշուելով, հողն ակուեր էր :

— Լու, և ի՞նչ ըրաւ ոտք ելնելով :

— Շիտակ իր հակառակորդին վրայ քաղեց :

— Որ միշտ անտառին եղեցքը կ'զանուէր :

— Այս, Վեհափառ : Յետոյ բաւական մօտենալէն ետեւ հասատապէս կաց առաւ, իր երկու կրուկներն իրարու մօտ նշանակուած են . կրակ ըրաւ և ոսովին չկրցաւ զարնել :

— Ուսկից գիտես որ չկրցաւ զարնել :

— Իր զլիսարկը զտայ զնդակէ մը ծակուած :

— Ա՛չ, ատացոյց մը — գուշեց թագաւորը :

— Անբաւական է, Վեհափառ — պատասխանեց ա'Արդանեան պաղութեամբ — անդիր, անդրոշմ զլիսարկ մ'է . նոյն իսկ ժապաւէնը յատուկ բան մը չտնի :

— Եւ միթէ ծակուած զլիսարկով մարդն իր երկրորդ հրացանակը պարաբեց :

— Ա՛չ, Վեհափառ, իր երկու հրացանակներն արդէն պարսպէր էր :

— Այդ ի՞նչպէս իմացար :

— Հրացանակին խծուծները զտայ :

— Եւ այն զնդակին որ ձին չսպանեց ի՞նչ եղաւ :

— Հրացանակին որու որ ուղղուած էր անոր զլիսարկին փետուրը կարեց և բացատէն անդին զնաց ցարասի մը խորսակեց :

— Ուրեմն մե ձիով մարդը զինաթափ էր, մինչդեռ իր ոսովին երկու հրացանակ ես պիտի քաշեր :

— Վեհափառ, երբար ձիէն ընկնուղ ձիւուրն ոտք կ'ելնէր, միւսն իր զէնքը կ'լեցնէր : Միայն շատ այլայլած էր զայն լեցնելու ատեն ձեռքը կ'զողար :

— Ի՞նչպէս իմացար այդ բանը :

— Վառօղին կէսը գետին թափեր էր, և ձողը վար նետեր էր, հրացանակին անցընելու ժամանակ չունենալով :

— Պ, ա'Արդանեան, այդ ըսածդ պանձէլի է :

— Գիտողութիւն մ'է միայն, Վեհափառ, և ամենէն աննշան սուսերամարտը նոյն բանը պիտի դիտէր :

— Միայն խօսքդ մտիկ ընողն ինքվինքը տեսարանին ներկայ կը կարծէ :

— Արդարե մտիս մէջ յօրինեցի զայն, փոքր ինչ տարբերութեամբ :

— Այժմ վար ընկնող ձիւուրին դաւնանք : Ա'ըսէիր թէ իր ոսովին վրայ կ'քալէր մինչդեռ այս իր հրացանակը կ'լեցնէր :

— Այս, բայց այն միջոցին որ ինքն ալ նշան կ'առնուր, միւսը քաշեց :

— Ա՛չ — ըրաւ թաղաւորը — հապա զնդակը :

— Սոսկալի եղաւ հարուածը . վար ընկնող ձիւուրը զայթելով երեք քայլ առնլէն ետեւ երեսի վրայ ընկաւ :

— Ա՛ր կողմէն զարնուեր էր :

— Երկու կողմէ . նախ աջ ձեռքէն, ասրա նոյն հարուածով կուրծքէն :

— Բայց դու ի՞նչպէս կարող եղաւ զուշակել այդ բանը — հարցուց թագաւորը սքանչայմամբ լի :

— Ա՛չ, շատ պարզ է . հրացանակին բունը բոլորովին արիւնաթաթաւ էր, և անոր վրայ զնդակին հետքը կ'տեսնուէր խորտակուած ձողի մը բեկորներով : Ձետեալէս՝ շատ հաւանական է որ, վիրաւորը մատանոց մատն ու ծկոյթը կորուսած է :

— Այդ ըսածդ ձեռքին կ'վերաբերի, հապա կուրծքը :

— Վեհափառ, իրարմէ երկուք ու կէս ուաք հեռու երկու աշխինաշեղջ կար : Միոյն մօտ խոտը կարկամեալ ձեռւքը խլուած էր, միւսին մօտ խոտը միայն մարմնոյն ծանրութենէ ճզմուած էր :

— Խեղջ կիշ — յարեց թագաւորը :

— Ա՛չ, միթէ Պ. Կիշն էր — ըսաւ հրացանակիրը հանդարտութեամբ : — Կասկածէր էի այդ բանը, բայց չէի իշխեր Զեր Վեհափառութեան ըսել :

— Եւ դու ի՞նչպէս կ'կասկածէիր :

— Արամնեանց զինագրոշմը ճանչեր էի հրացանակի խորշերուն վրայ :

— Եւ միթէ կարծե՞ս թէ ծանրապէս վլբաւորուած է :

— Ըստ ծանր, քանի որ հարուածէն խկցին ընկած և նոյն տեղն ընդ երկար մնացած պիտի լինի. սակայն կարող եղեք է քալել երկու բարեկամոց աջակցութեամբը :

— Ուրեմն անոր հանդիպեցա՞ր երրոր կ'գառնար :

— Ա'չ, բայց երեք մարդու քայլափոխը դիտեցի. աջ կողմի և ձախ կողմի մարդն աղատօրէն և դի բաւ կ'քալէին, բայց մէջ տեղինը ծանր քալուած մ'ունէր : Ասէ՛ զատ՝ իր քայլափոխին վրայ արեան հետքեր կ'աեսնուէին :

— Այժմ, պարոն, որ այլ չափ լաւ դիտեր ես պայքարն և մանր պարագայ մ'անդամ աչքեր չէ վրիպեր, երկու խօսք ըսէ ինձ սոսիին վրայ :

— Ա'չ, Վեհափառ, զանի չեմ ճանչեր :

— Սակայն դու ամէն բան շատ քաջ դիտեր ես :

— Այս, Վեհափառ — ըստ ա'Արդանեան — ամէն բան կը տեսնեմ, բայց ամէն տեսածս չեմ ըսէր, և քանի որ թշուառական մարդը խոյս տուեր է, թուղ Զեր Վեհափառութիւնը ներենձ ըսելու որ անոր մասնատն չպիտի լինիմ :

— Եւ սակայն յանցաւոր մ'է, պարոն, այն որ կ'մենամարտի :

— Ի հարկէ, Վեհափառ, բայց, ըստ իս, դիտէք որ լաւ կրուռը մարդ մը քաջ մարդ մ'է : Այս է իմ կարծիքս : Գուք կրնաք ու իշել կարծիք ունենալ, բնական է, գուք ինքիշխան էք :

— Պ, ա'Արդանեան, սակայն հրամայեցի . . . :

Տ'Արդանեան յարդմամբ մը թագաւորին խօսք ընդդիւց :

— Վեհափառ, պայքարի մը վրայ տեղեկութիւններ ստանալու համար ուղարկեցիք զիս. այդ աեղեկութիւնները ձեզի հաշորեցի : Եթէ հբամայէք որ Պ, սիշի սոսիը ձերբակալ ընեմ, պիտի հնաղանդիմ. բայց մի հբամայէք ինձ որ զանի բերան տամ, վասն զի այս անդամ չպիտի հնաղանդիմ :

— Լաւ ուրեմն, ձերբակալ ըրէ զանի :

— Անոնը տուէք, Վեհափառ :

Լուի ոտքութեալ զետինը զարկաւ :

Ապա պահ մը խորհելէն ետե,

— Տասն, քսան, հարիր անդամ իրաւունք ունիս — ըստ նա :

— Այդ է իմ կարծիքս ալ, Վեհափառ. ուրախ եմ որ դուք ալ նոյն կարծիքէն էք :

— Ուրիշ հարցում մ'ունիմ . . . : Ո՞վ օգնեց Պ, սիշին :

— Չպիսեմ :

— Բայց երկու մարդու խօսք ըրիբ . . . ուրեմն վկայ մը կար :

— Վկայ չկար : Այս բաւական չէ . . . Պ, սիշ երբ մի անդամ ընկաւ, իր սսիւը խոյս տուաւ աւանց անոր օգնութեան համելու :

— Թշուա՛ը :

— Երարի, Վեհափառ, ձեր հրովարտակներուն արդիւնքն է :

Երարու դէմ քաջարար կոտեցան, առաջին անդամ՝ մահուանէ աղասիցան, երկրորդէ մ'ալ խոսափիլ կ'ուզեն : Պ, զուգվելի յիշատակը մոռցուած չէ . . . կրող :

— Եւ այն ատեն վատ կ'գառնան :

— Ա'չ, խոչեմ կ'գառնան :

— Ուրեմն խոյս տուաւ :

— Այս, և այնչափ արագութեամբ որչափ որ ձին կ'զօրէր :

— Եւ ո՞ր կրզին :

— Գղեկին կողմէն :

— Ապա :

— Ապա, պատիւ ունեցայ յայսնել Զեր Վեհափառութեան որ երկու հետիսան մարտիկ եկան սոյն սիշը :

— Ի՞նչ ապացոյց ունիս որ այս մարդիկ կուռէն ետք եկած լինին :

— Ա'չ, ակներեւ աստացոյց մը . պայքարին ատենն անձրել նոր գաղրեր էք, հողը զեռ ևս զայն չէք ծծած և խոնաւ զարձեր էք. ոստիքը զետինը կ'իրին, բայց պայքարէն ետք՝ Ճիշտ այն միջոցին որ Պ, սիշ մարած մնացեր էք, երկիրը սինդացեր էք և քայլափոխներն այնքան խորունկ չողին գրոշմուեր հողին վրայ :

Լուի իր ձեռքն իրարու զարկաւ զարմացման ՚ի նշան :

— Պ, ա'Արդանեան — ըստ — Ճշմարիտը, ուու իմ թագաւորութեանս ամենէն Ճարպիկ մարդն ես :

— Այդպէս կ'մասձէք նաեւ Պ. Ռիշլէօ , նոյնը կ'ըսէր և Մազարէն , Վեհափառ :

— Այժմ կ'մնայ մեղ նայիլ թէ արդեօք խորագիտութիւնդ քեզ ցվերջ պիտի օդնէ :

— Ո՛չ , Վեհափառ , Հարդու կ'սեալ . ուրաքանչ կատառաւ է — ըստ հրացանակիրը փիլիսոփայօրէն :

— Աւրեմն դու մարդկութեան անդամը չես , Պ. ա՛Յրդանեան , վասն զի կարծեմ թէ երբէք չես սխալիր :

— Զեր Վեհափառութիւնը կ'ըսէր թէ այդ ալ պիտի փորձէք :

— Այո՞ :

— Ի՞նչպէս պիտի փորձէք , խնդրեմ :

— Մարդ զրկեցի որ Մանկքանը կանչեն , և Պ. Մանիքան հիմակ պիտի դայ :

— Եւ միթէ Պ. Մանիքան դաշտնիրը դիմէ :

— Կիշ , Մանիքանի համար դաշտնիր մը չունի :

Տ'Արդանեան դլուխը ցնցեց :

— Կ'կրկնեմ որ ոչ ոք ներկայ էր սպայքարլին , և միայն թէ Պ. Մանիքան զինքն առնող բերող մարդոց մին չլինի . . . :

— Կոռթիւն — ըստ թագաւորը — աւասիկ Պ. Մանիքան կ'զայ . այդ տեղ կեցիր և ականջ դիր :

— Չատ աղէկ , Վեհափառ — ըստ հրացանակիրը :

Եւ նոյն վայրկենին՝ Մանիքան և Սէնդ-Խնյան դրան սեմն վրայ երեցան :

Բ

Թագաւորը նշմայր մ'ըրաւ հրացանակիրին , և նոյնպէս Սէնդ-Խնյանի :

«Նշմայրը հրամայական էր և կ'նշանակէր .

— Զեր կենաց վրայ , ըստ կեցիք :

Տ'Արդանեան զինորի մը պէս դահլձին անկիւնը քաշուեցաւ : Սէնդ-Խնյան՝ իրեւ մտերիմ , թագաւորին թեաթուին յենակին կոմնեցաւ :

Մանիքան՝ աջ ոտքն ընդ առաջ , ժպիտ ՚ի շուրթս , ձեռներն սպիտակ և շնորհալի , յառաջ անցաւ որ թագաւորին առ ջեւ խոնարհի :

Թագաւորը բարեն առաւ դլամիք :

— Բարի իրկուն , Պ. Մանիքան — ըստ նա :

— Զեր Վեհափառութիւնը պատի ըրաւ դիս կոչելու — ըստ Մանիքան :

— Այո՞ , որպէս զի Կիշ կոմակն պատահած ցաւալի դիպուածին բոլոր պարագաներն իմանամ :

— Ո՛չ , Վեհափառ , աղէտալի՛ է :

— Միթէ ներկայ էիր :

— Ո՛չ բոլորպին , Վեհափառ :

— Բայց դիպուածը պատահելեն քանի մը վայրկեան ետք հասր , այնպէս չէ :

— Այդպէս է , այո՞ , Վեհափառ , դրեթէ կէս ժամ վերջը :

— Եւ այդ դիպուածն ուր տեղի ունեցաւ :

— Կարծեմ , Վեհափառ , այն վայրն որ Ռօշէնի անտառին քառողին կ'կոչուի :

— Այո՞ , որտորդաց ժամագրութեան վայրը :

— Ճիշտ այդպէս , Վեհափառ :

— Լաւ ուրեմն , այդ գժբաղդութեան վրայ պիտցածդ պատմէնձ , Պ. Մանիքան : Պատմէ :

— Թերեւ Զեր Վեհափառութիւնը տեղեակ է , և կ'երկնչիմ որ կրկնութիւններով չտաղակացնեմ :

— Ո՛չ , մի երկնչիր :

Մանիքան իր բոլորտիքը նայեցաւ . ա՛Յրդանեանը տեսաւ որ վայտակերտին կոմնած էր հանդարա , բարեյօժար , և միամիտ կերպարանով , և Սէնդ-Խնյանն որու հետ եկեր էր , որ միշտ թագաւորին աթուին յենած էր նոյնպէս շնորհալի դէմքով մը :

Աւստի որոշեց խօսելու :

— Զեր Վեհափառ թիւնը զիտէ : — ըստ նա — որ որսորդութեան ատեն գիտուածներ յաճախ կ'պատահին :

— Որսորդութեան :

— Այս, Վեհափառ, կ'ողեմ գարանի որսորդաց ըսել :

— Հա, հա — ըստ թաղաւորը — միթէ այս գիտուածը գարանակալութեան ատեն պատահեցաւ :

— Անտարակոյս, Վեհափառ — համարձակեցաւ ըսելու ֆանիքան — միթէ Զեր Վեհափառ թիւնն անդէմ էր այս մասին :

— Գրեթէ — ըստ թաղաւորին իսկոյն, վասն զի Լուի ժողուած խօսելու չէր ախորդեր — ուրեմն որսորդաց գարանակալութեան ատեն պատահեցաւ, կ'ըսէիր, այդ գիտուածը :

— Ափոնս, այս գժբաղդաբար, Վեհափառ տէր :

Թաղաւորը կանկ մ'առաւ :

— Ո՞ր տեսակ կենդանւոյ դարանակալ — հարցուց թաղաւորը :

— Վարազի, Վեհափառ :

— Եւ Պ. Կիշն ի՞նչ խելքով այդպէս միայնակ վարազն ՚ի զարան բռնելու կ'երթար, այդ գեղացիի զլուսանք մ'է, այդ պատշաճ է, շատ շատ՝ այն մարդուն համար, որ մարեշալ Կրամօնի պէս՝ շուն և պահապան չունի իբրև ազատորդի յորս ելնելու համար :

Մանիքան ուսերին ամփոփեց :

— Երիտասարդութիւնը յանդուդն է — ըստ նա վճռական կերպով մը :

— Վերջապէս . . . շարունակէ — ըստ թաղաւորը :

— Այս իրաւ է — շարունակեց Մանիքան, չհամարձակելով անելի յառաջ զնալ, ինչպէս որ ճահճի մէջ իր ոտներով կ'խոկէ լարախաղոց մը — այնպէս սասց է, Վեհափառ, որ խեղճ Վիշ միայնակ զնաց գարանակալ որսի :

— Միայնակ, զարմանք, նշանաւոր որսորդը : Է՛ս, միթէ Պ. Կիշն չպիտի որ վարազը հարուածին ձայնին կ'զայ,

— Վեհափառ, իրօք այդպէս պատահեցաւ :

— Ուրեմն զիտէր թէ կենդանին ուր է :

— Այս, Վեհափառ : Գեղացիներ տեսեր էին զայն իրենց գետախնձորի արտերուն մէջ :

— Եւ ի՞նչ կենդանի էր այն :

— Կինձ մը :

— Ուրեմն, պարսաւոր էիր ինձ իմաց տալ, պարոն, որ Կիշնիքնասորանութիւնն խորհարդներ ունէր . վասն զի անոր որսալը տեսեր եմ, շատ ճարպիկ է : Երբ նեղը մնած, և շուներով պաշարեալ կենդանոյն վրայ քալէ, ամէն տեսակ զդուշութիւնները կանխաւ. կ'ընէ, և սակայն բարագինացն կ'զարնէ, իսկ այս անզամ վարազին զիմազրաւ. կ'կենաց պարդ հրացանակներով :

Մանիքան գող ելաւ :

— Պերճ հրացանակներ, որ մարդու մը հետ մնամարտելու համար պատուական են այլ ոչ վարազի մը դէմ, զարմանք :

— Վեհափառ, կան բաներ որ լաւ չեն բացատրուիր :

— Երառունք ունիս, և ներկայ գէտիքն ալ այդ կարդէն է, շարունակէ :

Այս պատմութեան ատեն՝ Սէնդ-Էնյան, որ թերևս Մանիքանի նշան ընել ուղեր չվհատելու, չեր կարող նշմայր մ'ընել. վասն զի թատուուն անոր աշքին մէջ յամառութիւամբ կ'նայէր :

Հետեապէս իր և Մանիքանի մէջ իրարու հետ հալորդակցելու դժուարութիւն կար : Իսկ ա՛նբանեանի գալով, Աթէնքի Լուռւթիւնն արձանն աւելի խօսուն և նշանակական էր քան թէ ինք :

Հետեապէս Մանիքան, արգէն այս ճամփուն մէջ նետուած լինելուն՝ թակարգն ընկաւ :

— Վեհափառ. — ըստ ։ Հաւանական է որ այսպէս զործն անցած է : Կիշ վարազն կ'սպասէր :

— Զիո՞ւ վրայ թէ հետիւնն — հարցուց թաղաւորը :

— Զիո՞ւ վրայ : Կենդանին վրայ հրացանակը պարպեց և չկըրցաւ գողիլ :

— Անձարակ մարդ :

— Կենդանին անոր վրայ սրացաւ :

— Եւ ձին սպաննուեցաւ :

— Ա՛ս, Զեր Վեհափառութիւնը դիտէ՞ այդ բանը :

— Ըսին ինձ որ Ռօշէնի քառուղին մեռած ձի մը դտնուեթ
Եթ : Մասձեցի որ Կիշի ձին է այդ :

— Իրօք անոր ձին էթ, Վեհափառ :

— Լաւ, ձիուն համար այլպէս կ'ըսես, հազար Կիշի համար
ինչ պիտի ըսես :

— Երբ մի անդամ Կիշ գետինն ընկառ, վարագն անոր մօսեւ
ցաւ և ձեռքն ու կուրծքը վիրաւորեց :

— Սոսկալի գիտուած մ'է . բայց պէտք է ըսել որ յանցանքը
Կիշինն է : Ի՞նչպէս այնպիսի կենդանուոյ մը դարանակալ մնալու
կ'երթան լոկ հրացանակներով : Ուրեմն, Ատոնիսի առակը մուշ-
ցեր էթ :

Մանկբան ականջը քերթեց :

— Այս — ըսաւ — մեծ անխոչեմութիւն մ'է :

— Պ. Մանկբան, պիտի բացատրե՞ս այդ բանը :

— Վեհափառ, գրուածը զրուած է :

— Ահա ուրեմն բաղդի կ'հաւասաս :

Մանկբան իր տեղը կ'բրովէթ և շատ անհանդիսա կ'երեւէթ :

— Յանցաւոր ես աշքիս, Պ. Մանկբան — շարունակեց թա-
ղաւորը :

— Ե՞ս, տէր իմ :

— Այս, դու . ինչպէս, դու Կիշին բարեկամը լինիս, դու
դիտես որ այս տեսակ յիմարութեանց ենթակայ է, և դու զանի
չե՞ս կասեցնէթ :

Մանկբան ինչ ըսելիքը չղիտէթ, թաղաւորին ձայնն իրօք դիւ-
բահաւան մարդու մը ձայնը չէթ :

Միւս կողմէն այս ձայնն ոչ եղերի խստութիւնն ունէթ և ոչ
հարցափորձութեան թախանձանքը :

Աւելի հեղութիւն կար ըսածին մէջ քան թէ սպանալիք :

— Ուրեմն կ'հաւասաս — ըսաւ թագաւորը — որ արդարեւ Կի-
շին էթ որ մեռած զետինը գտան :

— Ա՛ս, Ասուաւծ իմ, այն, անոր էթ :

— Միթէ այդ բանը քեզ զարմացմց :

— Ա՛ս, Վեհափառ : Վերջին որսորդութեան տաեն, Զի:

Հափառութիւնը կ'յիշէ որ Պ. Սէն-Մօրի ձին սպաննուեցաւ, և
նոյն կերպով :

— Այս, բայց փորը պատուած էթ :

— Անսարակայս, Վեհափառ :

— Եթէ Պ. Կիշի ձին Պ. Սէն-Մօրի ձիուն պէս պատուած
լինէթ, զարձեալ չպիտի զարմանայի, կ'ըսեմ քեզի :

Մանկբան աչերը խոշոր բացաւ :

— Բայց իմ զարմանքս պատճառուուն այս է — շարունակեց թա-
ղաւորը — որ Կիշին ձին՝ փորը բացուած ունենալու տեղ, դու-
խը խորհակուած լինի :

Մանկբան շփոթեցաւ :

— Միթէ կ'սխալիմ — վրայ բերաւ թագաւորը — միթէ Կիշին
ձին քոնքէն զարնուած չէ, խոստովանէ, Պ. Մանկբան, որ այս
եղական հարուած մ'է :

— Վեհափառ, պիտիք որ ձին խելացի կենդանի մ'է, թերևս
ինքզինքը պաշտպանելու փորձ փորձած է :

— Բայց ձի մ'իր ետեի ոտքով ինքզինքը կ'պաշտպանէ և չէ
թէ զլիսովլ :

— Այս ատեն, զարհուրած ձին կրուած պիտի լինի — ըսաւ
Մանկբան — և վարազը, քաջ կ'հասկընաք, Վեհափառ, վա-
րազը . . . :

— Այս, ձիուն համար զործը կ'հասկընամ, բայց ձիաւորին
համար ինչ պիտի ըսես :

— Լաւ, այդ ալ շատ պարզ է բացատրել . վարազը ձիէն
ձիաւորին վրայ ընկած է, և ինչպէս արդէն պատիւ ունեցաց Զիր
Վեհափառութեան ըսելու, Կիշին ձեռքը խորտակած է այս մի-
ջոցին որ երկրորդ հրացանակ մը քաշելու կ'սպատրաստուէթ . յե-
տոյ կնճիթովիլ անոր կուրծքը ծակած է :

— Այդ շատ հաւանական է արդարեւ, Պ. Մանկբան, Ճար-
տարախօսութեանդ վրայ վստահ եղիր, և շատ սքանչելի կերպով
կ'պատմես բանը :

— Ծատ բարի էք իմ մասիս, Վեհափառ — ըսաւ Մանկբան
շփոթութեամբ խոնարհութիւն մ'ընելով :

— Այս օրուանէ միայն պիտի արդիլեմ իմ աղաստանիս որսի գարանակալութեան երթալու : Կրո՞ղ, առելի աղ! կ թոյլ տալ որ մենամարտին :

Մանիքան զող եւառ և շարժում մ'ընելով քաշուիլ ուզեց :

— Թագաւորու զո՞չ է — հարցոց նա:

— Զայլած է . բայց, Պ. Մանիքան, զեռ ևս մի քաշուիր ըստ Նորի — քեզի հետ զործ ունիմ:

— Աղէ, աղէ — մտածեց տ'Արդանեան — ահա ուրիշ մարդ մ'ալ որ մեր կարողութիւնը չունի:

Եւ հաւաչ մը հանեց որ կրնար նշանակել . «Ո՛՛, մեր կարողութեան աէր մարդիկ, ուր են այժմ» :

Դայն պահուն բարասպան մը վարակոյրը բացառ և իմացուց բժշկին դալը :

— Ո՛՛ — զոչեց թաղաւորը — ահա Պ. Վալօ, որ Կիշին այցէն կ'դառնայ : Վիրաւորին վրայ լուրեր պիտի ստանանք :

Մանիքան երթալով սկսաւ անհանդիստ լինիլ:

— Գէթ այս կերպով մեր խիզճը պիտի հանդարտի :

Եւ տ'Արդանեանի նայեցառ որ անվրդով մնաց :

Գ

ԲԺԻՇԿ

Պարօն Վալօ ներս մտաւ :

Ներկայ գանուողներան զիրքը մի և նոյնն էր . թաղաւորը նըստած, Սէնդ-Էնյան միշտ իր աթուին կոթնած, տ'Արդանեան միշտ պատին կունակը տուած, Մանիքան միշտ ուպի վրայ :

— Լաւ ուրեմն, Պ. Վալօ — ըստ թաղաւորը — հնազանդեցար ինձ :

— Ամենայն փութով, Վեհափառ տէր :

— Քայլը՝ ի ֆօնդէնսլօ պաշտօնակցիդ ոտնը :

— Այն, Վեհափառ :

— Եւ Պ. Վիշը հոն դտա՞ր :

— Պ. Վիշն անդ դտայ :

— Ի՞նչ վիճակի մէջ: Համարձակ լսե՞ :

— Ծառ ողորմելի վիճակի մէջ, Վեհափառ :

— Բայց, ըսէ նայինք, միթէ վարազը զանի չկլենց :

— Զնիլ կլէ :

— Կիշը :

— Ի՞նչ վարալ:

— Զանի վիրաւորով վարազը :

— Ի՞նչ, Պ. Վիշը վարան մը վիրաւորեց :

— Գէթ սյդուէս կ'ըսեն :

— Լաւ ևս է ըսել անտառապահ մը . . . :

— Ի՞նչպէս, անտառապահ . . . :

— Նախանձու ամուսին մը, նախատուած սիրահար մ'անոր վրայ հրացան քաշած պիտի լինի, վրէժ հանելու համար :

— Բայց ինչե՞ր կ'ըսես այդ տեղ, Պ. Վալօ: Միթէ Պ. Վիշն մէրքը վարազի մ'ականերուն արդինքը չե՞ն :

— Պ. Վիշն վէրբը հրացանակի մը զնդակին զործն է որ իւրեն աջ ձեռքին մատենմասն ու ծկցթը խորտակեր է . այնու հետեւ զնդակը դացեր և կուրծքին միջնակողեան մկոնքին մէջ տեղ դաւորեր է :

— Գնդակ մը: Միթէ ստոյդ ես որ Պ. Վիշ զնդակէ մը վիրաւորուած լինի . . . — զոչեց թաղաւորը սուա զարմանք ցոյց տալով:

— Ճշմարիտը, Վեհափառ — ըստ Վալօ — այնքան ստոյդ եմ որ տասիկ նշանը :

Եւ թաղաւորին ներկայացուց կէս տափակցած զնդակ մը:

Թաղաւորին անոր նայեցաւ սուանց դպելու :

— Միթէ այդ զնդակը կուրծքին մէջն էր, խեղճ տղայ — հարցուց թաղաւորը :

— Ո՛՛ բոլորովին: Գնդակը ներս չէր թափանցած, ինչպէս որ կ'անմենք տափակցած էր կամ հրացանակին ներքին պահին ներքեւ կամ լսնջին տախտակի աջ կողմը :

— Տէր Աստուած — ըստ թաղաւորը ծանրօրէն — ինձի սյուսպիսի բան մը չէիր ըսեր, Պ. Մանկան :

— Վեհափառ . . . :

— Ուրեմն ի՞նչ կ'նշանակեն այդ վարաղի շինծու պատմութիւնը, դարանը, զիշերային որսորդութիւնը : Խօսէ նայինք :

— Ա՛չ, Վեհափառ . . . :

— Կ'երևի ինձ որ իրաւոնք ունիս — ըստ թաղաւորը հրացանակաց հրամանատարին գառնալով — և թէ իրօք պայքար տեղի ունեցած է :

Թաղաւորն ամենէն աւելի՝ մեծերու տրուած յատկութիւնն ունէր որ էր ստորակարգեալներն իրար անցրնել և բաժնել :

Մանկան յանդիմանութեամբ լի նայուած մը նետեց՝ հրացանակին :

Տ'Արդանեան հասկրցաւ այս նայուածքն և ամբաստանութեան բեռին ներքեւ մնալ չուզեց :

Քայլ մ'ընդ առաջ առաւ :

— Վեհափառ — ըստ — դուք հրաման տուիք ինձ Ռոշէն անտառակին քառուղին զննել, և իմ կարծիքս անցած գարձածին վրայ յայնել : Ես իմ զիտողութիւններս յայտնեցի ձեզի առանց մէկը բերան տալու : Նոյն իսկ Զեր Վեհափառութիւնն էր որ ամենէն առաջ կիշ կոմին անունն արտասանեց :

— Լաւ, լաւ, պարոն — ըստ թագաւորն ամբարտաւանութեամբ — դու քու պարտքդ կատարեցիր և քեզնէ զոհ եմ, այս քեզ բաւական պէտք է լինի : Բայց դու, Պ. Մանկան, դու քու պարտքդ չկատարեցիր . սուտ խօսեցար ինձ :

— Սուտ խօսեցայ, Վեհափառ, այդ բառը ծանը է :

— Ուրիշ բառ մը դատիր :

— Վեհափառ, ուրիշ բառ մը չպիտի վնասուեմ: Արդէն Զեր Վեհափառութեան անհաճոյ լինելու գիրազդութիւնն ունեցայ, և ուրիշ բան չունիմ ընելու, եթէ ոչ Զեր յարմար դատած յանդիմանութիւնները խոնարհար ընդունելու:

— Իրաւոնք ունիս, պարոն, միշտ ինձ անհաճելի կ'դաւոնայ մարդ մ'որ ճշմարտութիւնն իմ առջև կ'ծածկէ :

— Երբեմն, Վեհափառ տէր, մարդ կ'անդիտէ :

— Մի սուտ խօսիր, թէ ոչ պատիմդ կ'կրկնապատկեմ:

Մանկան դոյնը նետելով խոնարհեցաւ :

Տ'Արդանեան նորէն քայլ մ'առաւ ընդ առաջ, միջամտելու մոտք, եթէ թագաւորին բարկութիւնն որ երթալով կ'սաստկանար սահմանէ մ'անցնէր :

— Պարոն — շարունակեց թաղաւորը — կ'նայիս որ անօդուտ է ուրանալ զործն այսուհետեւ: Պ. Կիշ մնամարտեր է :

— Ա՛չ չեմ ըսեր, Վեհափառ, և Զեր Վեհափառութիւնը վեհանձն պիտի լինէր եթէ ազատորդի մը ստութեան չբռնագաւուր:

— Բոհնադատել: ովկ կ'բռնադատէր քեզ:

— Վեհափառ, Պ. Կիշն իմ բարեկամն է: Զեր Վեհափառութիւնը մահուան ողատօք սպառնաց մենամարտութիւն ընողները: Առաջ մը կ'ազատէ իմ բարեկամն: Աւստի սուտ կ'խօսիմ:

— Լաւ — մբմաց տ'Արդանեան — աւասիկ սիրուն տղայ մը, անօրէն:

— Պարոն — վրայ բերաւ. թաղաւորը — սուտ խօսելու տեղ, պէտք է ը արդիւլով որ նա չմնամարտի:

— Ա՛չ, Վեհափառ, դուք որ Գրանսայի ամենակատարուն աղատորդին էք, քաջ զիտէք որ մննք զինորական մարդիկ, երբէք Պ. Պուդիլին անսպատուած չամարեցինք Կրէ վի հրապարակին վրայ մահուան պատիմը կրելուն: Անպատող բանը թշնամիէն խոյս տալն է, և չէ թէ դահճին հանդիպիլը:

— Լաւ ուրեմն, թուղ այդպէս լինի — ըստ Լուի ֆու — քեզի միջոց մը կ'ուզեմ տալ որ ամեն բան դարմանես:

— Եթէ ազատորդիի վայելող միջոց մ'է այդ, Վեհափառ, ամենայն փութով զայն պիտի ընդունիմ:

— Ի՞նչ է Պ. Կիշի հակառակորդին անունը:

— Հօ, հօ — մբմաց տ'Արդանեան — արդեօք Լուի ֆու պիտի շարունակենք . . . :

— Վեհափառ տէր — ըստ Մանկան յանդիմանութեան չեշտով մը:

— Ըստ երեսյթին անոր անունը չես կամիր տալ — ըստ թառաւորը :

— Վեհափառ, զանի չեմ ճանչեր :

— Կեցյէ — ըստ ա'Արդանեան :

— Պ. Մանկքան, սուրդ հրամանատարին յանձնէ :

Մանկքան շնորհալի կերպով խոնարհեցաւ, սուրը քակեց ժպտելով և հրացանակրին երկնցոց :

Բայց Սէնդ-Էնյան յառաջ անցաւ փութով և ա'Արդանեանի Մանկքանի մէջ մտաւ :

— Վեհափառ — ըստ նա — ձեր հրամանը կ'խնդրեմ խօսելու համար :

— Խօսէ — ըստ թաղաւորն որ թերես ներքնասպէս զոհ էր որ իր և բարկովեան մէջն երրորդ մը կ'մտնէ :

— Մանկքան, գու քաջանիրտ ես, և թաղաւորը գու ընթացքդ պիտի զնհատէ . բայց չափէն առելի բարեկամաց ծառայել ուզելն անոնց վնասել է : Մանկքան, Կորին Վեհափառութեան ինդրած անունը զիտես :

— Արդարե զիտեմ :

— Ուրեմն պիտի ըսես :

— Եմէ ըսել պէտք լինէր, արդէն ըսած էի :

— Այն ատեն ես պիտի ըսեմ, ես որ քեզի պէս այդ դադանապահութեան կազուած չեմ :

— Դու, գու աղատ ես . բայց սակայն կ'երեսի ինձ . . . :

— Ո՛չ, մէկդի գնենք մեծահանութիւնը . չպիտի թողում որ այդպէս Պատղիյլ երթաս : Խօսէ, թէ ոչ ես պիտի խօսիմ :

Մանկքան մտացի մարդ մ'էր, և հասկըցաւ որ ինքն իր վրայ լաւ կարծիք մը տալու համար բաւական դիմադրեր էր . այժմ, հարկ կար յարատեել նոյն ընթացքին մէջ թաղաւորին առջե շնորհ դանելով :

— Խօսէ — ըստ նա Սէնդ-Էնյանի : — Ես իմ մասիս ինչ որ խիղճս կ'պատուիրէր ըրի, և անշուշտ խիղճս շատ բարձր կը խօսէր — յարեց նա թաղաւորին կողմը դառնալով — քանի որ Կորին Վեհափառութեան հրամաններուն զիմակրեց . բայց Կորին

Վեհափառութիւնն ինձ պիտի ներէ, յուսամ, երբ իմանայ որ միկան մը պատիւը պահպանելու պարտաւոր էի :

— Վիկան մը — հարցուց թաղաւորը մտայցող :

— Այո, տէր արքայ :

— Այս մենամարտութեան պատճառով կի՞ն մ'եղաւ : Մանկքան զլուխը ծուեց :

Թաղաւորն ուրբ ելաւ և Մանկքանի մօտ զնաց :

— Եմէ բարձրագիր անձ մ'է — ըստ նա — չպիտի գմկամաշինը որ այդ զգուշութիւնները զործածեցիր, Էնդ հակառակն զոհ պիտի լինիմ :

— Տէր արքայ, ինչ որ թաղաւորիդ տանը կ'վերաբերի, կամ ձեր եղուօր տանը կ'պատկանի, իմ աչքիս մեծ կարեորութիւն ունի :

— Իմ եղուօր տանը — կրկնեց Լուի ֆանտակ մը վարանմամբ . . . : — Այս պայքարին պատճառն իմ եղուօրս տան տիկիններէն մի՞ն է :

— Կամ իշխանուհոյն :

— Ա՛չ, իշխանուհոյն :

— Այո, տէր արքայ :

— Այդպէս ուրեմն, այդ տիկինը . . . :

— Օրէանի դքսուհոյն տան պատույ աղջիկներէն մին է :

— Ուստ համար Պ. Կիշ մենամարտեցաւ, ըսիր :

— Այո, և այս անդամ սուտ չեմ խօսիր :

— Լուի այլայլութեամբ լի շարժում մ'ըրաւ :

— Պարմաներ — ըստ այս տեսարանին հանդիսաւեներուն դառնալով — հաճեցէք քիչ մ'ասկից հեռանալու, պէտք ունիմ Պ. Մանկքանի հետ առանձին մնալ : Գիտեմ որ անդին բաներ ունի ինձ ըսելի ինքողինքն արդարացնելու համար և վկաներու առջե խօսելու չամարձակիր . . . : Սուրդ կապէ, Պ. Մանկքան :

Մանկքան իր սուրը զօափէն անցուց :

— Ճշմարիտը, այս թշուառականը պատրաստամիտ է — մըրմարաց հրացանակիրը Սէնդ-Էնյանի թեւը մտնելով և անոր հետ հեռանալով :

— Ինքողինքը դժուար լիճակին պիտի աղատէ անշուշտ — ըստ այս վերջինը ա'Արդանեանի ականջին :

— Եւ պատռով, կոմս :

Մանիքան Սէնդ-Էնյանի և Հրամանատարին շնորհակալութեան ակնարկ մ'ուղղեց որ թագաւորին աչքին մնանես մնաց :

— Աղջ, աղջ — ըստ ա'Արդանեան դրան սեմին անցնելով — նոր սերունդին վրայ գէշ զաղափար մ'ունէի : Էաւ, սխալեր եմ, և այս փոքրիկ պատանիներն իրենց աղջոր կողմն ունին :

Վալօ՝ թաղաւորին մտերմէն և Հրամանատարէն առաջ կ'երթար : Թագաւորին ու Մանիքան առանձին մնացին դաշտին մէջ :

Պ

Տ'ԱՐԴԱՆԵԱՆ ԿԻՌՍՏՈՎԱՆԻ ՈՐ ՍԽԵԼԵԾ Է : ԵՒ Թ-Ի
ՄԵՆԻՔԱՆ ԷՐ ՈՐ ԻՐԱԿՈՒՆՔ ՈՒՆԵՐ

Թաղաւորը՝ ինքն անձամբ մինչև դուռը գնալով ստուգեց որ ոչ մտիկ կ'ընէր, և արսորնօք դարձաւ երիտասարդին գիմացը կեցաւ :

— Ահա, հիմակ որ մինակ ենք, Պ. Մանիքան — ըստ թագաւորը — բացատրէ ինձ խնդիրը :

— Ամենայն անկեղծութեամբ, Վեհափառ — պատասխանեց պատանին :

— Եւ ամենէն առաջ պէտք է զիտնաս որ կանանց պատույն յետին ծայր նախանձախնդիր եմ :

— Ահա այդ պատճառաւ իսկ Զեր փափկասրտութեան կ'ինայէի, տէր արքայ :

— Այս, այժմ ամէն բան կ'իմանամ : Ուրեմն կ'ըսէիր թէ իմ հարսիս մէկ պատույ աղջկան վրայ էր խնդիրը, և թէ Կիշի հակառակորդը, այն մարդին որու անոնը չես կամիր տալ . . . :

— Բայց Պ. Սէնդ-Էնյան այն մարդուն անոնը պիտի յայանէ ձեզ, Վեհափառ տէր :

— Այս, կ'ըսէս ուրեմն որ այն մարդն իշխանուհոյն տան աղջիկներէն մին թշնամանեց :

— Օրիորդ Լա Վալիերը, այս, տէր արքայ :

— Ա՛ս — ըրաւ թագաւորը, որպէս թէ ասոր կ'սպասէր, և որպէս թէ սյս հարուածն իր սիրով կ'ծակէր — ա՛ս, օրիորդ Լա Վալիերը կ'նախատէին :

— Զեմ ըսեր լիովին որ զանի կ'նախատէին, Վեհափառ տէր :

— Բայց վերջապէս . . . :

— Կ'ըսեմ թէ անոր վրայ անվայել ոճով կ'խօսէին :

— Անվայել ոճով, օրիորդ Լա Վալիերի վրայ : Եւ կ'մերժես յայտնելու ինձ թէ ով էր այն լիրը . . . :

— Վեհափառ տէր, կարծէի թէ այս մասին համաձայն ենք, և թէ զիս մատնիչ մ'ընելու խորհրդէն հրաժարած էք :

— Ստոյդ է, իրաւոնք ունիս — վրայ բերաւ թագաւորն իր բարիութիւնը մեղմելով — իրաւ է որ շուտ մը պիտի իմանամ, երբ կալիմ, այն մարդուն անունը զոր պարտ է ինձ պատժել :

Մանիքան քաջ զիտեց որ խնդիրը փոխուած էր :

Իսկ թագաւորը տեսաւ որ քիչ մը պէտք եղածէն աւելի բորբոքեր էր :

Ուստի իր առջի ըսածը չափաւորեց յարելով .

— Եւ պիտի պատժեմ չէ թէ անոր համար որ դործը Լա Վալիերի վրայ կ'գառնայ, թէ և 'ի մասնաւորի զանի կ'յարգեմ, այլ անոր համար որ կուռին առարկան կին մ'է : Արդ՝ կ'պահանջեմ որ արքունեացս մէջ կանայքը յարգեն և իրարու հետ չկուռին :

Մանիքան զլուխը ծոեց :

— Այժմ նայինք, խօսէ՛, Պ. Մանիքան — շարունակեց թագաւորը — ի՞նչ կ'ըսէին օրիորդ Լա Վալիերի վրայ :

— Բայց միթէ Զեր Վեհափառութիւնը չղուշակեր :

— Ե՞ս :

— Զեր Վեհափառութիւնը քաջ զիտէ թէ երիտասարդներն ինչ տեսակ կատակներ ընելու կ'համարձակին :

— Անտարակոյս կ'ըսէին թէ նա մէկը կ'սիրէ — ըստ թեթեակի թագաւորը :

— Հաւանական է :

— Բայց օրիորդ Լա Վալիեր իրաւոնք ունի իրեն համած մնացը պիտել — ըստ թագաւորը :

— Աչա ձիշտ այդ կետը կ'պաշտպանէք Աիշ։
 — Եւ միթէ այդ բանին համար կուռեցաւ։
 — Այս, Վեհափառ, այդ պատճառին համար։
 Թաղաւորը կարմրեցաւ։
 — Եւ միթէ ուրիշ բան չդիտե՞ս — հարցոց թաղաւորը։
 — Ի՞նչ կիտի վրայ, Վեհափառ։
 — Բայց այն հետաքրքրաշարժ խնդրոյն վրայ զոր դու կ'պատմէիր քիչ մ'առաջ։
 — Եւ ի՞նչ կ'ուղելք, Վեհափառ, որ դիանար։
 — Լաւ, օրինակի համար, այն մարգուն անունը զոր Լա Վալիէր կ'սիրէ, և որու գէմ Կիշի հակառակորդը կ'պնդէր թէ Լա Վալիէր իրաւունք չունէր սիրելու։
 — Վեհափառ տէր, բան մը չդիտեմ, բան մը չլսեյի, բան մը չլսեցայ. բայց դիտեմ որ Աիշ մեծասիրտ երիտասարդ մ'է, և եթէ առ ժամանակեայ կերպով Լա Վալիէրի պաշտպան կանդնեցաւ, պատճառն այն է որ այս պաշտպանը շատ բարձրագիր մարդ մը լինելուն չկրնար անոր պաշտպանութեան համար մաքառիլ։
 Այս խօսքերն քան որ պէտք էր թափանցիկ էին. ուստի թագաւորը կարմրցուցին, բայց այս անդամ խնդրութենէ։
 Կամացուկ մը Մանկանի ուսին զարկաւ։
 — Աղէ, աղէ, Պ. Մանկան, զու ոչ միայն խելացի տղայ մ'ես, այլ և արիասիրտ աղատորդի մը, և քու Աիշ բարեկամէի իմ Ճաշակիս բոլորովին յարմար ասպետ մը կ'զանեմ. այս կարծիքս անոր պիտի յայտնես, այնպէս չէ։
 — Այսպէս ուրեմն, Վեհափառ տէր, ինձ կ'ներէք։
 — Բոլորավին։
 — Ֆիթէ աղատ եմ։
 Թագաւորը ժպտեցաւ և ձեռքը Մանկանի կարկառեց։
 Մանկան այս ձեռքը բոնից պատաւ։
 — Ասկից զատ — յարեց թաղաւորը — սքանչելի կերպով կը պատմես։
 — Ե՞ս, Վեհափառ։

— Պատուական կերպով նկարագրեցիր ինձ Աիշին պատահած դիպուածը։ Վաեւնեմ վարագն որ անտառէն կ'ելնէ, կ'տեսնեմ վար տապալող ձին, կ'անդամին որ ձին ձիաորին վը բայ կ'յարձակի։ Դու չես պատմեր, պարսն, այլ կ'նկարես։
 — Վեհափառ, կարծեմ թէ զիս ծաղկելու կ'հաճիք — ըստ Մանկան։
 — Ընդ հակառակն — ըստ Լուի Ժ. ծանրաբար — ես այնքան քիչ կ'ծիծաղիմ, Պ. Մանկան, որ կ'պատուիրեմ քեզ այս դիպուածն ամենուն պատմել։
 — Գարանի՝ դիպուածը։
 — Այն, ինչպէս որ ինձ պատմեցիր, ինձ, առանց բառ մը փոխելու, կ'իմանամ։
 — Բոլորավին, Վեհափառ։
 — Եւ պիտի պատմե՞ս։
 — Առանց վայրկեան մը կորուսելու։
 — Լաւ ուրեմն, զու ինքնին Պ. ա'Արդանեանը կանչէ. յուսամ որ անկից այլ ևս վախ չունիս։
 — Ո՛չ, Վեհափառ, երբ ստոյդ եմ որ Զեր Վեհափառութեան բարիքը կ'վայելեմ, այնուհետեւ բանէ մը չեմ վախնար։
 — Ուրեմն կանչէ զանի — ըստ թաղաւորը։
 Մանկան դուռը բացաւ։
 — Պարտնայք — ըստ — թաղաւորը ձեզ կ'կոչէ։
 Տ'Արդանեան, Սէնդ-Էնյան և Վալօ ներս մոտան։
 — Պարոններ — ըստ թաղաւորը — ձեզ կոչել առւի ըսելու համար որ Պ. Մանկանի բացատրութիւնը զիս բոլորավին դոչ ըստ։
 Տ'Արդանեան մէկ կողմէ Վալօին և միւս կողմէ Սէնդ-Էնյանի աչք մը նետեց որ կ'նշանակէր. « Լաւ, ես ի՞նչ կ'ըսէի ձեզի »։
 Թաղաւորը դրան կողմը քաշեց Մանկանը, ապա ցած ձայնով ըստաւ։
 — Թագաւոր Պ. Աիշ ինքնինքը նայի, մանաւանդ շուտով բժշկուի. Երթամ պիտի անոր շնորհակալիք յայտնելու սոյն կանանց կողմէ, բայց մանաւանդ կ'պատասիրեմ որ նորէն չսկսի։

— Եթէ հարիւր անգամ ալ մեռնելու լինի, Վեհափառ, հարիւր անգամ պիտի կոռի երբ Չեր Վեհափառութեան պատոյն կ'վերաբերի խնչիրը :

Աւդլակի էր գովեստը : Բայց, արդէն ըսինք, Լուի Ժաւուրը կ'սիրէր խոռնիը, և հէրիք է որ իրեն տային, այնչափ պահանջող չէր տեսակին վրայ :

— Լաւ է, լաւ է — ըստ նա Մանկանը ճամրելով — ես անձամբ կիշը պիտի տեսնեմ և պիտի սասակիմ :

Մանկան յետու ընկրկելով դուրս ելաւ :

Այս ատեն թագաւորը, այս տեսարանիս երեք հանդիսականաց կողմը դառնալով,

— Պարոն մ'Արդանեան — ըստ :

— Վեհափառ տէր :

— Բայց ըսէ ինձ, ի՞նչպէս պատահեցաւ որ այնչափ պղտոր աչք մ'ունենաս, դու որ սովորաբար լաւ աչքեր տնիս :

— Ես պղտոր աչքեր ունենամ, Վեհափառ :

— Անշուշտ :

— Այս այսպէս պէտք է լինի, քանի որ Չեր Վեհափառութիւնն է ըսողը : Բայց, կ'աղաշեմ, ի՞նչ բանի մէջ պղտոր է :

— Բայց այն Ռոշէն անտառակի զործին նկատմամբ :

— Հաւ, հաւ :

— Անշուշտ : Երկու ձիու հետքը տեսար, երկու մարդոց քայլափոխը, և պայքարի մը պարագաները գտար : Բնաւ այդ ըսածներդ տեղի ունեցած չեն, պարզ պատրանք են եղեր :

— Հաւ, հաւ — ըստ նորէն մ'Արդանեան :

— Զիու այն գափիներն են պայքարին նշանները : Կիշին պայքարը վարակին դէմ, ուրիշ բան չկայ . միայն սոսկալի և երկար եղեր էր պայքարը, ինչպէս որ կ'երեի :

— Հաւ, հաւ — շարունակեց ա'Արդանեան :

— Եւ երբ կ'մտածեմ թէ պահ մ'այդպիսի սխալմունքի հաւատ ընծայեցի, կ'զարմանամ, բայց որչափ ճարսպիկութեամբ ալ կ'խօսէիր :

— Արդարեւ, Վեհափառ, պէտք է որ հաւկուր եղած լինէի

— ըստ մ'Արդանեան այնպէս զուարժութեամբ մ'որ թաղաւորն զմայլեցոց :

— Ուրեմն կ'խոսառվանիս :

— Ի՞նչպէս չխոսառվանիմ, Վեհափառ տէր :

— Այնպէս որ հիմակ խնդիրը կ'աեսնես . . . :

— Կէս ժամ առաջ տեսածէս բոլորովին աարքեր գոյնով :

— Եւ այս տարրերութիւնը կարծեօք ի՞նչ բանի կ'վերազրես :

— Ո՛չ, շատ պարզ բանի մը, Վեհափառ տէր . կէս ժամ կայ որ Ռոշէն անտառակին կ'գառնայի, և այն տեղ լուսաւորելու համար միայն ախուրին մէկ անշահ լազաերն ունէի . . . :

— Մինչդեռ այժմ . . . :

— Այժմ գահէլքիդ բոլոր ջահերն ունիմ, և ասկէ զատ՝ թաղաւորիս երկու աշունքը, որ արեւ պէս կ'լուսաւորեն :

Թաղաւորն սկսաւ ծիծաղիլ և Սէնդ-Էնյան քահ քահ ձգել :

— Ես Պ. Վալօի պէս — ըստ մ'Արդանեան թաղաւորին բերնէն խօսին առնլով — երկակայեր էի թէ ոչ միայն Պ. Վիշ զնդակով մը դարմաւած էր, այլ և կուրծքէն զնդակ մը հանուեր էր :

— Ճշմարիտը — ըստ Վալօ — կ'խոսառվանիմ . . . :

— Թէ այդպէս հաւտացեր էիր, այնպէս չէ — վրայ բերաւ մ'Արդանեան :

— Այսինքն — ըստ Վալօ — ոչ միայն այսպէս հաւտացի, այլ և այս ժաման կրնամ երկնուլ :

— Լաւ, պարզն տօքթէօր, այդ ամենն երազեր էիր :

— Երազեր էի :

— Պ. Վիշի վէրքը, երազ, զնդակը, երազ . . . : Ուստի, հաւտաց խօսքիս, այլ ևս բերանդ մի բանար այդ զոբծին վրայ :

— Լաւ խօսեցաւ — կրնեց թաղաւորը — մ'Արդանեանի քեզի տուած խորհուրդը լաւ է : Այլ ևս երազիդ վրայ ուրիշի մի խօսիր, Պ. Վալօ, և աղաւորդիի խօսք խօսք, այնուհետեւ չպիտի զդշաս : Գիշեր բարի, սպարոններ : Ո՛չ, ի՞նչ տխուր բան է վարազին դարանը :

— Ի՞նչ տխուր բան — կրնեց մ'Արդանեան լիաձայն — վարազին դարանը :

Եւ այս խօսքը կրկնեց բոլոր անցած սենեակներին :
Եւ գղեկն զորս ելաւ, Վալօն իր հետը տանելով :
— Հիմակ որ մինակ ենք — ըստ թաղաւորը Սէնդ-Էնյանի —
քուշ նայինք ի՞նչ է Կիշլն հակառակորդին անաւնը :
Սէնդ-Էնյան թաղաւորին երեալ նայեցաւ :
— Ո՛չ, մի վարանիր — ըստ թաղաւորը — քաջ դիտես որ
պարտաւոր եմ ներելու :
— Վարդ — ըստ Սէնդ-Էնյան :
— Լաւ :
Ապա՝ իր սենեակը մտնելով աշխատիւ,
— Կերելը մոռնալ չէ — ըստ Լուի Ֆ.Դ. :

Ե

ՔՆՉՊԻՍ ԿԱՐԵՒԽՈՐ Ի ԵՐԿՈՒ ԼԱՐ ՈՒՆԵՆԱԼ ԱՊԵՂԻՐ

Մանկան թաղաւորին քովին կ'հեռանար այնպէս լու յաջո-
ղելուն վրայ ուրախ, երբ՝ սանդղին ստորոտը համնելով և դոնա-
կի մ'ոռնջեկն անցնելով յանկարծ զզաց որ մէկը թեկն կ'քաշէ :
Գլուխը դարձուց և Մօնղալէն ձանչեց որ իրեն կ'սպասէր, և
որ, խորհրդաւոր կերպով, մարմինն ընդ առաջ ծուած և ձայնը
մեղմիկ, ըստ :

— Պարմն, շնուր եկուր, կ'աղաւեմ :
— Եւ ո՞ր դամ, օրիսրդ — հարցուց Մանկան :
— Նախ, Ճշմարիտ ասպետ մ'այդպիսի հարցում մը չպիտի
ըներ ինձ, այլ ինձ պիտի հետեւը առանց որ և է բայցատրու-
թիւն լնութելու :
— Լաւ ուրեմն, օրիսրդ — ըստ Մանկան — պատրաստ եմ
իրեւ Ճշմարիտ ասպետ մը վարուելու :
— Ո՛չ, այլ ուշ է, և արժանիքը չունիս այսուհետեւ : Իշխան-
ուհոյն սենեակը պիտի երթանք . եկմւր :

— Համ, համ — ըստ Մանկան : — Երթանք իշխանուհոյն :
Եւ Մօնղալէի հետեւցաւ որ իր առջեկն կ'վաղէր կալաղէի
պէս թեթևաշարժ :
— Այս անդամ — կ'ըսէր Մանկան իւրավի իր առաջնորդին
հետեւելու ատեն — չեմ կարծեր որ որսի պատմոթիւնները պա-
տեհ լինին : Սակայն պիտի փորձ փորձենք, և 'ի հարկին . . .
Ճշմարիտը, 'ի հարկին ուրիշ բան մը կրնանք զանել :
Մօնղալէ շարունակ կ'վաղէր :
— Ո՛րչափ տաժանելի է — մուածեց Մանկան — թէ մոքի և
թէ ոտքի պէտք ունենալը :
Ի վերջէ հասան :
Իշխանուհին իր երեկոյեան հաղուստը հաղեր էր, վայելու
տնային զզեստներ զբեր էր . բայց դիւրին էր հասկընալ որ այս
հաղուստը գրեր էր զինքը յուզող այլայլութիւնները զգացած :
Ակներե անհամբերութեամբ մը կ'սպասէր :
Ուստի Մօնղալէ և Մանկան դրան մօտ զտան զմնի կանդուն :
Անսնց քայլախօնը լսելով՝ իշխանուհին զաննք զիմաւորեր էր :
— Ո՛չ — ըստ նա վերջապէս :
— Աւասիկ Պ. Մանկանը — պատասխանեց Մօնղալէ :
Մանկան ակնածութեամբ ծուեցաւ :
Իշխանուհին նշան ըրաւ Մօնղալէի քաշուելու : « Սորստի աղ-
ջիկը հնազանդեցաւ :
Իշխանուհին անօր հետեւցաւ աչօքն ու լոին, մինչեւ որ դուռն
իր ետեկն զցեց . ասպա, Մանկանի կողմը զտանալով,
— Ուրեմն ի՞նչ կայ, և ի՞նչե՞ր կ'իմացնեն ինձ, Պ. Մանկան
— ըստ նա — դեկին մէջ մէկը վիրաւորուեր է եղեր :
— Այս, տիկին, գծբաղդաբար . . . Պ. Կիշն է :
— Այս, Պ. Կիշը — կրկնեց իշխանուհին : — Արդարե, այդ
լուրն իմացայ և ես, բայց ոչ պատասեց : Ուրեմն, այդպէտ
ստոպիւ Պ. Կիշըն հասեր է այդ աղէտքը :
— Կոյն խէլ Պ. Կիշին, տիկին :
— Միթէ զիտե՞ս, Պ. Մանկան — ըստ իշխանուհին աշխա-
տիւ — որ թաղաւորը շատ հակառակ է մենամարտութեանց :

— Անտարակոյս, իշխանուհիս. բայց վայրի կենդանւոյ մը չեմ մնամարտութիւն մը Նորին Աեհափառութեան իրաւասութենէ դուրս է :

— Ո՛չ, չպիտի անպատուես զիս կարծելով որ պիտի հաւատամ այդ անձունի առասպելին զոր չդիտեմ ի՞նչ նպաստական կ'ատարծեն առէն տեղ, անզելով թէ ո. Կիշ վարագի մը միջոցաւ վերաւորեր է : Ո՛չ, ո՛չ, պարոն. Ճշմարտութիւնը քաջայայտ է, և այս միջոցին, վերքին ցաւէն զատ, ո. Կիշ իր աղասութիւնն ալ կորուսելու վտանգին մէջ կ'գտնուի :

— Ափսն, տիկին — ըստ Մանիքան — քաջ դիտեմ այդ. բայց ի՞նչ ընենք :

— Միթէ Նորին Աեհափառութիւնը աեսած :

— Այո, տիկին :

— Ի՞նչ ըսիր անոր :

— Պատմեցի անոր թէ ինչպէս ո. Կիշ դարան մտեր էր, ինչպէս Ռօշէն անտառակէն վարագ մ'ելեր էր, ինչպէս ո. Կիշ անոր վրայ հրացանակը քաշէր էր, և ՚ի վերջէ ինչպէս կատաղի կենդանին հրացանը պարագողին վրայ սրացէր, անոր ձին սպաններ և զանի կարելէր վերաւորեր էր :

— Եւ միթէ թաղտուորն այս պատմութեան հաւտաց :

— Լիովին :

— Ո՛չ, զարմանիրս կ'պատճառես, ո. Մանիքան, ասսովիկ զարմանիրս կ'պատճառես :

Եւ իշխանուհին վեր վար սկսաւ քալել Մանիքանի վրայ ատեն ատեն հետաքին աչք մը ձգելով, որ անշարժ և անվրդով կը մնար ներս մտնելով առաջուց կեցած տեղը : Աերջապէս, իշխանուհին կայ առաւ :

— Սակայն — ըստ նա — ամէն մարդիկ այդ վերքին ուրիշ պատճառ մը տալու կ'համաձայնին :

— Եւ ի՞նչ պատճառ, տիկին — ըստ Մանիքան. — կարող եմ առանց անխոհեմութեան այս հարցում ուղղել Զեր Բարձրութեան :

— Գուշ, ո. Կիշի մտերիմ բարեկամ, գու անոր սրտակիցը, ի՞նչպէս կ'հարցնես այդ բանը :

— Ո՛չ, տիկին, այս, մտերիմ բարեկամն եմ, բայց սրտակիցը չեմ բնաւ : Կիշ այն մարդոց կարգէն է որ կրնան գաղտնիք ունենալ, որ գաղտնիք մ'ունին, բայց չեն հաղորդեր : Կիշ դաղտնապահէ է, տիկին :

— Լաւ ուրեմն, այդ ո. Կիշի սրտին մէջ պահած դաղտնիքը, ես քեզի յայտնելու հաճոյքը սկսուի ունենամ — ըստ իշխանուհին սրտմատութեամբ — վասն զի, արդարեւ, կարելի է թագաւորութերկրորդ անդամ՝ մ'ալ քեզ հարց ու փորձ ընէ, և եթէ այս երկրորդ անդամուն առաջուան առասպելը պատմես, թերեւ գոհ չլինի :

— Բայց, տիկին, կարծեմ թէ Զեր Բարձրութիւնը թաղաւորին նկատմամբ կ'սխալի : Վորին Աեհափառութիւնն իղնէ շատ դոհ եղած է, կ'երդուում ձեզի :

— Ուրեմն, ներէ ինձ ըսելու քեզ, ո. Մանիքան, որ այդ ապացոյց մ'է որ թաղաւորը դիւրահատան կ'երեի :

— Կարծեմ թէ Զեր Բարձրութիւնն այդ կարծիքը տածելու անիրաւ է : Ամէն մարդ կիսէ որ Նորին Աեհափառութիւնը միայն հաստատ պատճառներու վրայ կ'համոզուի :

— Եւ միթէ կարծես որ այդ պաշտօնակէր սոււեին համար քեզնէ պիտի գոհ լինի, երբ վաղն իմանայ որ ո. Կիշ, իր բարեկամ, ո. Պրաժլոնի համար կուիւ մ'ունեցած է, որ ՚ի վերջէ մնամարտութեան կերպարանիք առեր է :

— Ո. Պրաժլոնի համար կու իւ մը — ըստ Մանիքան ամենամիամտ դէ մքով մը — իշխանուհիս, այդ ի՞նչ բաներ կ'ըսէք ինձ:

— Ինչո՞ւ կ'զարմանաս . ո. Կիշ գիւրազգած, ցասկոտ է, շուտով կ'բորբոքի :

— Ընդ հակառակին, իշխանուհիս, ես կ'պնդեմ թէ ո. Կիշ շատ համբերող մարդ մ'է, և միայն արդար պատճառներով դիւրազիցիու և ցասկոտ կ'գտնայ :

— Բայց միթէ բարեկամութիւնն արդարացի պատճառ մը չէ ըստ իշխանուհին :

— Ո՛չ, անտարակոյս, տիկին, և մանաւանդ իրեն պէս սիրութեցողի մը համար :

— Լաւ ուրեմն, Պ. Պրաժլօն Պ. Կիշին մէկ բարեկամն է, այդ իրողութիւնը չես կրնար ուրանալ:

— Շատ մեծ բարեկամ մը:

— Լաւ ուրեմն, Պ. Կիշ՝ Պ. Պրաժլօնի կողմը բռնեց, և ուրովհեաւ Պ. Պրաժլօն տարակայ է և չէր կրնար մենամարտիլ, անոր տեղ մենամարտեցաւ:

Մանկան սկսաւ ժպափիլ, և քանի մ'անդամ ուսերն ու դլուխը շարժեց որով ըսել կ'ուզէր. «Իրաւի՛, եթէ այդպէս կամլս անպատճառ . . . » :

— Բայց վերջապէս — ըստ իշխանուհին — խօսէ:

— Ե՞ս:

— Անտարակայս գու. յայտնի է որ ինձ համամիտ չես, և բան մ'ունիս ըսելու:

— Բան մը միայն ունիմ ըսելու, տիկին:

— Ըսէ:

— Այսինքն բան մը չեմ հասկընար այն բաներէն զոր ինձ ըսելու պատիւ կ'ընեք:

— Կնչպէս, միթէ Պ. Կիշին և Պ. Վարդի մէջ անցած կուռէն ոչ ինչ չես իմանար — զոչեց իշխանուհին զրեթէ զայրացած:

Մանկան լրեց:

— Կուիւ մը — շարունակեց նա — որ կնկան մը պատոյն վըսայ քիչ շատ չարակամ, քիչ շատ հիմնաւոր խօսքերէ առաջ եղած է:

— Ա՛Հ, կնկան մը: Այդ ուրիշ խնդիր է — ըստ Մանկան:

— Հիմնակ հասկընալու սկսար, այնպէս չէ:

— Զեր Բարձրութիւնը թող ներէ ինձ. բայց չեմ իշխեր . . . :

— Զես իշխեր — ըստ իշխանուհին կատած: — Լաւ ուրեմն, սպասէ, ես հիմնակ սկսար իշխեմ:

— Տիկին, տիկին — զոչեց Մանկան, որպէս թէ զարհուրած էր — ձեր ընելիքը լսու մը կշռեցէք:

— Ա՛Հ, կ'երեի որ, եթէ մարդ մը լինէի, ինձի չետ սկիտի մենամարտէիր, «Սորին Վեհափառութեան հրամանազիրներուն հակառակ, ինչպէս որ մենամարտեցաւ Պ. Կիշ Պ. Վարդին հետ, և այս ալ օրիորդ Լա Վալիերի առաքինութեան համար:

— Օրիորդ Լա Վալիերի — զոչեց Մանկան յանկարծական ուստում մ'ընելով որպէս թէ բնաւ մտքէն չէր անցներ որ այս պիսի բան մը պիտի լսէ:

— Ա՛Հ, ի՞նչ ունիս ուրեմն, Պ. Մանկան, որ այդպէս կ'ուստնուս — ըստ տիկինը հեղնութեամբ — միթէ կասկածելու լրբառ թիւնն ունիս այդ առաքինութենէ:

— Բայց այս խնդրոյն մէջ բնաւ օրիորդ Լա Վալիերի առաքինութիւնը զործ մը չունի, իշխանուհիս:

— Ի՞նչ, երբ կնկան մը համար երկու մարդիկ իրարու դլուխ կ'պատռեն, դու կ'ենես կ'ըսես թէ Լա Վալիեր զործ չունի այս խնդրոյն մէջ և թէ անոր վրայ չդառնար այս կոիւը: Ա՛Հ, ես չէի կարծեր որ այդչափ լաւ պալատական մ'ես, Պ. Մանկան:

— Ներէ, ներէ, տիկին — ըստ երիտասարդը — բայց ահա խնդրէն անչափս հեռացանք: Դուք պատիւ կ'ընեք ինձ տարբեր լեղու մը զործածել, ըստ երևոյթին, մինչդեռ ես ուրիշ մը կը խօսիմ:

— Ի՞նչ հրամայեցիր:

— Ներէ, կարծեցի իմանալ որ Զեր Բարձրութիւնը կ'ուզէր ըսել ինձ թէ Պ. Կիշ և Պ. Վարդ Լա Վալիերի համար կը ուած լինին:

— Հասկա, անոր համար:

— Օրիորդ Լա Վալիերի համար, այնպէս չէ — կրկնեց Մանկան:

— Աստուած իմ, չեմ ըսեր թէ Պ. Կիշ անձամբ յարաբերութիւն մ'ունեցած լինի օրիորդ Լա Վալիերի հետ, այլ ըստ որ փոխանորդաբար անոր դատը պաշտպանեց:

— Փոխանորդաբար:

— Կայինք, միշտ շուարած մարդու դէմք մի առնուր: Միթէ այս տեղ չզիտե՞ն որ օրիորդ Լա Վալիեր նշանուած է Պրաժլօն դերկումին հետ, և թէ թաղաւորին յանձնած մէկ պաշնին համար դերկումը Լանաօն զնալու ատեն՝ իր բարեկամ Պ. Կիշին յանձնեց այն սիրական անձին վրայ հսկելու հողը:

— Ա՛Հ, այլ ես բան մը չեմ ըսեր, Զեր Բարձրութիւնն արէքն վերահասու է:

— Ամենելին, աչա կանխաւ իմաց կ'տամ:

Մանկան սկսաւ ծիծաղլը, և այս ընթացքէն քիչ մնաց իշխանուհին պիտի կատղեցնէր, իշխանուհին որ, ինչպէս զիտենք, համբերող բնաւորութեան տէր կին մը չէր:

— Տիկին — ըսաւ զաղսնապահ Մանկան իշխանուհին բարելով — այս զործին վրայ մոխիր թափենք, քանի որ երբեք չպիտի պարզուի:

— Ո՛չ, այդ մասին ընելիք բան մը չկայ, և բացատրութիւնն որհացուցիչ չեն: Թագաւորը պիտի իմանայ որ Կիշ այն փոքրիկ բաղդախնդիր օրիորդին կողմը բոնեց, որ մեծ ինկան հոռվեր կ'առնու . պիտի իմանայ որ Պ. Պլածլոն Հէսպէրիտեան պարտիզին պահապահն իր Պ. Կիշ բարեկամը կարգելով, այս վերջինը Վարդին տուաւ պէտք եղած հարուծը, որ ոսկի իննօրին վրայ ձեռք կարկառելու յանդղներ էր: Արդ՝ անտարակոյս զիտես, Պ. Մանկան, դու ոք այնքան ըստ զիտես ամեն բան, որ թագաւորն ալ իր կողմէ նշանաւոր գանձոն աչք ունի, և թերեւ պիտի մեռզաղը Կիշ կոմն որ անոր պաշտպան կանդներ է: Հիմակ պէտք եղածը բաւական իմացար, և միթէ ուրիշ տեղեկութիւն ալ կ'ուզե՞ն, խօսէ, հարցուիր:

— Ո՛չ, տիկին, ո՛չ, ուրիշ բան չեմ կամիր իմանալ:

— Սակայն զիտայր, վասն զի պէտք է որ այս բանս զիտնաս, Պ. Մանկան, զիտյիր որ թագաւորին սրտմառութիւնը սոսկալէ հետեանք պիտի ունենայ: Թագաւորին բնաւորութեան տէր մարդոց համար, սիրային բարկութիւնը մըրիկ մ'է:

— Զոր դոք կ'իսաղաղնէք, զմէք տիկին:

— Ե՞ս — զոչեց իշխանուհին բուռն հեղնութեան շարժումով մը — ես, և ի՞նչ իրաւամբ:

— Վասն զի, տիկին, ամիբաւութիւնը չէք սիրեր:

— Ես միթէ անիրաւութիւնն է, կարծեօքդ, թագաւորն արդիւ սիրային զործեր ընելու:

— Սակայն պիտի բարեխօսեք անշուշո՞ի նապաստ Կիշի:

— Է՛չ, ալ այս անդամ իրօք կ'իսենդամաս, պարոն — ըսաւ իշխանուհին ամբարտանութեամբ լի շեշտով մը:

— Ընդ հակառակն, տիկին, իմ խելքս զլուխս է, և աչա կը կրկնեմ, Պ. Կիշը պիտի պաշտպանէք թաղաւորին առջեւ:

— Ե՞ս:

— Այո՛, դոք:

— Եւ ի՞նչպէս կարելի է այդ բանը:

— Վասն զի Կիշին գատը ձերն է, տիկին — ըսաւ Մանկան եռանդպիլին այլ ցած ձայնով, որու աշերը սկսեր էին վառվոիլ:

— Ի՞նչ ըսել կ'ուզես:

— Կ'ըսեմ, տիկին, որ Լա Վալիէրի անուան դատին մէջ, Պ. Կիշի կողմէ եղած պաշտպանութեան առթիւ բացակայ Պլածլոնի համար, կ'զարմանամ որ դոք բարուրանք մը տեսաք:

— Բարուրանք:

— Այո՛:

— Բայց ի՞նչ բանի բարուրանք — կրկնեց իշխանուհին կմիմաւով, որ այն ինչ Մանկանի նայուածքը կ'քննէր:

— Տիկին, տիկին — ըսաւ երիտասարդը — բաւական խօսեցայ, կարծեմ, Զեր Բարձրութիւնը յորդորելու համար որ՝ թագաւորին առջեւ այն խեղճ Կիշը չամբաստանէք, որու զլուխը պիտի թագին ձեզի հակառակ եղող գաւակցութեան մը նիւթած ամեն թշնամութիւնները:

— Կ'ուզես ըսել կարծեմ, ընդ հակառակն, թէ օրիորդ Լա Վալիէրը չսիրողները, և մինչև անդամ մէկ քանի սիրողները թերեւս, կոմմին դէմ պիտի ելնեն:

— Ո՛չ, տիկին, յամառութիւնն այս աստիճան պիտի քշէք, և անձնուէր բարեկամի մը խօսին ձեր ականջը չպիտի բանաք: Պէտք է որ ձեղ անհաճոյ երեելու յանդղնիմ, պէտք է որ, ասկամայ անուանեմ այս կուռին պատճառ զմնուով Ճշմարիտ անձը:

— Անձը — ըսաւ իշխանուհին կարմրելով:

— Պէտք է — շարունակեց Մանկան — որ ցոյց տամ ձեղ խեղճ Կիշը զայրացած, կատղած, մոլեզնած այս անձին վրայ զարձած ամէն ձայներէն, պէտք է, եթէ յամառիք չհաւալու, և եթէ ես, նոյն անձն անուանելու առ յարդանս չկարենամ, պէտք է որ ես յիշեցնեմ ձեղ իշխանին և լորտ Պլքինկչէմի:

վէճերը, և դքսին այս աքսորին վրայ եղած ակնարկութիւնները։ զէաք է որ նկարագրեմ ձեղ այս անձին համելի լինելու, դիտելու և զանի պաշտպանելու համար կոմսին տարած հոգը, այն անձն որու համար կ'ապրի միայն, որու համար միայն շունչ ունի։ Լաւ ուրեմն, պիտի անուանեմ, և երբ այս ամէն բաները ձեր միաքը բերեմ, թերես այն ատեն խնանաք որ կոմսին համերութիւնը հանելով, վարդին կողմէ շատ ատենէ՝ ի վեր յարձակում կրելով, նոյն անձին վրայ վարդին արտասանած առաջին խօսքէն կրակ առած և վրէժինդրութեան ոգուով վառած է։

Իշխանուհին իր զէաքը ձեռաց մէջ պահեց։

— Պարմն, պարմն — զուշեց նա — միթէ զիտե՞ս թէ ինչ կը սես և որո՞ւ կ'ըսես։

— Այն ատեն — շարունակեց Մանիքան որպէս թէ իշխանուհիոյն բացաղանչութիւնները չէր լսած — ձեղ բան մը չպիտի զարմացնէ, ոչ կոմսին եռանդը կուիւ փնտուելու համար, ոչ իր հրաշալի ճարսիկութիւնը ձեր շահուց օտար խնդրոյ մը վրայ գործը գարձնելուն համար։ Մանաւանդ այս հիմանալի է հնարակի տութեան և պաղարիւնութեան կողմէ, և թէ այն անձն որու համար իրօք նիշ կոմը մենամարտեցաւ և իր արինը թափեց, խեղձ վիրաւորին երախտաղիտութեան զզացում մը պարտաւոր է, չէ թէ թափած արեան համար է անշուշտ, չէ թէ կրած ցաւերուն համար, այլ իր այն ընթացքին համար որով պահպանեց պատիւմոր իրենէն աւելի թանկագին կ'սեպէ։

— Ո՛չ — զուշեց իշխանուհին՝ իր թէ միայնակ լինէր — ո՛չ, միթէ իրօք ինձի՞ համար էր։

Մանկքան կրցաւ շունչ առնուլ. արիաբար շահեր էր հանդըստեան ժամանակ մը, և շունչ առաւ։

Իշխանուհին ալ իր կողմէ՝ վշտակիր մտմուքի մէջ ընկղմած մնաց։ Գիւրին էր գուշակել իր այլայլութիւնն իր կուրծքին արագ շարժումէն, իր աշաց նուազումէն, սրտին վրայ ստէսլ ձեռքը սեղմելէն։

Բայց իշխանուհիոյն համար՝ պչրասիրութիւնն անշարժ կիրք մը չէր, ընդ հակառակն՝ հոգ մ՝ որ ճարակ կ'փնտուէր և կ'զտնէր։

— Այն ատեն — ըսաւ իշխանուհին — կոմսն երկու անձ միանցամայն պարտաւորած պիտի լինի. վասն զի ո. Պրաժլօն ալ մեծ երախտաղիտութիւն մը պարտաւոր է Կիշ կոմսին, և այնքան աւելի մեծ, որ ամենուրեք և միշտ, օրիորդ Լա Վալեէր այս վեհանձն ախոյենէն իբրև պաշտպանուած պիտի համարուի։

Մանկքան համկըցաւ որ իշխանուհիոյն սրտին մէջ կատկածի նշոյլ մ'ալ դեռ ևս կար, և իր միաքը զիմադրութեանէ աւելի տաքցաւ։

— Արդարեւ աղջո՞ր ծառայութիւն մ'է Լա Վալեէրի մատուցածը — ըսաւ նա — աղջո՞ր ծառայութիւն մ'է, իրաւի, ո. Պրաժլօնի մատուցածը։ Մենամարտութիւնն այնչափ հռչակ հանեց որ կիսովին պիտի արատաւորէ այն նորատի աղջիկը, հռչակ մ'որով ՚ի հարկէ գերկոմսին հետ պիտի աւրուի։ Ասկէ կ'հետեւի որ ո. Վարդի հրացանակի հարուածը, մէկի մեղ երեք արդիւնք ունեցաւ, թէ կնկան մը պատիւը կ'սպաննէ, թէ մարդու մ'երջանկութիւնը, և թերես, նոյն միջոցին, մահու չափ վիրաւորած է Գրանսայի լաւաղջն ազատորդիներէն մին։ Ա՛չ, աիկին, ձեր տրամաբանութիւնը շատ պաղէ, միշտ կ'դատապարտէ այն, այլ երբէք չներեր։

Մանկքանի խօսքն իշխանուհիոյն չէ թէ սրտին այլ մափին մէջ մնացած յետին կասկածն ալ ցրուեց։ Այլ ևս խղճահար իշխանուհի և ոչ կասկածու կին մ'էր նա, այլ սիրտ մ'էր որ վէրքին ծանրութիւնն այն ինչ զզացեր էր։

— Մահու չափ վիրաւորուած է — մրմաւաց նա շնչասպառ ձայնով մը։ — Ա՛չ, ո. Մանկքան, միթէ չըսիր որ մահու չափ վիրաւորուած է։

Մանկքան հառաչ մը հանելով միայն պատասխանեց։

— Այսպէս ուրեմն, կ'ըսես թէ կոմսը վտանդաւոր կերպով վիրաւորուած է — շարունակեց իշխանուհին։

— Ե՛չ, տիկին, ձեռքին մէկը խորտակած է և կուրծքին մէջ գնդակ մը կար։

— Աստուած իմ, Աստուած իմ — վրայ բերաւ իշխանուհին տենդային յուղմայր մը — սոսկալի՛ բան, ո. Մանկքան։ Կ'ըսես

թէ ձեռքին մէկը խորասակած է, և կուրծքին մէջ զնդակ մ'ունի, Տէ՛ր Աստուած: Եւ միթէ այն վատազգի, թշուառ, մարդասաղան Վարդին ըրաւ այդ բանը: Ճշմարիսը, երկին արդար չէ:

Մանիքան բուռն յուղման մ'ենթակայ կ'երեւէր: Արդարեա շատ աղդուռթիւն ցոյց առեր էր իր ջատաղովութեան վերջին մասին մէջ:

Իսկ իշխանուհին, բոլոր պատշաճութիւնները նկատելու առեն չունէր. երբ կիրքը, թէ բարկութիւն լինի և թէ համակրութիւն, անդամ մը խօսէր, ոչ ոք անոր թուիչքը կրնար արդիւել:

Տիկինը Մանիքանի մօանցաւ, որ այն ինչ աթոռի մը վրայ ընկեր էր, որպէս թէ վիշտը բաւական զօրաւոր պատճառ մ'էր պաշտօնական քաղաքավարութեան կանոնաց հակառակ վարուելու:

— Պարոն — ըստ նա՝ անոր ձեռքը բռնելով — անկեղծ և համարձակ եղիք:

Մանիքան դլուխը վերցուց:

— Պ. Կիշ — շարունակեց իշխանուհին — իրօք մահուան վտանգի մէջ է:

— Երկու անդամ, տիկին — ըստ Մանիքան — նախ արեան հոսումին պատճառաւ, ձեռքին մէկ շնչերակը բացաւած լինելով, երկրորդ՝ լանջին վէրքին պատճառաւ, որ՝ թերեւս՝ բժշկին յայտնած երկիւղին նայելով՝ կարեռ դործարան վեսած պիտի լինի:

— Ուրեմն, կարելի է մեռնի:

— Մեռնի, այո՛, իշխանուհիս, և առանց դիտնալու մխիթարութիւնն ունենալու իսկ որ իր անձնութրութիւնն իմացած էք:

— Դու անոր պիտի իմացնես:

— Ե՞ս:

— Այո՛, միթէ բարեկամը չե՞ս:

— Ե՞ս: Ո՛չ, ո՛չ, իշխանուհի, Պ. Կիշի պիտի ըսեմ, եթէ խեղճը լսելու վիճակի մէջ է, պիտի ըսեմ միայն տեսածս, այս ինքն անոր համար ունեցած անդթութիւնդ:

— Ո՛չ, պարոն, այդ բարբարոսութիւնը չպիտի դործես:

— Ո՛չ, ի՞նչպէս չէ, տիկին, այդ Ճշմարտութիւնը պիտի յայտնեմ. վասն դի, վերջապէս, անոր հասակն ունեցողն 'ի բնէ զօս

բաւոր կ'լինի: Բժիշկները զիտուն են, և եթէ դիպուածով խեղճ կոմսին վէրքը բժշկուի, չեմ ուղեր որ սրտի վէրքէն մեռնելու ենթարկուի մարմնոյ վէրքէն ազատելէն ետեւ:

Այս ըսելէն ետեւ Մանիքան ոտք ելաւ, և խորին յարդանօք հրամեշատ առաջ կ'պատրաստուէր:

— Գոնէ, պարոն — ըստ իշխանուհին դրեթէ աղերսազին դէ մքով զանի կեցնելով — պիտի հաճիս ըսելու ինձ թէ ի՞նչ վիճակի մէջ կ'գանուի հիւանդը, ով է զանի ինսամող բժիշկը:

— Ծատ գէշ է, տիկին, ահա վիճակը. իսկ բժշկին զալով, նոյն իսկ նորին Վեհափառութեան բժիշկն է, Պ. Վալօ: Այս բժշկին աջակից կ'գանուի իր մէկ պաշտօնակիցն որու տունը փոխադրուած է Պ. Կիշ:

— Ինչպէս, միթէ Պ. Կիշ այս դղեակը չղտնուիր — հարցուց իշխանուհին:

— Ափսոս, տիկին, խեղճ տղան այնքան դէշ վիճակի մէջ էր, որ մինչև այս տեղ չկրցան զանի բերել:

— Տուր ինձ իր հասցէն, պարոն — ըստ իշխանուհին աշխուժիւ — անոր վրայ լուր ինդրելու համար մարդ պիտի զրկեմ:

— Փէօր փողոցը, աղիւսակերտ տուն մը սպիտակ փեղկերուվ: Բժշկին անոնը տան վրայ գրուած է:

— Միթէ վիրաւորին քովը պիտի դառնամ, Պ. Մանիքան:

— Այո՛, տիկին:

— Այս, ատեն, պատշաճ է որ ինձ ծառայութիւն մ'ընես:

— Չեր Բարձրութեան հրամանին պատրաստ եմ:

— Ընելիքդ դարձեալ ըրէ. Պ. Կիշի մօտ դարձիր, բոլոր ներկայ եղողները հեռացուր, հաճէ դու ևս հեռանալու:

— Իշխանուհի . . . :

— Անօգուտ բացարութիւններ ինդրելով ժամանակ չանցընենք: Աւասիկ իրողութիւնը. մինակ ըսելիքս իմացիր և ուրիշ բան մի փնտուեր անոր մէջ. միայն ըսելիքս հարցուր: Իմ նամիշտներէս մէկը, կարելի է երկու հողի անոր դրկեմ, ժամանակն ուշ լինելուն. չեմ ուղեր որ անոնք քեզ տեսնեն, կամ, աւելի բաց ըսեմ, չեմ կամիր որ գու զանոնք տեսնես. ասոնք այնպիսի զդու-

շութիւններ են զորս կրնաս ըմբռնել, դու մանաւանդ, Պ. Մանիքան, դու որ ամէն բան կ'դուշակես :

— Ո՛չ, իշխանուհիս, շատ լաւ + մինչև անդամ աւելի լաւ բան մը կրնամ ընել. ձեր պատղամարեր կանանց առջեւն պիտի քալեմ. այս միջոցով ոչ միայն Ճամբան անոնց ցցուցած պիտի լինիմ ապահովի, այլ և պիտի պաշտպանեմ զանոնք եթէ դիպուածն այնպէս բերէ՝ թէև հաւանական չերեիր, որ իմ պաշտապանութեանս կարօտին :

— Եւ ապա, մանաւանդ այս միջոցաւ, առանց որ և է դժուարութեան ներս պիտի մտնեն, այնպէս չը:

— Անտարակոյս, տիկին, վասն զի ես ամենէն առաջ մանելով, դժուարութիւնները պիտի յարդարեմ, եթէ դիպուածով դժուարութիւններ զտնուին :

— Լաւ ուրեմն, զնա, զնա, Պ. Մանիքան, և սանդղին ուտքը սպասե՞ :

— Ահա կ'երթամ, տիկին :

— Սպասե՞ :

Մանիքան կայ առաւ :

— Երբ երկու կանանց քայլը լսես որ վար կ'իջնեն, դուքս եւ լիր և հետեւէ, առանց ետ դառնալու, խեղճ կոմին տունը տասնող Ճամբան :

— Բայց եթէ դիպուածով երկու ուրիշ կիններ վար իջնեն և ես ալ սխալիմ, այն ատե՞ն :

— Երեք անդամ մեղմիկ ձեռքով պիտի զարնեն :

— Այո՞, տիկին :

— Գնա, գնա :

Մանիքան ետ գարձաւ, վերջին անդամ մ'ալ բարեւց և ուրախութեամբ դուքս ելաւ: Գիտէր արդարեւ որ իշխանուհիսն ներկայութիւնը կոմին վէրքին համար լաւաղոյն սպեղանին էր :

Քառորդ մը չէր անցած երբ դրան մը զդուշութեամբ բայցուիլն ու զոյտիլը լսուեցաւ: Ապա թեթև քայլեր լսեց որ բազմիքին երկայնքը կ'սահմէին, ապա ձեռքով երեք հարուածները, այսինքն որոշեալ նշանը :

Իսկոյն դուրս ելաւ, և իր խոստաման հաւատարիմ՝ առանց դլուխը դարձնելու ուղղուեցաւ՝ ֆօնդէնպլօի փողոցներէն անցնելով դէպ 'ի բժշկին տունը :

Զ

ՄԱԼԻՔՈՒ ԳՐԱՆՍԱՅԻ ԹԱՎԱՏՈՐՈՒԹԵԱՆ ԴԻՒՆԱՆՊԵՏԸ

Երկու կանայք իրենց լոգիկներով փաթթուած և սև թաշէ կիսադիմակով իրենց երեսը ծածկած՝ Մանիքանի հետոց կ'հետեւէին երկչոսութեամբ :

Առաջին դստիկոնը, կարմիր գամասկեան կերպասէ վարագոյրներու ետին՝ սեղանի մը վրայ դրուած կանթեղի մ'անուշ նշայլը կ'փայլէր :

«Ոյն սենեկին միւս ծայրը՝ զալարուն մահճակալի մը մէջ, որ կանթեղին լոյսը մարող վարագոյրներուն նման վարագոյրներով դոցուած էր, Կիշ կ'հանդչէր, կրկին բարձի մը վրայ զլուխը դրած, աշերը թանձր մշուշի մէջ ընկղմած . սև երկայն մազեր, որ զանդուր էին և ցիր ու ցան անկողնին վրայ, իրենց անկարդութեամբը կ'զարդարէին երիտասարդին չոր և դունատ քունքը :

Դիւրին էր տեսնել որ տենդն այս սենեկին դլխաւոր հիւրն էր :

Կիշ կ'երագլէր : Խաւարին մէջէն՝ իր միաքը կ'հետեւէր անրջային երաղի մը զսր Աստուած կ'զրկէ մահուան Ճամբուն վրայ առնոնց որ քիչ ասենէն յաւիտենականութեան տարօրինակ աշխարհը պիտի ընկնին :

Քանի մ'արեան արատներ որ թերեւս հեղուկ էին՝ զետինը կ'աղաւեղլէին :

Մանիքան վեր ելաւ աստիճաններէն շտապաւ . մինակ սեմին վրայ կայ առաւ, մեղմիկ դաւուր հրեց, զլուխը սենեակը մոյցուց, և տեսնելով որ ամէն բան հանդարտ է, տոից մատերուն վրայ մօտեցաւ՝ պղնձէ մեծ աթոռին, որ Հանրի ծիրէն մնայած ան-

Հարժ կահի առդին մ'էր, և տեսնելով որ հիւանդապահը բնաւ կանապէս քնացեր էր, զանի արթնցոց և աղաչեց որ մօսակայ սենեակն անցնի :

Ապա՝ անկողնին մօտ կամուն կեցած՝ պահ մ'ինքնիրեն հարցուց թէ պէտք է ո. Կիշն արթնցնել աւեսիսը տալու համար :

Բայց որովհետեւ դրան ետեւէն շըջաղգեստներու մետաքսեայ շըրշինը կ'լսէր և իրեն ուղեկից կանաց շնչասպառ շնչառու թիւնը, որովհետեւ կ'տեսնէր որ գոնակը կ'բացուէր, անկողնէն հեռացաւ և հիւանդապահին քովը դարձաւ մօտակայ սենելին մէջ :

Այն ատեն՝ Ճիշտ մեկնելու միջոցին՝ սկահակը վերուցին, և երկու կանայք Մանկանի ձգած սենեակը մտան :

Ամենէն առաջ ներս մանող կինն իր ընկերուհոյն հրամայական շարժում մ'ըրաւ, որով դրան մօտ դանուած աթոռին մօտ դամուած մնաց :

Այն ատեն անվեհեր մօտեցաւ անկողնին քովը, վարադոյներն երկաթէ անրակներուն վրայ դարձուց, և անոնց ծփին ծալքերը բարձին ետեւը նետեց :

Այն ատեն կոմսին դեղնած դէմքը տեսաւ, տեսաւ անոր աջ ձեռքը, ձիւնափայլ կտաւով մը սպատատած, որ կ'նկարուէր մութ ծաղիկներով զարդարուն փառաւոր օթոցին վրայ որ այս ցաւոց անկողնոյն մէկ մասը կ'ծածկէր :

Իշխանուհին սարսուռ մ'զգաց արեան կաթիւ մը տեսնելով որ կտաւին վրայ հետզիւտէ կ'լսնար :

Երիտասարդին սպիտակ կտ բծքը բաց էր, որպէս թէ զիշերային զովութիւնն անոր շնչառութեան օգնէր : Փոքրիկ սպատան մը վէրքը կ'ծածկէր, և ասոր բոլորակը դուրս թափած կապուտակ արեան շըջանը կ'ընդարձակէր :

Նորատի կնկան բերնէն խորունի հառաչ մ'ելաւ : Անկողնին սինակին կոթնեցաւ և իր զիմակին ծակերէն այս վշտակ տեսարանին նայեցաւ :

Խռալու և սուր հնչիւն մը մահուան հոնչիւնի պէս կոմսին աեղմուած ակուաներէն դուրս կ'ելնէր :

Դիմակաւոր տիկինը վիրաւորին ձախ ձեռքը բռնեց :

Այս ձեռքը հրատապ ածուխի պէս կ'այրէր :

Բայց այն միջոցին որ իշխանուհին իր սպանագին ձեռքը հիւանդին ձեռքին վրայ դրաւ, այս ցրտին ներդործութիւնն այնքան սաստիկ եղաւ, որ Կիշ աշերը բացաւ և նոր կեանք մ'առնլու ջանաց իր նայուածը հրահրելով :

Իր առաջն տեսած բանն եղաւ ուրուականն իր անկողնին սիւնակին առջև կանգուն :

Այս տեսքին իր աշերը լայնցան, բայց իմացականութիւնն առոր մէջ չվառեց իր յստակ կայծը :

Այն ատեն տիկինն իր ընկերուհոյն նշան մ'ըրաւ, որ դրան առջև կեցեր էր, անսարակոյս այս վերջինն արդէն պէտք եղած հրահանդն առեր էր, վասն զի որոշ և յստակ ձայնով մը և առնց վարանման, սա խօպն արտասանեց :

— Կ'ամ, Կորին բարձրութիւն Տիկինն ուզեց իմանալ թէ այս վէրքին կակիծն ինչպէս կ'ասնիք և իմ բերնովս յայսնել թէ որ չափ վիշտ կ'զայ տեսնելով որ կ'աստապիք :

Իշխանուհի բառը լսելուն՝ Կիշ շարժում մ'ըրաւ. տակաւին չէր տեսած այս ձայնը հանող հանձը :

Ուստի բնապէս դարձաւ այն կողմն ուսկից այս ձայնը կ'դար :

Բայց որովհետեւ սառած ձեռքը չէր հեռացած, վերստին աշքն այս անշարժ ստուերին դարձուց :

— Միթէ դմք էք ինձ խօսողը, իշխանուհի — հարցուց նանուաղուն ձայնալ մը — կամ ձեզի հետ ուրիշ անձ մը կար այս սինեկիս մէջ :

— Այս — պատասխանեց ուրուականը զրեթէ անխմանալի ձայնով և զլուխը վար ծուելով :

— Լաւ ուրեմն — ըստ վիրաւորը ճշամբ — շնորհակալ եմ: Վաէք իշխանուհոյն որ բնաւ մեռնելուս վրայ չեմ ցաւիր, քանի որ զիս յիշեց :

Այս Թռնէլ բառին վրայ՝ զոր հողեվար մը կ'արտասանէր, զիմակաւոր տիկինը չկրցաւ իր արտաուքը բռնել, որ իր դիմակին սակէն հոսեցան և իր այտերուն այն մասին վրայ երեցան որ դիմակէն անդոց էին :

Կիշ՝ եթէ աւելի սթափած լինէր, պիտի տեսնէր այս արտասուքն որ մարդարտի պէս շողջողուն կ'զլորէին իր անկողնին վրայ :

Տիկինը մասնալով որ գիմակ մ'ունէր, ձեռքն աչացը տարաւոր սրբէ, և իր ձեռքին հանդիպելով սահուն և պատ թափշը սրտմութեամբ դիմակը կորպեց և դետինը նետեց :

Այս անակնակալ երեսյթին վրայ, որ իրեն համար կարծես թէ ամուկ մը կ'ենէր, Կիշ աղաղակ մ'արձակեց և թեերն երկնցուց :

Բայց ամէն խօսք իր շրթանց վրայ մարեցաւ, ինչպէս ամէն զօրութիւն իր երակներուն մէջ :

Իր աջ ձեռքը՝ որ կամաց դրդման հետեւը էր՝ իր ոյժին աստիճանը չկըսելով, իր աջ ձեռքն անկողնին մէջ ընկաւ, և անմիջապէս՝ այն սպիտակափայլ կտաւն աւելի լայն արեան բիծով մը կարմբեցաւ :

Եւ նոյն սպահուն՝ երիտասարդին աչերը կ'զցուեին և կ'բացուեին որպէս թէ սկսած լինէր մահուան անպարտելի հրեշտակին հետ իր սպայքարը :

Ապա՝ քանի մ'անզօր շարժումներ ընկըն ետեւ՝ դլուխն անշարժ մնաց բարձին վրայ :

Միայն իր դլուխն որ ՚ի սկզբան գունատ էր կապոյտ զարձաւ :

Դշնանուհին վախցաւ. բայց այս անզամ՝ սովորութեանը հակառակ՝ երկիւղը դրաւիչ եղաւ :

Դշնանուհին երիտասարդին կողմը ծուեցաւ, իր չնչովը լափելով այս պաղ և անդոյն գեմքը, որու զրեթէ դուաւ, ապա համբոյր մը գրսշմց արագապէս Կիշի ձախ ձեռքին վրայ, և Կիշ՝ որպէս թէ ելքիտրական ցնցումէ շարժելով՝ երկրորդ անդամ մ'ես արթնցաւ, անզղայ բացաւ իր աչերը խոշոր և խորին նուաղման մէջ ընկաւ :

— Օ՞ն — ըստ նա իր ընկերուհւոյն — ծն, դնանիք, չենք կրնար աւելի երկար տաեն մնալ այս տեղ, կարելի է յիմարական դործ մ'ընեմ :

— Տիկին, տիկին, Ձեր բարձրութիւնը կ'մոռնայ իր դիմակը ըստ արթուն ընկերուհւոյն :

— Ա՛ռ գետնէն — սպատափանեց իր տիրուհին սանդղէն վար սահելով ուշաթափ :

Եւ որովհեաւ փողոցին դուռը կէս բայ մնայեր էր, երկութունները նոյն բացուածքն անցան՝ և թեթեարշաւ հասան սպաւալու :

Կիներէն մին դնաց մինչև իշխանուհւոյն սենեակը՝ ուր անհետեղաւ :

Միւսը սպատոյ աղջկանց սենեակը մուաւ, այսինքն սաորին դստիկնը :

Երբ սենեակը հասաւ, սեղանի մ'առջե նստաւ, և առանց շունչ առնլու չափ ժամանակ անցընելու, սկսաւ հետեալ տոմսակը դրել :

« Այս իրկուն՝ Տիկինը Պ. Կիշը տեսնելու դնաց :

« Այս կողմէն ամէն բան կարգին է :

« Դու ալ քու կողմէդ շարունակէ, և մանաւանդ այս թուղթն այրէ՞ » :

Ապա զիրը ծալլեց երկայն ձեւ մը տալով անոր, և իր սենեկն զգուշութեամբ դուրս ելնելով, նրբաղաւթէ մ'անցաւ ուսկից իշխանին սպատառոսդ ավատրդիներուն պաշտօնատունը կ'երթուէր :

Անդ՝ դրան մ'առջե կայ տուաւ, անոր երկու ծանր հարուած տուաւ, թուղթը սպրդեց ներս և խոյս տուաւ :

Յետոյ իր սենեակը վերադառնալով՝ իր ելուստն ու տոմսակին դրութիւնը մատնող ամէն նշանները ջնջեց :

Մեր արդէն նշանակած նպատակին համար՝ սոյն կնկան ըրած հետաքննութեանց մէջ սեղանին վրայ իշխանուհւոյն դիմակը տեսաւ, զոր հետք բերեր էր, իր տիրուհւոյն հրամանին համեմատ, բայց անոր յանձնելու մոռցեր էր :

— Հօ, հօ — ըստ — այսօր ընելու մոռցածս վաղն ընելու չմունանք :

Եւ թաւշէ գիմակն այտէն բունեց, և իր բթամատը նամէտ զպալով՝ իր բթամատին նայեցաւ :

Ոչ միայն նամէտ այլ և կարմրցած էր :

Գիմակն ընկեր էր այն արեան բիծին վրայ, որ ինչպէս ըսինք, դետինը կ'թաթաւէր, և գիմակին արտաքին սեւ երեսէն, որ դի-

պուածով արեան դպիք էր, նոյն արիւնը ներս անցեր և սպիտակ բեհեղը կ'արատէր :

— Հօ — ըստ Մօնդալէ, վասն զի մեր ընթերցողներն անշուշտ արդէն զանի ճանչցած են անոր բռնած հնարագէտ ընթացքէն ղորս նկարագրեցինք — Հօ, Հօ, այս դիմակն անոր չպիտի յանձնեմ, այժմ շատ թանկաղին է :

Եւ ուսք ենելով հայի ծառէ արկղի մը վաղեց որ շատ մը զղեստի և հոտաւէտ իրերու վերաբերեալ առարկաներ կ'սպառու նակէր :

— Ո՛չ, աստ ես դնելու չէ — ըստ նա — այսպիսի աւանդ՝ ասպին ամոլին նետելու աւանդներէն չէ :

Ապա՝ սպահ մը լոռութիւն պահելէն ետեւ՝ և իրեն միայն յատուկ եղող ժպիտով մը .

— Ազո՞ր դիմակ — յաւելցոց Մօնդալէ — որ քաջարի ասպիտին արեամբ ներկուած ես, հրաշալեաց մթերանոցին մէջ երածաս պիտի միանալու լա Վալելերի, Ռառուլի նամակներուն. ըռլոր այս սիրային հաւաքածոյն որ օրին մէկը Գրանսայի և անոր թաղաւորութեան պատմութեան պիտի ծառայէ : Պ. Մալիքօրնի քոլը պիտի զնաս — շարունակեց յիմար աղջիկը ծիծաղելով մինչդեռ հանուելու սկսեր էր — պիտի զմնես այն արժանաւոր Մալիքօրնը — ըստ նա մնմը մարելով — որ կարծէ թէ միայն իշխանին սենեկաց վերակացուն է, մինչդեռ ես զնիքը՝ Պուրագոններու տան և թաղաւորութեան քաջադոյն ազնուականաց դիւանապետն ու պատմաբանը պիտի ընեմ : Թո՞ղ այսուհետեւ զանդատի եթէ դորձ չունի, այն ցակոտ Մալիքօրն :

Եւ իր վարագոյրները քաշելով քնացաւ :

Է

ՈՒՂԵՏՈՐՈՒԹԻՒՆ

Հետևեալ օրը՝ որ չուխն համար որոշեալ օրն էր, Ճիշտ ժամն

քննին, թաղաւորը՝ թաղուհեաց և իշխանուհեցին հետ, մեծ սանդղէն իջան կառք մը նստելու՝ վեց ձիով լծուած որ սանդղին ստորաը դափիր կ'հատանէին :

Բոլոր պալատականք գեր-ա-Շըլալի մէջ ճամբորդութեան զղեստով կ'սպասէին . և փայլուն տեսարան մ'էր տեսնել այնքան թամբեալ ձիեր, լծուած կառքեր, և կանայք իրենց սպաներով, ծառաներով և պայիկներով շրջապատեալ :

Թաղաւորն իր կառքը մոտաւ երկու թաղուհեաց հետ :

Իշխանուհին ալ նոյնն ըրաւ իշխանին հետ :

Պատոյ աղջիկներն ալ իրենց յատկացեալ կառուց մէջ երկերու հողի մտան նստան :

Թաղաւորին կառքն առջեւէն գնաց, ապա իշխանուհեցինն եկաւ, յետոյ՝ պաշտօնական սովորութեան համեմատ՝ միւսները հետոհետէ հետեւցան :

Օդը ասք էր, թեմեն քամի մ'որ առատու բաւական զօրաւոր երեցեր էր մթնոլորտը զովացնելու, քիչ ատենէն ամպերուն ներքեւ սպահուած արեւէն վառեցաւ, և զետնէն բարձրացող տաք շողին մէջէն անցաւ միայն իրեւ հրավառ հով մ'որ բարակ փոշի մը կ'հանէր և իրենց նապատակին հասնելու անհամբեր ուղերուներուն երեսին կ'զարնէր :

Ամենէն առաջ ջերմութենէ զանդատողն եղաւ իշխանուհին :

Իշխանն անոր պատասխան տուաւ կառքին մէջ կոնակի վրայ ընկնելով իրը մարդ մ'որ մարելու վրայ է, և ինքունին հոտաւէտ աղերով ողողեց, միանդամայն խորունկ հառաջներ հանելով :

Այն ատեն իշխանուհին ըստ անոր իր ամենէն սիրաւէտ դէմքովը .

— Ճշմարիար, պարոն, կարծէի թէ բաւական վեհանձն էք, և այս ջերմութեան պատճառաւ կառքս ինձի կ'թողուք և դուք ձիով ճամբայ կ'ընէք :

— Զիով — զուեց իշխանն ահաբեկ ձայնով մը, որմէ կ'իմացուէր թէ այս խորհրդին հաւանելէն շատ հեռու էր — ձիով . բայց ինչպէս կ'առաջարկեք այդպիսի բան մը, իշխանուհիս, այս հրավառ հովէն բոլոր մարմնս պատառ պիտի լինէր :

Իշխանուհին սկսաւ ծիծաղել :

— Իմ հովանոյս կրնաք առնուլ — ըստ նա :

— Հապա զայն բռնելու ծանրութիւնն ի՞նչ ընեմ — պատասխանեց իշխանը մեծ պաղութեամբ — ասկէ զատ՝ ձի չոնիմ :

— Ինչպէս, ձի չկայ — պատասխանեց իշխանուհին, որ՝ եթէ ոչ առանձնութիւն, գէթ լճդդիմադրձութիւնը կ'շահէր — ձի չկայ : Կ'սխալիք, իշխան, վասն զի ահա ձեր սիրական աշխետ ձին :

— Իմ աշխետ ձիս — գոչեց իշխանը՝ գոնակին կողմը ծռելու համար շարժում մ'ընելու փորձ փորձելով, թէև կիսկատար ըրաւ, և շուտով իր անշարժ գիրքը բռնեց :

— Այս — ըստ իշխանուհին — նոյն ձին Մալիքօրն կ'քաշէ ձեռօքը :

— Խեղճ կենդանի — պատասխանեց իշխանը — ո՛րչափ պիտի տարցած լինի :

Եւ այս խօսքն ըսելէն ետև՝ աչքը զոցեց, շունչ տուող հոգեվարի նման :

Իշխանուհին ալ իր կողմէ կառքին միւս անկիւնը ծռւլաբար երկնցաւ, և այնպէս աչերը գոցեց, չէ թէ քնանալու համար, այլ հանդիսաւ խորհելու համար :

Սակայն թաղաւորը՝ կառքին առջեի կողմը նստած՝ որու ներքին կողմն երկու թաղուհեաց թողեր էր, այնսկի սրմանեղութիւն մը կ'զգար անհանդիստ սիրահարներու յատուկ՝ որ միշտ՝ առանց իրենց հրավառ եռանդն ամնիելու՝ սիրական առարկային տեսութեան կ'կարօտին, ապա կէս դոհ կ'հեռանան առանց դիտելու որ առելի հրատաս կարօտութեան ենթակայ զտնուած են :

Թաղաւորը, ինչպէս որ ըսինք, ամենէն առաջ զնալով իր տեղէն չէր կարող նշմարել պատոյ կանանց և աղջկանց կառքը, որ ետեէն կ'զային :

Ասկէ զատ՝ պարստառ էր նորատի թաղուհեաց անվերջանալի հարցումներուն պատասխան տալ, թաղուհին որ իր սէրեւէ երկան մօտ զտնուելուն համար ինքվինքն երջանիկ համարելով, ինչպէս որ կ'ըսէր պաշտօնական ձեւը մունալով, իր բոլոր սիրովը զանի

կ'շրջապատէր, իր հոգերով զանի կ'կաշկանդէր, առ աչի որ իր ձեռքէն զանի չյափշտակեն, կամ իրմէ հեռանալու համար թաղաւորին փափաքը չծնի :

Անսա թաղուհին, որ ատեն ատեն իր կուրծքին մէջ զդացած սուր իիթերով կ'տառապէր միայն, զուարթ կերպարան մը կ'յայտնէր, և թէև թաղաւորին անհամբերութիւնը կ'զուշակէր, չարամութեամբ անոր տան ջանկը կ'երկարացդէր նոր ՚ի նորոյ խօսակցութիւն սկսելով, Ճիշտ այն միջոցին որ թաղաւորն ինքվինքը դանելով իր գաղանի սիրային խորհուրդները կ'զգուէր :

Այս ամենը՝ թաղուհին կողմէ մանր մտնր հողատարութիւն, Անսա թաղուհեաց կողմէ ընդդիմապարձութիւն ըստ երեսթին անտանելի գարձան վերջապէս թաղաւորին, որ չէր դիտեր իր սրտին յուղմանց հրամանել :

Կախ չերմութենէ զանդատեցաւ, որ որիշ արտունջներու նախաշաւիղ մ'էր :

Բայց բաւական ճարպիկութիւն կ'ցուցնէր այս մասին սրպէն զի Մարի-Թէրէ զի նախատակը քնաւ չկուշակէ :

Ուստի թաղաւորին ըսածը միամորէն ընդունելով իր ջայլեամի փետուրներովը Լուին հովահարեց :

Բայց երբ տարութիւնն անցաւ, թաղաւորն սկսաւ զանդատիլ որ սրտները ձկանցան և թմրեցան, և որովհետեւ նոյն պահուն կառքը կայ կ'առնուր ձի փոխելու համար,

— Կ'ուղիք որ ձեզի հետ վար իջնեմ — հարցոց թաղուհին : — Իմ ոտքս ալ թմրեցան : Քանի մը քայլ առնենք, յետոյ թողի զան կառքերը մեղի միանան և նորէն մեր աեղը կ'սատինք :

Թաղաւորն ուղը ուղաստեց . այս տաժանելի տան ջանք մ'է ուրով նախանձու կինն իր անհամատարիմ մարդուն կրել կ'տայ, և թէև նախանձով կ'տանջուի, բաւական ինքնիշխանութեամբ ինքվինքը կ'զսպէ որպէս զի բարկութեան տեղի չտայ :

Սակայն՝ թաղաւորը չէր կրնար մերել, ուստի թաղուհեաց առաջարկութիւն ընդունեց, վար իջաւ, իր թեր թաղուհեաց տուաւ, և անոր հետ բաղմաթիւ քայլեր առաւ, մինչդեռ ձիերը կ'փոխեին :

Թագաւորը՝ քալելու ատեն տենչալի ակնարկ մը կ'սետէր պաշտականաց վրայ որ ձիով ուղերձու բարեբաղդութիւնն ունէին :

Թագաւոհին քիչ ատենէն դիտեց որ հետիւսն շրջադայութիւնը թագաւորին հաճելի չէր որչափ չէր նաև կառքով ուղերձութիւնը : Աւտի խնդրեց որ վերստին կառքը հեծնէ :

Թագաւորը զանի մինչև քայլարկը ապրաւ, բայց բնաւ անոր հետ հեծնաւ : Երեք քայլ նահանջեց, և կառուց շարժին մէջ փնտուեց այնքան իր հետաքրքրութիւնը շարժող էակը :

Վեցերորդ կառքին դռնակին առջեւ և ապահերի սպիտակ դէմքը կ'երևէր :

Երբոր թագաւորն իր տեղն անշարժ կ'ցած՝ կ'խորհեր առանց տեմնելու որ ամէն բան պատրաստ էր, և միայն իրեն կ'սպասէին, երեք քայլ հեռու՝ ձայն մը լսեց որ յարդանօք իրեն խօսք կ'աղջէր : Այս Պ. Մալիքօրնն էր, որ զինակի հադուստ հաղած, երես ձիերու սանձն իր ձախ թելին ներքե բռներ էր :

— Արդեօք Ձեր Վեհափառութիւնը ձի՞ մը խնդրեց — հարցուց նա :

— Չի՞ մը : Միթէ իմ ձիերէս մին ունի՞ս — հարցուց թագաւորը, որ այս աղատորդին ճանչելու փորձ կ'փորձէր, որու դէմքը տականին ընտել չէր իրեն :

— Վեհափառ արքայ պատասխանեց Մալիքօրն — դէթ Ձեր Վեհափառութեան ծառայելու համար ձի մ'ոնիմ:

Եւ Մալիքօրն իշխանին այն աշխատ ձին ցցց տուաւ, զոր արդէն իշխանուհին դիտեր էր :

Ինդանին փառաւոր էր և տականին իր զարդը նորոդ շինուած էր :

— Բայց իմ ձիերէս մին չէ այն, պարոն — բուաւ թագաւորը :

— Վեհափառ, Նորին բարձրութեան իշխանին ախոռէն առանուած ձիերէն է : Բայց Նորին բարձրութիւնը ձի չհեծներ երբ այսպէս օգը տաք է :

Թագաւորը բան մը չպատասխանեց, այլ աշխուժիւ այն ձիուն մօտեցաւ, որ երկիրը կ'պեղէր իր ոտնովը :

Մալիքօրն շարժում մ'ըրաւ որ ասպատանը բռնէ . բայց Կոռին Վեհափառութիւնն արդէն աշտանակեր էր :

Այս բարեպատեհ առթէն իր նախորդ զուարթութեան մէջ ընկաւով, թագաւորը ժպակելով թագուհեաց կառքը վազէց որ իրեն կ'սպասէին, և Մարի-Թէրէզին շուարած կերպարանին չնայելով,

— Ա՞չ, իրաւ որ — ըստ — այս ձին դտայ և կ'հեծնեմ: Կառքին մէջ կ'խղզուէի, մաք բարեաւ առ այժմ, տիկիններ :

Աղա իր ձիուն կլոր վլին վրայ ծռելով չնորհալի, մէկ վայրկինի մէջ աներեղիթ եղաւ :

Անսա թագուհին ծռեցաւ որ աչօքն անոր հետեւի . շատ հեռուն չղնաց, վասն զի վեցերորդ կառքին հասնելուն, ձիուն ընթացքը կեցաց և զիխարկը հանեց :

Լա Վալիերի բարեկեց . օրիորդը վլինքը տեմնելուն, զարմացան թեթև ճիկ մ'արձակեց, երբ նոյն պահութենէ կը կարմըէր :

Մօնղալէ որ կառքին միւս անկիւնը նստեր էր, թագաւորին խորին յարդանօք բարեկեց : Աղա իրեւ մասացի կին մը, այնպէս ձեւացուց թէ դաշտանկարէն շատ կ'ախործի, և ձախ կողման անկիւնը քաշուեցաւ :

Թագաւորին և Լա Վալիերի մէջ եղած խօսակցութիւնը, ինչպէս ամէն սիբահարներու խօսքը, նախ ճարտասան ակնարկներով և քանի մ'անիմաստ բառերով սկսաւ :

Թագաւորը յայտնեց թէ ո՛րչափ տաքցէր էր կառքին մէջ, այնպէս որ ձի մ'իրեն մեծ բարիք մ'երեցէր էր :

Եւ — յարեց նա — բարեբարը բոլորովին խելացի մարդ մ'է, վասն զի իմ միաքս զուշակեց : Այժմ փափաք մը միայն ունիմ, այս է՝ կ'ուղեմ դիանալ թէ ովկ է այն աղատորդին որ այսպէս ճարպիկա թեամբ իր թագաւորին ծառայեց և իր գտնուած տաժանելի ձանձրոյթէն վլինքն աղատեց :

Մօնղալէ՝ այս մնախօսութեան ատեն՝ որ առաջին խօսքէն իր հետաքրքրութիւնը շարժեր էր, Մօնղալէ մօտեցէր և այնպիսի դիրք մ'առեր էր որ թագաւորին նայուածքն իրեն հանդիպի խօսքն աւարտելու ատեն :

Այնպէս եղաւ որ՝ թագավորն ինչպէս իրեն նոյնպէս և առ վահերի նայելու ատեն հարց ու փորձ ըսելով, այնպէս կարծեց Մօնղալէ որ իրեն ուղղեալ էր հարցումը, և թէ հետեապէս կրնար սպատասխան տալ:

Շւատի սպատասխանեց.

— Վեհափառ, ձեր հեծած ձին իշխանին ձիերէն մին է, զոր նորին բարձրութեան աղասորդիներէն մին կ'առաջնորդէր:

— Եւ այս աղասորդւոյն անունն ի՞նչ է, ինդրեմ, օրիորդ:

— Վեհափառ, Պ. Մալիքօրն է:

Այս անունն իր սովորական ներդործութիւնն ըրաւ:

— Մալիքօրն — կրկնեց թաղաւորը ծիծաղելով:

— Այս, տէ ու արքայ — սպատասխանեց Օր: — Ահա սա ձիաւորն է որ ձախ կողմէն կ'արշաւէ:

Եւ ցոյց կ'տար նա արքարե, մեր Մալիքօրնը, որ սպարզ դէմքով մը ձախ գունակին քովէն կ'ձիավարէր, քաջ զիանալով որ նոյն սպահուն իր վրայ կ'խօսակցէին, բայց չէր շարժեր իր թամշին վրայ իբրև համբ և մոնջ մարդ մը:

— Այս, այս ասպետն է — ըսաւ թաղաւորը — իր դէմքը կը յիշեմ, և իր անունը սփափի յիշեմ:

Եւ թաղաւորը զորովաղին նայեցաւ և ալիքէրի:

Օր այլ ևս բան մը չունէր ընելու. Մալիքօրնի անունը մէջ նետեր էր, առիթը յաջող էր. կ'մնար միայն թողուլ որ այս անունը ծաղկի և իր սպառզները բերէ:

Հետեապէս իր անկիւնը քաշուեցաւ Մալիքօրնի ընելու իբաւամբ որչափ զուարձալի նշաններ որ կամէր, քանի որ Մալիքօրն թաղաւորին հաճելի լինելու բարեբաղդութիւնն ունեցեր էր: Ինչ պէս որ գիւրին է իմանալ, Մօնղալէ շատ դու եղաւ, իսկ Մալիքօրն իր նուրբ ականջով և նենղալի աշքով խօսքը շարունակեց:

— Ամէն բան կարդին է:

Եւ այս խօսքն այնպիսի մնջկատակութեամբ մ'ըսաւ որ համբ բոյրի նման բան մը կ'պարունակէր:

— Ափսոս, օրիորդ — ըսաւ վերջապէս թաղաւորը — ահա դէս զին աղասորութիւնը դադրելու վրայ է. իշխանուհոյն մօտ քու ծառ-

ուայութիւնդ աւելի ծանր սփափի լինի, և այսուհետեւ չսփափի տեսնուինք:

— Ձեր Վեհափառութիւնը շատ կ'սիրէ իշխանուհին — սպատասխանեց Լուիզ — ուստի ստէպ զանի տեսնելու սփափի զայ, և երբ Ձեր Վեհափառութիւնն անոր սենեկէն անցնի . . . :

— Ա՛՛ — ըսաւ թաղաւորը զորովազին ձայնով մը, զոր ստիճանարար կ'մեղմէր — հեռուեն տեսնել տեսնուիլ չէ, և սակայն կ'երեսի թէ այս բաւական է քեղի համար:

Լուիզ բան մը չսպատասխանեց. հառաչ մ'իր սիրտը կ'ուուէր, բայց այս հառաչը խեղդեց:

— Քու վրադ մեծ իշխանութիւն ունիս — ըսաւ թաղաւորը:

Լա Վալիէր մելամաղձութեամբ ժպտեցաւ:

— Այդ ոյժը սիրելու համար զործածէ՛ — շարունակեց նա — և սփափի օրհնեմ զԱստուած որ այդ ոյժը քեղի շնորհէր է:

Լա Վալիէր լուութիւն սղաչեց, բայց թաղաւորին վրայ սիրտը ակնարկ մը նետեց:

Այն ատեն՝ որպէս թէ այս հրալիր ակնարկը զլնքը կ'տոչզըրէր, Լուի իր ձեռքը ճակտին տարաւ, և, ծնկերովը ձին սեղմելով՝ քանի մը քայլ առնել տուաւ անոր ընդ առաջ:

Լա Վալիէր՝ ընկողմնացած, աչքը կիսաբաց, այս գեղանի ձիաւորին վրայ աչքովը կ'զուրդուրար, որու փետուրները հովէն կ'ձածանէին. կ'սիրէր անոր թեները՝ շնորհօք կլորցած, անոր նուրբ և ջլուա սրունքները՝ որ ձիուն կողերը կ'սեղմէր. իր գեմքին կլորուն կտրուածքը զոր կ'բոլորէին աղւոր զանդուր մազերը, որոնք երբեմն կ'բացուէին վարդաղոյն և չքնաղ ականջ մը ցոյց տալու համար:

Վերջապէս ինեղձ օրիորդը կ'սիրէր, և իր սիրտին արբշիու. էր: Պահ մ'ետք՝ թաղաւորն անոր մօտ եկաւ:

— Ա՛՛ — ըսաւ նա — կ'նայիս որ լուութիւնդ սիրտս կ'ձակէ: Ա՛՛, օրիորդ, որչափ անդութ սփափի լինիս երբ անհաշտ լինելու մուազքես. ասկէ զատ՝ կարծեմ թէ փոփոխամիտ ես . . . վերջապէս, վերջապէս այս խորունկ սէրէն կ'երկնչիմ որ սիրտս կը զառէ քեղի համար:

— Ո՛չ, Վեհափառ արքայ, կ'սխալիք — ըստ Լա Վալիեր
— երբ մի անդամ սիրեմ, ցմահ պիտի սիրեմ :

— Երբ որ սիրեմ — դոչեց թաղաւորը վշտաղին — ի՞նչ, ու
բժի չե՞ս սիրեր :

Լա Վալիեր իր դէմքը ձեռաց մէջ պահեց :

— Կ՞նայիս, կ'նայիս — ըստ թաղաւորը — որ քեզ ամբաս-
տանելու իրաւոնք ունիմ. կ'նայիս որ փոփոխամիտ ես, անխոր-
հուրդ և թերես պշրատէր :

— Ո՛չ, ո՞չ — ըստ օրիորդը — անհոգ եղիք, տէր արքայ,
ո՞չ, ո՞չ, ո՞չ :

— Արեմն խօսք տուր ինձ որ միշտ նոյնը պիտի մնաս ինձի
համար :

— Ո՛չ, միշտ, Վեհափառ :

— Որ սիրա խորտակող խստութիւններ չպիտի ունենաս, չպի-
տի ունենաս այն յանկարծական փոփոխութիւններն որ ինձ մահ
կընան պատճառել :

— Ո՞չ, ո՞չ, ո՞չ :

— Լաւ, Ճշմարիտը, կ'սիրեմ խոստումները, կ'սիրեմ երդման
երաշխաւորութեան ներքեւ գնել, այսինքն՝ Աստուծոյ պահպանու-
թեան ներքեւ, ինչ որ իմ սրտիս և սիրոյս կ'վերաբերի : Խօսք
տուր ինձ, կամ լաւ ես, երդում ըրէ, երդում ըրէ որ, եթէ
այս մեր սկսելիք կենաց մէջ, զոհողութեամբ, խորհրդով, վշտով
լի կեանք մը, անապատեհութեամբ և թիւրիմացութեամբ լի կեանք
մը, երդում ըրէ որ եթէ սխալած ենք, եթէ իրարու միաբ լաւ
հասկըցած չենք, եթէ զերար վիրաւորած ենք, և այս ալ սիրոյ
մէջ յանցանք մ'է, երդում ըրէ ինձ, Լուիլ . . . :

Օրիորդը սարսուռ մ'զգաց մինչեւ սրտին խորը. առաջին ան-
գամն էր որ իր արքայական սիրահարին բերնէն իր անունը կ'լսէր :

Իսկ Լուի, իր ձեռնոցը համելով, իր ձեռքը մինչեւ կառքին
մէջ երկնցուց :

— Երդում ըրէ — շարունակեց նա — որ մեր ամեն կոիներուն
մէջ, երբ մի անդամ իրարմէ հեռու կ'զանուինք, բնաւ իրկուն մը
շանցընենք առանց այցելութիւն մ'ընելու կամ դէթ իրարու դիր

մը զրելու որպէս զի մին միւսին միսիթարութիւն և անդորրութիւն
բերէ :

Լա Վալիեր իր երկու պաղ ձեռաց մէջ իր սիրողին հրատապ
ձեռքն առաւ, մեղմիկ սեղմեց, մինչեւ որ ձիուն շարժումը, որ ա-
նուին շրջումին և մօտաւորութենէ վախնալով քաշուեր էր, զինքն
այս երջանկութենէ կորզեց :

Օրիորդն երգմներ էր :

— Գարձէք, տէր արքայ — ըստ նա — թաղուհեաց մօտ գար-
ձէք. մըրիկ մը կ'զուշակեմ այն կողմէն որ իմ սրտիս կ'սպառնայ :

Լուի հնապանդեցաւ, օրիորդ Մօնդալէի բարեկեց և արշաւակի
մեխնցաւ թաղուհեաց կառքին համելու համար :

Անյնելու ատեն իշխանին կառքը տեսաւ, և իշխանն որ կ'ննջէր :

Թաղաւորն անյնելու ատեն իշխանուհին անոր ըստ :

— Վեհափառ տէր, ի՞նչ աղօր ձի է այդ . . . : Միթէ իշ-
խանին աշխէտ ձին չէ :

Իսկ նորասի թաղուհին՝ միայն սա խօսքն ըստ :

— Սիրելի արքայ, միթէ այժմ աւելի աղէլէ էք :



Երբ թաղաւորը մի անդամ Բարիկ հասաւ, խորհրդաբանը
զնաց և օրուան մէկ մասն աշխատեցաւ : Բաղուհին՝ մայր թա-
ղուհույն հետ պալատը մնաց, և թաղաւորին հրաժարական բա-
րեն տալէն ետեն յորդ արտսուք թափեց :

— Ա՛չ, մայր իմ — ըստ — թաղաւորն ալ չսիրեր զիս : Աս-
տուած իմ, ի՞նչ պիտի լինիմ:

— Ամուսին մը քեզի նման կին մը միշտ կ'սիրէ — պատասխա-
նեց Աննա թաղուհին :

— Կրնայ ժամանակ մը դալ, մայր իմ, որ իզնէ զատ կին մը սիրեւ :

— Ի՞նչ ըսել կուղես սիրել բառով :

— Ո՛չ, միշտ մէկու մը վրայ մնածել, միշտ զանի փնտաել :

— Միթէ թաղաւորին այս տեսակ բաներ ընելս դիսեցիր — ըստ Աննա թաղուհին :

— Ո՛չ, ափիլին — ըստ նորատի թաղուհին վարանելով :

— Աւրեմն կ'ային, Մարի :

— Եւ սակայն, մայր իմ, խոստվանեցիք որ թաղաւորը զիս երեսի վրայ կ'ձգէ :

— Թաղաւորը, աղջիկս, իր բոլոր թաղաւորութեան հոգն ունի :

— Եւ ահա այս պատճառաւ իմ հոգս չունի, ահա այս պատճառաւ սիրտի լքուիմ, մոռցուիմ, ինչպէս շատ թաղուհիներ լքուած և մոռցուած են, մինչդեռ սէրը, փառքն ու պատիներն այլոց համար սիրտի լինին : Ո՛չ, մայր իմ, թաղաւորն այնքան դեղանի է : Քանի քանի անձինք սիրտի ըսեն որ զինքը կ'սիրեն, քանի քանիներ սիրտի սիրեն զինքը :

— Ծատ քիչ անդամ կանայք մարդ մը կ'սիրեն թաղաւորին սիրս : Բայց եթէ այս բանս պատահի, թէ և կ'սարակուսիմ, Մարի, զոնէ սիրտաքէ որ այս կանսցք ամուսինդ ջշմարտապէս սիրեն : « Աախ՝ սիրուհոյն անձնուէ ըսէրը սիրողին սիրոյն համար լուծման տարր մ'է, երկրարդ՝ շատ սիրելն՝ սիրուհին սիրողին վրայ իր բոլոր իշխանութիւնը կ'կորուսնէ, որու ոչ իշխանութեան, ոչ հարստութեան աչք ունի, այլ սիրոյն : Աւրեմն փափաքէ որ թաղաւորը բնառ չսիրէ, և իր սիրուհին շատ սիրէ :

— Ո՛չ, մայր իմ, խորունկ սիրոյ մը զօրտ թիւնն ո՛բչափ մեծ է :

— Եւ ի՞նչպէս կ'ըսէիր թէ երեսի վրայ ձգուած ես :

— Իրաւ է, իրաւ է, ծուռ կ'զատեմ . . . սակայն տան ջամկ մը կայ, մայր իմ, որու չեմ կարող զիմանալ :

— Ո՞րն է :

— Այս է յաջող ընտրութիւն մը, այսինքն կրնայ լինիլ որ մերինին մօտ ուրիշ ստուն մը կաղմնուի, կրնայ լինիլ որ ուրիշ կնկան մը մօտ ընաանիք մը դանէ : Ո՛չ, թէ որ տեսնեմ որ թաղաւորը զաւակներ ունեցեր է . . . սիրտի մեռնիմ :

— Մարի՛, Մարի՛ — պատասխանեց մայր թաղուհին ժպիտով մը և նորատի թաղուհոյն ձեռքբ բանեց — յիշէ սա ըսելիք խօսքս, և ընդ միշտ իբրև միփմարութիւն պիտի ծառայէ քեզ, թաղաւորն առանց քեզի չկրնար թաղամառնդ ունենալ, և զու առանց անոր կրնաս ունենալ :

Այս խօսքին, զոր նշանակական քահ քահ մը ձկելով աբտասանեց, մայր թաղուհին իր հարսէն հեռայցաւ, իշխանուհին զիսմատորելու համար, որու մէկ պացիկն եկեր էր իմաց տալու որ մեծ զահլիքը պիտի դայ ՚ի տեսութիւն :

Իշխանուհին շուտ մը հանուեր էր : Վրդովեալ գէմքով մը կ'զար, գէմք մ'որ խորհուրդ մը կ'յայտնէ բայց գործադրութիւնը մնատաննջութիւն կ'պատճառէ :

— Եկայ իմանալու — ըստ նա — թէ արդեօք մեր կարձ ու զեօրութենէ շատ յողնեցաք :

— Բնաւ — ըստ մայր թաղուհին :

— Քիչ մը — պատասխանեց Մարի-թէրէ զ :

— Ես, ափիլիններ . մանաւանդ անպատեհութեան մը վրայ ցաւեցայ :

— Ի՞նչ անպատեհութիւն — հարցոց Աննա թաղուհին :

— Այսինքն թաղաւորին ձիով երթալով առած յողնութեանը :

— Էս, այդ թաղաւորին համար ախործելի է :

— Եւ ես ինքս յորդորեցի անոր որ ձի հեծնէ — ըստ Մարի-թէրէ զ :

Իշխանուհին ասոր բան մը չպատասխանեց . միայն իրեն յատուկ եղող ժպիտ մ'իր շրմանց վրայ նկարուեցաւ, առանց իր զիմաց վրայ անցնելու, ապա իսկոյն խօսակցութեան ուրիշ դարձուած մը տալով,

— Գարձեալ Բարիղը ճիշտ մեր ձգած Բարիղին նման կ'զըսնենք . միշտ դաւեր, միշտ մեքենայութիւններ, միշտ սլըրասիրութիւններ սիրակաս չեն :

— Դաւեր . . . ի՞նչ դաւեր — հարցոց մայր թաղուհին :

— Ծատ կ'խօսին Պ. Գուքէի և Բլէսսի-Պէլէրի վրայ :

— Որ այսպէս տան հաղար թուանշանին կ'զրուի — պատասխանեց թաղուհին : — Բայց մեքենայութիւններն ի՞նչ են :

— Ըստ երեսյթին՝ Հոլանտայի հետ կոխու ունինք։
 — Խնչողու։
 — Իշխանը կ'պատմէր ինձ շքաղրամներու պատմութիւնը։
 — Ա՛՛ գուշից թաղուհին՝ Հոլանտա կոխուած շքաղրամները . . . որոց մէջ ամպ մը կ'տեսնուի որ թաղաւորին արեւու վրայէն կ'անցնի։ Իրաւոնք չունիք այս բանս մքենայութիւն առուանել, այս նախատինք մ'է։
 — Այնքան քամահելի՝ որ թաղաւորը պիտի քամահէ՝ պատասխանեց մայր թաղուհին։ Բայց պշրամիրութեան մասին ի՞նչ կ'ըսէիք։ Միթէ Օլօն տիկնոջ կ'նայէր ձեր խօսքը։
 — Ո՛չ բնաւ, առելի մեղի մօտ եղածը պիտի փնտուեմ։
 — Ըստ առել մըմաց մայր թաղուհին, առանց շրմունքը շարժելու, իր հարսին ականջին։
 Իշխանուհին բան մը չիմացաւ և շարունակեց։
 — Գիտէք սոսկալի լուրը։
 — Ո՛՛, այս, Պ. Կիշի վիճոքը։
 — Եւ միթէ ամենուն պէս որարդութեան արկած մը պատճառ կ'բռնէք այս բանին։
 — Հապա ի՞նչ ուրիշ պատճառ կայ — ըսկին երկու թաղուհիները, այս անդամ առելի հետաքրիք լինելով։
 Իշխանուհին մօտեցաւ։
 — Մենամարտութիւն մը կայ — ըսաւ ցած ձայնով։
 — Ա՛՛ բսաւ Անսա թաղուհին խստութեամբ, որու ականջներուն գէշ կ'հնչէր այս մնամարտութիւն խօսքը, որ Թրանսայի մէջ արզիլուած էր իր տիրապետութենէ ՚ի վեր։
 — Աղբալի մնամարտութիւն մը, որ քիչ մնաց իշխանին երկու լնարելաղոյն բարեկամաց կեանքը պիտի դրաւէր։ Իսկ թաղաւորին ալ երկու լսու ծառաները։
 — Ինչո՞ւ համար այս մնամարտութիւնը — հարցուց նորատի թաղուհին դադումով մը վառեալ։
 — Պշրամիրութիւնք — կրկնեց իշխանուհին յաղթանակաւ։
 — Այս պարզոնիերը կնկան մ'առաքինութեան վրայ վիճեցին. մին պնդեց թէ Աթենաս անոր մօտ մեծ բան մը չարժեր, միւսը պնդեց

թէ այս ամիկինն Արէսը հրապուրող Աստղիին կ'հետեւէր, և, Տէր վլայ, այս պարզոնիերը ձեկտորի և Աքիլլէսի պէս կուռեցան։
 — Արէսը հրապուրող Աստղիկ — ըսաւ ինքնիրեն նորատի թաղուհին մեղմիկ, առանց այս այլաբանութեան խորը փնտուել համարձակելու։
 — Ո՞վ է այդ տիկինը — հարցուց Անսա թաղուհին բայէ ՚ի բաց։ Կարծեմ թէ պատույ տիկին մ'է այն։
 — Միթէ այդպէս ըսի — ըսաւ։
 — Այս, մինչև անդամ կարծէի թէ անոր անունը տուիր։
 — Գիտէ՞ք արդեօք որ այս տեսակ կին մ'աբբոնի աան մը համար դժնդակ է։
 — Օրիորդ Լա Վալեհին է — ըսաւ մայր թաղուհին։
 — Տէր Աստուած, այս, նոյն տղեղակն է։
 — Կարծէի թէ աղատորդիի մը հետ նշանուած է, և այս աղատորդին ոչ Պ. Կիշն է և ոչ Պ. Վարդը, կարծեմ։
 — Կարծէլի է, տիկին։
 Նորատի թաղուհին օթոց մ'առաւ, զոր կեղծ հանդարտութեամբ մը քակեց, վասն զի իր մատերուն դողն իր այլայլութիւնը կ'մատնէին։
 — Աստղիան և Արէսի վրայ ըսածդ ի՞նչ էր — շարունակեց մայր թաղուհին — միթէ Արէս մը կայ։
 — Կ'ուարծի նա որ կայ։
 — Միթէ չըսեն թէ կ'պարծի այդ մասին։
 — Այդ էր կուռին պատճառը։
 — Եւ միթէ Կիշ Արէսին գամը պաշտպանեց։
 — Անտարակից, իրրե լսւ ծառայ մը։
 — Իրրե լսւ ծառայ մը — գուշեց նորատի թաղուհին իր բուրք հանդարտութիւնը մոռնալով որպէս զի նախանձն երեան հանէ — որմու ծառան։
 — Արէսը — պատասխանեց իշխանուհին — այս Աստղիան շնորհիւ միայն պաշտպանուիլ կարենալուն, Պ. Կիշ Արէսի բացարձակ անմեղութիւնը հաստատեց և անտարակիցս պնդած է որ Աստղիկն այս բանն իրեն փառք կ'սեպէր։

— Եւ միթէ որ, Վարդ կ'ձանձնէր որ Աստղելին իրաւոնք ունի — ըստ Աննա թաղուհին հանդարտութեամբ :

— Ա՛չ, Վարդ — մտածեց իշխանուհին — շատ սուղի պիտի նստի քեզ ամենավեհանձն մարդու մ'ըրած վէրքդ :

Եւ սկսաւ բուռն սիսակալութեամբ Վարդը կոտրել, այսպէս վիրաւորին և իր վրէմբ լուծելով, այս վստահութեամբ որ իր թշնամոյն ասպարան պիտի կործանէր : Այսքան վար զարկաւ Վարդը, որ եթէ Մանկքան ներկայ դանուէր պիտի ցաւէր այսչափ լաւ իր բարեկամին ծառայելուն, քանի որ ասով այս դժբաղդ թշնամոյն կործանումը պիտի չետեէր :

— Այս ամէն բաներուն մէջ — ըստ Աննա թաղուհին — լոկ ժանտախտ մը կ'աենեմ, և այս է Լա Վալիէր :

Կորատի թաղուհին նորէն իր գործը սկսաւ կատարեալ պատթեամբ :

Իշխանուհին մտիկ ըրաւ :

— Միթէ քու կարծիք ալ այս չէ — ըստ անոր Աննա թաղուհին : — Միթէ այս կուուին և մարտին բուռն պատճառը նա չէ, ըստ քեզ :

Իշխանուհին պատասխանեց շարժումով մ'որ ո՛չ բացասական ոչ հաստատական էր :

— Ուրեմն չեմ կրնար ըմբոնել պչբասիրութենէ ծաղելիք վստանալին վրայ ըսածդ — վրայ բերաւ Աննա թաղուհին :

— Այս իրաւ է — փութաց ըսելու իշխանուհին — որ եթէ օրիորդը պչբասէր չլինէր, Արէս անով չպիտի զբաղէր :

Այս Աքէս բառը նորատի թաղուհւոյն այտերուն վրայ թեթէ կարմրութիւն մը բերաւ, բայց գարձեալ իր սկսած ձեռագործը շարունակեց :

— Չեմ ուզեր որ իմ արքունեաց մէջ այսպէս մարդիկն իրաւու զէմ զինին — ըստ Աննա թաղուհին հանդարտութեամբ : — Այս սովորութիւնները թերես օդակար էին ատեն մը՝ երբ ալ նուականներն իրաւու մէջ բաժնուած լինելով՝ միութեան ուրիշ կազ չունէին բայց միայն կնասիրութիւնը : Այն ատեն կանայք, առանձին տիրելով՝ արտօնութիւն ունէին աղատորդիներան արիա-

սրտութիւնը վառել յաճախակի փորձելով : Բայց այսօր, օրհնեամը է Աստուած . Ֆրանսայի մէջ իշխան մը կայ միայն : Այս տիրապետին պարտաւոր են ամէն զօրութեան և մտածութեան աջակցութիւնը : Զայտի հանդուրժեմ երբեք որ որդւոյս ծառաներէն մին ձեռքին յափշտակին :

Եւ Աննա թաղուհին նորատի թաղուհւոյն դարձաւ :

— Կ՞ոչ ընենք այս Լա Վալիէրը — ըստ նա :

— Լա Վալիէր — ըստ թաղուհին շարժմոնք ցոյց տալով :

— Ես այդ անունը չեմ դիտե :

Եւ այս պատասխանին հետ այսպէս սառնադին ժպիտ մը ցցուց որ միայն արբայական բերաններուն վայել է :

Իշխանուհին ևս մեծ իշխանուհի մ'էր իրաւ, թէ խելքով, թէ ճնողով թէ գուռզով թեամբ, բայց այս պատասխանին ծանրութիւնը զինքը ճզմեց . սախզուեցաւ նա պահ մը սպասել որպէս զի սթափի :

— Իմ պատույ օրիորդներէս մին է — պատասխանեց նա բարե մը տալով :

— Ուրեմն — պատասխանեց Մարի-Թէրէզ նոյն ձայնով — այդ քու զործդ է, քոյր իմ . . . և ոչ մեր զործը :

— Կերէ — վրայ բերաւ Աննա թաղուհին — այդ իմ զործ է : Եւ քաջ կ'իմանամ — շարայարեց նա իշխանուհւոյն համաձայնութեան ակնարկ մ'ընելով — կ'իմանամ թէ ի՞նչ պատճառաւ իշխանուհին եկաւ խնդիրն ինձի բացաւ :

— Թաղուհին, ինչ որ ձեր բերնէն կ'բղիի — ըստ անկլիացի իշխանուհին — Խմաստութեան բերնէն բղիսած է :

— Այն աղջիկն իր երկիրը զարձնելով — ըստ Մարի-Թէրէզ անուշութեամբ — պէտք է թոշակ մը կապել անոր :

— Իմ արկղէս — դոչեց իշխանուհին աշխաւճիւ :

— Ո՛չ, ո՛չ, իշխանուհիս — ընդմիջեց Աննա թաղուհին — վրվակ կ պէտք չէ, խնդիրմ : Թաղաւորը չախործիր որ կանայց վրայ վայրահաշութեան առիթ տան : Խնդիրմ, այս ամէն բանեւրը՝ ընտանիքի մէջ կարգի գնենք :

— Իշխանուհին, չնորհ ըրէ աղջիկը կանչել տալու :

— Դու աղջիկս, յօժմարէ սլահ մը սենեակդ քաշուելու :

Պատաւ թագուհոյն աղաւանքը հրամաններ էին : Վարի-թէ-բէդ ոտք ելաւ իր սենեակը մանելու, և իշխանուհին ալ, պայկի մը միջոցաւ Լա Վալիերը կանչել տալու համար :

Թ

ԱՌԱՋԻՆ ՎԱԼ

Լա Վալիեր մայր թագուհոյն սենեակը մատաւ առանց բնաւ մաքէն անցընելու որ իրեն դէմ վտանդառոր զաւ մը նիւթած են :

Կարծէր թէ ծառայութեան վերաբերեալ զործի համար էր, և մայր թագուհին այսպիսի սպարապայի մէջ իրեն ծոռու չէր նայած : Ասկէ զատ՝ Աննա թագուհոյն սննմիջական իշխանութեան ներքեւ զանուելուն, անոր հետ միայն սպաշտօնասէր յարաբերութիւններ կրնար ունենալ, որոց իր յատուկ կամարաբութիւնն եւ արքայազուն իշխանուհոյն աստիճանն իր վրայ սպարտք կ'զնէին կարելի եղածին չափ չնորհալի ձեւ մը տալ :

Հետևասկէս՝ մայր թագուհոյն մօսեցաւ այնպիսի անմեղ և առուշ ժպիսով մ'որ իր էական զեղեցկութիւնը կ'կաղմէր :

Որովհետեւ բաւական չմօտեցաւ Լա Վալիեր, Աննա թագուհին անոր նշան ըրաւ մինչեւ աթոռը դալու :

Այս ատեն իշխանուհին ներս մտաւ, և բոլորովին հանդարտ դէմքով մը, իր զգքանչին մօտ նստաւ, Վարի-թէրէ զին սկսած դործը ձեռքն առնելով :

Լա Վալիեր՝ որ անմիջապէս հրաման մը ընդունիլ կ'յուսար, այս սպատրաստութիւնները տեմնելով սկսաւ հետաքրքրութեամբ, եթէ ոչ մտատանջութեամբ՝ երկու իշխանուհեաց կերպարանը քընաել և հարց ու փորձ ընել :

Աննա կ'մտածէր :

Իշխանուհին այնպիսի անտարբերութիւն մը կ'կեղծէր որ նոյն խոլ նուաղ վեհերու անձանց կրնար երկիւղ ազդել :

— Օրինարդ — ըստ յանկարծ մայր թագուհին իր սպանիական շեշտը մեղմելու անսփոյթ դտնուելով, և այսպէս միշտ կ'ընէր եթէ բարկացած չլինէր միայն — եկուր որ փոքր ինչ քու վրադ խօսիք, քանի որ բոլոր աշխարհ կ'խօսի :

— Ի՞նչ բանի վրայ — հարցոց Լա Վալիեր դունատելով :

— Գեղանիս, զու չղիտանալու զարկ ըստած . միթէ Պ. Կիշի և Պ. Ալարդի մենամարտութիւնը զիտե՞ս :

— Տէ՛ր իմ Աստուած . իշխանուհիս, այդ լուրը մինչեւ ինձ հասաւ երէի — պատասխանեց Լա Վալիեր իր ձեռքն իրարու կցելով :

— Եւ միթէ կանխաւ այդ լուրը չէիր դուշակած :

— Ինչու համար զուշակէի, տիկին :

— Վասն զի երկու մարդիկ առանց պատճառի չեն մենամարտիր, և անտարակցոյս երկու հակառակորդաց ոխակալութեան շարժառիթը պիտի զտնայիր :

— Ես լիովին անդէտ էի, տիկին :

— Յարատեւ ուրացութիւնն ինքնապաշտպանութեան զոեհիկ դրութիւն մ'է, և զու որ մտացի ես, օրիորդ, պէտք է որ մնատի բաներէ զդուշանաս : Խնդիրը նայինք :

— Տէ՛ր Աստուած, տիկին, Զեր Վեհափառութիւնն ինձ աչ ու գող կ'ազդէ այդ իր սառնապին դէմքով : Միթէ ակամայ ձեղի անհաճոյ բան մ'ըրի :

Իշխանուհին ոկսաւ ծիծաղիլ : Լա Վալիեր անոր երեսը նայեցաւ պուշ ապուշ :

Աննա շարունակեց :

— Իմ տհաճութիւնս . . . իմ տհաճութիւնս դրզուես : Ի՞նչ կ'ըսես, օրինարդ Լա Վալիեր, պէտք է մտածեմ այն անձանց վրայ սրգէս զի տհաճութիւնս զրգուելու կարող լինին : Քու վրադ կ'մտածեմ այժմ, վասն զի քու վրադ քիչ մ'աւելիկել կ'խօսին : Ես չեմ ախորդիր որ իմ արքունեաց աղջկանց վրայ խօսին :

— Զեր Վեհափառութիւնը պատիւ կ'ընէ ինձ այդ բանն ըսելով — պատասխանեց Լա Վալիեր ահաբեկ . — բայց չէմ ըմբռներ թէ ի՞նչ բանի համար իմ վրայ կ'խօսին :

— Ուրեմն պիտի ըսեմ այժմ։ Պ. Կիշ քեզ պաշտպանելու առիվուած դանուեր է։

— Զիս։

— Այս, քեզ։ Ասպետ մ'է նա, և գեղանի բազդախնդիրները կ'ախորժին որ ասպետներն իրենց համար նիվալ շարժեն։ Ես, մենամարտութիւնները կ'ատեմ, չեաեապէս կ'ատեմ մահաւանդ արկածները, և . . . վերջապէս քիչէն շատ իմացիր։

Լա Վալիեր թագուհոյն ուսքը ծուցաւ, թագուհին կոնակն անոր դարձաց։ Խշանուհոյն կարկառեց ձեռքը, իշխանուհոյն առողջին առողջին երեմն ինդաց։

Դուռդութեան զգացում մը զանի վեր կեցոց։

— Տիկիններ — ըսաւ նա — հարցոցի թէ ի՞նչ է յանցանքս։ Չեր Վեհափառութիւնը պարտառոր է ինձ յայնելու, և կ'նայիմ որ Չեր Վեհափառութիւնը զիս կ'գատապարտէ առանց թոյլ տալու որ ինքինքս արդարացնեմ։

— Կ'ս — զոչեց Աննա թագուհին — նայեցէք մի անդամ՝ սա աղոր խօսքերը, իշխանուհի, նայեցէք սա աղոր զգացումները։ արքայան օրիորդ մ'է այս աղջիկը։ մեծ Կիրոսի համար հառաչողներն մին է . . . զորովալիր զգացումներու և զիցաղնական կերպերու ախտար մ'է։ Իմ գեղանիս, ակն յայտնի կ'երեի որ մը միտքը թագակիր դլուխներու յարաբերութեան մէջ կ'անուցաննիք։

Լա Վալիեր զգաց այս հարուածը մինչեւ սրախն խորը, չէ թէ զունասա, այլ շուշանի պէս սպիտակ զոյն մ'առաւ, և լիովին ուժաթափ մնաց։

— Կ'աղէի ըսել — ընդհատեց արհամարհանօք թագուհին — որ՝ եթէ այդպիսի զգացումներ աածելու շարունակես, մեղ այն սատիճան պիտի խնարհեցնես, որ քու քովզ կենալու պիտի ամշանք։ Պարզ եղիր, օրիորդ։ Ալէկ միտքս ընկաւ, ի՞նչ կ'ըսէին ինձ, կարծեմ թէ կ'ըսէին որ նշանած ես։

Լա Վալիերի սիրտը ձնշեց, որ այս նոր ցաւով սկսաւ տառապիլ։

— Միթէ չէս պատասխաներ երբ քեզ կ'խօսին։

— Այս, տիկին։

— Ազատորդիի՞ մը հետ։

— Այս, տիկին։

— Անունն ի՞նչ է։

— Պրաժլօն դերկոմն։

— Գիտե՞ս արգեօք որ այս քեզի համար մեծ բաղդ մ'է, օրինադի, քանի որ դու առանց հարստութեան, առանց կացութեան . . . առանց անձնական մեծ ձրից դանուելով, պարտաւոր էիր օրհնել երկին որ քեզ սյսպիսի ասպարայի մը կ'ընծայէ։

Լա Վալիեր պատասխան մը չտուաւ։

— Ո՞ւր է այդ Պրաժլօն դերկոմնը — հարցոց թագուհին։

— ՅԱՆԿԼԻԱ — ըսաւ իշխանուհին — և օրիորդին յաջողութեան ձամբան անստարակոյս ականջին պիտի համնի։

— Ո՛ երկին — մբաւաց Լա Վալիեր բոլորովին շուարած։

— Լաւ ուրեմն, օրիորդ — ըսաւ Աննա թագուհին — այդ տղան ՅԱՆԿԼԻԱյէն բերել տանք և քեզ անոր հետ տեղ մը դրկելու նայինք։ Եթէ այս կարծիքէն տարբեր կարծիք մ'ունիս, վասն զի աղջիկներն այլանդակ միտքէր ունին, սասոյդ եղիր որ քեզ շիտակ ձամբան մէջ զնելու մտադիր եմ։ քեզնէ աւելի աժող աղջիան համար ըրած եմ այս բան։

Լա Վալիեր այլ ևս չեր ըսեր։ Անկոթ թագուհին յարեց։

— Քեզ առանձին տեղ մը պիտի դրկեմ և այն ատեն պիտի մտածես։ Մտածութիւնն արեան եռանդը կ'մեղմէ, երիտասարդութեան ամէն պատրանքը կ'ցըուէ։ Յուսամ որ միտքս հասկըցար։

— Տիկին, տիկին։

— Աւելի խօսք չեմ ուզեր։

— Տիկին, ես անպարտ եմ բոլոր այն բաներու մէջ զոր Չեր Վեհափառութիւնը կրնայ ենթադրել։ Տիկին, տեսէք իմ յուսահատութիւնս։ Ո՛բշափ կ'սիրեմ և կ'յարդեմ Չեր Վեհափառութիւնը։

— Լաւ ես էր որ զիս չշարդէիր — ըսաւ թագուհին պատշեցնութեամբ մը։ — Լաւ ես էր որ անպարտ չլինեիր։ Արգեօք կ'կարծե՞ս թէ այսպատված զո՞ս պիտի լինէի եթէ իրօք յանցանքը դործած լինէիր։

— ԱՇ, բայց, տիկին, զիս կ'սպաննեք :

— Կատակերգութիւն պէտք չէ, ինդրեմ, և անոր վախճանն իմ վրաս կ'առնում : Գնա, սենեակդ դարձիր, և այս իմ դասէ սօդուտ քաղէ :

— Տիկին — լսաւ Լա Վալիեր Օրլէանի գքսուհւոյն, որու ձեռքերը բոնեց — աղաչեցէք ինձի համար, դոք որ այնքան բարի էք :

— Ե՞ս — պատասխանեց այս վերջինը նախատական ուրախութեամբ մը — ես բարի . . . : ԱՇ, օրիորդ, դու այդպէս չես մտածեր սրտովին :

Եւ նորատի աղջկան ձեռքը խրոխտանօք մերժեց :

Լա Վալիեր փոխանակ ընկճելու, ինչպէս որ երկու իշխանութիք կրնային յուսալ անոր գունատ գէմքն ու արտսուքը տեմնելով, յանկարծ իր հանդարտութիւնն ու արժանասպատ ութիւնն առաւ, խորին խոնարհութիւն մ'ըրաւ և գուրս ելաւ :

— Լաւ ուրեմն — լսաւ Աննա թագուհին իշխանուհւոյն — միթէ կարծես թէ նորէն կ'սկսի :

— Քաջ և համբերող բնաւորութիւններէ կ'կասկածիմ — պատասխանեց իշխանուհին : — Համբերող սրտի պէս քաջարի բան չգանուիր, անուշ մարի տէր անձի պէս ինքն իրեն վրայ վստահ անձ չգանուիր :

— Ես ապահով եմ, Արէս աստուծոյն նայելէն առաջ լաւ մը պիտի խորհի և այս յանդգնութիւնը չպիտի ունենայ :

— Միայն թէ իր զբահը չզործած ! — պատասխանեց իշխանուհին :

Սայր թագուհին զոռող նայուածքով մը պատասխանեց այս առարկութեան, որ նրբութիւնէ զորի չէր, և երկու կանայք, իրենց առարած յաղթանակին վրայ զբեթէ ապահով, դացին Մարի-Թէրէզը զտան, որոց կ'սպասէր իր անհամբերութիւնը սրօնելով :

Այն ատեն երեկոյեան ժամը վեց ու կէս էր, և թագաւորն իր նախընթրակը նոր լմնցուցէր էր : Ժամանակ չկորոյս, երբ ճաշն առարաեց, դործերը լմնցուց, Աէնդ-Էնյանը բոնեց թէէն և աշ նոր հրամայեց որ զինք Լա Վալիերի սենեակը տանի :

Պալատականը խոշոր բայցամշութիւն մը հանեց :

— Լաւ, ի՞նչ կայ — պատասխանեց թագաւորը — նոր սովորութիւն մը պիտի ստանանք, և սովորութիւն մ'առնշու համար, պէտք է դանէ մի քանի անդամ սկսիլ :

— Բայց, Վեհափառ, աղջկանց սենեակն այս տեղ բաց վայր մէտ, ամէն մարդ կ'անոնէ ներս մանող ելնողները : Անրեկի ինձ որ պատճառանք մը . . . : Օրինակի համար, աս պատճառանքը . . . :

— Կայինք ի՞նչ է :

— Եթէ Զեր Վեհափառութիւնը կ'հաջի որ իշխանուհին իր սենեակը դառնայ :

— Պատճառանք պէտք չէ, սպասելու պէտք չկայ : Բառական են այս անսպատիչութիւնները, այս դաղանիքը : Զեմ կրնար հասկընալ թէ ի՞նչ կերպով Փրանսայի թագաւոր մը պիտի արատաւորի խելայի աղջկան մը հետ խօսակցելով : Գէշ խորհութ թող գուրս ելնէ :

— Վեհափառ, Վեհափառ, արդեօք պիտի ներիք ինձ իմ շափականց եւանդեանս համար . . . :

— Խօսէ :

— Հապա թագուհին :

— Իրաւ է, իրաւ է : Կուզեմ որ թագուհին միշտ յարգուի : Լաւ, այս իրկուն ալ օրիորդ Լա Վալիերի սենեակը պիտի երթամ, և այսուհետեւ, ուզած բարուբանքով պիտի դտնեմ : Վաղն այդ մասին կ'խորհինք, այս իրկուն ժամանակ չունիմ :

Սէնդ-Էնյան պատասխան չտուաւ . թագաւորին առջեէն գնաւ լով սանդղէն վար իջաւ և բակերէն անցու այնպիսի պատկառանօք որ չէր ջնջուեր թագաւորին իբրև առաջնորդ ծառայելու վայելած մեծ պատիւէն :

Վասն զի Սէնդ-Էնյան կ'ուզէր անարաս մնալ իշխանուհւոյն և երկու թագուհեաց մաքին մէջ . օրիորդ Լա Վալիերին ալ անհաջոյ երեկիլ չէր ուզեր, և այսչափ լսաւ բաներ ընելու համար, գժուարին էր որ և խոչնդութի մը չհանդիպիլ :

Արդ՝ նորատի թագուհւոյն, նոյնպէս մայր թագուհւոյն և նոյն

իսկ իշխանուհւոյն սենեակները պատուոյ աղջկանց դաւթին վրայ կնայէին : Եթէ թագաւորն առաջնորդելը տեմնուէր, երեք մեծ իշխանուհւուն երանու : Հետ սլատի աւրուէր, երեք կանանց հետ որ անշարժ վարկ կ'վայելէին, տիրուհւոյ մը վաղանցուկ վարկը վայելելու տկար հրապոյրի մը համար :

Այս դժբաղդ Սէնդ-Էնյանն որ հսկանցներուն տակ և ֆօն գէնալոի ծառասանին մէջ այնքան քաջութիւն ունէր Լա Վալիէրը պաշտպանելու, լոյս աչքով նոյնչափ արիութիւն չէր զդար • այս աղջկան վրայ հաղար տեսակ պակասութիւններ կ'զանէր, և թագաւորին հաղորդելու փափաքով կ'սրիէր :

Բայց իր տանջանքը լմնցաւ . բակերէն անցաւ : Վարագոյր մը անդամ չըսցուեցաւ, և ոչ պատուհան մը : Թաղաւորը շուտ կը քալէր . նախ իր անհամբերութեան պատճառաւ, երկրորդ Սէնդ-Էնյանի երկար քայլափոխներուն համար, վասն զի Սէնդ-Էնյան առջևէն կ'երթար :

Երբ գուռը հասան, Սէնդ-Էնյան ուզեց քաշուիլ, թաղաւորը զանի կեցոց :

Այս այնպիսի փափկութիւն մէր զոր պաշտամանը կրնար զանց ընել :

Պարտաւորեցաւ. Լա Վալիէրի սենեակը մանել թաղաւորին ետեէն :

Երբ թագաւորը ներս մտաւ նորաաի օրիորդն իր աչերը սրբելու վրայ էր . այնքան արարոնօք սրբեց որ թաղաւորն այս բանս դիաեց : Իբրև հոգատար սիրող անոր հարցուփորձ ըրաւ, սախեց :

— Վեհափառ, բան մը չունիմ — ըստ նա :

— Բայց, վերջապէս կ'լայիր :

— Ո՛չ, ո՛չ, Վեհափառ :

— Կայէ, Սէնդ-Էնյան, միթէ կ'սխալի՞մ :

Սէնդ-Էնյան պարտաւոր էր պատասխանել, բայց շուտ շփոթած էր :

— Բայց նայէ աչերդ կարմբեր են, օրիորդ . — ըստ թաղաւորը . . . :

— Ճամբուն փոշիէն է, Վեհափառ :

— Բայց, ո՛չ, ո՛չ, գոհոնակութեան կերպարան մը չունիս որ քեզ այնքան զեղանի և այնքան հրապութիւն կ'ընէ : Երեսս չես նոյիր :

— Վեհափառ :

— Բնէ կ'ըսեմ, իմ ակնարկէս կ'խորշիս :

Արդարեւ օրիորդը զլուխը կ'գարձնէր :

— Բայց՝ յանուն Անոռածոյ, բնէ կայ — հարցոց Լոիի, ուրու արիւնը կ'եռար :

— Ո՛չ ինչ, կ'կրինմ, Վեհափառ, և պատրաստ եմ ցոյց տալ Չեր Վեհափառութեան որ միտքս ձեր փափաքածին պէս ազատ է :

— Միտքդ տղատ է, երբ կ'նայիմ որ շփոթած ես, նոյն իսկ շարժումիդ մէջ : Արդեօք քեզ վիրաւորող, բարկացնող եղան :

— Ո՛չ, ո՛չ, Վեհափառ :

— Ո՛չ, եթէ այդպիսի բան մը կայ պէտք է որ ինձ յայտնեալ ըստ նորաաի իշխանը կայծակոտ աչերով :

— Բայց ոչ ոք, Վեհափառ, ոչ ոք զիս չթշնամնեց :

— Ուրեմն, նայինք, վերստին այն քու մասիս լինդութիւնդ կամ զուարթան մելամաղձուտութիւնդ զոր այս առաւու վրադ տեսնելով կ'ախործէի, նորէն ցոյց տուր ինձ . . . նայիմ . . . կ'ազաշեմ :

— Այո՛, Վեհափառ, այո՛ :

Թաղաւորն ուաքովը զարկաւ :

— Ահա անմինելի է ինձ — ըստ նա — այդ փոփոխութիւնդ :

Եւ Սէնդ-Էնյանի նայեցաւ. որ նոյնպէս Լա Վալիէրի տիսուր թոյլութիւնը կ'զիտէր, միանդամայն թաղաւորին անհամբերութիւնը :

Լոիի պարապ տեղն աղաչեց, պարապ տեղը ճիղ ըրաւ անոր վշտահար տրամադրութիւնը փարատել, նորաաի օրիորդը խորտակած էր, նոյն իսկ մահուան տեպքը չպիտի կարենար զանի թմբութենէ սթափել :

Թաղաւորն այս բացասական բարեյօժարութեան մէջ անհամբ զաղանիք մը տեսաւ . և կասկածու դէմքով մը ոկասւ բաշրափքը նայիլ :

Սառողիւ Լա Վալիերի սենեկին մէջ կենդանաղիր մը կար մանրանկար Աթոսի :

Թագաւորը տեսաւ այս կենդանաղիրը, որ Պրաժլոնի շատ կը նմանէր, վասն զի կոմին երկասարգութեան ժամանակ նկարուած էր :

Այս կենդանաղիրին վրայ սպառնալից աչքեր դարձուց :

Լա Վալիեր, այնպիսի նկուն վիճակի մէջ կ'անուէր, և բուրովին մաքէն չէր անցըներ այս մանրանկարը, թագաւորին այս մտահոգութիւնը չդիտեց :

Եւ սակայն թագաւորին միաքը սոսկալի յիշատակ մ'եկեր էր, որ ստէպ իրեն հող պատճառեր էր, սակայն միշտ վաներ էր զայն :

Այս սրտակցութիւնն որ այս երկու նորատի անձանց մէջ տիրեր էր :

Այս մուերմութեան հետեւող նշանառուքը :

Այս սրտակը որ Աթոս Լա Վալիերը կնութեան խնդրեր էր Ռատուլի համար :

Մտածեց որ Լա Վալիեր Քարիզ դառնալով Անտօնէն լուրեր սապացած պիտի լիներ, որոնք, իր ըրած ազդեցութիւնը Լա Վալիերի վրայ փարաստած էին :

Գրեթէ իսկոյն թագաւորը զդաց որ քունքը կ'կծէ այն վայրեւի պիծակին որ նախանձ կ'կոչուի :

Անրատին հարցուփորձ ըրաւ գառնութեամբ :

Լա Վալիեր չէր կարող պատասխանել, վասն զի սկսուի սպառաւորէր ամէն բան ըսել, պիտի ամբաստանէր թագուհին, պիտի ամբաստանէր իշխանուհին :

Պիտի պարտաւորէր երկու մեծ և զօրաւոր իշխանուհիներու հետ մաքանիլ յայտնապէս :

Իրեն այնպէս կ'երեւէ որ, իր ներսի դին անցածը թագաւորէն պահելու համար փորձ մը չընելով, թագաւորն իր լուս թենէ պիտի թափանցէր սրտին մէջ անցածը :

Եթէ թագաւորն իրօք զինքը կ'սիրէ՞ պէտք է որ ամէն բան իմանայ, ամէն բան դուշակէ :

Ի՞նչ է ուրեմն համակրութիւնը, եթէ ոչ այն երկնային բոցն

որ պարտ էր սիրուը լուսասորել և ճշմարիտ սիրովներուն խօսքն աւելորդ ընել :

Ուստի Լա Վալիեր լուց, բաւական սեպեց հառաչել, լալ և զլուխը ձեռացը մէջ պահել :

Այս հառաչները, այս արտասոքը, որ ՚ի սկզբան զորով ապա աչ ազգեր էին Լուի Ճ՛ֆի, այժմ՝ կ'զբակէին :

Զէր կարող հանդուրմել բնդկիմադրութեան, ոչ միայն հառաչներու և արտասուաց այլ որ եւ է զիմադրութեան :

Բոլոր իր խօսքերը կծու, ստիպողական, յարձակողական եղան :

Կորատի աղջկան կրած վշտին վրայ այս ալ նոր վիշտ մ'էր :

Նա իր սիրահարին կողմէ այս իբր անիրաւութիւն նկատած դիբքէն նոր ոյժ քաղեց ոչ միայն միւմներուն այլ և ասոր դէմ զնելու :

Թագաւորն սկսաւ ուղղակի ամբաստանել :

Լա Վալիեր և ոչ իսկ ինգինքը պաշտպանելու փորձ փորձեց . այս ամէն ամբաստանութիւնները կրեց անպատասխան և միանդամայն զլուխը յնցելով, ուրիշ բառեր չէր արտասաներ եթէ ոչ սա երկու խօսքն որ խօս խոցուած սրտերէ դուրս կ'ելնէին .

— Աստուած իմ, Աստուած իմ:

Բայց թագաւորին սրտամութիւնը հանդարակեցնելու տեղ, վշտակրութեան այս Ճիկն աւելի կ'զբակէր . Լա Վալիերի խօսքը կուչում մ'էր քան թագաւորի իշխանութիւնը զերադոյն իշխանութեան մը, էակի մ'որ կրնար զինքը թագաւորին դէմ պաշտպանել :

Ասկէ զատ՝ թագաւորը կ'նայէր որ Աէնդ-Էնյան իրեն աջակից է : Ինչպէս օր ըսինք, Աէնդ-Էնյան՝ կ'զիտէր որ փոթորիկն երթալով կ'մեծնար . չէր զիտէր սակաւին թէ Լուի Ճ՛ֆի ինչ աստիճան կրնար մէր զդալ . կ'զդար երեք իշխանութեաց հարուածներուն մօտենալը, խեղճ Լա Վալիերի կործանումը, և ասպետական ողի չունէր որ աներկիւղ դիտէ նուև իրեն սպանացող կործանումը :

Ուստի Աէնդ-Էնյան կտրուկ բառերով կամ բնդհատ շարժումներով կ'պատասխանէր թագաւորին հարցութիւնն . իր նարաւախին էր խնդիրը ծանրացնել և այնպիսի կոխւ մը զբգուել որ արդիւնքը

պիտի լինէր ըսյո աչքով բակերէն երթեւեկելու հոգէն աղասիլը ,
և իր օդոստափառ թաղաւորին ետեւէն լա Վալելիրի սենեակն եր-
թալէն դաշրիլը :

Նոյն պահուն թաղաւորը հետզետէ կ'բորբոքէր :

Երեք քայլ առաւ որ գործս ելնէ և ապա դարձաւ :

Նորաաի օրիորդը զլու խը չէր վերցացած , թէ և քայլափոխին
աղմուկէն հասկըցած պիտի լինէր որ իր սիրողը կ'հեռանար :

Պահ մ'անոր առջնը կեցաւ թերը ծալլած :

— Վերջին անգամ մ'եւս պիտի հարցնեմ , օրիորդ — ըստա-
թագաւորը — պիտի խօսին : Այդ փոփոխութեան , այդ թեթեա-
մուութեան , այդ քմայական ընթացքին պատճառ մը պիտի տան :

— Ի՞նչ կուզեք որ ըսեմ ձնդի , Աստուած իմ — մրմանաց Լա
Վալելիր : — Քաջ կ'անենք , Վեհափառ , որ այս պահուս Տըղ-
մուած եմ , կ'նայիր որ ո՛չ կամք , ո՛չ մտածմոնք ունիմ և ոչ
խօսք :

— Միթէ այդչափ գմուարին է Ճշմարտոթիւնն ըսել : Այդ
ըսած խօսքերէդ նուազադոյն խօսքով կրնայիր ցարդ բացատրել :

— Բայց Ճշմարտոթիւնը , ի՞նչ բանի վրայ :

— Ամէն բանի վրայ :

Իրաւի , Ճշմարտոթիւնը Լա Վալելիրի սրտէն շրթերուն հա-
սաւ : Իր թեհը շարժում մ'ըրին բացուելու , բայց բերանն ան-
խօս մնաց , իր թեհը վար ընկան : Խեղչ աղջիկը գեւ ևս չա-
փէն աւելի դժբաղդ չէր որ համարձակի այնպիսի յայտնութիւն
մ'ընել :

— Բան մը չըկաեմ — կմիմաց նա :

— Ա՛ս , այդ միայն պչրասիրութիւն չէ — զուեց թաղաւորը
— այդ միայն քիսծին խորհուրդ չէ , այլ մասնութիւնն մ'է :

Ես այս անգամ որ և է բանէ մ'արդիւելու , առանց սրտին
տանջանքը զինք ետ բերելու , սենեկէն դուրս վաղեց թաղաւորը
յուսաց շարժումով մը :

Սէնդ-Էնյան անոր ետեւէն դնաց , ինքն ալ ժամ առաջ մեկ-
նելու փափաքելով :

Լուի ԺՊ սանդղին վրայ չկեցաւ , և բաղրիքը բանելով ուժին ,

— Կ'նային — ըստաւ անարժամօրէն խարուած եմ :

— Ի՞նչպէս , Վեհափառ — հարցոց մաերիմը :

— Կիշ՝ Պրամլօն գերկոմին համար մնաւարտած է : Եւ այս
Պրամլօնը . . . :

— Լաւ , ուրեմն :

— Լաւ , միշտ աղջիկը կ'սիրէ զանի : Եւ , Ճշմարիտը , Սէնդ-
Էնյան , ամօթէս պիտի մեռնիմ եթէ , երեք առուր մէջ , սրտիս
մէջէն սիրոյ նշոյլն անդամ չջնջեմ :

Եւ Լուի ԺՊ իր սենեակը փոթաց արտորնօք :

— Ա՛ս , Զեր Վեհափառութեան արդէն ըսեր էի — մրմանաց
Սէնդ-Էնյան թաղաւորին ետեւէն երթալով և բոլոր պատուհան-
ները նայելով երկչուութեամբ :

Գժբաղդաբար ինչպէս որ անտես մտեր էին նոյնպէս զուրս չե-
լան :

Վարագոյր մը բացուեցաւ , ետեւն իշխանուհին կեցած էր :

Իշխանուհին տեսեր էր պատոյ աղջկանց սենեկէն թաղաւորին
գուրս ելնելը :

Իշխանուհին ոտք ելաւ թաղաւորին անցնելէն ետեւ , և շտապան
իր սենեկէն դուրս վաղեց , սանդղին աստիճաններն երկերկու առ-
նլով վեր ելաւ , այն սանդղովն որ թաղաւորին ելած սենեակը կը
տանէր :

Ժ

ՅՈՒՍԱՀԱՏՈՒԹԻՒՆ

Թաղաւորին մեկնելէն ետեւ Լա Վալելիր ոտք ելեր էր բաղ-
կատարած՝ որպէս թէ անոր հետեկը կ'ուզէր , որպէս թէ զանի
կեցնել կ'ուզէր . ապա՝ երբ դուներն իր վրայ գոցուեցան , երբ
իր քայլերուն աղմուկը հեռան անչետ եղաւ , հաղիւ ոյժ գտաւ
երթալ իր խանելութեան պատկերին առջեն ընկնելու :

Այն տեղ մնաց վշտաբեկ , նկուն և ցաւոցը մէջ թաղուած :

մի միայն կսկիծ զալով, կսկիծ մը զոր միայն զդայնութեան բնալզումավ կարող էր զդալ:

Իր մասձութեանց այս շփոթութեան տաեն՝ Լա Վալիեր իր դրան բացուիլը լսեց, և զող ելաւ։ Գլուխը դարձուց, կարծելով թէ եկողը թագառոն է։

Կ'սխալէր նա, նոյն ինք իշխանուհին էր։

Ի՞նչ փայթն էր իշխանուհին։ Գլուխը ծնդարանին վրայ դրած բնկաւ։ Խշխանուհին էր եկողը, այլայլած, զայրացած, սպառնալից։ Բայց ի՞նչ կ'նշանակէր այս։

— Օրին՛դ — ըստու իշխանուհին Լա Վալիերի առջև կենալով — ճշմարիտը, այդ աղուր բան է ծունդ զնել, աղօթել, և կրօնասիրութիւն կեղծել, բայց որչափ որ հլու լինիս երկնից թագաւորին, պարտ ու պատշաճ է նաև որ փոքր ինչ երկրս իշխանց կամքն ալ կատարես։

Լա Վալիեր գժուարաւ զլու խը վեր առաւ. 'ի նշան յարգանաց։

— Քիչ մ'առաջ — շարունակեց իշխանուհին — կարծեմ թէ յանձնարարութիւնն մ'եղաւ քեզի։

Լա Վալիերի անթարթ և մոլորադին աչքը ցոյց կ'առար իր տղիտութիւնն և մուացումը։

— Թագուհին պատուիրեց քեզի — շարունակեց իշխանուհին — որ զգոյշ կենաս այնպէս որ ոչ ոք կարենայ քու վրայ զանազան համբաւներ հանել։

Լա Վալիերի անարկը հետաքնին դարձաւ։

— Լան — շարունակեց իշխանուհին — քու սենեկէդ մէկը կ'ելնէ որու ներկայութիւնն ամրատանութիւն մ'է քեզի դէմ։

Լա Վալիեր համբ կեցաւ։

— Պէտք չէ — շարունակեց իշխանուհին — որ իմ տունս, որ արքայական տան առաջինն է, արքունեաց վաստ օրինակ մ'ընծայէ։ այդ վաստ օրինակին պատճառը գու սկիտի լինիս։ Ուստի՝ քեզի կ'յայտարարեմ, օրինրդ, այժմ որ ունկնդիր վկայ մը չկայ, վասն զի չեմ կամիր քեզ նուաստացնել, կ'յայտարարեմ քեզի որ աշզատ ես այս վայրկենիս իսկ մեկնիլ, և թէ կարող ես մօրդ քովա դառնալ 'ի Պլուա։

Լա Վալիեր ասկից աւելի վար չէր կրնար ընկնիլ. Լա Վալիեր կրած տառապանքէն աւելի չէր կարող կրել։

Իր կերպարանը բնաւ չփոխեց. իր ձեռները ծնդացը վրայ կցուած մնացին երկնային Մազդաղինէի ձեռացը պէս։

— Անցիր ըստու — ըստու իշխանուհին։

Պարզ սարսուռ մ'որ Լա Վալիերի բոլոր մարմնէն անցառ իրեն համար սպատամխանեց։

Եւ որովհետեւ զոհը զայտ թեան ու բիշ նշան մը չէր ցոյցներ, իշխանուհին գուրս ելաւ։

Այն տաեն Լա Վալիեր, իր շնչառակառ սրախն անզգայութիւնը, իր երակներուն արեան սատնութեան փոքր առ փոքր յաջորդելը զբաց, արադաշարժ բախումներ իր գաստակներուն, վզին և քունքին վրայ։ Այս բախումները հետզհետէ սաստկանալով թալկառոր տենդի մը փոխուեցան, և այս ցնորական վիճակին մէջ իր բարեկամաց կերպարանները տեսաւ որ կ'շրջէին բոլորտիքն իր թշնամեց զէմ մաքառելով։

Խառն 'ի խուռն կ'լսէր նա միանդամայն իր խլացած ականջներով սպառնական բառեր և սիրոյ բառեր. ինքնինքը չէր զդար որ նոյն անձն է, կարծեր թէ իր առաջին էութենէ զուրս ելեր էր իրը զօրաւոր մրբի մը մղումէն, և այն հորիզոնին վրայ որ թալուկը զինքը կ'տանէր, զերեզմանին քարը կ'աեւնէր որ վեր կը բարձրանար և յաւիտենական խաւորին ահարկու. և մթին փոսն իրեն ցոյց կ'առար։

Բայց վերջապէս այս երազներուն վշտահար սպաշարումը դադրեցաւ, և իր բնաւորութեան սովորական համբերատարութեան տեղի տուաւ։

Յուսոյ նշոյլ մը սահեցաւ իր սրախն մէջ իրբե արեգական շառաւիդ մ'որ մշշուառ կալանաւորի մը զնդանը կ'թափանցէ։

Ինքնինքը քօնդէնողի ճամբուն վրայ տարաւ, տեսաւ թաղաւորը ձիով իր կառքին գոնակին առջև, իրեն կ'ըսէր նա որ կ'աիրէր զինքը, երեն երդում ընել կ'տար և ինքն ալ երդում կ'ընէր որ եթէ երբէք աւրուին, այցելութեամբ մը, նամակաւ մը, նշանով մը պիտի բայցարութիւն տան իրարու որովէս զի երեկոյեան

այլայլութիւնը փարատելով դիշերային հանդիսար վայելեն : Այս բանս թաղաւորն էր պանողը, թաղաւորն էր երգում ընողը, թաղաւորն էր իրեն երգում ընել տուողը : Հետեապէս անկարելի էր որ թաղաւորն ինքն իր պահանջած խոստման դրժէր, միայն թէ թաղաւորն իրեւ բռնակալ սէր չչրամցէր ինչպէս կ'հրամայէր հնագանդութիւն, միայն թէ թաղաւորն անտարբեր չլինէր այնպէս որ առաջին արդի մը տեսնելուն համրան վրայ մնար :

Թաղաւորը, այս անուշ պաշտպանը, որ մէկ, մէկ խօսքով միայն կարող էր իր բոլոր հոգերը ցրուել, որին թաղաւորն իր հաշածովներուն կ'միանար :

— Ա՛Յ, իր բարկութիւնը չէր կրնար տեել : Այժմ որ առանձին էր իր կրած տառապանքն անտարակցոնա ևս կ'կրէր : Բայց նա, նա կաշկանդուած չէր իրեն պէս, նա կարող էր դորձել, շարժիլ, զալ, ինքը, ինք միայն սպասելու պարտառը էր :

Եւ խեղճ օրիորդը բոլոր հոգւովը կ'սպասէր . վասն զի անկարելի էր որ թաղաւորը չվերադառնար :

Հաղին ժամը տաճա ու կէս էր :

Կամ ովիտի դար նա, կամ իրեն պիտի զրէր, կամ Սէնդ-Էնյանի միջոցաւ իրեն ափափիչ խօսք մը պիտի ուղղէր :

Եթէ վերադառնար, ա՛Յ, ինչպէս անոր առջել վազելու պիտի ելնէր, ինչպէս մէկդի պիտի զնէր այն փափկարառութիւնը զոր այժմ խիստ անպատճէ կ'զմնէր, ինչպէս պիտի ըսէր անոր . և Ես չեմ քեզ չսիրողը, անոնք են որ չեն կամիր որ քեզ սիրեմ :

Եւ այն ատեն, պէտք է ըսել, բան մը կ'մտածէր, Լուին նուազ յանցաւոր կ'զմնէր : Իրօք, ամէն բանի անտեղեակ էր : Արդեօք իր յանառ լոռութեան վրայ ինչ մտածեց : Անհամբեր, բարկասիրա լինելով թաղաւորը, ինչպէս որ ամենքը զիտէին, խիստ զարմանալի էր որ այնչափ երկար ատեն իր պաղարինութիւնը պահած : Ա՛Յ, անտարակցոն ինքն անոր տեղ այսպէս չպիտի վարուէր, ամէն ինչ պիտի հասկընար, դուշակէր : Բայց ինք խեղճ օրիորդ մ'էր և չէ թէ մեծ թաղաւոր մը :

Ա՛Յ, թէ որ դար, թէ որ գա՞ր . . . : Ինչպէս շուտով ովիտի

ներէր թաղաւորին բոլոր իր երեսէն քաշած նեղութիւնները մոռնալով, որչափ աւելի սիրէր զանի տառապանք կրելուն համար :

Եւ իր զլուխը դէպ 'ի զուռն երկնցոցած, իր շուրթերը կէս բաց կ'սպասէր, Աստուած ներէ իրեն այս անվայել խորհուրդը, կ'սպասէր նա այն համբոցը ին զոր թաղաւորին շրթունքն առտուայնքն անուշ կ'բուրէր երբ սիրոյ բառը կ'արտասանէր :

Եւ թաղաւորը չէր երեեր . գէթ կ'զրէր . այս երկրորդ յոյն էր, նուազ անուշ, նուազ երջանիկ յոյս քան միւսն, բայց նոյնաշափ սիրոյ յայտարար նշան պիտի համարէր, միայն աւելի վեհարու սէր մը : Ա՛Յ, ինչպէս պիտի լափէր այն զիրը, ինչպէս պիտի վիութար անոր պատասխան տալու . ինչպէս, եթէ նամակաբերը մի անդամ դուրս ելնէր, պիտի համբուրէր, վերսալն պիտի կարդար, իր սրախն վրայ պիտի սեղմէր այն երջանկաբեր զիրն որ իրեն պիտի բերէր հանդսատութիւն, հանդարատութիւն և երջանկալութիւն :

Վերջապէս թաղաւորը չէր դար . եթէ թաղաւորը չորէր զէթ անկարելի էր որ Սէնդ-Էնյանը զըլկէր կամ Սէնդ-Էնյան ինքնին չգար զինքը տեսնելու : Ինչպէս տրամադիր էր երրորդ անձի մ'ամէն բան յայնել : Արքունական վեհափառութիւնն իր առջեւ չպիտի գտնուէր իր շրթանց վրայ խօսքը սառեցնելու համար, և այն ատեն թաղաւորին սրտէն ամէն կասկած պիտի փարատէր :

Աւստի Լա Վալենտինի սիրան և ակնարկը, մարմին ու միաքը լիովին այս ակնկալութեամբ պաշարուած էին :

Առանձինն ըստ նա որ տակաւին յուսոյ ժամ մը միայն ունէր, թէ թաղաւորը մինչեւ կէս զիշեր կրնար զալ, զըել կամ մէկը զըկել, թէ կէս զիշերին ամէն յոյսը պիտի մարէր, ամէն ակնկալութիւն պիտի կրուսէր :

Պալատին մէջ որչափ ատեն որ աղմուկ լսեց, խեղճ աղջիկը կարծեց թէ այն աղմկին պատճառն ինքն էր . որչափ ատեն որ զաւթէն մարդիկ անցան դարձան կարծեց թէ այս մարդիկ թաղաւորին կողմէ զրկուած պատղամաբերներ են որ իրեն սենեակը պիտի զային :

Ժամը տասն մէկ զարկաւ, տաղ տասն մէկ քառորդ, յետոյ տասն մէկ ու կէս :

Վայրիեաններն անձկո թեամբ կ'սահմէ ին ծանր ծանր, և սակայն աւելի արագ կ'վաղէին :

Երեք քառորդ ժամուն ալ չնչեցին :

Կևս զիշեր, կէս զիշեր, յետին, ճայրազոյն յոյսն ալ ըստ կարդի եկաւ :

Ժամացոյցին յետին չնչինով յետին լրյուն ալ մարեցաւ, յետին լրտով, յետին յոյսն ալ :

Այսպէս՝ նոյն ինքն թաղառորն ալ զինքը խաբեր եր, ամենէն առաջ նա երդման կ'գրմէր զոր նոյն օրն ըրեր էր . . . երդման և երդմաղանցութեան մէջ հազիւ ուրեմն տասն երկու ժամ անցեր էին : Այս պատրանքն ընդ երկար չէր սահչած :

Աւրեմն՝ ոչ միայն թաղառորը չէր սիրեր, ոյլ ամէն կողմէ հաւածանիք կրող անձը կ'արհամարհէր. կ'արհամարհէր զանի այնչափ որ արտաքսման նախատանաց կ'ատապարտէր, որ վատահամբաւիչ վճռոյ մը հաւասար էր, և սակայն, թաղառորը, նոյն ինք թաղառորն էր այս վատահամբաւութեան առաջին պատճառը :

Գրան ժպիտ մը, բարկութեան միակ նշանը, որ այս նահատակին հրեշտակային կերպարանէն անցաւ այս երկար պայքարին տաեն, դաւն ժպիտ մ'երեցաւ իր շրթանց վրայ :

Արդարեւ իրեն համար ինչ կ'մնար երկրիս վրայ՝ թաղառորը կորուսելէն ետե. ոչ ինչ : Աստուած միայն կ'մնար :

Աւսակ Աստուծոյ տարաւ իր միտքը :

— Աստուած իմ — ըստ նա — դու պիտի հրամայես ինձ ընելիքս : Քեզնէ կ'սպասեմ ամէն ինչ, քեզնէ պարտաւոր եմ սպասել ամէն ինչ :

Եւ Լա Վալիեր խաչելութեան նայեցաւ, որու ոտքը համբուրեց եռանդակին :

— Ահա — ըստ նա — տէր մ'որ երբէք չմոռնար և երեսի վրայ չմողուր անոնք որ զինք չեն մոռնար և երեսի վրայ չեն թողուր : Ահա անոր միայն պէտք է զոհել :

Այն ատեն՝ եթէ այս սենեկին մէջ մէկն իր աչքը թափանցէր,

ուիրաւ պիտի տեսնէր որ խեղճ՝ յուսահատ աղջիկը վերջին ուրոշում մ'ընելու վրայ էր, ճայրազոյն խորհուրդ մ'ի զործ զնեալու կ'պատրաստուէր և վերջապէս իր միտքը Յակոբայ այն մեծ սանդղէն վեր կ'սլանար որ հողիներն երկրէն երկին կ'առաջնորդէ :

Այն ատեն՝ որովհետեւ այլ ևս ոյժ չունէր ծնկացը վրայ կենալու, փոքր առ փոքր ծնղարանին աստիճաններուն վրայ ընկաւ, գլուխը խաչափայտին վրայ յենած, և աչքն անթարթ, և շնչասպառ զիտեց ապակիներուն վրայ սոյտան առաջին նշոյները :

Առաւօտեան ժամն երկուքն էր երբ այս մոլորութեան կամ լաւ ևս ցնորեալ վիճակին մէջ կ'պահուէր : Այլ ևս ինքզինքին չէր իշխեր :

Այսպէս՝ երբ առաւօտեան մանիշակագոյն երանդը տեսաւ որ պալատին տամալիներուն վրայ կ'իջնէր և իր զրկած փառսկրէք բրիստուախն ուրուագծերն ընդ աղօտ կ'նկարէր, ճիկ մ'ընելով ուրբ ելաւ, երկնային նահատակին ուրբը համբուրեց, իր սենեկին սանդղէն վար իջաւ և վար իջնելու ատեն զլուխը լոգիկով մը ծածկեց :

Ճիշտ այն միջոցին հասաւ երբ հրայանակրայ զիշերապահ վաշտակը դուռը կ'բանար, և հէլվէտիական զօրաց առաջին սրահորդ զունդը ներս կ'ընդունէր :

Այն ատեն՝ սպահակիներուն ետեէն սահելով փողոցն ելաւ, և զիշերապահ զնղին զլսաւորը ժամանակ անդամ չունեցաւ ինքնիրեն հարցնելու թէ ով էր այն նորասի կինն որ առտու կանու իսպալատէն խոյս կ'տար :

ՓՍ

ՓԱԽՈՒԱՑ

Լա Վալիեր զիշերապահ զնղին ետեէն դուրս ելաւ :

Այս դունդը Սէնդ-Օնօրէ փողոցին աջ կողմը զարկաւ, Լա Վալիեր ճախ կողմը բունեց մեքենապէս :

Իր որոշումն ըրած էր, իր խորհուրդն հաստատած։ Շայօի կարմը լեանց վանքն երթալ կ'ուզէր, որու մայրապետուհին այն պիսի խստակրօնութեան համբաւ մ'ունէր որ արքունեաց աշխարհականներուն աչ ու գող կ'ազդէր։

Լա Վալիեր երբէք բարիլ չէր տեսած, երբէք ոտքով զորս չէր ելած, եթէ հանդարս լինէր միտքն անդամ դարձեալ համբան չպիտի գտնէր։ Ասկից կ'համկյունի թէ ինչու համար Անդօնօրէ փողոցէն վեր կ'ելնէր փոխանակ վար իջնելու։

Բալէ-Բուայալէն հեռանալու կ'փոթար, և կ'հեռանար իրօր։ Այսչափ միայն լսած էր որ Շայօ Աէն գետին վրայ կ'նայէր։ տատի ինքն ալ զէպ ՚ի Աէն գետը կ'զիմէր։

Զարկու Յօք փողոցէն, և Առվիրէն անցնիլ չկարենալով Աէն-ֆէրմէն-Լօքսէրրաւահ եկեղեցոյն համբան բոնց, քերելով այն հրապարակն ուր Բէրօ այնուհետեւ իր սիւները կառոյց։

Շատ չամցաւ քարափունքը հասաւ։

Իր քալուածքն արագընթաց և խոռված էր։ Հազիւ ուրեմն կ'զգար այն տկարութիւնն որ՝ ատեն ատեն իրեն կ'յիշեցնէր թեթեակի կաղալու ստիպելով, այն զելումը զոր մանկութեան ատեն ստացեր էր։

Խթէ օրուան ուրիշ մէկ ժաման լինէր՝ Լա Վալիերի կերպարանն անհեռատես մարդոց կասկածները պիտի գրգռէր, հետաքրքրութենէ զուրի մարդոց նայուածքն անդամ իր վրայ պիտի հրատիրէր։

Բայց առաւօտեան ժամն երկուք ու կէսին, Բարիլի փողոցներն ամայի են կամ դրեթէ ամայի, և միայն աշխատասէր արհեռտաւորները կ'աեսնուին որ կ'երթան իրենց օրապահիկը շահելու, կամ վասնաւոր զատարկապոբաններ որ իրենց տունը կ'զառնան այլայլութեամբ և ցոփութեամբ լի զիշեր մ'անցընելէն ետեւ։

Առաջններուն համար՝ օրը կ'սկսի, միւներուն համար՝ օրը կ'աւարտի։

Լա Վալիեր աչ ու զող զդաց տեսնելով այս գէմքերը, և բարիզն ափապարներուն անտեղեակ լինելով, չէր կարող զսնազանել պարկեշտութենէ անառակութեան կերպարանը։ Իրեն հա-

մար թշուառութիւնը խրառիլակ մ'էր, և բոլոր այս հանդիպած մարդիկն իրեն թշուառներ կ'երևեին։

Իր հագուստը՝ որ առջի օրուանն էր, թէե վեր ՚ի վերոյ ընտիր և մաքուր էր, վասն զի այն հաղուստն էր որով մայր թագուհոյն սենեակը զացիր էր։ ասկից զատ՝ համբան տեսնելու համար իր բացած լոգին ներքեւ, իր գունատութիւնն ու իր աղոսք աչոնքն այնպիսի լեզու մը կ'խօսեին որ այս գուեհիկ մարդոց անձանօթ էին, և առանց զիտնալու՝ նեղջ փախստականն ումանց կոշտութիւնն և այլոց զթութիւնն առ ինքն կ'հրաւիրէր։

Այսպէս Լա Վալիեր շարունակ քալելով շնչասպան և արտորնօք մինչև Կրէվի հրապարակին բարձունքը հասաւ։

Այն ատեն նա կանկ կ'առնուր, իր ձեռքը սրտին վրայ յենըլ, տան մը կրթնելով, շունչ առնլով և իր ընթացքն առաջինէն աւելի շուտ ընդ փոյթ շարունակելով։

Երբ Կրէվի հրապարակը հասաւ՝ Լա Վալիեր երեք մարդոց զիմացը զտնուեցաւ, կուրծքերնին բաց, երերուն, զինով որոնք զետին եղերքը կաղուած նաւակէ մը կ'ելնէին։

Այս նաւակը զինիով բեռնաւորուած էր, և յայտնի կ'երեկը որ այս ըմպելիքն բաւական տնկեր էին։

Իրենց Պաքոսեան քաջաղործութիւններն երեք տարբեր ձայնով կ'երդէին՝ երբ քարափին վրայ նայող բազրիկին ծայրը համսելով, նորատի աղջկան ընթացքը յանկարծ արգիլելու ելան։

Լա Վալիեր կայ առաւ։

Այս մարդիկ ալ պալատականի զետսով հազուած այս կինը տեսնելով կանկ առին, և համաձայնութեամբ իրարու ձեռք բըռն նեցին և Լա Վալիերի շուրջը պար բոնելով երգեցին այսպէս։

Դուս որ մինակունի առա կ'առաջականաւ,

Արէ Ե՛կ, նայինք մեռք ներ ծիծառէ։

Արդարէ Լա Վալիեր հասկըցաւ որ այս մարդիկ իրեն կ'խօսեին և իր ընթացքն արգիլել կ'ուզէին։ քանի մ'անդամ փորձ փորձեց խոյս տալու, բայց անօղուտ տեղը։

Իր ծունկերը դայթեցան, զգաց որ պիտի վար ընկնի, և սարք սափելով Ճիկ մ'արձակեց :

Բայց նոյն պահուն՝ զինքը շրջապատող բոլորակը բայցուեցաւ զօշ բաւոր ձեռքի մը Ճնշումէն :

Նախատիչներէն մին ձախ դին զլորեցաւ, միւսն աջ դին դնաց ընկաւ մինչև ջրին ափունքը, երրորդն իր ոտից վրայ երերաց :

Հրացանակրաց սպայ մը նորատի օրիորդին առջև դանուեցաւ խոժուադէմ, սպառնալից և ձեռքը վերցուցած իր սպառնալիքն՝ ի գործ դնելու համար :

Գինովները խոյս տուին համազեստը տեսնելով, մանաւանդ սպային ցոյց տուած ուժէն երկնչելով :

— Անօրէն — զոչեց սպայն — բայց օրիորդ Լա Վալիէրն է այս :

Լա Վալիէր որ բոլորովին շուարած էր այս պատահած անցքէն, ապշելով որ իր անոնքը կ'արտասանեն, Լա Վալիէր աշեր վերցուց և տ'Արդանեանը ճանչեց :

— Այո՛, պարոն — ըստ նա — ես եմ, ես ինքս եմ :

Եւ նոյն պահուն մասր թեկն կ'բռնէր որ չընկնի :

— Պիտի պաշտպանես զիս, այնպէս չէ՞, Պ. տ'Արդանեան — յարեց նա աղերսապին ձայնով մը :

— Անտարակցոյս քեզ պիտի պաշտպանեմ. բայց ո՞ւր կ'երթաս Տէր Աստուած, այս ժամուս :

— Շայո կ'երթամ :

— Ուաբէլ' կողմէ՛ Շայո կ'երթաս : Բայց Ճշմարիտը, օրիորդ հակառակ կողմը բուներ ես :

— Ուրեմն, պարոն, շնորհ ըրէ ինձ ուղիղ ճամբան ցոյց տառ և փոքր ինչ զիս առաջնորդելու :

— Ո՛չ, յօժարակամ :

— Բայց ինչպէս այս կողմերը կ'զմնեմ քեզ : Ի՞նչ բարեբար դութիւն էր որ ինձ օդնութեան հասար : Ճշմարիտը, կ'երեկ ինձ որ կ'խենդանամ :

— Եւ այս կողմերը կ'զմնուէի, օրիորդ, վասն զի Կրէվի հրաշ պարակին վրայ տուն մ'ունիմ, Խմաժ-առ-Նօրբ-Շամ նշանագրով :

Երէկ զայի տան վարձն առնլու, և դիշերն անդ անցուցի . ուստի պաշատը կանուխ դառնալ կ'փափաքէի որ պահնորդ զօրաց վրայ հսկեմ :

— Ճնորհակալ եմ — ըստ Լա Վալիէր :

— Այս այս էր իմ ըրածս, այո՛ — ըստ իւրովի տ'Արդանեան — բայց նա, նա ի՞նչ կ'ընէր, և այս ժամուս ինչո՞ւ համար Շայո կ'երթայ :

Եւ իր թեսն անոր տուաւ :

Լա Վալիէր թեսը մտաւ և սկսաւ տրտորնօք քալել : Աակայն այս շտապը մեծ տկարութիւն մը կ'ծածկէիր : Տ'Արդանեան զգաց այս բանս, և Լա Վալիէրի առաջարկեց որ փոքր ինչ հանդիստ առնու, բայց օրիորդը մերժեց :

— Վասն զի չպիտես անշուշա թէ ո՞ւր է Շայո — ըստ տ'Արդանեան :

— Այո՛, չպիտեմ :

— Շատ լաւ :

— Փոյթ չէ :

— Գէթ մղոն մը չեռու է :

— Այդ մղոնը քալելով պիտի ընեմ :

Տ'Արդանեան պատասխան մը չտուաւ . միայն ձայնին շեշտէն կ'իմանար Ճշմարիտ գիտաւորութիւնները :

Ուստի վերցուց քան թէ առաջնորդեց Լա Վալիէրը :

Վերջապէս բարձունքը տեսան :

— Ո՞ր տունը պիտի զնաս, օրիորդ — հարցուց տ'Արդանեան :

— Կարմելեանց, սպարոն :

— Կարմելեանց — կրկնեց տ'Արդանեան զարմացած :

— Այո՛, և որովհետեւ Աստուած քեզ զրկեց որ իմ ճամբուս վրայ զիս պահպանես, ընդունէ՛ իմ շնորհակալիքս և իմ հրաժարական բարեներս :

— Կարմելեանց, բարեներդ : Ուրեմն վանատոնը կ'մննես — գոչեց տ'Արդանեան :

— Այո՛, պարոն :

— Դո՛՛ւ :

Այս պահին մէջ, որու վրայ երեք շեշտ դրինք կարելի եղածին չափ ազդու ընելու համար, այս պահին մէջ ամբողջ բանաստեղծ ծութիւն մը կար. և Ալալիերի կ'յիշեցնէր թէ Պլուայի հին յիշատակները թէ Գօնդէնազլօի նոր յիշատակները. անոր կ'ըսէր. « Դու որ կընայիր երջանիկ լինիլ Ռառուլի հետ, ո՞ւ ախտի կուսարանը մոնես » :

— Այս, պարոն — ըստ նա — ես : Տիրոջ սպասուհին սկսի լինիմ, բոլոր աշխարհէ կ'հրաժարիմ :

— Բայց միթէ կոչմանդ հակառակ չես գործեր սխալմամբ, բայց միթէ Աստուածոյ կամաց ներհակ չես շարժիր :

— Ո՛չ, քանի որ Աստուած ուղեց որ քեզի հանդիպիմ: Եթէ դու չլինեիր, անտարակոյս յողնութենէ սկսի լինիչէի, և որովհետեւ Աստուած քեզիմ առջես հանեց, ըսել է թէ ուղեց որ իմ նպատակիս համիմ:

— Ո՛չ — ըստ տ'Արդանեան կասկածով — այդ ինձ քիչ մը նուրբ կ'երեկի :

— Կոչ որ է — վրայ բերաւ նորատի օրիորդը — ահա իմացար իմ դիտաւորութիւնս և նոպատակս: Այժմ վերջին շնորհ մը ունիմ ինդրելու քեզնէ, իմ շնորհակալիքս միանդամայն քեզի ուղղելով :

— Հայէ, օրիորդ :

— Թաղաւորը Բալէ-Ռո այալէն փախչելս չգիտէ :

Տ'Արդանեան շարժում մ'ըրաւ :

— Թաղաւորը — շարունակեց Լա Վալիեր — չգիտէ թէ ի՞նչ սպիտի ընեմ:

— Թաղաւորը չգիտէ . . . — զուեց տ'Արդանեան: — Բայց, օրիորդ, զզոյշ եղիր, այդ ընթացքիդ ծանրութիւնը չես կշոեր: Ոչ կընայ բան մ'ընել առանց թաղաւորին զիսութեան, մասնաւոր արքունի սպալատի մարդիկ:

— Ես այլ ևս արքունիքէն չեմ, պարոն :

Տ'Արդանեան նորատի օրիորդին նայեցաւ և իր զարմանքն երթալով կ'աւելնար:

— Ո՛չ, մի վրդովիր, պարոն — շարունակեց օրիորդը — ամէն

բան կշուռած է, և եթէ չլինէր իսկ, այժմ իմ զիտաւորութիւնս փոխելու ատենն անցած է, գործադրեցի զայն :

— Լաւ ուրեմն, ըսէ, օրիորդ, ի՞նչ կ'ուզես :

— Պարոն, յանուն գթութեան զոր պարտաւոր ես դժբաղզին, յանուն քու հոգւոյդ վեհանձնութեան, յանուն քու պատույդ, կ'պալատիմ քեզ ինձ երդում մ'ընելու :

— Երդում մը :

— Այս :

— Ի՞նչ երդում :

— Երդում ըրէ ինձ, Պ. տ'Արդանեան, որ չպիտի ըսես թագաւորին թէ զիս տեսար և թէ կարմելեանց վանքը կ'դանուիմ:

Տ'Արդանեան գլուխը ցնցեց :

— Այդպիսի երդում մը չպիտի ընեմ — ըստ նա :

— Եւ ինչո՞ւ համար :

— Վասն զի կ'ձանչեմ թագաւորը, վասն զի քեզ կ'ձանչեմ, վասն զի ինքնինքս կ'ձանչեմ, վասն զի բոլոր մարդկային սեռը կը ձանչեմ. ոչ, այդ երդումը չպիտի առնում:

— Ուրեմն — զուեց Լա Վալիեր այնպիսի զօրութեամբ մ'որ իրմէ շեր յուսացուէր — ուրեմն փոխանակ այն օրհնութեանց զզրս մինչև կենացս վերջը քեզի լիաբերան պիտի տայի, անիծեալ եւ զիր. վասն զի՝ բոլոր արարածոց մէջ քու երեսէդ ամենաթշտառը պիտի լինիմ:

Ըսինք որ տ'Արդանեան կ'ձանչեր սրտէ ելած ամէն ձայն, այս ձայնին չկրցաւ դիմանալ :

Տեսաւ օրիորդին կերպարանին քայքայումը, տեսաւ անոր անգամներուն դողը, տեսաւ ցնցումերէ զզրդուած այս վտիտ և փափուկ մարմնոյն երերիլը, հասկըցաւ որ եթէ զիմադրէ այս էակը սպիտի սպաննէ:

— Ուրեմն թնդ խօսքդ լինի — ըստ նա : — Անհոգ եղիր, օրիորդ, թաղաւորին բան մը չպիտի ըսեմ:

— Ո՛չ, շնորհակալ եմ, շնորհակալ եմ — զուեց Լա Վալիեր — դու մարդկան մէջ ամենէն վեհանձն ես :

Եւ իր եռանդակին ուրախութեան մէջ ամէն տ'Արդանեանի ձեռքը քոնեց և իրենին մէջ սեղմեց :

Տ'Արդանեան զղայ որ դութը կ'շարժի :

— Անօրէն — ըստու նա — ահա էակ մ'որ կ'սկսի այն տեղէն ուսկից ուրիշները կ'աւարտեն . այս սրտաշարժ բան է :

Այն ատեն լա վալիէր , որ իր ցաւոց ծայրագոյն աստիճանին մէջ՝ քարի մը վրայ ընկած նստած էր , ոտք ելաւ և կարմելեանց վանքը ղիմեց , որ նորածին լուսոյ մէջ սկսեր էր նկարուիլ : Տ'Արդանեան հետուին անոր կ'հետեւէր :

Խօսարանին դռւուը կէս բաց էր , զունատ ստուերի մը պէս սահեցաւ , և ձեռքի նշանով մը տ'Արդանեանի շնորհակալ լինելով իր աչքէն աներեսյթ եղաւ :

Երբ տ'Արդանեան մինակ մնաց , անցած դարձածին վրայ խոռոշնկ մտածեց :

— Ճշմարիտ վկայ , աւասիկ իմ վիճակս կ'ըստի ծուռ կացուածին մը . . . : Այսպիսի զաղանիք մը պահէլ , ուրիշ բան չէ բայց միայն զրապահիդ մէջ հրաշէկ ածուխ մը պահէլ , և յուսալ որ լաթը չպիտի այրէ : Իսկ երդումը չպահէլ , երդմնելէն ետե որ պիտի պահէնք , այս ալ անսպատի մարդու դործ է : Ընդհանրապէն՝ լաւ խորհուրդները վաղելու ատենս կ'համնին միտքս , բայց այս անդամ , կամ կ'սխալիմ չափազանց , կամ պէտք է շատ վազեմ որպէս զի այս դործին լուծու մը դանեմ . . . : Ո՞ր վաղեմ . . . Ճշմարիտը , դարձեալ բարիդի կողմը . այս լաւ կողմն է . . . : Միայն շուտ վաղենք , լաւ ևս են չորս քանի երկու ոտք : Գոյքաղ դաբար , առ այժմ , միայն իմ երկու ոտքս ունիմ . . . : Զի՞ մը , ինչպէս որ Լուվրի թատրոնին մէջ լսեցի , իմ թաղս ձիու մը համար . . . Քօնֆէրանսի քաղաքադուռը հրացանակրաց պահակ մը կայ , և որչափ որ ինձ ձի մը պէտք է , այն տեղ տասն հատ սիւթի դտնենք :

Այս դիտաւորութեան ուժով , որ իր սովորական արագութիւն նը հաստատեց , տ'Արդանեան շուտ մը բարձունքէն իջաւ , պահանջանութիւն հաստատեց , դտած լաւագոյն ձին առաւ , և տասն վայրկենի մէջ պալատը ժամանեց :

Բալէ-բուայլի ժամացոյցը ժամը հինգ կ'զարնէր :

Տ'Արդանեան թագաւորին վրայ լուր հարցոց :

Թաղաւորն իր սովորական ժամուն պակեր էր , Պ. Գոլպէրի հետ աշխատելէն ետե , և ըստ հաւանականին , դեռ ևս կ'քննանար :

— Աղէ — ըստ նա — օրիորդը Ճշմարիտը խօսեր է ինձ . թագաւորը բանէ մը տեղեկութիւն չունի . եթէ այս անցքերուն կէսը միայն դիտնար՝ այժմ Բալէ-բուայլը տակնուվրայ պիտի լինէր :

ԺԲ

Ֆ'ԱՇՊԵՍ ԼՈՒՄ ԻՐ ԿՈՂՄԻ ԺԱՄԸ ՏԱՄՆՈՒԿԵՍԻՆ ՄԻՒԶԵՒ
ԿԵՍ ԳԻՇԵՐ ԱՆՑՈՒՑԵՐ ԻՐ ԻՐ ԺԱՄՄԱՆԱԿԸ

Թաղաւորը՝ պատույ աղջկանց մենեկէն ելնելուն՝ իր սենեակը գտեր էր Գոլպէրն որ իրեն կ'սպասէր հրամաններն ընդունելու հետեւեալ առտուան արարողութեան առթիւ :

Ինչպէս որ արդէն ըսկնք , հոլանտացի և սպանիացի գեսպանաց ընդունելութեան հանդէս մը պիտի լինէր :

Լուի Ֆ'Վ Հոլանտայի դէմ ծանր ծանր զանդատանաց պատճառներ ունէր . հոլանտացիք արդէն քանից Փրանսայի հետ թշնամարար վարուեր էին , և առանց տեսնելու կամ վախնալու որ կրնար անհամաձայնութիւն մը ծաղիւ , վերստին ամենաքրիստոնեայ թագաւորին գաշնակցութիւնը կ'ձգէին , Սպանիայ հետ ամէն տեսակ դաւեր նիւթելու համար :

Լուի Ֆ'Վ իր զահակալութեան միջոցին , կամ Ֆազլարէնի մահաւանէ ետքը , այս քաղաքական խնդիրը յուղուած զտեր էր :

Երիտասարդի մը համար գժուարին խնդիր մ'էր լուծելու , բայց որովհետեւ այն ատեն բոլոր ազգի թագաւորն էր , ինչ որ զլուխն որոշէր , մարմինը կատարելու սկատրաստ կ'զմնուէր :

Քիչ մը բարկութիւն , նոր և վառվառն արեան մը շրջանը զլիքի մէջ բաւական էին հին քաղաքական զիծ մը փոխել և նոր գրութիւնը հաստատել :

Ժամանակին դիւանագէտներուն դերն ուրիշ բանի վրայ չէր

կայանար այլ միայն իրենց մէջ պետական պատահարներ պատրաստել, որոցմէ իրենց վեհապետները կրնային պէտք ունենալ:

Առի մուաց այնպիսի տրամադրութեան մէջ չէր որ կարող լինէր խոհական քաղաքականութեան մը հետեւու գլնքը դրուել:

Հա աշլէրի հետ ունեցած կռուէն գեռ ևս այլայլած՝ իր գահը լին մէջ կ'թափառէր, լուծում մը դանելու և աղմուկ հանելու սաստիկ փափաքելով՝ այնչափ ատեն ինքզնը զապելէն ետեւ:

Գօլպէր՝ թագաւորը տեսնելուն՝ մէկ նայաւածքով զործոց վեհակը հասկըցաւ. և թագաւորին դիտաւորութիւնները զուշակեց: Ակաւ սողոսկիլ:

Երբ թագաւորը հարցուց թէ հետեւեալ օրը ի՞նչ պիտի ըսէ, փոխ-տեսուչը նախ տարօրինակ դանել ձեւացոց որ Նորին Վեհափառութիւնն այս մասին աղէտք եղած տեղեկութիւնները չէր ստացած ո՛. Գուրքէի միջոցաւ:

— Պ. Գուրքէ — ըսաւ. — Հոլանտայի այս զործին շատ տեղեակէ, ուղղակի կ'ընդունի բոլոր թղթակցութիւնները:

Թագաւորը՝ որ վարժած էր տեսնել Պ. Գօլպէրն որ Պ. Գուրքէն միշտ վար կ'զարնէր, այս քարերն անսպատասխանի թողուց, միայն մտիկ ըրաւ:

Գօլպէր իր խօսքին ներզործութիւնը զիտեց և ըսածը մեղմելու փութաց յարելով՝ թէ Պ. Գուրքէ մեղադրելի չէ ինչպէս արտաքուստ կ'երեկի, վասն զի այս պահուս մեծ մտատանջութիւններ ունէր:

Թագաւորը դլուիր վերցուց:

— Ի՞նչ մոտասանջութիւններ — ըսաւ նա:

— Վեհափառու, մարդիկի ինչ որ ընեն, մարդիկ են, և Պ. Գուրքէ իր մեծ յատկութեանց հետ պակասութիւններն ալ ունի:

— Ա՛չ, պակասութիւններ, և որ մարդը պակասութիւններ չունի, Պ. Գօլպէր:

— Չեր Վեհափառութիւնն ալ ունի անշուշտ — ըսաւ Գօլպէր համարձակութեամբ, որ զիտէր ծանր շողօքորթութիւն մը նետել թեթև պարսաւի մը մէջ, ինչպէս նետն որ իր ծանրութեան չնաշելով օդը կ'ձեղքէ, զինքը բունող թեթև փետուրներուն շնորհիւ:

Թագաւորը մարտեցաւ:

— Ուրեմն Պ. Գուրքէ ի՞նչ թերութիւն ունի — ըսաւ նա:

— Վեհափառու, միշտ նոյն թերութիւնը. կ'ըսեն թէ սիրահաւած է:

— Որո՞ւ սիրահաւած է:

— Ճիշտը չգիտեմ, Վեհափառու, ես կնային զործերու շատ չեմ խառնուիր, ինչպէս որ կ'ըսեն:

— Բայց վերջապէս՝ զիտես բան մը, քանի որ կ'խօսիս:

— Ես ալ լսեցի . . . :

— Ի՞նչ բան:

— Անուն մը:

— Ի՞նչ անուն:

— Բայց չեմ յիշեր այդ անունը:

— Ըսէ նայիմ:

— Կարծեմ թէ իշխանուհւոյն նամիշտներէն մէկուն սիրահաւած է:

Թագաւորը գող ելսւ:

— Դու ըսածէք աւելի բան զիտես, Պ. Գօլպէր — մրմնաց նա:

— Ո՛չ, Վեհափառու, կ'հաւաստեմ որ չգիտեմ:

— Բայց վերջապէս՝ իշխանուհւոյն նամիշտներն ամենուն ծանօթ են, և անոնց անունները կրկնելով մոքիդ մէջ՝ թերես զըտնես փիտուածդ:

— Ո՛չ, Վեհափառու:

— Փորձէ՞:

— Անօդուա բան է, Վեհափառու: Երբոր աիկին մը կ'բամբաստի անոր անունը յիշողութեանս մէջ կ'պահէմ իբրև պղնձեայ արկղի մը մէջ որու բանալին կորուսած եմ:

Թագաւորին մաքէն և ճակտէն ամպ մ'անցաւ, ապա՝ ինքընքին տէրն երեխը ուղելով և զլուխը ցնցելով,

— Նայինք սա Հոլանտայի գործը — ըսաւ նա:

— Ես նախ, Վեհափառու, ժամը քանիին կ'ողէք ընդունիլ գեսպանները:

— Առաջութեանուիս :

— Ժաման տասն մէկի՞ն :

— Ծառ ուշ է . . . ժամն իննին :

— Ծառ կանութիւն է :

— Բարեկամաց համար այս կարեոր կէտ մը չէ . բարեկամաց համար ամի՞ն ժամ՝ կրնայ յարմարիլ, բայց թշնամաց համար, փոյթ չէ, թող վերաւորուին, իմ ուզածս ալ այս է : Զպիտի բարկանամ, կ'խոստովաճիմ, եթէ ձահիճներու այս թունոց հետ մը անդամ ընդ միշտ ընելիքս որոշեմ, վասն զի ջիղերուս կ'դպին :

— Վեհափառ, ձեր կամքն ինչպէս որ հաճի, պիտի կատարուի . . . : Աւրեմն ժամն իննին . . . ըստ այնմ պէտք եղած հրամանները պիտի տամ: Միթէ այս հանդիսաւոր ունկնդրութիւն մը պիտի լինի:

— Ո՛չ: Կ'ուղեմ անոնցմէ բացատրութիւն խնդրել և խնդիրը չծանրացնել, ինչպէս որ կ'պատահի միշտ շատ մարդոց առջեւ . բայց նոյն միջոցին՝ կ'ուղեմ նուե դործը լուսաբանել, որպէս զի նորին չսկսինք:

— Ձեր Վեհափառութիւնը շնորհ ընէ յայտնելու այն անձինքն որ այս ընդունելութեան ներկայ պիտի դանուին:

— Ցուցակը պիտի շինեմ. . . : Այդ գեսապանաց վրայ խօսինք: Ի՞նչ կ'ուղեն:

— Սպանիոյ միանալով ոչ ինչ չեն շահիր . բայց ֆրանսայի հետ միանալով շատ բան կ'կորուսեն:

— Ինչպէս:

— Եթէ Սպանիոյ միանան, իրենց գաշնակցին երկիրներով շրջապատւած և պաշտպանուած պիտի աեմնեն ինքվնին, չեն կարող թէ և փափաք ունենան՝ խածնել: Անլէրսէն 'ի Ռօթերտամ' քայլ մը միայն կայ Էսքօէն և Մէօզէն: Եթէ սպանիական կարկանդակին դպին, դուք, Վեհափառ, դուք որ Սպանիոյ թագաւորին փեսան էք, կարող եք երկու օրուան մէջ՝ ձեր տռւնէն Պրուքսէլ զնալ ձիւաւոր զօրքով: Հետեապէս եթէ ձեզի հետ աւրուին և Սպանիոյ կասկած ազգեն, այն ատեն 'ի հարկէ անոնց դործոց պիտի խառնուիք:

— Ուրեմն աւելի պարզ է — պատասխանեց թաղաւորը — եթէ ինձի հետ հաստատուն դաշնակցութիւն մը կազմեն որմէ ես բան մը թերեւս շահիմ, մինչդեռ իրենք ամէն բանի մէջ շահաւոր պիտի ելնեն:

— Ո՛չ, ամենեին . վասն զի եթէ դիպուածով ձեզ իրենց սահմանակից ունենան, Ձեր Վեհափառութիւնը հանդարա գրացի մը չէ . նորատի, վառվուն և պատերազմասէր լինելով՝ դուք ֆրանսայի թաղաւոր, Հոլանտայի ծանր հարուածներ կրնաք ի ջնջնել, մանաւանդ եթէ ձեզի շատ մօտենան:

— Կատարելապէս կ'իմանամ ըսածդդ, Պ. Գօլպէր, և լաւ բացատրեցիր միտքդ, միայն ինդրեմ եղբակացութիւն մը հանէ:

— Ձեր Վեհափառութեան որոշմանց մէջ միշտ իմաստութիւնը կ'փայլի:

— Այս գեսպաններն ի՞նչ պիտի ըսեն ինձ:

— Ձեր Վեհափառութեան պիտի ըսեն որ իր գաշնակցութիւնը սրտաղին կ'փափաքին, և սուտ մ'ըսած պիտի լինին: Անպանիացոց պիտի ըսեն որ երեք տէրութիւններն Անկլիոյ բարօրութեան դէմ պարտին միանալ, և սուտ մ'ըսած պիտի լինին, վասն զի Ձեր Վեհափառութեան բնական դաշնակցին է այսօր Անկլիա, որ նաեւ ունի, մինչդեռ դուք չունիք . Անկլիան է, որ կրնայ Հոլանտայի իշխանութեան զիմակալել 'ի Հնդկաստան . վերջապէս Անկլիան է, միապետական երկիր, որու հետ Ձեր Վեհափառութիւնն աղդակցութեան յարաբերութիւններ ունի:

— Լաւ, բայց ի՞նչ պիտի պատասխանէիր:

— Վեհափառ, պիտի պատասխանէի, աննոման չափաւորութեամբ, որ Հոլանտան լիովին բարեկամական տրամադրութիւն չունի ֆրանսայի թաղաւորին համար, թէ հասարակաց կարծեաց նշանները՝ հոլանտացոց մէջ, Ձեր Վեհափառութեան համար անպաստ են, թէ թշնամական նշանաբաններով մէկ քանի շքարբամներ կոխուած են:

— Խնձի՞ համար — դուեց նորատի թաղաւորը բորբոքելով:

— Ո՛չ, ո՛չ, Վեհափառ, ո՛չ. Թշնամական խօսքը Ճիշտ չէ, և սիսալեցայ: Կ'ուղէի ըսել չափազանց դուելի Պաթալիացոց համար:

— ԱՇ, եթէ այդպէս է, ինչ փոյթս Պաթալիացոց զոռու զութիւնը — ըստ թագաւորը հառաջելով:

— Չեր Վեհափառութիւնը հազար անդամ իրաւունք ունի: Սակայն այս քաղաքական չարկի մը չէ, դուք ինչեւ քաջ զիտեր, եթէ անիրաւ լինիք զիջում մը ստանալու համար: Չեր Վեհափառութիւնը՝ Պաթալիացոց վրայ դիրագրդուութեամբ զանդանելով՝ աւելի ահարկու պիտի երեկիք անսնց:

— Ի՞նչ են այն շքադրամները — հարցուց Լոի — վասն զի եթէ խօսիմ պէտք է զիտեամ ըսելիքս:

— Երաւ որ, Վեհափառ, ես ալ քաջ չզիտեմ: . . .: Քանի մը լսիրշ նշանաբաններ պիտի լինին: . . .: Այս է բոլոր իմաստը, բաւերն իրենց վրայ նոր բան մը չեն առելցներ:

— Լաւ, շքադրամ բառը պիտի արտասանեմ, և եթէ կամենան թուղ հասկընան:

— ԱՇ, պիտի հասկընան: Չեր Վեհափառութիւնը կրնայ հրաժարակուած քանի մը պարսաւազիրերու մասին քանի մը բառ սպրդել:

— Երբէք, պարսաւազիրերը դրովները կ'աղտոտեն քան թէ ուրոց գէմ որ զրուած են: Պ. Գօլպէր, չնորհակալ եմ քեզի, կրնաս հեռանալ:

— Վեհափառ:

— Երթաս բարեաւ, մի՛ մոռնար ժամն ու ներկայ դանուէ ընդունելութեան:

— Վեհափառ, ձեր շինելիք ցուցակին կ'սպասեմ:

— Երաւ է:

Թագաւորն սկսաւ խորհիլ: Բնաւ այս ցուցակին վրայ չէր մտածեր: Ժամացոյցը ժամը տասն մէկ ու կէս կ'զարնէր:

Թագաւորին գէմքին վրայ զոռովզութեան և սիրոյ սոսկալի պայքարին նշանները կ'տեսնուէին:

Քաղաքական այս խօսակցութիւնը թագաւորին զայրոյթը բաւական ամոքեր էր, և Լա Վալիերի գունատ և այլայլած գէմքին իր երեսակայութեան խիստ տարբեր լեզու մը կ'խօսէին, քան թէ հուշանտական շքադրամներն ու պաթալեան պարսաւազիրերը:

Տասն վայրկենի չափ կեցաւ ինքնովին հարցնելու համար թէ ութոք էր թէ ոչ Լա Վալիերի մօտ գնալ: բայց Գօլպէր ակնածութեամբ պնդելուն ցուցակին համար, թագաւորը կարմրեցաւ որ սիրոյ կ'խօսէր մինչդեռ զործերն իրեն ուրիշ բան կ'հրամայէին: Աւստի տուն տուաւ:

— Մայր թագուհին . . . թագուհին . . . իշխանուհին . . . Մօսկվի աիկինը . . . Շաղկյօն օրիորդը . . . Նայալ աիկինը . . . : Խակ մարզոց զալով պիտի դանուին եղայրս իշխանը . . . Գօնտէ կունը . . . Պ. Կրամօն . . . Պ. Մանկան . . . Պ. Սէնդ-Էնյան . . . և արրունի բոլոր սպանները:

— Հապա պաշտօնեայք — ըստ Գօլպէր:

— Այդ ըսելու հարկ չկայ, հարկաւ պիտի դանուին, նոյն պէս զրադիրները:

— Վեհափառ, երթամ պիտի ամէն բան պատրաստեմ. վաղճառաւուաւ հրամանները պիտի զրկեմ իւրաքանչիւրին տունը:

— Այսօր ըսէ — յարեց Լոի տրտմաղին:

Կէս զիշեր կ'զարնէր:

Զիշտ այն ժամն էր երբ խեղձ Լա Վալիեր ցաւէն, տառապանքէն կ'մաշէր:

Սպասարկուներուն ժամը համելով թագաւորին պահապան սպայք ներս մտան ննջարանը:

Թագուհին ժամէ մ'ի վիք կ'սպասէր:

Լուի անոր տունը գարձաւ հառաջելով, իր արիութեան վրայ շատ դոչ էր: Խեղինքն երջանիկ կ'հրամարէր թէ սիրոյ և թէ քաղաքականութեան մէջ հաստատալու լինելուն:

ՃՊ

§՝ Արդանեան՝ մի՛ արդէն պատմածները զիւրաւ իմացեր էր,

վասն զի իր բարեկամաց մէջ տան բոլոր օգտակար մարդիկն ուշ նէր, պաշտօնասէր սպաներ, որ հրայանակրին բարեն իրենց պարծանք կ'սեպէին, վասն զի հրամանատարն իշխանութիւն մ'էր. նաև փառասիրութենէ զատ՝ կ'պարծենային որ ա'Արդանեանի շափ արիասիրու մարդ մը զերենք բանի մը տեղ կ'դնէր:

Տ'Արդանեան այսպէս ամէն առառ տեղեկութիւններ կ'ստանար այն իրերուն վրայ զորս առ ջի օրը չէր իմացած այնպէս որ ամէն օր թէ իր իմացածն և թէ ուրիշներէն լսածը մէկտեղ բերելով համբար մը կ'շինէր որպէս զի 'ի հարկին իրեն պատշաճ դատած զէնքն անկից առնու:

Այնպէս որ՝ ա'Արդանեանի երկու աչքն իրեն այնշափ կ'ծառաւ յէին որշափ կ'ծառայէին Արկոսի հարկուր աչերը:

Քաղաքական գաղանիք, դահլչի զաղանիք, նախասենեկի պաւատականաց բերնէն ելած զրոյցներ, այս ամենը ա'Արդանեան դիտէր և իր յիշողութեան ընդարձակ և անթափանցելի շիրմին մէջ կ'պահէր զանոնք, արքայական դաւանեաց մօտ, զորս մեծագին ձեռք ձգած էր, և հաւատարութեամբ կ'պահէր:

Աւսոի Գօլպէրի հետ թագաւորին ունեցած տեսակցութիւնն իւմացաւ, իւմացաւ առաւօտեան համար դեսպանաց տրուած ժամագրութիւնը, իւմացաւ որ շքալրամներուն վրայ խօսք պիտի գառնայ, և մինչեւ իր ականջը հասած այս քանի մը բառերու վրայ խօսակցութիւնը հիմնելով թագաւորին սենեակները մտաւ և իր տեղը բռնեց որպէս զի անդ դանուի թագաւորին արթնալու միջոցին:

Թաղաւորը շատ կանուխ արթնցաւ, ուսիկից կ'իմացուէր որ ինքն ալ բաւական դէշ ննջեր էր: Ժամը եօթին ատենները՝ իր դուռը կամացուկ մը բացաւ:

Տ'Արդանեան իր պաշտօնը կ'կատարէր:

Նորին Վեհափառութիւնը զունատ էր և յոզնած կ'երեէր. ասէ զատ՝ տակալն չէր հագուած լիովին:

— Պ. Աէնդ-Էնյանը կանչել տուր — ըսաւ նա:

Անտարակոյս Աէնդ-Էնյան կ'յուսար որ պիտի կանչուէր, վասն զի երբ խույը մտաւ, բոլորովին հագուած էր:

Աէնդ-Էնյան հնազանդելու փութաց և թագաւորին սենեակն անցաւ:

Պահ մ'ետք՝ թագաւորն ու Աէնդ-Էնյան անցան. թագաւորն առջեւն կ'երթար:

Տ'Արդանեան զարիթներուն վրայ նայող պատուհանն էր. թագաւորին ետեւն աչօք նայելու համար իր տեղը փոխելու պէտք չղաց: Կարծես թէ կանխաւ դուշակեր էր թէ թագաւորն ուր պիտի երթար:

Թագաւորը պատույ աղջկանց սենեակը կ'երթար:

Այս բանս զարմանք չպատճառեց հրայանակրին: Քաջ հասկըցեր էր, թէ և Լա Վալիեէր իրեն բան մ'ըսած չէր, որ Նորին Վեհափառութիւնն իր մէկ քանի յանցանաց ներում ինդրելու պէտք ունէր:

Աէնդ-Էնյան առ ջի օրուան պէս թագաւորին հետեւցաւ, թէ և նուազ անհանդիստ, նուազ յուզեալ կ'երեւէր. վասն զի կ'յուն առար որ առաւօտեան ժամը եօթին՝ միայն թագաւորն ու ինքն արթնցած պիտի լինէն պալատին արբոնի բնակչաց մէջ:

Տ'Արդանեան իր պատուհանն էր, անհող և հանդարստ: Կրնար մարդ երգում ընել որ բան մը չէր տեսներ և բոլորովին անտեսական հիմնելու հիմնելով թագաւորին սենեակները մտաւ և իր տեղը բռնեց որպէս զի անդ դանուի թագաւորին արթնալու միջոցին:

Եւ սակայն ա'Արդանեան այնպէս իմն կ'ցուցնէր որ անոնց չէր նայեր, բայց աչքէ չէր հեռացնէր զանոնք, և հրացանակրաց հին մէկ արշաւի եղանակը սուլելով զոր ծանր պարագայից մէջ կ'յիշ շէր, կանխաւ կ'դուշակեր և կ'երեւակայէր 'ի դարձին թագաւորին հանելիք ահաղին փոթորիկն ու բարկութեան նշանները:

Եւ իրօք թագաւորը Լա Վալիեէրի խույը մանելով և զայն պարապէտ զանելով նոյնպէս անկողինը շաւրուած, սկսաւ զարհութիւն և Մօնդալէն կանչեց:

Մօնդալէ վաղեց եկաւ, բայց նա ևս թագաւորին չափ զարմացաւ մնաց:

Այս միայն ըսաւ թագաւորին թէ Լա Վալիեէրի լացը լսած լինի դիշերուան մէկ մասը, բայց՝ դիմնալով որ Նորին Վեհափառութիւնը դարձած է, չէր համարձակած տեղեկութիւն ստանալու:

— Բայց — ըստ թաղաւորը — ուր կարծես թէ զայած լինի :
— Վեհափառ — պատասխանեց Մօնդալէ — Լուիզ շատ սիրամէտ անձ մ'է , և շատ անդամ տեսած եմ զանի որ այդուն հետ ենելով պարտէզք պտըտելու կ'երթար , կարելի է այս առառու ալ գնաց :

Այս բանս թաղաւորին հաւանական երեցաւ , ուստի խկզն վար իջու որպէս զի փախստականը վնասուելու սկսի :

Տ' Արդանեան զոհատ տեսաւ թաղաւորն որ իր ընկերին հետ աշխոժիւ կ'իսօսակցէր :

Գէպ 'ի պարտէզները դիմեց :

Աէնդ-Էնյան ալ ողեսպատ անոր կ'հետեւէր :

Տ' Արդանեան իր պատուհանէն չէր շարժեր , միշտ կ'սուլէր անշած դարձածը չտեմելու զարնելով , և ամէն բան տեսնելով :

— Օ՞ն և օ՞ն — մըմուաց նա երբ թաղաւորն աներեսյթ եղաւ — թաղաւորին սէրն իմ կարծածէս աւելի բուռն է . կարծեմ թէ այնպիսի բաներ կ'ընէ որ օբիորդ Ֆանսինիին համար չէր ըրած : Թաղաւորը քառորդ մ'ետք դարձաւ , ամէն տեղ վնասուեր էր , շնչառապատ կ'երեւէր :

Աւելորդ է ըսել որ թաղաւորը վնասուածը չէր զտած :

Աէնդ-Էնյան անոր կ'հետեւէր , փեղյորմն երեսին հոլ կ'ընէր , և այլայլած ձայնով մ'առ ջեն ելնող սպասաւորներէն , և ամէն հանդիպողներէն տեղեկութիւն կ'ինդրէր :

Մանիքան ճամբուն վրայ զտնուեցաւ . Մանիքան Գօնդէնալուն կ'գառնար ծանր ծանր ճամբորդելով , մինչդեռ որիշներ վեց ժամուան մէջ հասեր էին , ինքը քսան չորս ժամու մէջ եկեր էր :

— Օրիորդ Լա Առալիէրը տեսամբ — հարցուց Աէնդ-Էնյան :

Մանիքան որ միշտ մտախոչ և ուշաթափ էր , պատասխանեց , կարծելով թէ իրմէ նիշի վրայ տեղեկութիւն կ'ինդրէն :

— Շնորհակալ եմ , կոմմէ քիչ մ'աւելի առէլի կ'երեւի :

Եւ իր ճամբան շարունակեց մինչև նախասենեակը՝ որ տ'Արդանեանը զտաւ . անորմէ քանի մը բացարութիւններ ինդրեց թաղաւորին շուարած կերպարանին վրայ , ինչպէս որ կարծեր էր տեսնել :

Տ' Արդանեան պատասխանեց անոր որ սխալած է , թէ թաղաւորը ըստ հակառակ յետին ծայր որ բախ զուարթ էր :

Նոյն միջոցին ժամն ոթ զարկաւ :

Սովորաբար թաղաւորը նոյն պահուն իր նախաճաշիկը կ'ըներ :

Չաշտօնական արարողութեան համեմատ որոշուած էր որ թաղաւորը միշտ ժամն ոթին անօթի պիտի լինի :

Աերակութն իր ննջարանը բերել տուաւ փոքրիկ սեղանի մը վըսայ և շուտ մը կերաւ :

Աէնդ-Էնյան՝ որմէ բամնուիլ չողեց՝ զինջակը բունեց : Ծեսոյ քանի մը զօրականաց ունկնդրս թիւն տաւաւ և լինցուց :

Սոյն ունկնդրս լմեանց ժամանակ՝ Աէնդ-Էնյանը վերստին խուս զարկելու զրկեց :

Ասպա միշտ զարդած , միշտ անհանցիսաւ , միշտ Աէնդ-Էնյանի վերաւարձին սպասելով անհամրեր , որ իր բոլոր մար իկն աս ին ան ին զրկեր էր և ինքն ալ զործի վրայ էր , թաղաւորը տեսաւ որ ժամն իննը հատաւ :

Ժամն իննին ձիշտ իր գահին անցաւ :

Գեսպաններն ալ ժամն իննին առաջին հարուածները զարնելուն ներս մտան :

Թագա ու հիներն ու իշխանու հին երեցան վերջին հարուածին :

Հոլանտայի համար ճասպաններն էին երեք հոգի , իսկ Աղանիոյ համար՝ երկու հոգի :

Թագաւորն անսնց վրայ աչք մը նետեց և բարեկեց :

Նոյն պահուն իսկ Աէնդ-Էնյան ներս կ'ման ը :

Թագաւորին համար անոր մն աքը շատ աւելի կարեւոր էր քան:

Թէ զեսպանաց , որչափ որ լին ին թո ով և ոք քաղքէն որ ային : Աւսպիչ ամէս բանէ առաջ թագաւորը հարցական նշան մ'ըրաւ Աէնդ-Էնյանի , և Աէնդ-Էնյան բացորոշ բացասական պատասխան մը տուաւ :

Քիչ մնաց որ թագաւորը բոլորովին պիտի վհատէր , բայց որովհետեւ թագուհիներ , մեծերն ու զեսպաններն իր վրայ սեւած ին իրենց աչքը , բուռն ձիգ մ'ըրաւ և այս վերջինները հրաշքեց որ խօսին :

Այն ատեն սպանիացի պատղամաւորներէն մին երկայն ձառ մը ըստ , որու մէջ սպանիական դաշնակցութեան մ'օղուաները կը դուլէր :

Թագաւորն անոր խօսքը կտրեց ըսելով .

— Պարոն , յուսամ որ Գրանսայի համար ինչ որ լսու է , Սպանիոյ համար շատ լսու պիտի լինի :

Այս բառը , և մանաւանդ կտրուկ կերպն որով նոյն բառն արտասանեց , գեսապանը գունատել և երկու թագուհիները շառադինել տուաւ , որոց երկուքն ալ սպանիացի լինելով , այս պատասխանէն իրենց աղղականութեան և աղղայնութեան հպարտութիւնը վերաւորեցաւ :

Եետոյ հոլանտացի դեսպանն ըստ կարդի խօսքն առաւ , և իր երկրին կառավարութեան դէմ թագաւորին ունեցած կանխակալ կարծեաց վրայ զանդատեցաւ :

Թագաւորն անոր խօսքը կտրեց :

— Պարոն — ըստ — զարմանալի է . կ'զանդատիք դուք , մինչ դեռ ես զանդատելու տեղի ունիմ , և սակայն կ'նայիք՝ որ ես չեմ զանդատիք :

— Գանդատիլ , Վեհափառ . — Հարցոց հոլանտացին — և ինչ թշնամնաց առթիւ :

Թագաւորը ժամեցաւ գառնութեամբ :

— Միթէ զիստածով պիտի պարսաւէ իք , պարոն — ըստ . թաւորը — կանխակալ կարծիքներ ունենալու սայնպիսի կառավարութեան դէմ որ կ'խրախուսէ և կ'պաշտպանէ հասարակային նախատիչները :

— Վեհափառ . . . :

— Ես ձեզի կ'ըսեմ — վրայ բերմաւ թագաւորն իր յատու կ ցաւերէն դրաւելով , քան թէ քաղաքական ինդրով — ձեզի կ'ըսեմ որ Հոլանտան ապաստանարան մ'է ամէն անսնց համար որ զիս կ'ատեն , և մանաւանդ անսնց համար որ զիս կ'նախատեն :

— Ա՛չ , Վեհափառ . . . :

— Ա՛չ , ապացոյցներ կ'ուզէք , այնպէս չէ : Լաւ ու բեմն , ապացոյցներ շատ դիւրաւ կրնամ դանել : Առակից կ'ելնեն այն

ըրբնի սպառաւագիրներն որ զիս իրբե վառազդուրի և առանց իշխանութեան թագաւոր մը կ'ամբաստանէն : Չեր մամու լներն այդ տեսակ թղթերու ներքե կ'հեծեն : Եթէ իմ քարտուղարներս այս տեղ լինէին , ձեզի նոյն զործոց անուններուն հետ տպագրի լները կրնայի յիշել :

— Վեհափառ — պատասխանեց դեսպանը — պարսաւադիր մը չկրնար աղղի մը զործը լինիլ : Վիթէ արգարացի՞ է որ Չեր Վեհափառութեան պէս մեծ թագաւոր մը պատասխանատու կառավարութիւնը ճանչէ անօթութիւնէ մեռնող քանի մ'ապերատմն մարդոց յանցանաց :

— Լաւ , այդ մասին իբաւունք տամ ձեզի : Բայց երբ Ամսդէրտամի զբամանոյն ՚ի նախատինս ինձ զրամներ կտրել կ'տայ , միթէ այս քանի մ'ապերատմն մարդոց զործն է :

— Կրամներ — կմկմաց զեսպանը :

— Կրամներ — կրկնեց թագաւորը Գոլպէրի նոյնելով :

— Պէտք էր որ Չեր Վեհափառութիւնը նախ ստոյդ լինէր թէ . . . :

Թագաւորը շարունակ Գոլպէրի կ'նայէր , բայց Գոլպէր չհանկարծու կ'զարնէր ինն իրը , և թագաւորին հարցավննութեան հակառակ լուս կ'կենար :

Այն ատեն ա'Արյանեան մօտեցաւ , և զբանին քաշելով զրամը զոր թագաւորին ձեռքը յանձնեց :

— Աւասիկ Չեր Վեհափառութեան փնտուած դրամը — ըստ նաև :

Թագաւորն առաւ զայն :

Այն ատեն կրցաւ տեսնել թագաւորն այնպիսի աչքով մ'որ ինքնիշխան տէր դաւնալն ՚ի վիր , միշտ վերերը կ'թուէր . այն ատեն կրցաւ տեսնել , ըսկնք , լրբենի նկար մ'որ Հոլանտան կը ներկայացնէր , որ՝ Յեսուսին պէս , արեգակը կ'կեցնէր , այս արձանագրով .

In conspectus meo stetit sol.

— Ի՞մ ներկայացնեան արևը իւցաւ — զոչեց թագաւորը կատաղօրէն : — Ա՛չ , յուսամ որ նորէն չէք կրնար ու բանալ այս բան :

— Եւ արեն ալ — ըստ տ'Արդանեան — այս է :

Եւ զաշչքին զրան բոլոր տախակներոն վրայ, ցոյց տուառ արել, կրկնապատիկ և շքեղապանծ նշանակ մը, որ ամենու բեք իր փառաւոր նշանաբանը կ'պարզէր. Նee քանիւն Խարա. Առ բաղմայ անհոտառոր :

Թաղառորին բարկութիւնն որ աւելի կ'սաստկանար իր յատուկ վշտաց կոկիծներէն, այս ճարակէն պէտք չունէր ամէն բան կլլելու. Համար : Եր աչաց մէջ բուռն վէճ մը բանալու եռանդ մը կ'երեւէր որ պայթելու մօտ էր :

Գոլպէրին մէկ ակնարկը մրրիկը զսպեց :

Դեսպանը ներու մներ խնդրելու ջանաց :

Ըստ թէ ժողովրդոց ունայնասիրութիւնը կարեռութիւն չունէր, թէ Հոլանտան հպարտ էր՝ որ իր գոյզն միջոցներով կարող եղեր էր մեծ ազդաց մէջ իր ազատութիւնն անխախտ պահէրու, մինչեւ անդամ մեծ թաղառորներու դէմ, և եթէ բիշ մը փառասիրական մնուի իր հայրենակիցները զինովցուց, կ'աղաչէր թագաւորին որ այս զինովութեան ներէ :

Կարծես թ. թա աւորը խորհրդի մը կ'սպասէր : Գոլպէրին նայեցաւ որ անդը ու ելի մնաց :

Յետոյ տ'Արդանեանի նայեցաւ :

Տ'Արդանեան ուսերը բարձրացաց :

Եյս շարժումը աեսակ մը բացուած թումբ մ'էր ուսկից թառ գորին բարկութիւնը ժայթքեց, զոր ըն երկար զսպեր ուր :

Ամենքը չըխանալով թ. այս բարկութիւնն ուր պիտի տանի, տիսուր լութիւն մը կ'պահէրն :

Երկրորդ զեսպանն ասկից օրուա քաղելով սկսաւ ներողութիւն խնլրել :

Մինչեւ կ'խօսէր նա և թաղաւորը՝ փոքր առ փոքր անձնուակն մտախոչութեան մէջ ընկած մտիկ կ'ընը պայտայլութեամբ լի ձայնը, իբրեւ անուշաղիր մարդ մ'որ հեղի զի մը կարկաչը մտիկ կ'ընէ, տ'Արդանեան որու ձախ կողմը ու. Ս. նդ-Էնյան կեցեր էր, անոր մօտեցաւ, և ձանուլ մ'որ թաղաւորին ականջին զարուելու դիտմամբ կ'ելնէր, ըստ :

— Կամ, միթէ նոր լու ըն իմացար :

— Ի՞նչ լուր — ըստ Սէնդ-Էնյան :

— Բայց Լա Վալիկ ըի լու ըը :

Թագաւորը զող ելաւ և ակամայ քայլ մ'առաւ երկու խօսակիցներու կողմը :

— Ի՞նչ հասաւ Լա Վալիկ ըի ուրեմն — Հարցուց Սէնդ-Էնյան այնպիսի ձայնով մը զոր ընթերցողը կրնայ դիւրաւ երեակայել :

— Ե՛ս, խեղճ աղջիկը — ըստ տ'Արդանեան — վանատունը մտաւ :

— Վանատուն — զոչեց Սէնդ-Էնյան :

— Վանատունը — զոչեց թագաւորը զեսպանին ձառին մէջ անեղը :

Յետոյ պաշտօնական մարդավարութեան զլուս ծոելու պարտագործութիւնին եկաւ, բայց միշտ մտիկ ընելով :

— Ո՞ր վանատունը — Հարցուց Սէնդ-Էնյան :

— Ծայօփ կարմելեանց վանատունը :

— Սատանայ, այդ աւսկից խմացար :

— Նոյն ինքն իր բերնէն :

— Սիթէ զինքը տեսամբ :

— Ես տարի զանի կարմելեանց վանատունը :

Թագաւորին այս խօսակցութիւնէ բառ մը չէր կորսնցներ. ներսէն կ'եւ ար և կ'սկսէր մանչել :

— Բայց ինչո՞ւ համար այսպէս փախաւ — Հարցուց Սէնդ-Էնյան :

— Ասան զի հեք օրիորդն երէկ արքունիքէն վահանցին — ըստ տ'Արդանեան :

Հաղի թէ այս խօսքը նետեց տ'Արդանեան, որ թագաւորին իշխանական շարժում մ'ըրաւ :

— Ես ական է — ըստ նա զետպանին — ըստական է :

Ապա հրահանատարին կողմն երթաւով,

— Ո՞վ կ'ըսէ թէ Լա Վալիկ ըմնիք կ'ամսուի — զոչեց նա :

— Պ. տ'Արդանեանն է ըստը — պատասխանեց մտերիսը :

— Եւ միթէ այդ ըստամբ տորդ է — ըստ թագաւորը հրացանակին կողմը գաւառալով :

— Ճշմարտութեան պէս Ճշմարիս է :

Թաղաւորը բուռները գոյցեց և զեղինեցաւ :

— Աւրիշ բան մ'ալ ըսիր , ո. ա'Արդանեան — յարեց թագաւորը :

— Չեմ յիշեր , Վեհափառ :

— Այս ևս ըսիր որ Լա Վալիեր արքունիքէն վանտուեր էր :

— Այս , Վեհափառ :

— Եւ միթէ այդ ալ ստոյգ է :

— Տեղեկացէք , Վեհափառ :

— Եւ որո՞ւ միջոցաւ :

— Ա՛չ — ըրաւ ա'Արդանեան իրրե մարդ մ'որ կ'մերժէր խօսելու :

Թաղաւորն սատում մ'ըրաւ , գեսակն , պաշտօնեայ , պալատակն և քաղաքականութիւնն մեկդի թողլով :

Մայր թաղուհին սաք ելաւ . ամէն բան լսած էր նա , և չլսածն ալ դուշակեր էր :

Խշանառուհին բարկութենէ և երկիւղէն տկարացած՝ մայր թաղուհւոյն պէս փորձ փորձեց սաք ելնելու , բայց իր թեաթուին վրայ ընկաւ , և բնադրեցիկ շարժումով մը զայն ետ ետ քշեց :

— Պարսներ — ըստ թաղաւորը — ոնկողը թիւնը լինցաւ . իմ պատասխանն մեղի պիտի իմացնեմ , կամ լսաւ ևս իմ կամքս պիտի յայտնեմ Ապանիսյ և Հոլսնուայի :

Եւ հրամայական շարժումով մը գեսակները ճամբեց :

— Զգոյշ եղիր , որդեակ իմ — ըստ մայր թաղուհին սըրամութեամբ — զգոյշ եղիր , կ'երեի ինձ որ ինքունիքի բնաւ տէրը չես :

— Ա՛չ , ակին — մանչեց նորատի առիւծը սոսկալի շարժումով մը — եթէ ես անձիս տէրը չեմ , պիտի լինիմ , հաւաստի եղիք զիս նախատողներուն : Ինձի հետ եկուր , ո. ա'Արդանեան , եկուր :

Եւ սրահէն դուրս ելաւ ամենքն ասդուշ կրթած և զարհուրած թողլով :

Թաղաւորը սանդղէն վար իջաւ և բակէն անցնելու պատրաստուցաւ :

— Վեհափառ . — ըստ ա'Արդանեան — Ճամբան սխալ բռնեցիք :

— Ո՛չ , ձիաստահնը կ'երթամ :

— Անօդուտ է , Վեհափառ , ձեղի համար կազմ ու պատրաստ ձիեր ունիմ :

Թաղաւորն իր ծառային ակնարկով մը պատասխանեց միայն , բայց այս ակնարկն երեք ա'Արդանեանի փառասիրութեան ակնկաշածէն աւելի կ'խոստանար :

ԺՂ

Շ. Ա. Յ Օ

Որէպէտ չէին կանչուած՝ Մանիքան ու Մալիքօրն թաղաւորին և ա'Արդանեանի ետեւեն դայեր էին :

Այս երկոքն ալ շատ խելացի մարդիկ էին . միայն՝ Մալիքօրն ստէպ փառասիրութենէ մղեալ շուտով կ'համնէր , Մանիքան ալ ծուլութենէն շատ ուշ կ'զար :

Այս անգամ երկոքն ալ ճիշտ ժամանակին հասան :

Հինգ հատ ձի պատրաստած էին :

Թաղաւորը ու ա'Արդանեան իսկոյն երկոքը զրաւեցին հեծան , միւս երկոքը Մանիքան ու Մալիքօրն առին :

Ճիւպարման մ'ալ հինգերորդը հեծան :

Այս բոլոր ձիաւորներն արշաւակի ճամբայ ելան :

Տ'Արանեան ուղածին պէս ընտրեր էր ձիերը . վշտահար և սիրողներու ամենայարմար ձիեր էին . այս ձիերը չէին վազեր , այլ կ'թուէին :

Մեկնելէն տասն լայրկեան ետք՝ ձիաւորները՝ փոշի ամպերու մէջ՝ Ծայօ կ'համնէին :

Թաղաւորն իր ձիէն հասցեալ վար ընկաւ զրեթէ . բայց որչափ որ այս դործողութիւնը շուտով կատարեց , ա'Արդանեանն իր ձիւ առն գլուխը կանգուն տեսաւ :

Թաղաւորը շնորհակալութեան նշան մ'ըրաւ հրացանակրին , և
սանձը պայման թեին վրայ նետեց :

Յետոյ զաւիթը վաղեց , և դուռն ուժգին հրելով՝ խօսարանը
մտաւ :

Սանիքան , Մայիսօրն և պայման գուրս մնացին , տ'Արդանեան
իր տիրովը չետեցաւ :

Խօսարանը մանելուն իր աչքը զարնող առաջին բանն եղաւ
Հուիզ , չէ թէ ծոնիր դրած , այլ քարէ խաչի մ'ուալր սրա կած :

Կորատի օրիորդը տամակ սալաբարին վրայ երկնցած էր , և
հազիւ որեմն կ'երեւէր սոյն սրահին ստու երին մէջ , որու մէջ
լոյսը կ'մանէր միայն վանդակապատ նեղ պատուհանէ մ'որ պա-
տիւ տանկերէ լիովին . ոցուած էր :

Ախայնակ , անկենդան , պաղ էր նա այն քարին սէս որու վրայ
իր մարմինը կ'հան չէր :

Թաղաւորը զանի այս վիճակին մէջ տեսնելուն՝ կարծեց թէ
մուած է , և սոսկախ աղաղակ մ'արձակեց որու վրայ տ'Արդա-
նեան արտորնօք վաշեց քովին եկաւ :

Թաղաւորը արդ ն ասոր մարմինն իր թեին վրայ առած էր :
Տ'Արդանեան օգնեց թաղաւորին որ Հէք օրիորդը վերցնէ , որ ար-
դէն մահու ան թմբրու թեամբ բռնուած էր :

Այն ատեն թա ա որր բոլորովին իր զիրին առա զանի , իր
համրախի լովը տարցոց անոր սասած ձեռքն ու քո նըրը :

Տ'Արդանեան աշտարակին զանդակին սկսաւ ուժգին զարնել :

Այն ատեն Վարդիլեան քրիր հասան :

Սրբակրոն օրիորդները այժմակդեցան և աղաղակներ հանեցին
այս մարդիկը տեսնելով որ իրենց թեւերու մէջ աղջիկ մ'ուն ին :

Մայրապետուհին ալ եկաւ հասաւ :

Բայց արքունեաց կիներէն առելի աշխարհիկ կին մը լինելով ,
մայրապետուհին՝ իր խօսակրօնա թեան չնայելով , առաջին ան-
գամ տեմելուն՝ հանչեց՝ թաղաւորը հանդիսականց ցոյց տաւած
յարդանքէն , նոյնպ ա այն իշխանական կերպերէն որով բոլոր
վանառունց ստորին վրայ կ'ընէր :

Յաղաւորը տհմելէն ետեւ իր սենեակը քաշուեր էր , և այս

ալ իր պաշտօնին ներհակ ընթացք մը չլունելու միջոց մ'է ը :

Բայց կրօնուհիներու ձեռօք ամէն անսակ զավացուցիչ ըմպե-
լիներ տղարկեց , ինչպէս ծաղկեջուր և որիշ հուաւէտ չըեր ,
հրամայելով միանդամյն որ դաները զոյն :

Եւ արդարե ժամին էր . թաղաւորին վիշան երթալով կ'սասա-
կանար և յուսահատութեան աղաղակներ կ'հանէր :

Թաղաւորն իր բժիշկը կոչել տալու կ'պատրաստէր երբ Լա-
վալիկէր սթափեցաւ :

Աչերը բանալուն առաջին տեսած բանն եղաւ թաղաւորն իր
ոտից ա ջն : Անշուշտ զանի շնանչեց , վասն զի վշտագին հառաչ
մը հանեց :

Լոի անյագ աչօք զանի կ'ամփոփ' ը :

Ի վերջէ իր թաղաւորով աչերը թաղաւորին վրայ ընկան : Շան-
չեց զանի և անոր թեւերէն աղատելու Ֆիգ մ'ըրաւ :

— Ա՛հ , մ'նշ — ըստաւ — միթէ զոհող թինը դեռ ևս կատա-
րեալ չէ :

— Ա՛հ , մ'շ , մ'շ — զոչեց թաղաւորը — և չոլիսի կատարի ,
և ես եմ այս բանս երդմնողը :

Լա Վալիկէր թէ և ակար և վշտաբեկ ոտք ելաւ :

Ակայն պէտք է — ըստաւ նա — պէտք է , այլ ևս մի արդի-
ւեք զիս :

— Ե՛ս թողում քեզ որ նահատակ լինիս , ե՞ս — զոչեց Լուի
— երբէք , երբէք :

— Լաւ — մրմաց տ'Արդանեան — ժամ' է գորս ելնել : Քա-
նի որ խօսելու կ'սկսին , պէտք է որ ականջներս հեռանան :

Տ'Արդանեան գորս կ'ենէր . երկու սիրուններն առանձին մնացին:

— Վեհափառ — շարունակեց Լա Վալիկէր — որիշ խօսք
չէմ ողեր , կ'պաղատիմ ձեզ : Իմ ակնկալած միակ ապագաս ՚ի
կորս ստ մի մատնաք , այսինքն իմ փրկութինս , նոյնպէս բոլոր
ձերինը , այսինքն ձեր փառքը , քմածին զիացման մը համար :

— Քմածին զիացման — զոչեց թաղաւորը :

— Ա՛հ , այժմ — ըստաւ Լա Վալիկէր — այժմ , Վեհափառ ,
ձեր սրտին մէջ պայծառ կ'տեսնեմ :

— Ո՞ւ , Լուիզ :

— Ո՞չ , այս , այս :

— Բացատրե՛ միտք :

— Անիմանալի , անխռչեմ՝ ձկտում՝ մը կրնայ բաւական արգարացում՝ մ'երեիլ ձեզ պահ մը , բայց պարտիք ունիք որ առխղջ օրիորդ մը ձեր տածած սիրոյն հետ կարելի չէ համաձայնել : Առոցիք զիս :

— Ե՞ս մոռնամ քեզ :

— Արդէն լմնցած է :

— Եաւ ես ունիմ մեռնիլ :

— Վեհափառ , չէք կարող սիրել այն անձը զոր այս իրկուն սպանելու խողջ շրիք :

— Ի՞նչ կըսես , նայինք , բացատրե՛ միտք :

— Առառ ի՞նչ խնդրեցիք , ըսէք , ըսիք որ ձեղ սիրեմ : Փռխարէն ի՞նչ խոստացաք : Երբէք կես դիշեր չանցընել տուանց հաշտութիւն առաջարկելու երբոր ինձի դէմ բարկացած լինիք :

— Ո՞չ , ներէ ինձ , ներէ ինձ , Լուիզ : Նախանձես խենդացեր էի :

— Վեհափառ , նախանձը դէշ մասածոթիւն մ'է , որ որոսի սիր կ'ըռուսնի , երբ կտրէք : Նորէն սիրտի նախանձիք , և վերջապէս զիս սիրտի սպաննէք : Գլացէք վրաս և թոյլ տուէք որ մեռնիմ :

— Եթէ այդպէս խօսիս վերստին , օրիորդ , սիրտի տեսնես որ ոտիցդ ներքե հոգիս սիրտի աւանդեմ :

— Ո՞չ , ո՞չ , Վեհափառ , ես իմ արժեքս քաջ դիտեմ . հաւացէք ինձ , և մի ըսէք որ սիրտի կորսուիք դժբաղդ օրիորդի մը համար որ ամենուստ արհամարհուած է :

— Ո՞չ , անուանէ ուրեմն այն անձնիքը զորս կ'ամրաստանես , անուանէ զանոնք :

— Վեհափառ , մէկու դէմ զանդաս չունիմ ընելու . Ես մի այն ինքընիքս կ'ամրաստանեմ : Անապ բարեաւ , Վեհափառ : Չեր սիրտի կ'վարանդէք այդպէս ինձ խօսելով :

— Զայշ եղիք , Լուիզ , այդպէս խօսելով , զիս յուսահատութեան կ'տանիս , զայշ եղիք :

— Ո՞չ , Վեհափառ , Վեհափառ տէր , թուէք զիս Աստուծոյ հետ , կ'պաղասիմ ձեզ :

— Ես նոյն ինքն Աստուծոյ ձեռքէն սիրտի խլեմ քեզ :

— Բայց նախ — զոչեց հէք աղջիկը — խլեցէք զիս այն վայրագ թշնամեաց ձեռքէն որ իմ կենացս և պատոյս դէմ կ'գաւակեցին : Եթէ բաւական ոյժ ունիք զիս սիրելու , ունեցէք նաև բաւական զօրութիւն զիս պաշտպանելու . բայց ո՞չ , այն անձը զոր գուք կ'ըսէք թէ կ'սիրէք , այն անձը կ'նախատոի , կ'ծաղրոի , կ'վանստոի :

Եւ անմիաս օրիորդը՝ իր վշտէն բռնադատեալ ամբաստանելու , հեծկլանօք իր թեկերը կ'ուղրէր :

— Քեզ վանտեցին — զոչեց թագաւորը : — Ահա եբիորդ անդամ է որ այդ բառը կ'լսեմ :

— Անարդանօք վանտուած եմ , Վեհափառ : Քաջ կ'տեսնէք որ Աստուծոյ զատ ուրիշ պաշտպան չունիմ , ուրիշ միսիթարութիւն չունիմ այլ միայն աղօթքը , ուրիշ ասպաւէն չունիմ այլ միայն վանքը :

— Իմ սպալատս , իմ արքունիքս սիրտի ունենաս : Ո՞չ , այլ ևս բանէ մը մի երկնչեր , Լուիզ . այն մարզիկ կամ լսու ևս այն կանայք որ քեզ վւնտեցին երէկ , վաղը սիրտի զաղան քու առ ջետ . ի՞նչ կ'ըսեմ , վաղը , այս առտու արժէն զուացի , սպանացի : Իմ ձեռքս է շանթն և ուղած ատենս կրնամ արձակել : Լուիզ , Լուիզ , քու վրէմդ սիրտի լուծեմ անխնայ : Արեան արտսուք սիրտի փոխարինեն քու արտսուք : Արայն առւր ինձ թշնամեաց անունները :

— Երբէք , երբէք :

— Ուրեմն ի՞նչպէս կ'ուզես որ զարնեմ :

— Վեհափառ , անոնք զորս պէտք է զարնել կրնան բազուկութիւնաթափ ընել :

— Ո՞չ , դու դեռ զիս չես ճանչեր — զոչեց Լուի մալեղնութեամբ : — Իմ թաղաւորութիւնս այրել և բոլոր ընտանիքս անիթել նախադաս կ'սեպեմ : քան թէ զիս պահթափ քաշուիզ : Այս քաղուկս ալ սիրտի խօստակեմ , Եթէ բաւական անարի դժուուի և

չեարենայ բնաջինջ ընել արարածոց մէջ ամենէն անուշ էակին թշնամին դարձուք :

Եւ արդարե այս խօսքն ըսելով, թաղաւորն ուժին զարկաւ կարմիր միջնորմին, որ պալի դզը իւն մը հաւեց :

Աւ Վայի ը գարշուրեցա : Այս ամենազօր երիտասարդին բարկո թի նն ահարկու և չարակո շակ նշան մ'ուներ, վասն զի փոթորկին նման՝ կրնար մահարեր լիսիլ :

Այս որ կարծէր թէ իր ցաւոց համալիշտ անձ մը չիար, ընկանաց այս վշտէն որ երեան կ'ար սպառնալեօք և բանարարութեամբ :

— Վեհափառ — ըստ նա — վերջին խօսք մ'ար ըսեմ. հեռայլք ասկից, կ'աղաքեմ ձեղ, արդուն այս առանձնութեան անսգորոր թի նը զիս զօրացո ց . Աստու ծոյ ձեւ քին նեղին աւելի հանգարա կ'զամ ինքինքս : Աստ ած պաշտպան մ'է որու առ չն մար կային ամէն ուծոծ անզ ամութինները փոշի կ'դառնան : Վեհափառ, նորէն կ'ըսեմ, թուլք զիս Աստու ծոյ հետ :

— Առել, Առ իդ, կ'պաղատիմ քեզ, Հրամացէ, վրէճ լուծէ կամ ներէ, բայց զիս մի լքաներ :

— Ափառս, պէտք է որ իրարմէ զատուինք, Վեհափառ :

— Ուրեմն գու զիս չես սիրեր բնաւ :

— Ա՛, Աստուած միայն զիտի :

— Աստ թին, ստոթին :

— Ա՛, թէ որ ես չսիրի ի ձեղ, Վեհափառ, այն առեն պիտի թոյլ տայի որ ձեր ուղածն ընէք, պիտի թոյլ տայի որ վրէժ լո ձեք . ինձ եղած նախատանաց փոխարէն, ձեր առաջարկած զուող թեան յաղթանակը պիտի բնդունէի : Աինչդեռ կ'նայիք որ ձեր սիրոյն անուշ փոխարինութիւնը կ'մերժեմ, այդ ու ըն որ իմ կեանքս է թէե, քանի որ մեռնիլ ուզեցի, կարծելով որ զիս չք սիրեր :

— Առ ուրեմն, այն, այն, գիտեմ այժմ, այս ժամաս կը հասկընամ, զու կանանց մէջ ամենասուրբը, ամենապատկաւելին ես : Ոչ ոք քեզի պէտ արժանի է ոչ միայն իմ սիրոյս և յարգանաց, այլ ամենուն սիրոյն և յարգանաց . հետեւայէս, Առ իդ,

ոչ ոք քեզի չափ պիտի սիրուի իմ կողմէ, ոչ ոք քու ունեցած իշխանութիւնու իմ վրայ պիտի ունենայ : Այն, կ'երդնում քեզ, այս պահուս աշխարհին աստակիի պէտ պիտի խորտակիլի, եթէ աշխարհին զիս նեղէր : Ա՛հրամայես ինձ հանդարտելու և ներելու, թողարկութեամբ ալիրազետել կ'ուզես : Ես ալ անուշ և ներազաման պիտի լինիմ: Միայն ըստ թէ ինչ ընթացք բռնեմ, և հնազանդելու պատրաստ եմ:

— Ա՛հ, Աստուած իմ, ես խեղջ աղջիկ մը, ինչ եմ որ ձեզի պէտ թաղաւորի մը հրաման մը տամ:

— Դու իմ կեանքս, իմ հոգիս ես : Աիթէ հոգին չէ մարմինը կառավարողը :

— Ա՛հ, ուրեմն զիս կ'սիրես, սիրելի իմ Վեհափառ :

— Ծունք գրած, ձեռքս կցած, Աստ ծոյ ինձ շնորհած բուլոր զօրութեամբս կ'սիրեմ: Քեզ կ'սիրեմ այնչափ որ ժոտելով իմ կեանքս քեզի տալու պատրաստ եմ, եթէ բառ մ'անդամ ըսես:

— Կ'սիրեք զիս :

— Ա՛հ, այս :

— Ուրեմն, աշխարհիս վրայ ուրիշ փափաք մը չունիմ . . . ձեր ձեռքը տուէք, Վեհափառ, և իրարու հրաժարական բարեւ տանք: Այս աշխարհիս մէջ ինձ ընկած երջանկութիւնը լիսպէս վայերեցի:

— Ա՛հ, ոչ, մի ըսեր որ կեանքս նոր կ'սկսի : Քու երջանկութիւնդին երջանկութիւնը չէ, այլ ամենօրեայ է, վաղն ալ, միշտ պիտի տեէ : Քեզի համար է ասպագան, քեզի է ամեն ինը որ ինը է : Այս բաժանման խորհուրդները վանէ լիսպին, ինչ որ ինը է : Այս ասաւական բննթացքը զաղբեցար, ու ըն է մեծ Աստուածը, մեր հոգւոց ճակատագիրն է : Դու ինձի համար պիտի ապրիս, ինչպէս որ ես պիտի ապրիմ քեզի համար :

Եւ ասոր առ չերկրապառելով, անոր ծունկը համբուրեց անպատճ ուրախութեան և երախտաղիսութեան խանչով :

— Ա՛հ, Վեհափառ, Վեհափառ, այս ամենն երազ մ'է :

— Ինչո՞ւ համար երազ մը :

— Ասսն զի չեմ կարող արքունիքը դառնալ: Տարադիրս,

ի՞նչպէս ձեզ վերստին տեսնեմ։ Լաւ ևս չէ վանքը մնալ որպէս զի անդ թաղեմ ձեր սրախ վերջին ափան և յետին խոստովանութիւնը։

— Դու տաբաղիր — զոշեց Լուի ժԴ։ — Եւ ըսէ նայիմ ովկ' տաբաղիր երբ ես կ'կոչեմ։

— Ո՛չ, Վեհափառ, բան մ'որ թաղաւորներու վրայ կ'իշխէ, այս է մարդիկ և կարծիքը։ Յատածեցէք մի անգամ, չէք կարող վահառած կին մը սիրել, այն զոր ձեր մայրն արատաւորեց կառկածով մը, այն զոր ձեր քոյրը պատմով աղարտեց, այն անարձան է ձեր սիրոյն։

— Անարձո՞ն, այն որ իմա է։

— Այս, Ճշշտ այդ է, Վեհափառ տէր. երբ այն ձերն է, ձեր սիրուհին անարձան է։

— Ո՛չ, իբաւոնք ո՞նիս, Լուիզ, և ամէն փափուկ զգացում նելու միայն սրահէդ կ'րդեսին։ Լաւ, չպիտի ափսորուխ։

— Ո՛չ, իշխանուհին մասիկ չըրիք, ինչպէս որ կ'երեկի։

— Այն ատեն, մօրս պիտի կոչում ընեմ։

— Ո՛չ, դեռ ձեր մայրը շտեսաք ուրեմն։

— Դա ես. խեղճ Լուիզ։ Ուրեմն ամէն մարդիկ քեզի դէմ էին։

— Այս, այս, խեղճ Լուիզ, ես որ փոթորկին ներքեւ կ'ընկաէի, երբ եկաք, երբ եկաք զիս լիովին խորտակելու։

— Ո՛չ, ներէ։

— Ուրեմն, ոչ մին և ոչ միսը չպիտի խոնարհեցնէք. հաւտացեք ինձ, չարիքն առանց դարմանի է, վասն զի ո՛չ բանութիւն և ոչ իշխանութիւն գործածելու պիտի թողում ձեզ։

— Լաւ ուրեմն, Լուիզ, ցոյց տալու համար թէ որչափ կը սիրեմ քեզ, բան մը պիտի ընեմ, երժամ պիտի իշխանուհին տեսնելու։

— Դո՞ք։

— Արձակած վճիռն ետ պիտի առնել տամ, պիտի բռնադատեմ զինքը։

— Բռնադատել, ո՛չ, ո՛չ, ո՛չ։

— Իբաւ է, պիտի կակլեցնեմ զինքը։

Լուիզ զլուխը ցնցեց։

— Եթէ պէտք լինի, պիտի աղաւիմ — ըստ Լուի։ — Այս նուհետեւ իմ սիրոյս պիտի հաւտան։

Լուիզ զլուխը վերցուց։

— Ո՛չ, երբէք, երբէք ինձի համար մի խոնարհիք, թոյլ տուեք որ այս աեւլ մեռնիմ թաղուխիմ։

Լուի մտածեց, իր երեսը մութ դոյն մ'առաւ։

— Քու սիրածիդ չափ ես ալ պիտի սիրեմ — ըստ նա — քու քաշած տառապահաց չափ ես ալ պիտի տառապիմ։ Այս քու աչքիդ քառում ուր պիտի լինի։ Օ՞ն, օրիորդ, մէկու թողոնք այս գձուձ նկատումները, մեր վշտաց պէս մեծ լինիք, մեր սիրոյն պէս զօրաւոր լինինք։

Եւ այս խօսքն ըսելով զանի իր թեւերուն մէջ առաւ և երկու ձեռոքն անոր դօտի մը յօրինեց։

— Իմ միակ դանձն, իմ կեանքս, հետեւէ ինձ — ըստ Լուի։

Յետին Ճիզ մ'ըրաւ, և այս անգամ չէ թէ իր բոլոր կամքը, վասն զի կամքն արդէն ընկճած էր, այլ իր զօրութիւնը զործածեց։

— Ո՛չ — պատասխանեց Լա Վալեէր ակարութեամբ — ո՛չ, ո՛չ. ամօթէս պիտի մեռնիմ։

— Ո՛չ, իբրև թագուհի պիտի ներս մտնես։ Ոչ ոք զիտէ ելքդ . . . ա'Արդանեան միայն . . .

— Ուրեմն նա ես զիս մատնեց։

— Կ'նչպէս մատնեց։

— Երդում ըրեր էր . . .

— Երդում ըրեր էի որ թագաւորին բան մը չըսեմ — ըստ Թ'Արդանեան կիսբաց զանէն իր նուրբ զլուխն անցընելով — ես իմ խօսքս բռնեցի։ Ես Պ. Սէնդ-Էնյանի խօսեցայ. յանցանքն իմն չէ եթէ թագաւորը լսեց, այնպէս չէ, Վեհափառ։

— Իբաւ է, ներէ անոր — ըստ թագաւորը։

Լա Վալեէր ժպտեցաւ և հրացանակըն կարկառեց իր վտիտ և սպիտակ ձեռքը։

— Պ. ա'Արդանեան — ըստ թագաւորը զմայլած — օրիորդին համար կառք մը փնտռել տուր :

— Վեհափառ — սրատասխանեց հրացանակիրը — կառքը կ'ըսպասէ :

— Ո՛չ, ծառայից տիպարն է այս իմ հրացանակիրս — դոչեց թագաւորը :

— Ժամանակ զտաք այս բանս դիտելու — մրմնաց ա'Արդանեան, թէ և այս զովեսոր զինքը դդուեց :

Հա Վալեհը յարթահար էր. քիչ մը ևս վարանելէն եակ՝ թոյլ տուա որ զինքն իր արքայազն սիրահարը քաշքշէ տանի :

Բայց խօսարանին դուռը, երբ դուրս ենելու վրայ էր, թագաւորին թե երես պրծելով քարէ խաչին առջեւ եկաւ զայն համբուրեց և բաս :

— Աստամած իմ, դու զիս այս տեղ քաշեցիր. Աստամած իմ, զիս մերժեցիր, բայց շնորհու անբաւ է : Միայն, երբոր վերագառնամ, մոացիր որ առկից հեռացած էի, վասն զի երբ վերստին քեզի զամ, այսու հետեւ երբէք չպիտի հեռանամ :

Թաղաւորն ակամայ հառաւ մը հանեց :

Ծ'Արդանեան արաօսր մը պրբեց :

Լոի նորատի օրիորդը գորս քարշեց, մինչեւ կառքը վերտոց տուրաւ, և ա'Արդանեանն անոր մօտ նստեցուց :

Իսկ ինրը ձին աշտանակելով, գեղ ՚ի Բալե-Բառայալ քշեց, որ համեմետով իմաց տուաւ իշխանուհոյն որ սրահ մ'ունկնդրութիւն շնորհէ իրեն :

ԺԵ

ԻՇԽԱՆՈՒՀԻՈՅՆ ՍԵՆԵԱԿԻ

Թագաւորն այնպէս բաժնուեր էր զեսպաններուն քովէն որ ամենան արձատես մարդիկ սպատերազմ դուշակեր էին :

Նոյն իսկ զեսպանները, ներբին անցքերեւն անտեղեակ լինելով կարծեր էին թէ իրենց դէմ արձակեր էր սա խօսքը. և եւ թէ ես ինքընդիս տէրը չեմ, զիս նախատողներուն տէրը պիտի լինիմ» :

Քրանսայի և Հոլանտայի ճակատագրին համար բարեբաղդութիւն մ'է ը Գօլպէ ր զեսպանաց ետևէն զնալով անոնց քանի մը բացարտութիւններ տուեր էր. բայց թագուհիներն ու իշխանուհին, իրենց աան մէջ անցած գարձած բաներուն շատ տեղեակ լինելով, երբ այն սպատնալից խօսքը լսեցին, երկիւղով և սըրտմտութեամբ լի ելեր զայեր էին :

Կա մանաւանդ իշխանուհին կ'զար որ արքային բարկութիւնն էր վրայ պիտի թափէր, և որովհետև արիստու էր նա և չափազանց զտող, փոխանակ մայր թագուհոյն մօտ նեցուկ մը փնտռելու, իր սենեակը քաշուեր էր, եթէ ոչ առանց մանաւանցութեան դէմ պայքարէն խայս չտալու զիտաւ որութեամբ : Ա տեն ատեն Աննա թագուհին սպատգամարեներ կ'ուղարկէր իմանալու համար թէ թագաւորը զարձած էր :

Այս զործին վրայ պալատականաց պահած լուռթիւնն ե. Լոիկին աներեւթանալը մեծ մեծ դժբաղդութեանց զուշակ մ'է ին թագաւորին վես և ցասկութ բնաւորութիւնը գիտցողին համար :

Սակայն իշխանուհին բոլոր այս աղմուկներուն դէմ աներկիւղ դիբք մը բանելով իր սենեակը փակուեցաւ, Մօնղալէն կոչեց իր մօտ, և կարելի եղած ին չափ այլայլած ձայն չհանելով այս դէպաքին վրայ նամիշտ խօսել տուաւ : Այն միջոցին՝ որ Ճարտասան Մօնղալէ ամէն տեսակ հաետրական զդուշու թիւներով իր խօսքը կ'աւարտէր և կ'յորդորէր որ իշխանուհին փոխադարձ ներսպամութեամբ վարուի այս պարտզայիս մէջ : Մալիքօրն իշխանուհոյն սենեակը մնաւ. անորմէ ունկնդրութիւն մը ինը լուսուց համար :

Մօնղալէի արժանի բարեկամն ամենամծ այլայլութեան նշանները կ'ցուցնէր իր դէմքին վրայ : Անկարելի էր սխալիլ, թագաւորին խնդրած տեսակցութիւնը թագաւորաց և մարդկան սրտին ամենէն հետաքրքրաշարժ սպատմութեան մէկ զլուխը պիտի կաղմէր :

Իշխանուհին այլայլեցաւ իր տայգը ին այս գալստեան վրայ,

չէր յուսաք՝ որ այսչափ շուտով դայ, նա մանաւանդ չէր սպասեր որ Լուի այսպէս ուղղակի բանակցութեան մանէ իրեն հետ:

Արդ՝ կանայք որ այնչափ լաւ կ'պատերազմին անուղղակի կերպով, միշտ նուազ ճարտար և ուժեղ են երբ դէմ առ դէմ մաքառելու կ'ստիպուին:

Ինչպէս որ արդէն ըսխնք՝ իշխանուհին ընկրկող կիներէն չէր, ասոր հակառակ յատկութիւնը կամ թերութիւնն ունէր:

Իր արիութեան վրայ մեծ համարում ունէր. ուսափ թագաւորին կողմէ Մալիքօրնի բերած լուրը պատերազմի ասպարէզն իջնելու համար հնչող փողն եղաւ իրեն համար: Ուսափ վէսօրէն այս մարտն ընդունեց:

Ճինդ վայրիեան ետք թագաւորը սանդղէն վեր կ'ելնէր:

Չիով հաղթեակ գալուն կարմրեր էր: Իր փոշելից և անկարդ հաղուսան իշխանուհին նոր և զարդարուն զգեստին հետ հակապատկեր մը կ'ընծայէր, և ինք իր կարմիր շպարին ներքե կ'դեղնէր:

Լուի յառաջարան մը չըրաւ, նստաւ իսկոյն: Մօնղալէ աներեսյթ եղաւ:

Իշխանուհին թագաւորին դիմացը նստաւ:

— Քոյր իմ — ըսաւ Լուի — զիսես որ օրիորդ Լա Վալիեր այս առտու ասկից փախաւ և իր վիշտն ու յուսահատութիւնը վանքը տարաւ թաղելու:

Եւ այս խօսքն արտասանելու միջոցին՝ թագաւորին ձայնը սաստիկ այլայլած էր:

— Զեր Վեհափառութենէ կ'իմանամ այդ բանը — պատասխանեց իշխանուհին:

— Ես կարծէի թէ այս առտու, դեսպանաց այցելութեան ժամանակ՝ իմացած պիտի լինիս — ըսաւ թագաւորը:

— Զեր այլայլութիւնը տեմնելով, այս, Վեհափառ, դուշակեցի որ արտաքոյ կարգի բան մը տեղի ունէր, բայց ստոյգը չիմացայ:

Թագաւորն որ համարձակ էր և շիտակ նստակին կ'երթար, ըսաւ:

— Քոյր իմ, ինչո՞ւ համար օրիորդ Լա Վալիերը ճամբեցիր:

— Աւան զի իր ծառայութենէ դժգոհ էի — պատասխանեց իշխանուհին չոր ու ցամաք կերպով մը:

Թագաւորը ծիրանի զոյն առաւ, և իր աշերն այնպէս վառեցան որու իշխանուհին իր բոլոր արիութեամբը հազիւ կարող եղաւ տոկալու:

Սակայն ինքովնքը զսպեց և յարեց.

— Քոյր իմ, մեծ պատճառ մը պէտք է քեզի պէս բարեսիրու ինկան մը համար որ արտաքսէ, անպատուէ ոչ միայն նորատի օրիորդ մը, այլ այս աղջկան բոլոր ընտանիքը. դիտես որ քաղաքն արբունեաց կանանց վրայ աշքը անկած կ'նայի: Պատոյ օրիորդ մը ճամբելն անոր վրայ յանցանք մը, դէթ սխալմունք մը դնել է: Ի՞նչ է ուրեմն օրիորդ Լա Վալիերի յանցանքը, սխալմունքը:

— Քանի որ օրիորդ Լա Վալիերի պաշտպան կ'կանգնիք — պատասխանեց իշխանուհին պաղութեամբ — այժմ ձեզի պիտի տամ այնպիսի բացատրութիւններ զոր ուրիշի տալու պարտաւոր չեմ:

— Եւ ոչ իսկ թագաւորին — դոչեց Լուի բարկութեան շարժում մը լինելով:

— Զիս ձեր քոյրն անուանեցիք — ըսաւ իշխանուհին — և իմ տանս մէջն եմ:

— Հոդ չէ — ըսաւ նորատի միասկետը բարկանալուն վրայ ամչնալով — չես կարող ըսել, տիկին, և այս թագաւորութեանն մէջ ոչ ոք իրաւոնք ունի ըսելու թէ թագաւորին բացատրութիւն չուզեր տալ:

— Քանի որ այդպէս կ'հրամայէք — ըսաւ իշխանուհին մթին բարկութեամբ մը — կ'մնայ ինձ Զեր Վեհափառութեան ստջնեանարհիլ և լոել:

— Ո՛չ, խօսքը տարբեր կերպով մի մեկներ:

— Օրիորդ Լա Վալիերի վրայ ձեր ունեցած պաշտպանութիւնը զիս լութեան կ'մղէ:

— Ծուռ չմնենք իմսկիրը — ըսի քեզի — քաջ զիտես որ քրանտայի աղնուակետութեան զլուխը դանուելով, ընտանեաց

պատւոյ մասին ամենուն համարատու եմ։ Օրիորդ Լա Վալիերը կամ որ և է մէկը կ'ձամբես . . . :

Եշխանուչին ուսերը կ'շարժէ։

— Կամ որ և է մէկը, ըսի — շարունակեց թագաւորը — և բատ որում այդպէս վարուելով այն աղջիկը կ'անպատուես, քեզ նէ բացատրութիւն մը կ'խնդրեմ, որպէս զի այդ վճիռը հասաւ աեմ կամ ջրեմ։

— Եմ վճիռս ջրել կ'ուզէք — զոչեց իշխանուչին զուոզութեամբ։ — Ի՞նչ, երբ իմ նամիշտներէս մին կ'վանտեմ գուք պիտի ելնէք ըսելու ինձ որ զանի վերստին առնում։

Թագաւորը լսեց։

— Այլ ընթացքն իշխանութեան զեղծում չպիտի լինէր միայն, Վեհափառ, այլ անվայելութիւն։

— Տիկին։

— Ո՛չ, իբրև կին, պիտի բողոքեմ, ամէն արժանապատութեան հակառակ վեղծման մը դէմ, ես այնուչեաւ ձեզ արենակից իշխանուչի մը չպիտի լինիմ, թագաւորի մը գուստը չպիտի լինիմ, արարածոց մէջ յեալնը պիտի լինիմ, ճամրայ արուած սպասուչիէն ստորնազոյն կարգ մը պիտի իջնեմ։

Թագաւորը կատղութենէ սստում մ'ըրաւ։

— Ծոյդ սիրտ մը չէ բախողը — զոչեց նա — եթէ դու այդ պէս կ'վարուիս ինձի հետ, ուրեմն ես ալ մի և նոյն խստութեամբ պիտի վարուիմ։

Երբեմն մոլորած դնդակ մը կ'զարնէ ճակատամարտի մը մէջ։ Այս խօսքը զօր թագաւորը դիմամիտ չէր ըսած, իշխանուչին զարկաւ սպահ մը զանի սարսեց, կ'վախնար թերես որ օրին մէկը փոխարէն վրէժինդրութեամբ չվարուին իրեն հետ։

— Վերջապէս — ըսաւ նա — Վեհափառ, բացատրեցէք ձեր միտքը։

— Քեզի կ'հարցնեմ, տիկին, թէ ի՞նչ ըսաւ Լա Վալիեր օրիորդը քեզի դէմ։

— Ես տեսած չեմ անոր պէս նենդամիտ խարդաւանիչ մը։ Երկու բարեկամներ իրարու դէմ մենամարտութեան դրդուց, եր

վրայ այնպիսի ամօթալի համբաւներ հանեց որ բոլոր արքանիքն անոր անունը լսելուն կ'խոժողի։

— Նա՞, նա՞ — ըսաւ թագաւորը։

— Այն իր անուշ և աղու կերպարանին ներքեւ — շարունակեց իշխանուչին — նենդամիտ և շարանենդ ողի մը կ'պահէ։

— Նա՞։

— Դուք կարելի է որ կ'սխալիք, Վեհափառ։ Ես, ես զանի կ'ձանչչեմ։ Կարող է նա կոռի բանել տալ լաւաղոյն աղղականներ և սրտակից բարեկամներ։ Տեսէք արգէն թէ ի՞նչ երկուառակութեան որսմներ կ'ցանէ մը մէջ։

— Կ'բողոքեմ . . . — ըսաւ թագաւորը։

— Վեհափառ, քաջ քննեցէք այս բանս . իրարու հետ հաշտէինք, և իր տուած տեղեկութիւններով, իր նենդալի բողոքներով Զեր Վեհափառութիւնն ինձի դէմ շարժեց։

— Կ'երգնում — ըսաւ թագաւորը — որ դառն խօսք մ'իր բերնէն չլսեցի երբեք, կ'երգնում որ նոյն իսկ զայրոյթը զիս պաշարած ատեն, չմողոց որ մէկուն դէմ սպաննամ, կ'երգնում որ անորմէ աւելի անձնուեր, աւելի ակնածու բարեկամուչի մը չունիս։

— Բարեկամուչի — ըսաւ իշխանուչին ծայրադոյն արհամարհանօք։

— Զգոյշ եղիք, տիկին — ըսաւ թագաւորը — կ'մոռնաս որ միաբա իմացար, և թէ այս վայրկենէն՝ ամէն ինչ կ'հաւասարի։ Օրիորդ Լա Վալիեր ինչ որ ուզեմ պիտի լինի, և վաղը, եթէ կամնամ, պատրաստ պիտի լինի զահի մը վրայ բազմելու։

— Գէթ անոր վրայ ծնած չպիտի լինի, և ինչ որ ընէք տպաղային համար պիտի լինի, իսկ անցելոյն համար ոչ ինչ։

— Տիկին, քեզի հետ ամենայն յօժարամութեամբ և մարդավարութեամբ վարուեցայ . մի յիշել տար ինձ որ այս տեղ վեհապետ եմ։

— Վեհափառ, արգէն երկու անդամ է որ այդ խօսքը կ'ըսէք։ Պատիւ ունեցայ ձեզի ըսելու որ կ'խռնարչիմ։

— Աւրեմն չնորհ պիտի ընես ինձ թոյլ տալու որ օրիորդ Լա Վալիեր վերստին քովդ դաւնայ։

— Ի՞նչ փոյթ, Վեհափառ, քանի որ զահ մ'ունիք անոր տառը։ Ես ոչինչ եմ այդպիսի իշխանութիւն մը պաշտպանելու համար։

— Դաղբեցու այդ չարասէր և արհամարհու ողին։ Անոր շնորհն ինձ պարդեւ։

— Երբէք։

— Իմ ընտանեաց մէջ պատերազմ բանալու կ'զրդես զիս։

— Ես ալ իմ ընտանիքս ունիմ և անոր մօտ պիտի ասպարինիմ։

— Միթէ սպառնալիք մ'է այդ, և միթէ այդ աստիճան ինք զինքդ պիտի մոռնայիր։ Միթէ կարծե՞ս որ եթէ թշնամանքն այդ աստիճանին հասցնես ծնողքդ քեզ պիտի պատսպարէին։

— Այուսամ, Վեհափառ, որ իմ աստիճանիս հակառակ եղողքան մ'ընելու չպիտի բռնադատէք զիս։

— Այուսայի որ մեր բարեկամութիւնը պիտի յիշէիր, կ'յուսայի որ զիս եղօր պէս պիտի նայէիր։

Իշխանուհին պահ մը կայ առաւ։

— Երբ Զեր Վեհափառութեան անիրաւութիւն մը կ'զւանամ, ըսել չէ թէ ձեզի հետ իբրև քոյր չեմ վարուիր։

— Անիրաւութիւն։

— Ո՛չ, Վեհափառ, եթէ ամենուն իմացնէի ևս Վալիէրի վարժունքը, եթէ թաղուհիները դիմային։

— Օ՞ն, օ՞ն, Համրիէդ, թաղու որ սիրոտ խօսի, յիշէ որ զիս սիրած ես, յիշէ որ մարգոց սիրոտ վեհապետին սրտին պէս պարտի դթած լինիլ։ Ուրիշներու համար անողոքելի մի միար, ներեւ ևս Վալիէրին։

— Զեմ կարող, թշնամանեց զիս։

— Բայց ե՞ս, ե՞ս։

— Վեհափառ, ձեզի համար ինչ որ կ'ուղէք պարտաւոր եմ ընելու, բաց ՚ի այս բանէն։

— Ուրեմն, կ'ուղես որ յուսահատութեան մղես զիս . . . ։ Տկար մարդոց այս յետին ապաւէնը կ'թողուս ինձ, հետեւապէս քարկութեան և աղմուկ հանելու կ'յորդորես զիս։

— Վեհափառ, կ'յորդորեմ ձեզ որ բանականութեան անսաք։

— Բանականութեան . . . ։ Քոյր իմ, այլ ևս բանականութիւն չունիմ։

— Վեհափառ, շնորհ։

— Քոյր իմ, դթամ, առաջին անդամն է որ կ'պաղատիմ, քոյր իմ, յոյս քու վրադ է միայն։

— Ո՛չ, Վեհափառ, ինչ, կարտասուէք։

— Այո՛, կատղութենէս, այո՛, այս անարդութեանս վրայ կ'արտասուէմ։ Ի՞նչպէս ես աղաւելու չափ նուաստանամ, ես թափառուս։ Իմ բոլոր կենացս մէջ, այս վայրկեանս պիտի ասեմ, քոյր իմ, մէկ մանրերկրորդի մէջ այնքան տառապանք քաշել տուիր ինձ որչափ որ կենաց ամենէն թշուառ ժամերու մէջ մարդու մոքէ չանցնիր։

Եւ թաղաւորն ոտք ելնելով՝ իր արտասուաց ազատ ընթացք տուաւ, արտասուք՝ որ արդարեւ բարկութեան և ամօթապարտութեան արդինք է ին։

Իշխանուհին շարժեցաւ՝ չէ թէ զուոզութենէ՝ վասն զի լաւադանյագք դթած չեն զուոզութեան մէջ, այլ վախցաւ որ այս արտսուքը թաղաւորին սրտին մէջ մարդկային ամէն զգացումները չզրգուեն։

— Հրաման տուէք, Վեհափառ — ըսաւ նա — և որովհետեւ իմ նուաստանալս կ'ուղէք քան թէ ձերինը, թէ և իմ հանրածանօթ է և ձերինին եր եմ միայն ականատես, հրաման տուէք, և թաղաւորիդ պիտի հնազանդիմ։

— Ո՛չ, ո՞չ, Համրիէդ — զուեց ևուի երախտագիտութենէ յափշտակեալ — գու միայն եղօր մ'աղաւանքին տեղի տուած եղար։

— Այլ ևս եղայցը չունիմ քանի որ կ'հնազանդիմ։

— Միթէ բոլոր թաղաւորութիւնս կ'ուղե՞ս իբրև շնորհակալութեան նշան։

— Ի՞նչպէս կ'սիրէք — ըսաւ նա — երբ կ'սիրէք։

Թաղաւորը պատսախան չտուաւ։ Իշխանուհոյն ձեռքը բռներէր և համբոյրներովլը կ'ծածկէր։

— Այսպէս — ըսաւ նա — այն ինդք օրիորդը պիտի ընդունիս, մնոր պիտի ներես, մնոր սրտին անուշութիւնն և ուղղութիւնը պիտի հանէս։

— Իմ տանս մէջ պիտի պաշեմ զանի :
 — Ա՛չ, բարեկամութիւնդ անոր պիտի շնորհես, սիրելի քյորին :
 — Ես երբեք սիրած չեմ զանի :
 — Լաւ ուրեմն, իմ սիրոյս համար, անոր հետ լաւ պիտի վարուիս, այնպէս չէ, Հանրիէդ :
 — Շատ լաւ, իրեւ ձեզի յատկացեալ աղջիկ մը :
 Թաղաւորն ոտք ելաւ : Այսպէս դժնդակ կերպով արտասանած բառով՝ իշխանուհին իր զոհողութեան բոլոր արժանիքը ջնջած էր : Թաղաւորն այլ ևս անոր բան մը չէր պարտաւորեր :
 Ի խոր խոցուած, մահու չափ վիրաւորուած թաղաւորը պատասխանեց .
 — Ծնորհակալ եմ, իշխանուհիս, յաւիտեան պիտի յիշեմ ինձ մատցած ծառայութիւնդ :
 Եւ մարդավարական կեղծեօք բարեւ տալով՝ հրաժեշտ տուաւ :
 Եւ հայլիի մ'առջեն անցնելով տեսաւ որ աչերը կարմրեր են և բարկութեամբ ոտքը գետինը զարկաւ :
 Բայց ուշ արթնցեր էր . Մալիքօրն ու տ'Արդանեան՝ դրան առաջն կեցած լինելով՝ իր աչերը տեսեր էին :
 — Թաղաւորը յացած է — մտածեց Մալիքօրն :
 Տ'Արդանեան թաղաւորին մօտեցաւ ակնածութեամբ :
 — Աւհափառ — ըստ նա ցած ձայնով — պէտք է որ փոքր սանդղէն ձեր սենեակն անցնիք :
 — Խնչո՞ւ համար :
 — Վասն զի ճամբռն փոշին հետք ձեր է ձեր զիմաց վրայ ըստ տ'Արդանեան : — Գացէք, Աւհափառ, դացէք : Անօրէն մտածեց նա — քանի որ թաղաւորն իրեւ երեխայ մը զիշաւ, թող զգուշանան անոնք որ արտասուել պիտի տան թաղաւորն արտասուել տուողը :

ԺԶ

ՕՐԻՆԻ ԼՍ Ա.Ա.ԼԻԿԻՐԻ ԹԱՇԿԻՆԱԿԻ

Խշխանուհին չարասէր չէր, այլ միայն կըքոտ :
 Թաղաւորն անխոհեմ չէր, սիրահար էր միայն :
 Հաղին թէ երկուքնին ալ այս տեսակ դաշն մը դրին, որունպատակն էր Լա Վալիկէրի վերակոչումը, որ երկուքնին ալ այս համաձայնութենէ օգուտ քաղել կ'ուզէին :
 Թաղաւորը Լա Վալիկէրն ուզեց տեսնել օրուան ամէն ժաման :
 Իշխանուհին որ թաղաւորին սրտմառ թիւնը կ'զգար այն աղերսանաց տեսարանէն ՚ի վեր, չէր կամեր Լա Վալիկէրը թողուլ առանց զիմալ բելու :
 Ուստի թաղաւորին ոտից ներքեւ խոչնուաներ կ'յարուցանէր :
 Իրօք՝ թաղաւորը՝ իր սիրուհոյն ներկայութիւնը վայելելու համար իր հարսին հետ միշտ մեծարանք նուիրելու ստիպուած պիւտի լինէր :
 Իշխանուհոյն բոլոր քաղաքաղիտութիւնն այս յատակադին վրայ էր :
 Որովհետեւ իշխանուհին իրեն օգնական մը գտեր էր, և այս օգնականն էր Մօնղալէ, թաղաւորը պաշարուած զանուեցաւ ամէն անդամ որ իշխանուհոյն սենեակը զար : Անոր չորս կողմը կ'առնէին և չին թողուր : Իշխանուհին իր խօսակցութեան մէջ այնպիսի շնորհ և խելք կ'ցուցնէր որ ամէն բան կ'նսեմացնէր :
 Մօնղալէ անոր կ'յաջորդէր : Քիչ ատենէն թաղաւորին անտանելի զարձաւ :
 Ինքն ալ ասոր կ'սպասէր :
 Այն ատեն Մալիքօրնն արձակեց . ասի շնորհ դտաւ թաղաւորին ըսելու թէ արքունիքը խիստ դժբաղդ անձ մը կար :
 Թաղաւորը հարցուց թէ ո՞վ էր այս անձը : Մալիքօրն պատասխանեց թէ՝ օրիորդ Մօնղալէն է :

Այն ատեն թաղաւորը յայտնեց թէ արժանի է որ այն անձը դբաղը լինի քանի որ ինքն ալ նոյնպիսի գծաղղութեան պատճառ մը կ'գունայ ուրիշներուն :

Մալիքօրն միաքը բացարեց, օրիորդ Ֆօնդալէ իր հրամանները տուեր էր :

Թաղաւորն աչքը բացաւ, զիտեց որ իշխանուհին՝ այն ինչ նորին Վեհափառութիւնը կ'երևէր, ինքն ալ կ'երևէր, նրան զատիթները կ'զտնուէր մինչեւ թաղաւորին երթը, և անոր կ'ուղեցէր առ ահասանեակներուն մէջ իր աղջկանց մէկուն հետ շխօսի :

Իրկուն մ'աւելի հեռուն զնաց :

Թաղաւորը կանանց մէջ նստեր էր, և իր ձեռքը՝ թենոցին ներքե պահէր էր առմասկ մը զոր Լա Վալիերի ձեռքը սահեցնել կ'ուղէր :

Իշխանուհին անոր զիտաւորութիւնն ու տոմսակը զուշակեց :

Դժուարին էր արքիլել թաղաւորն որ իր ախորժած աեղք չերթայ :

Սակայն ա՛տք էր արդիլել որ Լա Վալիերի չերթայ, անոր բարի լոյս ըստէ, և նոյն առմասկն անոր ծնկաց վրայ չձգէ, իր հովանոցին ետին կամ թաշկինակին մէջ :

Թաղաւորն որ նոյնպէս կ'գիտէր, կասկածի դնաց որ իրեն դարձն մը կ'լարեն :

Ուստի տար ելաւ և առանց կեղծիրի իր աթոռն օրիոր Շաղիոնի մօտեցուց և անոր հետ կատակներ ըրաւ :

Ուսանաւորներ կ'շնէին : Շաղիոն օրիորդին քովէն ելնելով Ֆօնդալէի կողմը զնաց, յետոյ Գօնէյ-Շարանդ օրիորդին քովը :

Այն ատեն, այս Ճարպիկ շարժումով, Լա Վալիերի դիմացը նստած դանուեցաւ որու առջելը կեցեր էր լիովին : Տիկինը մծ զսաղմունք մը կեղծեց ունենալ, ծաղկեայ պատկեր մը կ'սրբագրէր բանուած օմոցի մը վրայ :

Թաղաւորն օրիորդ Լա Վալիերի ցոյց տուաւ սպիտակ տոմսակին ծայրը, և այս ալ երկնցուց իր թաշկինակն ակնարկով մ'որ կ'ուղէր ըսել. «Տումասկն ասոր մէջ դրէք » :

Յետոյ, որովհետեւ թաղաւորն իր թաշկինակն իր աթոռին վրայ դրեր էր, բաւական Ճարպիկութեամբ զանի վար նետեց :

Այնպէս որ Լա Վալիեր իր թաշկինակը սահեցուց թեաթուն վրայ :

Թաղաւորը չհասկընալու զարնելով զայն առաւ, տոմսակն անոր մէջ դրաւ և վերստին թաշկինակը թեաթուն վրայ տեղաւորեց :

Կ'մնար Լա Վալիերի ձեռքը կարկառել թաշկինակն առնլու թանկագին աւանդովը :

Բայց իշխանուհին ամէն բան տեսեր էր :

Շաղիոն օրիորդին ըստաւ :

— Շաղիոն, թաղաւորին թաշկինակն օմոցին վրայ ընկեր է, միթէ չես վերցներ :

Եւ նորատի օրիորդն արտորնօք հնազանդելուն, թաղաւորը տեղէն շարժելուն, Լա Վալիեր սոլայլելուն՝ միւս թաշկինակը աեւամն թիկնաթուին վրայ :

— Ա՛չ, ներեցէք, Զեր Վեհափառութիւնն երկու թաշկինակ ունի — ըստաւ նա :

Եւ մեծ գժուարութիւն քաշեց թաղաւորը Լա Վալիերի թաշկինակն իրենին հետ զրաբանը զնելու : Սիրուհոյն այս զրաւականը կ'շահէր, բայց սիրուհին բանասական քառեակ մը կ'կորուսնէր, զոր յօրինելու համար թաղաւորը տասն ժամ անցուցեր էր, և որ թերեւո ինքնին երկայն քերթուած մը կ'ամէր :

Հետեապէս թաղաւորը բարկացաւ և Լա Վալիեր յուսահաւեցաւ :

Անկարելի է այս տեսաբանը նկարագրել :

Բայց նոյն պահուն անհաւատալի դէպք մը պատահեցաւ :

Երբոք թաղաւորը մեկնեցաւ իր սենեակը դարնալու, չղիտենք ինչ կերպով Մալիքօրն զործն իմանալուն՝ նախասնեակը կ'զտնուէր :

Բնականապէս Բալէ-Բուայալի նախասնեակները մութ են, և իրկունն ալ իշխանուհոյն տան մէջ ասոր հոգ տանող չկար, առ զէկ լուսաւորուած չէին :

Թաղաւորն այս մթութիւնը կ'սիրէր : Ընդհանուր կանոն . սէրը, որով միաք և սիրտ անդադար կ'բորբոքին, ուրիշ ըստ ըստ բեր բայց եթէ մտքի և սրտին լոյսը :

Ու բերմ նախասենեակը մութ էր, Նորին ՎԵՀԱՓԱռութեան առաջն միայն մէկ ջահակիր կար:

Թագաւորը ծանրագայլ կ'քալէր և իր զայրոյթը կ'զսպէր:

Մալիքօրն թագաւորին շատ քովէն անցաւ, զրեթէ անոր զարանուեցաւ, և կատարեալ խոնարհութեամբ անորմէ ներում ինդրեց. բայց թագաւորին սիրտը նեղանալով՝ Մալիքօրնը սասաեց, և այս ալ խոյս տուառ:

Լուի անկողին մտաւ, նոյն իրկուն մէկ քանի պղտիկ կուիներ ընելով թագուհոյն հետ, և հետեւալ օրը, այն միջոցին որ դահլիճը կ'անցնէր, Լա Վալիէրի թաշկինակը համբութելու փափարը բռնեց:

Սենեկապանը կանչեց:

— Բեր ինձ — ըսաւ — երէ կուան հազած զզեստու. բայց նայեսը անոր մէջ զտնուած բաներուն բնաւ չդպչիս:

Այս հրամանը կատարուեցաւ: Թագաւորն իր զզեստին դրախ նը խառնեց:

Թաշկինակ մը միայն դտաւ, և այս ալ իրենն էր. Լա Վալիէրինն աներեսյթ եղեր էր:

Երբ թագաւորն այլ և այլ կասկածներու և ենթագրութիւններու կ'երթար, Լա Վալիէրի կողմէ իրեն զիր մը հասաւ. այս զիրը սա պէս զրուած էր:

« Ո՛րչափ շնորհ ունիմ ձեզ, սիրելի տէր իմ, այս աղջոր ու տանաւորները զրկելուդ համար, սէրդ որչափ հնարագէտ է և յարասեող: Ի՞նչպէս չսիրեմ ձեզ» :

— Այս ի՞նչ, կ'նշանակէ — մտածեց թագաւորը — այս աեղ սխալմոնկ կայ: Լաւ մինտուէ — ըսաւ թագաւոր սենեկապանին — դրամնիս մէջ թաշկինակ մը սկիտի լինէր, և եթէ զայն չզտնես; և եթէ անոր գաեր ես . . . :

Յետոյ ինքզինքին դալով մտածեց վերստին: Պետութեան ինդիր ընել այս թաշկինակին կորուստը, բանբասանքի գուռ բանալ էր, և ասկա յարեց.

— Այս թաշկինակիս մէջ կարեոր թուղթ մ'ունի որ ծալքին մէջ սահեր էր:

— Բայց, ՎԵՀԱՓԱռու — ըսաւ սենեկապանը — Չեր ՎԵՀԱՓԱռութիւնը միայն թաշկինակ մ'ունէր և ահաւասիկ:

— Ճշմարտէ — պատասխանեց թագաւորն ակրամները կրծտեւլով — իրաւ է: Ո՛չ, աղքատոթին: քանի ցանկալի ես: Երաջանիկ է այն որ ինքն անձամբ դրանէն կ'հանէ և կ'զնէ թաշկինակ և սումսակ:

Լա Վալիէրի զիրը վերստին կարգաց՝ ջանալով ըմբոնել թէ բնէ կերպով ոտանաւորներն անոր ձեռքը հասեր էին:

Այս զիրը յետոյ գրութիւն մ'ունէր:

« Չեր դրաբերին միջոցաւ կ'ուղարկեմ ձեզ այս պատասխանս թէեւ յուղարկուելու արժանի չէ »:

— Ո՛չ, պարզուեցաւ խնդիրը — ըսաւ թագաւորն ուրախութեամբ: — Ո՞վ կայ անդ, և այս զիրն ով բերաւ:

— Ո, Վալիքօրնը — պատասխանեց սենեկապանն երկչուութեամբ:

— Թոնդ ներս դայ:

Վալիքօրն ներս մտաւ:

— Օրիորդ Լա Վալիէրի քովէն կ'դաս — ըսաւ թագաւորը հառաչով մը:

— Այս, ՎԵՀԱՓԱռու:

— Եւ օրիորդ Լա Վալիէրի իմ կողմէ բան մը տարի՞:

— Ե՞ս, ՎԵՀԱՓԱռու:

— Այս, դու:

— Ո՛չ բնաւ, տէր իմ, ո՞չ:

— Օրիորդ Լա Վալիէր կ'ըսէ ինձ յայտնապէս այդ բանը:

— Ո՛չ, ՎԵՀԱՓԱռու, օրիորդ Լա Վալիէր կ'սխալի:

Թագաւորն ունքը պրւստեց:

— Այս ի՞նչ խաղէ — ըսաւ: — Բայցատրէ զործն, ինչո՞ւ համար օրիորդ Լա Վալիէր քեզ իմ դրաբերս կ'կոչէ . . . : Այս օրիորդին ի՞նչ տարի՞ր: Շուտ խօսէ, պարոն:

— ՎԵՀԱՓԱռու, օրիորդ Լա Վալիէրի թաշկինակ մը տարի, տրիշ բան չզիտեմ:

— Թաշկինակ մը . . . ի՞նչ թաշկինակ:

— Վեհափառ, երբ երեկ իմ գժբաղդութենէս Զեր Վեհափառ թեան անձին զարնուեցայ, գժբաղդութիւն մ'որու վրայ բռը կենաց մէջ պիտի ցա իմ, մանաւ անդ ձեր ցոյց տուած զըժգոհչութեան պատճառաւ, Վեհափառ, անշարժ մնացի յուսահատութենէս. Զեր Վեհափառ թիւնը հեռանալուն չկրցաւ լսել ներողութեան համար ձեղ ըրած աղաչանքս, և զետինը սպիտակքան մը աեսայ:

— Ա՛Հ — ըրաւ թաղաւորը :

— Ծուեցայ որ նայիմ, թաշկինակ մ'էր: Պահ մը մտածեցի որ Զեր Վեհափառ թեան զարնուելուս այս թաշկինակը գրպանէն ընկած պիտի լինէր. բայց զայն յարդանօք շօշափելով տեսայ որ անուանադիր մը կար վրան, և այս անուանադիրն ալ օրիորդ Լա Վալիերին էր. երեակայեցի որ զալու ատեն այն օրիորդն իր թաշկինակը զետին ձգած պիտի լինէր, և դուրս ելնելու ատենն անոր տալու փութացի, և աչա այս է միայն օրիորդ Լա Վալիերի յանձնածս. կ'պաղապակ Զեր Վեհափառ թիւնն որ այս ըստածիս հաւտաք :

Մալիօրն այնպէս միամիտ, վշտակիր, հեղ կերպարան մ'առեր էր որ թագաւորը չափազանց հաճոյք զգաց զանի մաիկ ընելով:

Այս զիստածին համար մեծ հաճութիւն ցցուց Մալիօրնի իբրև ամենամեծ ծառայութեան մը :

— Ահա արգէն երկու յաջող հանդիպում ունեցայ քեզի հետ, պարոն — ըստ թագաւորը — կրնաս իմ բարեկամութեանս վրայ յուսաւ:

Ճշմարիտը սա է որ Մալիօրն թագաւորին դրամնէն պարզապէս դողցեր էր թաշկինակն այնպէս ճարպիկութեամբ ինչպէս կըրնայ ընել բարիզի մէկ վարպետ հատու մը :

Այս պատմութիւնն իշխանուհին միշտ անծանօթ մնաց: Բայց Մօնղալէ կերպով մը հասկըցուց զայն Լա Վալիերի, և Լա Վալի ատեն անցընելով թագաւորին պատմեց, որ չափազանց ինուաց և Մալիօրնը մեծ քաղաքակէտ անու անեց:

Լուի Ժ. իրաւունք ունէր, և զիտենք որ մարդ ճանչող թագաւոր մ'էր:

ՓԵ

ԽՕՍՔ ՊԱՐՏԻԶՊԱՆՆԵՐՈՒ, ԵԼՆԵՐԱՆՆԵՐՈՒ ԵՒ
ՆԱԺԻՇՏՆԵՐՈՒ ՎՐԱՅ

Գժբաղդաբար հրաշքը միշտ չէր տեեր, մինչդեռ իշխանուհին սրսնեղութիւնը միշտ կ'տեէր:

Ութ օրէն ետք՝ թագաւորն այնպէս նեղը մտեր էր որ չէր կրնար Լա Վալիերի աչք մը նետել առանց իշխանուհին կասկածուու ակնարկին հանդիպելու:

Երբ մուռ կալու համար առաջարկութիւն լինէր, իշխանուհին անձրեսու օրուան տեսարանին կամ արքայական կաղնիին խօսակցութեան տեղի չտալու համար շուտ մ'անհան ստութիւն մը կը հնարեր, և այս անհանդասութեան պատճառաւ դուրս չէր ելներ, հետևապէս իր նամիշտներն ալ տունը կ'մնային:

Գիշերային այցելութիւններ ընաւ չէր այցել. վասն զի՞ այս մասին թագաւորը՝ առջի օրէն՝ ձախորդութեան հանդիպեր էր:

Ինչպէս ՚ի Փօնդէնալո՛ իրեն հետ առեր էր Սէնդ-Էնյանը Լա Վալիերի սենեակն երթալու: Բայց անդ զտեր էր օրիորդ Դօնէլ-Շաբանդը, որ սկսեր էր կրակ կայ, զող կայ պոտալ, այնպէս որ նամիշտներու, ինամակալուհիներու, սպասաւորներու լէզեռն մը վաղեր եկեր էին, և Սէնդ-Էնյան՝ իր փախստական տիրոջը պատին ազատելու համար մինակ մնալով, մայր թաղուհին և իշխանուհին կողմէ ծանր կշամբանք լսեր էր:

Ասկէ զատ՝ հետեւել օրն երկու մինամարտի հրաւէր ընդուներ էր Մօրդմարի ընտանիքին կողմէ:

Պէտք եղեր էր որ թագաւորը միջամտէ:

Այս սխալմոնքի պատճառն այն էր որ իշխանուհին յանկարծիր նամիշտներուն բնակարանը փոփոխեր էր և Լա Վալիերը ու

Մօնդալէ իրենց տիրուհոյն գահըն իսկ պատկելու կոչուեր էին : Հետեազէս ոչ ինչ կարելի չէր, և ոչ իսկ զիր զբելը . իրեն պէս վայրադ արկոսի մը, զէզ անձի մ'աշաց ներքե զբելն ամենամեծ վասնղաց ենթարկիլ էր :

Դիւրին է դատել թէ ինչպէս առիւծը յարատե ցասման և անդուլ բարկութեան մէջ կ'զանուէր այս ասեղի խայթուածներէն :

Թագաւորը զլուիր կ'պատէր որ հնար մը զտնէ տեսակցութեան, և որովհետեւ ոչ Մալիքօրնի կ'բացուէր և ոչ ո'Արդանեանի, չէր կարող հնար մը զտնել :

Մալիքօրն ատեն ատեն գիւցաղնական զիառամեր ոնեցաւ թաւդաւորը քաջալերելու որ իրենց բանայ սիրալ :

Բայց ամօթ սեպէ կամ կասկած՝ նախ թագաւորը կ'սկսէր խածնել և ապա կ'թողուր խայժը :

Ինչպէս օրինակի համար, իրկոն մ'որ թագաւորը պարտէղէն կ'անցնէր և իշխանուհոյն պատուհաններուն կ'նայէր տիրապէն, Մալիքօրն տուսախէ շրջանակի մը տակ զտնուող ելնարանի մը զարկաւ ոտքը, և Մանկքանի ըստ, որ իրեն հետ թագաւորին ետեէն կ'քալէր, և որ ոչ բանի մը զարկեր էր և ոչ բան մը տեսներ էր :

— Միթէ չտեսա՞ր որ ելնարանի մը զարնուեցայ և քիչ մնաց որ պիսի վար ընկնէի :

— Ո՛չ — ըստ Մանկքան ըստ սովորականին ոշաթափ — բայց ըստ երեսյթին չես ընկած :

— Ի՞նչ չող, գարձեալ վտանղաւոր է այսպէս դետինները թողուլ ելնարանները :

— Այո՛, կրնայ մարդու ֆեաս պատահիլ, մանսաւանդ երբու անուշաղիր է մէկը :

— Այդ ըսել չեմ ուղեր, իմ միտքս սա է որ վտանղաւոր կ'զմնեմ նամիշներու պատուհաններու ներքե այսպէս թողուլ ելնարանները :

Լուի աննշմարելի դող մ'զաց :

— Ի՞նչպէս վտանղաւոր — հարցոց Մանկքան :

— Աւելի բարձր խօսէ — փսփսաց Մալիքօրն Մանկքանի թել չըլուլ:

— Ի՞նչպէս վտանղաւոր — ըստ Մանկքան աւելի բարձր ձայնով : Թաղաւորն ականջ դրաւ :

— Աւասիկ, օրինակի համար — ըստ Մալիքօրն — ելնարան մ'որ տասն ինն ուաք բարձրութիւն ունի, ճիշտ պատուհաններու շրջանակին կ'համնի :

Մանկքան՝ պատասխան տալու տեղ՝ կ'երազէր :

— Զե՞ս հարցներ թէ ո՞ր պատուհաններն են — վերստին փսփսաց Մալիքօրն :

— Բայց ո՞ր պատուհաններն ըսել կ'ուզես — հարցոց Մանկքան բարձրաձայն :

— Իշխանուհոյն պատուհանները :

— Ճէ :

— Ո՛չ, չեմ ըսեր բնաւ որ իշխանուհոյն սենեակին ելնելու չափ յանդկնի մէկը, բայց իշխանուհոյն գահըն մէջ Լա Վալեհէր և Մօնդալէ կ'պառկին, որոնք երկու սիրուն էակներ են :

— Պարզ միջնորդով մը զատուած — ըստ Մանկքան :

— Ահա, տես իշխանուհոյն սենեակներուն պատուհանները բաւական պայծառ լուսաւորուած են. կ'նային սա երկու պատուհանները :

— Այո՛ :

— Հասկա սա միւս պատուհանն որ միւսներուն կից է և նուազ լուսաւորուած կ'երեքի, կ'տեսնես զայն :

— Քաջ կ'աենամի :

— Ահա այն է պատույ աղջկանց սենեակը : Ճշմարիսն օդը տաք է, ահա օրիսրդ Լա Վալիկէրն ալ իր պատուհանը կ'բանայ . ահա, յանդուզն սիրահար մ'ինչեր չէր կրնար անոր ըսել, եթէ միայն զիանար որ սա տեղն ելնարան մը կայ տասն ինն ոսնաշափ որ ճիշտ շրջանակին կ'համնի :

— Բայց մինակ չէ ըսիր, օրիսրդ Մօնդալէի հետ է :

— Օրիսրդ Մօնդալէ չկայի պէս է . մանկութեան բարեկամուշի մ'է, բոլորանուէր, ճշմարիս հօր մ'որու մէջ մարդ կրնայ նետել կարաւել ուզած ամէն դաղնիքը :

Այս խօսակցութենէ բառ մ'անդամ թագաւորին ականջն չէր վախած :

Սալիքօրն դիտած էր խել որ թաղաւորն սկսեր էր աւելի ծանր՝ քաղել որպէս զի իրեն խօսքն տարտելու ժամանակ կայ առնու : Աւստի՞ երբ զուոը հասաւ, ամբոխը ճամբեց, Սալիքօրնէն զատ : Այս ընթացքէն ոչ ոք զարմացաւ, զիտէին որ թաղաւորը սիրահարած էր և կ'կատկածէին որ լուսնակային ստանաւորներ կ'շնէ : Բայց այն իրկուն լուսին չկար, բայց զարձեալ թաղաւորը կըրանար ստանաւ որներ շնինել :

Ամենքը մեկնեցան :

Այն ասեն թաղաւորը Սալիքօրնի կողմը զարձաւ, որ յարգանօք կ'սպասէր որ թաղաւորն իրեն ուղղէ խօսքը :

— Ի՞նչ ելնարանի խօսք կ'ընէիր քիչ մ'առաջ, Պ. Սալիքօրն — հարցոց նա :

— Բայց, Վեհափառ, ես ելնարանի վրայ կ'խօսէի :

Եւ Սալիքօրն աչքը դէպ երկին բարձրացաց որպէս թէ թռած խօսքերը բռնել կ'ուղէր :

— Այս, ստան ինն ստանաշափ ելնարան մը :

— Ա՛՛, այս, Վեհափառ, ստոյդ է . բայց ես Պ. Սանիքանի կ'խօսէի և պիտի լուի եթէ զիտնայի որ Զեր Վեհափառութինը զիս մատիկ կ'ընէր :

— Եւ ինչո՞ւ համար սղիտի լուիր :

— Վասն զի չպիտի ուղի որ նոյն ելնարանը մոռցող պարախղանը յանդիմանտի . . . այն խեղճ մարդը :

— Բանէ մը մի վախնար . . . : Կոյինք ի՞նչ է այդ ելնարանը :

— Միթէ Զեր Վեհափառութինը կ'ուղէր աեսնել :

— Այս :

— Այդ զիւրին բան է, Վեհափառ, ահա այս տեղ կեցած է :

— Տուախի՞ն մէջ :

— Ճիշտ այն է :

— Ցոյց տուր նայիմ :

Սալիքօրն գարձաւ և թաղաւորն ելնարանին տարաւ :

— Աւասիկ, Վեհափառ — ըստ նա :

— Քաշէ նայիմ քիչ մը :

Սալիքօրն ելնարանը ծառուղին մէջ դրաւ :

Թաղաւորն ելնարանին երկայնքը քաղեց :

— Հիմ — ըստ նա . . . — կ'ըսես որ տամն ի՞նն ոտք երկայն է :

— Այն, Վեհափառ :

— Տասն ինն ոտք շատ է, չեմ կարծեր որ այդչափ երկայն լինի :

— Այդու աղէկ չաեսնուիր, Վեհափառ : Եթէ ելնարանը կանգուն լինէր՝ ծառի մը կամ պատի մը կոթնած, օրինակի համար, այն ատեն աւելի լաւ պիտի տեմնուէր, վասն զի բաղդատութեամբ աւելի աղէկ կ'չափուի :

— Ո՛՛, ի՞նչ փոյթ, Պ. Սալիքօրն, գյուարաւ կ'հաւատմ որ ելնարանը տամն ինն ոտք երկայն լինի :

— Գիտեմ որ Զեր Վեհափառութինն աղէկ աչք ունի, բայց գարձեալ կլնամը զրաւ գնել :

Թաղաւորը զլուխը ցնցեց :

— Ստուգելու համար անվրէոլ միջոց մը կայ — ըստ Սալիքօրն :

— Ի՞նչ միջոց :

— Ամենուն յայտնի է, Վեհափառ, որ պալատին զեանայտրիլ տասն ինն ստանաշափ է :

— Ստոյդ է զիւրին է ստուգել :

— Լաւ ուրեմն, պատին երկայնքը գնելով ելնարանը կարելի է զատել :

— Ստոյդ է :

Սալիքօրն փետուրի ոլէս վերցոց ելնարանն և պատին կոթնցոց գիտմամբ կամ պատահմամբ նոյն խել Լաւ Վալիւրի սենեկին պատուհանն ընտրեց այս փորձն ընկելու համար :

Ելնարանը Ճիշտ ծնունին անկիւնը հասաւ, այսինքն մինչեւ պատուհանին մոյթը, այնպէս որ եթէ մարդ մը, միջակ հասակաւ մարդ մը, թաղաւորին պէս, օրինակի համար, վերին երկրորդ աստիճանին վրայ կենար կրնար սենեկին բնիկներուն կամ ևս բնիկուհիներուն հետ հաղորդակցիլ :

Այն ինչ ելնարանը ողատին կոթնցոց որ թաղաւորն 'ի բաց թուլով խաղացած կերպ մը կատակերգութիւնը, սկսաւ ելնարանն 'ի վեր ելնել, մինչդեռ Սալիքօրն ելնարանը կ'բռնէր : Բայց այն

ինչ իր օդային ուղեսորութեան կէսն հասեր էր որ զիշերասպահ դունք մը պարտիզին մէջ երեցաւ և շխատ սանդղին կողմը զիմեց : Թաղաւորն արտօրնօք վար իջաւ և սղութակի մը մէջ ողահութաւ :

Մալիքօրն հասկըցաւ որ սէտք էր զոհութիւ :

Եթէ ինքն ալ թաղչէր այն ատեն չըսս կողմը սկիտի փնտուեն մինչև որ զինքը կամ թագաւորը, կարելի է երկուքնին ալ զանեն : Լաւ ես էր որ մինակ զանուեր :

Հետեասպէս Մալիքօրն այնպէս անձարակութեամբ պահութաւաւ, որ աւանձին ձերբակալ եղաւ :

Մի անգամ ձերբակալ լինելէն ետեւ՝ Մալիքօրն պահականոցը տարուեցաւ . երբ մի անգամ պահականոցը հասաւ, իր անունը յայտնեց, և անունը տալով՝ ճանչուեցաւ :

Կայն պահուն՝ սղութակէ ՚ի սղութակ՝ թաղաւորն իր բնակարանին փոքրիկ գրան հասեր էր, շատ պղակի ընկած և յուսահաւ :

Կամ մանաւանդ անոր համար՝ որ ձերբակալութեան հանած աղմկէն Լա Վալիեր և Մօնդալէ պատուհան ելեր էին, և Կայն ինք իշխանուհին ալ երկու մամերու մէջ իր պատուհանն ելեր էր, հարց ու փորձ ընելով պատահած անցքին վրայ :

Կայն պահուն՝ Մալիքօրն տ' Արդանեանն օդութեան կ' կոչէր . տ' Արդանեան Մալիքօրնի խնդրոյն վրայ եկաւ հասաւ :

Բայց ընդունայն ջանաց իր պատճառներն անոր հասկըցընել, բայց ընդունայն տ' Արդանեան հասկըցաւ, բայց ընդունայն այս երկու հնարագետ և նրամիտ մարդիկ որիշ ձեւ մը տուին արկածին, դաշնաւլ Մալիքօրնի որիշ բան չմնաց բայց եթէ համբաւ հանել թէ ինք օրիորդ Մօնդալէի սենեակը մանելու փորձ փորձած լինի, ինչպէս որ Աէնդ-Էնյան այնպէս անուն հանած էր թէ օրիորդ Գօնէյ-Շարանդին սենեակը մանելու աշխատած լինէր :

Իշխանուհին անողոքելի էր, սա կրկնակի պատճառաւաւ, որ եթէ իրօք Պ. Մալիքօրն զիշերայն իր բնակարանը մանել կամեր էր սղութանեն ելնարանի մը միջոցաւ որպէս զի Մօնդալէն տեսնէ, այս բանս Մալիքօրնի կողմէ պատճելի զործ մ' էր և սէտք էր պատճել :

Եւ սա պատճառաւ որ՝ եթէ Մալիքօրն ինքն իր անձին համար զործելու աեղ՝ իրեւ միջնորդ շարժեր էր Լա Վալիերի և ուրիշ անձի մը մէջ՝ զոր չէր կամեր ընդունել, իր յանցանքը շատ աւելի մեծ էր, վասն զի սէրը, որ ամէն բանի կ'ներէ, ներելու տեղի չունէր :

Հետեասպէս իշխանուհին աղաղակներ արձակեց և իշխանին տունէն Մալիքօրնը վահսել տուաւ, առանց մոածելու, այս կոյր անձը, որ Մալիքօրն և Մօնդալէ զինքն իրենց ճանկին ներբեկ ունէն Պ. Կիշին ըրած այցելութեան և ուրիշ նոյնչափ փափուկ խնդիրներու համար :

Մօնդալէ՝ որ կատղէր էր՝ ուղեց անմիջապէս վրեժը լուծել : Մալիքօրն անոր ապացոյցով հաստատեց որ թաղաւորին պաշտպանութիւններէ վլեր է, և թէ լու բան էր թաղաւորին համար տառապիլ :

Մալիքօրն իրաւոնք ունէր : Ուստի թէեւ Մօնդալէ կին էր, և հարսփիկ կին մը, գարձեալ Մալիքօրնի համզուեցաւ :

Միւս կողմէ, պարտինք շուտով ըսել որ թաղաւորը Մալիքօրնը միսիթարելու միջոցներ զործածեց :

Կախ Մալիքօրնի համրել տուաւ յիսուն հազար ֆրանք իր կորուսած պաշտօնին փոխարէն :

Յետոյ իր յատուկ տան մէջ կարդեց գանի, այսպէս իշխանուհին իրեն և Լա Վալիերի քաշել տուած տառապանաց վրեժն առնելուն զոհ լինելով :

Բայց իր թաշկինակները զողնալու և իր ենարանը չափելու համար Մալիքօրնը չունենալով իր քով, խեղճ սիրահարը բոլորվին անօդնական մնացեր էր :

Այլ ևս յօյս չունէր Լա Վալիերի մօտենալու որչափ ատենք որ Բալէ-Բուայալ մնար :

Ամէն պատիներն և աշխարհիս բոլոր զումարներն այս բանին չէին կրնար դարման բերել :

Բարեբաղդաբար՝ Մալիքօրն կ' հսկէր :

Այնպէս միջոցներ բանեցուց որ Մօնդալէի հանդիպեցաւ : Իրաւ է որ Մօնդալէ ալ իր կողմէ ամէն ջանք կ' լինէր Մալիքօրնի հանդիպելու :

— Գիշերներն ի՞նչ կ'ընես իշխանուհւոյն սենեակը — հարցոց
նա նորատի աղջկան :

— Բայց զիշերը կ'նիշեմ — պատասխանեց նա :

— Ինչպէս, կ'նիշես :

— Անտարակի՞յս :

— Բայց դէշ բան է ննջելը . չվայլեր որ այդ կրած վշտովդ
նորատի աղջկի մը քնանայ :

— Բայց ես ի՞նչ վիշտ կ'զգամ :

— Միթէ յուսահատ չես իմ բացակայութեանս պատճառաւ :

— Բնաւ, ամենելին, քանի որ յիսոն հազար ֆրանք և թա-
գառօրին կողմէ սկաշտօն մը ստացար :

— Փոյթ չէ, անտարակայս զիս առաջուան պէս շտեսնելուդ
վրայ շատ վշտայած ես, մանաւանդ յուսահատ ես որ իշխանու-
հւոյն վստահութիւնը կորուսի : Միթէ ըսածս իրաւ չէ : Խօսէ-
նայինք :

— Ա՛չ, շատ իրաւ է :

— Լաւ որեմն, այդ վիշտ զիշերները քնանալու կ'արդիլէ
քեզ, և հետեազէս կ'հեծեծես, կ'հատաշէս, մեծ աղմակ հա-
նելով կ'ինչես, և այս ամենը տասն անդամ կ'ընես մէկ վայր-
կենի մէջ :

— Բայց, ո. Մալիկօրն, իշխանուհւն չուզեր որ իր սենեկին
մէջ ամենամեծն աղմակ մը հանենք :

— Ի հարկէ ես ալ զիտեմ որ բան մը չկրնար տանիլ . տա-
տի ես ալ կ'ըսեմ որ այդչափ խորին վիշտ տեսնելով պիտի
փութայ քեզ իր սենեկին գուրս վանակու :

— Կ'իմանամ :

— Չատ բան :

— Բայց այդ ըսածէդ ի՞նչ սլիտի յառաջ դայ :

— Աս պիտի յառաջ դայ որ Լա Վալիկէ՛ ձեզնէ զատատձ
տեսնելով ինքզինքը զիշերն այնչափ հեծեծանիք սլիտի հանէ և
այնչափ ողը ու կոծ պիտի ձգէ որ երկու հազիի համար յուսա-
հատութեան նշաններ պիտի ցուցնէ :

— Այն տաեն զանի որիշ խուց մը սլիտի դնեն :

— Այու, բայց ո՞ր խուցը :

— Ո՞րը . աչս գու ալ շփոթած կ'մնաս, պարոն հնարագէտ :

— Ամենելին, ո՞ր լինի այն խուցը, զարձեալ իշխանու-
հւոյն սենեկին նախադաս պիտի լինի :

— Իրաւ է :

— Լաւ, այս զիշեր փոքր ի՞նչ քու երեմիական ողբերդ սկսէ :

— Գլխուս վրայ :

— Եւ զործը Լա Վալիկէրին հասկլցաւը :

— Մի հող ըներ այդ մասին, արդէն բաւական կ'լոյ ցած-
ձայնով :

— Լաւ, թողէ բարձր ձայնով լոյ :

Եւ իրարմէ զատուեցան :

ԺԼ

ԽՕՍՔ ՀԻՒՄԱԿԻԹԵԱՆ ՎՐԱՅ ԵՒ ՍԱՆԴԱԿԱՆԵՐԻ
ԾԲԿԵԼԵՒ ԵՎԱՆԱՍԻՒՆ ՎՐԱՅ ՔԱՆՈՒ ՄԸ ՄԱԿԵ
ՏԵՎԿԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Մօնղալէի տրուած խորհուրդը Լա Վալիկէրի հաղորդուեցաւ
որ հասկլցաւ թէ խոհական ընթացք մը չունէր, և որ՝ իր երկ-
չոսութեան քան պաղութեան արդիւնք եղաղ ընդգիմութենէ ետք՝
որոշեց նոյն խորհուրդն՝ ի զործ զնել :

Երկու կանանց կողմէ իշխանուհւոյն ննջարանն ողբալի և լու-
լաղին ձայներով լցնելու համար տրուած խորհուրդը Մալիկօր-
նի մէկ խիստ վարպետ հնարքն էր :

Ըստ որում չկայ բան մ'այնքան ճշմարիտ որչափ ճշմարտա-
նման բան մը, այնքան բնական որչափ վիսպականը՝ Հապար ու Զէ-
քէլէրներու նմանով այս տեսակ շինծու պատմութիւն մը շատ յա-
ջողութիւն գտաւ իշխանուհւոյն մօտ :

Եսակ Մօնղալէն հեռացաց :

Յետոյ՝ Մօնղալէն ճամբելէն երեք օր կամ լաւ ևս երեք դիւշեր անցնէլէն եակ՝ Լա Վալիերն ալ իր սենեկին հեռացոց :

Այս վերջնոյն վերնայարկ ունեցող զատիկնին մէջ սենեակ մը տուին որոնք սպայից սենեակներուն վրայ կ'իյնար :

Դատիկոն մը, այսինքն տախտակամած մը կ'զատէր սպաւոյ աղջիկները սպամներէն և ազատարդիներէն :

Մասնաւոր սանդուղ մ'որ տիկին Նավայլի Հսկողութեան ներքեւ գրուած էր՝ նոյն նաժիշտաներուն սենեակը կ'հանէր :

Տիկին Նավայլ աւելի մեծ ապահովութեան համար, քանի որ տրդէն լսած էր թէ Նորին Վեհափառութիւնն առաջուց փորձեր ըրած է, սենեակներուն պատուհաններն ու վառարաններուն բացուածքը վանդակել տուեր էր :

Հետեւապէս օրիորդ Լա Վալիերի պատիւն ամէն վանդէ զերծ կ'սեպուէր, քանի որ այժմ իր խոցը տեսակ մը վանդակի կը նմանէր քան թէ ուրիշ բանի :

Օրիորդ Լա Վալիեր՝ երբոր իր սենեակին էր, և ստէալ անդ կ'դանուէր, իշխանուհին երբէք անոր ծառայութենէ պէտք չէր զգար, վամն զի դիտէր թէ տիկին Նավայլի արթուն Հսկողութեան ներքեւ դանուէլով՝ օրիորդ Լա Վալիեր ուրիշ սփոփում չունէր այլ միայն իր պատուհանին վանդակներէն դուրս նայիլ :

Արդ՝ առառու մ'որ ըստ սովորականին գուրսը կ'նայէր՝ Մալիքօրնը տեսաւ որ իր պատուհանին զուդահեռական պատուհանի մ'առջեւ կ'դանուէր :

Մալիքօրն իր ձեռքն ատաղձակործի ուղղորդ մը բռնած էր, շէնքերը զիտակուլ կ'քննէր և թղթի վրայ թուարանական գործողութիւններ կ'ընէր : Փոքր ՚ի շատէ այն ատաղձակործաց կ'նմանէր՝ որ խրամատի մը ծայրէն՝ մարտկոցի մ'անկինը, կամ բերդի մը պատերուն բարձրութիւնը կ'չափէն :

Լա Վալիեր Մալիքօրնը ճանչեց և անոր բարեեց :

Մալիքօրն ալ իր կողմէ յարդական բարեւ մը տուաւ և որա տուհանէն աներեւոյթ եղաւ :

Լա Վալիեր զարմացաւ Մալիքօրնի այս կերպ պայտթիւնէ, որ իրեն դուարթ բնաւորութեան հետ չէր յարմարեր, բայց միտքը

բերաւ որ խեղձ տղան իր պատճառաւ պաշտօնը կորուսած լինելուն՝ իր մասին լաւ արամազբութեանց մէջ չպիտի դանուէր, քանի որ, ըստ ամենայն հաւանականութեան, ինք Լա Վալիեր առնոր ըրած կորուսաը փոխարինելու վիճակի մը մէջ երբէք չպիտի դանուէր :

Լա Վալիեր թշնամնաց ներել զիտէր, նա մանաւաճոյ գյրաղղութեան ցաւակից դանուիլ :

Լա Վալիեր Մօնղալէն խորհուրդ պիտի ինսդրէր եթէ Մօնղալէ այն տեղ դանուէր, բայց Մօնղալէ բացակայ էր :

Ճիշտ այն ճամփ էր որ Մօնղալէ իր թղթակցութեան կ'զբաղէր :

Յանկարծ Լա Վալիեր առարկայ մը տեսաւ՝ որ Մալիքօրնի տեսնուած պատուհանէն նետուելով՝ անջրակետէն անցաւ, վանդակին ձողերէն ներս մտաւ և իր սենեկին մէջ ընկառ դլորելով :

Լա Վալիեր հետաքրքրութեամբ այս առարկային մօտեցաւ և զայն գետնէն առաւ ։ Ճախարակ մ'էր այն փոքրիկ որու վրայ մետաքս կ'փաթթեն :

Միայն փոխանակ մատքսի՝ ճախարակին վրայ պղտիկ թուղթ մը պտասեր էին :

Լա Վալիեր թուղթը հանեց և կարդաց .

« Օրիորդ,

« Ճետաքրքիր եմ երկու բան իմանալու :

« Առաջին՝ կ'ուզեմ զիտնալ թէ սենեկիդ յատակը փայտէ է թէ ոչ աղիւաէ :

« Երկրորդ թէ անկողինդ պատուհանէն որչափ հեռու դրուած է :

« Ներեցէր այս ծանրութեանս, և շնորհ ըրէք ինչ միջոցաւ որ այս նամակս ընկունեցաք նոյն միջոցաւ պատասխանն ուղարկել, այսինքն ճախարակին միջոցաւ :

« Միայն փոխանակ իմ սենեակս նետելու զայն ինչպէս որ ես ձեր սենեակը նետեցի, քանի որ ձեզի համար աւելի գյոււար պիտի լինի, շնորհ ըրէք միայն վերէն վար նետելու :

« Ճաւատացէք, օրիորդ, որ ձեր խոնարհ և ակնածու ծառան եմ,

« ՄԱԼԻՔՕՐ» ։

« Բնագրեմ պատասխանը , եթէ կ'հաճիք , նոյն առմասին վրայ զբեցէք » :

— Ա՛չ , խեղջ տղան — զուցց Լա Վալիեր — կ'երեի թէ խենդայքը է :

Եւ Լա Վալիեր իր թղթակցին կողմը՝ որ սենեկին կիսաստուերին մէջ կ'երեիք , համակիք կարեկցութեան ակնարկ մը նետեց :

Մալիքօրն հասկցաւ , և զլուխը ցնցեց որպէս թէ կ'ուզէր պատասխանել .

— Ա՛չ , ես բնաւ խենդ չեմ , անհոգ եղիք :

Եւ կասկածու գէմքով մը Լա Վալիերի ժպտեցաւ :

— Ա՛չ — վրայ բերաւ նա շարժումով մը — զլուխս լսու է :

Եւ իր զլուխը ցցուց :

Յետոյ ձեռքը շարժելով շուտ զրու մարդու մը պէս ,

— Օ՞ն , զբեցէք նայիմ — ըստու մնջորէն և կերպով մը աղաւանիքով :

Լա Վալիեր , եթէ Մալիքօրն յիմար ալ լինէր , անսպառէ չշրատեց անոր խնդրածը կատարել . մատիտ մ'առաւ և զրեց .

« Փայտ » :

Յետոյ պատուհանէն մինչեւ անկողինը տասն քայլ համբեց և վերստին զրեց .

« Տասն ռուք » :

Այս ընելէն ետե՛ Մալիքօրնի կողմը նայեցաւ , և Մալիքօրն բարեւ տալով նշան ըրաւ որ վար սպափի իջնէ :

Լա Վալիեր հասկցաւ որ Ճախարակն առնլու համար էր :

Պատուհանին մօտեցաւ , և Մալիքօրնի տուած հրահանդաց համատ , Ճախարակը վար նետեց :

Ճախարակը գեռ սալաքարին վրայ կ'զլորէր , երբ Մալիքօրն ընդ սուած սրացաւ , զայն բռնեց , ժողվեց , սոտեց ինչպէս որ կապիկը կ'ստկէ ընկոյզ մը և նախ Սէնդ-Էնյանի բնակարանը վազեց :

Սէնդ-Էնյան ընտրեր կամ լաւ ևս խնդրեր էր որ իր սենեակը կարելի եղածին չափ թագաւորին բնակարանին մօտ լինի , նման այն բոյսերուն որ արեւու նշոյլները կ'փնտուեն աւելի արդասաւ ւորելու համար :

Իր բնակարանն երկու մաս ունէր , նոյն իսկ ևսի ճ-դի բնակարանին թելին մէջ :

Սէնդ-Էնյան շատ կ'սպարծենար այս մօտաւորութեան վրայ , ուրով նորին Վեհափառութեան մօտ դիւրին մոււա ունէր , և ասկէ զատ՝ անսկնկալ հանդիպումներու շնորհը կ'վայելէր :

Այս միջոցին իր երկու սենեակները զորգով զարդարել տաւու վրայ էր Սէնդ-Էնյան փառաւորապէս , թագաւորին այցելու թիւններն ընդունելու յուսով , վասն զի նորին Վեհափառութիւնը Լա Վալիերի տածած սերէն ՚ի վեր , Սէնդ-Էնյանն ընտրեր էր իրեն խորհրդակից և չէր կարող տուանց անոր անցընել ոչ զիշելու և ոչ ցերեկը :

Մալիքօրն կուսին սենեակը մօտաւորութեան հանդիպելու , վասն զի թագաւորին առջև յարդ ունէր և միոյն վարկը միւսին համար միշտ խայծ մ'է :

Սէնդ-Էնյան հարցոց այցելուին թէ արդեօք նոր լուր մը կը բերէ :

— Մեծ լուր մը — պատասխանեց Մալիքօրն :

— Համ , համ — ըստու Սէնդ-Էնյան մուերին մը պէս հետաքրքիր բնունը լուր :

— Օրիորդ Լա Վալիեր սենեակ փոխեց :

— Ի՞նչպէս — հարցոց Սէնդ-Էնյան աչերը խոշոր բանալով :

— Այս :

— Վիթէ իշխանուհւոյն մօտ չէր բնակեր :

— Ընտարակնյս : Բայց իշխանուհւոյն անոր զրացիտ թենէ ձանձրացաւ . և Ճիշտ քու աղաւազ սենեկիդ վրայ զանտուզ սենեկի մը մէջ բնակեցաց զանի :

— Ինչպէս , ասո՞յ վրայ — զուցց Սէնդ-Էնյան զարմանքով և վերի գտնիկնը ցոյց տուաւ մատովը :

— Ա՛չ — ըստու Մալիքօրն — վար :

Եւ մատովը ցոյց տուաւ դիմացի չինքը :

— Աւրեմն ինչո՞ւ կ'ըսես թէ անոր սենեակն իմինիս վրայ է :

— Վասն զի ստոյդ էմ որ քու սենեակդ բնականապէս Լա Վալիերի սենեկին տակը պիտի զտնուի :

Այս խօսքին վրայ՝ Սէնդ-Էնյան Մալիքօրնի նայեցաւ այնպէ, որ Լա Վալեհը իր նայածին պէս քառորդ մառաջ, որով ըսել կ'ուղէր թէ խենդ էր :

— Պարոն — ըսաւ անոր Մալիքօրն — կ'խնդրեմ պատասխանել մսածութեանդ :

— Ինչպէս, մասձութեանս . . . :

— Ընտարակիյս, դու չհասկըցար, կարծեմ, իմ միարու բոլորովին :

— Ա՛խոստովանիմ որ չեմ հասկընար :

— Լաւ, դիտես անշուշո որ իշխանուհին պատույ աղջկանց սենեկին տակը թաղառքին և իշխանին սարաները կ'ընակին :

— Այո, քանի որ Մանիքան, Վարդ և ուրիշներ անդ կ'ընակին :

— Ճիշտ այդպէս : Լաւ ուրեմն, պարոն, զարմացիր այս պատահման եզականութեան վրայ . Աիշի յատկացած սենեակիները ճիշտ այն սենեակներուն ներքեւ են ուր օրիորդ Մօնղալէ և օրիորդ Լա Վալեհը կ'ընակին :

— Լաւ, ապա՞ :

— Լաւ, ապա . . . այս երկու սենեակիները պարուալ են, քանի որ Պ. Աիշ վիրաւոր է և հիւանդ՝ ի ֆօնդէնպլո :

— Ա'երգնում, սիրելիդ պարոն, որ չեմ դուշակիր :

— Ա՛չ, եթէ Սէնդ-Էնյան կոչուելու բարերազզութիւն ունենայի, ես շոտ մը պիտի դուշակիր :

— Եւ ինչ պիտի ընէիր :

— Իմ բնակած սենեակներս պիտի փոխէի այն սենեակիներուն հետ որոց մէջ Պ. Աիշ չընակիր :

— Ա'կարծե՞ս — ըսաւ Սէնդ-Էնյան արհամարհանօք — ինչ պէս թաղում պատույ առաջին տեղը, թաղտորին գրայիտթիւնը, միայն աբքայազուներու, դքսերու, նախարարներու շնորհուած արտօնութիւն մը . . . : Բայց, սիրելիդ իշ Պ. Մալիքօրն, ներէ ինձ ըսելու որ խենդ ես :

— Պարոն — պատասխանեց ծանրութեամբ երիտասարդը — կը սխալիս . . . : Ես պարզապէս Մալիքօրն կ'կոչուիմ, ես խենդ չեմ :

Ապա, իր զբանեն թուղթ մը հանելով,

— Մաիկ ըրէ ըսելիքս — ըսաւ նա — յետայ, ես քիզի պիտի բացարեմ :

— Մաիկ կ'ընեմ — ըսաւ Սէնդ-Էնյան :

— Գիտես որ իշխանուհին Լա Վալեհը վրայ կ'հսկէ ինչու որ Արկոս կ'հսկէ իօի վրայ :

— Գիտեմ :

— Գիտես որ թաղաւորն ընդունայն ուղեց բանտաւոր աղջկան հետ խօսիլ, և ու դու ու ես չյաջողեցանք այս բաղձանքը կատարելու համար հնար մը զմնել :

— Բայց դու բաւական տեղեակ ես այս մասին, իմ խեղջ Մալիքօրն :

— Լաւ, ինչ կարծես, այն որու երեակայութիւնն երկու սիրացարները պիտի կարենայ միացնել որշափ մեծ բաղդի պիտի համեկի :

— Ա՛չ, թաղաւորը քիչ բանուլ չպիտի յայտնէ իր երախտաղիսութիւնը :

— Պարոն Սէնդ-Էնյան . . . :

— Ապա՞ :

— Միթէ փափաք չունիս փոքր ինչ աբքայական երախտաղիսութեան ձաշակն առնուլ :

— Անտարակիյս — պատասխանեց Սէնդ-Էնյան — իմ տիրոջ մէկ շնորհն ինձ չափազանց թանկակին է, երբ իմ պարտքս կատարած եմ :

— Ուրեմն, նայէ սա թղթին, պարոն կուն :

— Ի՞նչ է այդ թուղթը : Յատակաղիծ մը :

— Պ. Աիշ երկու սենեակներուն յատակաղիծն է, որ ըստ հաւատականութեան, ձեր երկու սենեակները պիտի դառնան :

— Ա՛չ, ո՞չ, այդ չեմ կրնար ընդունիլ :

— Ի՞նչու համար :

— Վասն զի իմ երկու սենեակներու շատ աղատորդիներ աչք ունին և ես ալ անմաց չպիտի տամ, ինչպէս են Պ. Աօքլօր, Պ. Գերբէ, Պ. Տանժօ :

— Ուրեմն պարագ բան է , չեռանամ պիտի քիզնէ , պարոն կոմ , երթամ պիտի այս պարոններէն մէկոն առաջարկեմ իմ յատակաղիծս և անկից ծաղելիք օդուաները :

— Բայց ինչո՞ւ քեզի համար չես պահէք — հարցոց Աէնդ-Էնյան անվատահութեամբ մը :

— Վասն զի թագաւորն երթէք իմ բնակարանս յայտնապէս դալու պատիւը չպիտի ընէ ինձ , մինչդեռ այս պարոններէն մէկոն սենեակն ամենայն յօժարութեամբ պիտի երթայ :

— Ի՞նչ , թագաւորն այս պարոններէն մէկոն սենեակը պիտի երթայ :

— Ի՞նչպէս կ'հարցնես թէ պիտի երթայ , անտարակոյս . ինչ պէս , գեռ . կ'հարցնես թէ արգեօք թագաւորը զինքը Լա Վալէրի մօտեցնող սենեակներէն մէկը պիտի զնայ :

— Աղոք մօտաւորութիւն . . . բայց մէջ տեղն ամբողջ գտիւ սիկոն մը կայ :

Արակարոն Ճախարակին վրայ զմնուող պղտիկ թուղթը հանեց :

— Պարոն կոմ — ըստ — զիտէ , կ'աղաշնմ , որ օրիորդ Լա Վալէրի սենեկին յատակը պարզապէս փայտէ տարան մ'է :

— Լաւ , ապա :

— Լաւ , ատաղձակործ մը պիտի առնուս հետո , զանի սենեակդ կ'փակես առանց իմացնելու թէ ուր պիտի առնիս , ատաղձակործն առասասպդդ կ'բանայ , որ ըսել է Լա Վալէրի օրիորդին սենեկին յատակը :

— Ա՛հ , Ատաւած իմ — զուցեց Աէնդ-Էնյան իրեն սքանչացած :

— Ի՞նչ հրամեցիր — ըստ . Արակարոն :

— Կ'ըսեմ թէ այդ բաւական յանդուղն խորհուրդ մ'է , պարոն :

— Թաղաւորին շատ զձուձ պիտի երեխ , հաւասար եղիր :

— Սիրահարները բնաւ վտանգի վրայ չեն խորհիր :

— Ի՞նչ վտանգէ կ'վախնաս , կոմ :

— Բայց ի՞նչպէս պիտի ծակեն առաստաղը . սոսկալի աղմուկ մը պիտի հանէ , բոլոր պաշտաը պիտի թնայ :

— Ա՛հ , կոմ , ես սասցդ եմ որ քեզի ցոյց տալիք ատաղձաւ զործու բնաւ աղմուկ չպիտի հանէ : Աղայութ վեց ոտք չորեքիւ-

սեան կտոր մը պիտի բանայ , խարսոցը խծուծով փաթթելով , և ոչ ոք , մինչեւ անդամ ամենէն մօտաւոր զբացին չպիտի հաւկընայ որ կ'աշխատի ներսը :

— Ա՛հ , սիրելիք իմ Պալիքօրն , զիս կ'հայնես , միտքս տակն ու վրայ կ'ընես :

— Վշարունակեմ — պատասխանեց Արակարոն հանդարտութեամբ — այն սենեկին մէջ որու առաստաղը ծակեցիր , կ'իմանամ , այնպէս չէ :

— Այս :

— Սանդուղ մը կ'կանգնես այնպէս որ կարող լինի Լա Վալէրի վար իջնելու կամ թագաւորը վեր ելնելու :

— Բայց այդ սանդուղը չտեսնուիր :

— Ո՛չ , վասն զի քու կողմէդ , սենեկիդ մէջ միջնորմով մը ծածկել պէտք է , այն միջնորմին վրայ օժայ մը կ'ծածկես նման այն ծածկոցին որ սենեկին միւս մասը պիտի ծածքէ . իսկ Լա Վալէրի օրիորդին սենեկին մէջ զիւրին է սանդուղն աներեսի ընել կափուլով մ'որ զետինը պիտի զրուի և անկողին տակէն պիտի բայցուի :

— Ճշմարիտ է — ըստ . Աէնդ-Էնյան , որու աշերն սկսան փայլիլ :

— Արդ , կոմ , աւելորդ է ինձ համարել քեզ որ թագաւորը ստէու այցի պիտի զայ այն սենեակն ուր այդպիսի սանդուղ մը պիտի դրուի : Կարծեմ թէ Պալիքօրն Սանիօ մամնաւ որապէս պիտի հիանայ իմ այս խորհուրդն լսելով և ես ոլ երթամ պիտի անոր բայցարելու :

— Ա՛հ , սիրելիք իմ Պալիքօրն — զուցեց Աէնդ-Էնյան — կ'մօռնաս որ ամենէն առաջնի բայցիր այդ խորհուրդն և հետեալիս իմս են նախասպատութեան իրաւոնքը :

— Ուրեմն կ'ուղե՞ս որ քեզ նախագասեմ :

— Եթէ կ'ուղե՞մ , անտարակոյս կ'ուղե՞մ :

— Էական կէտը ուս է , Պալիքօրն հանդամ պաշտօնաբաշխութեան սրատիւ քեզ , միջոց մ'է որով առաջնի անդամ պաշտօնաբաշխութեան սրատիւ քեզի պիտի զայ , և թերես զքսութիւն մը ստանաս :

— Գեթ — սրատասխաննեց Աէնդ - Էնյան խնդութենեւ կարմրեւ լով — գեթ առիթ մ'է այս թաղաւորին ցոյց տալու որ չփառ զիս իր բարեկամը կոչելով երբեմն, առիթ մը զոր քեզի պիտի պարագաւորիմ, պարօն :

— Յուսամ որ չպիտի մասնաս — հարցոց Սալիքօրն ժպակելով :

— Պարծանք պիտի սեպեմ անձիս, պարօն :

— Ես, պարօն, ես թաղաւորին բարեկամը չեմ, ես իր սպասուորն եմ :

— Այս, և, եթե կարծես թէ այն սանդղին մէջ ինձի համար կապյատ ժաղաւէն մը կայ, ես ալ կ'յուսամ որ քեզի համար ավանդականութեան թղթերու ծրար մը պիտի դանուի :

Սալիքօրն խոնարհութիւն ըրաւ :

— Ո բեմն կ'մնայ ինձ սենեկէս կրուիլ — ըստ Աէնդ - Էնյան :

— Չեմ կարծեր որ թաղաւորն այդ բանին գէմ կենաց, եթե կամիս հրաման խնդրէ :

— Անմիջապէս թաղաւորին քովը պիտի դնամ :

— Ես ալ երթամ պիտի մեր պէտք առնեցած դործաւորը դանել :

— Ե՞րբ պիտի դա :

— Այս իրկան :

— Մի մասնար կարեոր զգուշութիւնները :

— Աչքերը կապած պիտի բերեմ՝ քեզի :

— Ես ալ իմ կառքերէս մին պիտի դըկիմ՝ քեզի :

— Առանց զինագրաշմի :

— Առանց պահապեսաի սպասաւոր մը, այսպէս սրտշած է :

— Հատ լաւ, կոսն :

— Բայց ևա Վալիէր :

— Ի՞նչ կայ :

— Ի՞նչ պիտի ըսէ այս դործողութիւնը տեսնելով :

— Կ'հաւասաեմ քեզ որ շատ հետաքրքիր պիտի լինի :

— Ես ալ այդպէս կարծեմ :

— Սայդ եմ անդամ որ եթե թաղաւորն անոր սենեակն ելնելու յանդինութիւնը չտնենայ, ևա Վալիէր վար իջնելու հետաքրքրութիւնը պիտի ունենայ :

— Յուսանք որ ըստ Աէնդ - Էնյան :

— Այս, յուսանք կրկնեց Սալիքօրն :

— Ուրեմն ես ալ թաղաւորին մօտ պիտի երթամ :

— Եւ շատ աղէկ կ'ըսես :

— Այս իրկուն դործաւորը ժամը քանիին պիտի դայ :

— Ժամն ու թին :

— Ի՞նչ կարծես, որչափ ժամանակ պէտք է չորեքկուսի մը սղցիւլու համար :

— Գրեթէ երկու ժամ միայն, այնու հետեւ իրեն ժամանակ պէտք է որպէս զի ամէն բան յարդարէ և կանոնի դնէ : Ասոք համար ալ զիշեր մը պէտք է և հետեւալ օրուան մէկ մասը ։ Ուրեմն սանցղին շնութիւնն ալ մէջ առնլով երկու օր պէտք է հաշուել :

— Երկու օր, շատ երկայն է :

— Բայց, երբոր արքայութեան տանող դուռ մը բանալու գործ մը կ'սկսինք, սկսէտք չէ որ դէթ այս դուռը վայելու չ լինի :

— Իրաւոնք ունիս, ուրեմն վերջէն տեսնուինք, սիրելի Պալիքօրն : Ես վաղը չէ միւս օր երեկոյին միւս սենեակը փոխագրուած պիտի լինիմ :

ԺԹ

ԶԱՀԵՐՈՎ ՃԵՄԵԼԻՔ

Աէնդ - Էնյան՝ որ սաստիկ ուրախ էր այս լսած բաներէն, և յետին ծայր զինյլած էր զոշակելիք բաներէն, ճամբայ ելաւ Պալիքին երկու սենեակներուն կողմն երթալու :

Ինք որ քառորդ մը ժամու առաջ մէկ միլիօնի փոխարէն անդամ իր երկու սենեակներն որիշի տալու տրամադիր չէր երեսը այժմ պատրաստ էր, եթէ իրմէ պահանջուէր, մէկ միլիօն վճարելով ծախու առնուլ այն երկու երանելի սենեակներն որոց վրայ աչքը տնկած էր :

Բայց Մալիքօրնի կողմէ այնքան պահանջմունք չաեսաւ : Պ. Կիշ չղիտէր տակաւին թէ ուր պիտի բնակէր, և ասկէ զատ, տակաւին կ'տառապէր հիւանդ՝ և իր սենեկին վրայ խորհելու ատեն չուներ :

Ուստի Սէնդ-Էնյան Կիշին երկու սենեակներն աւաւ : Միւս կողմէ Պ. Տանժօ Սէնդ-Էնյանի երկու սենեակները ստացաւ, կոմսին մատակարարին վեց հազար ֆրանքի պարզե մը խոստանալով և կարծես թէ սքանչելի զործ մը տեսաւ :

Տանժօի երկու սենեակներն ալ Կիշին համար սահմանուեցան որ ապագային մէջ բնակի :

Այս իրաւ է որ, սոյն ընդհանուր տեղափոխութեան ատեն, չենք կրնար ստուգապէս հաստատել թէ Պ. Կիշ այն սենեակները պիտի բնակի :

Իսկ Պ. Տանժօ այնքան յափշտակուած էր ուրախութեամբ որ մինչեւ անդամ չենթադրեց թէ Սէնդ-Էնյան այս փոխագրութեան մէջ գերագոյն շահ մ'ունէր :

Այս որոշմանէ ժամ մ'ետք՝ Սէնդ-Էնյան երկու սենեակներուն տիրայաւ : Սէնդ-Էնյան նոյն սենեակները մննելէն տամա վայր կեան ետք՝ Մալիքօրն Սէնդ-Էնյանի սենեակը կ'մանէր օթոցա գործներ իր հետն առած :

Նոյն պահուն թաղաւորը Սէնդ-Էնյանը կ'կոչէր, Սէնդ-Էնյանի սենեակը կ'վազէին որ կանչեն, և Տանժօն կ'զանէին, Տանժօ ալ եկողը Պ. Կիշի սենեակը կ'զրկէր, և վերջապէս Սէնդ-Էնյանը կ'զանէին :

Բայց արդէն յապաղեր էր, այնպէս որ թաղաւորն արդէն քանի մ'անհամբերութեան նշաններ ցոյց տուեր էր երբոր Սէնդ-Էնյան ներս մտաւ վեհապետին սենեակը բոլորովին շնչասպաւ :

— Դու, դու ևս երեսի վրայ կ'թողուս զիս — ըսաւ անոր Լուի ԺՌ այն ողբալի ձայնով որով Կեսար հազար ութ հարիւր տարի առաջ պիտի ըսէր ևս զաօպաւ :

— Վեհափառ — ըսաւ. Սէնդ-Էնյան — ևս թաղաւորդ երեսի վրայ չեմ թուլուր, ընդ հակառակն, միայն սենեակս փոխելու և կը ուելու վրայ եմ :

— Կնշու կ'կրուիս . կարծէի թէ սենեակդ երեք օրէ 'ի վեր փոխած ես :

— Այս, Վեհափառ, բայց զանուած տեղս հանդիսաւ չեմ, և ալյարանին դիմացի կողմը պիտի անցնիմ :

— Ուրեմն իրաւոնք շունէ ի՞ ըսելու որ դու ևս զիս երեսի վրայ կ'թողուս — պաւաց թագաւորը : — Բայց, ո՛չ, ալ չափը կ'անցընեն ամենքը : Այսպէս, կին մ'ունէի որով սիրտս կ'զբաղէր, բոլոր ընտանիքս ինձի դէմ կ'դաւակցի որ զանի ձեռքէս կորզէ : Բարեկամ մ'ունէի որու իմ բոլոր վիշտս կ'յայանէի, այս բարեկամն իմ գանդամներէս կ'տաղականայ և զիս առանձին կ'թողու առանց արձակուրդ անդամ ինչը բելու :

Սէնդ-Էնյան սկսաւ ծիծառը :

Թաղաւորը համբաւ որ այս ակնածութեան պակասութեան մէջ զաղոնիք մը պիտի լինի :

— Ի՞նչ կայ — զուցի թաղաւորը յուսալիյ :

— Աս կայ, Վեհափառ, որ այդ բարեկամն զոր թաղաւորը կ'զբագարէ, պիտի փորձ փորձէ ընծայելու կորուսած երջանկութիւնը :

— Միթէ Աս Վալիերը պիտի ցուցնես ինձ — ըսաւ թաղաւորը :

— Վեհափառ, տակաւին վատահ չեմ և խօսք չեմ տար, բայց . . . :

— Բայց :

— Բայց կ'յուսամ :

— Ո՛չ, ի՞նչպէս, ի՞նչպէս : Ըսէ այդ ինձ, Սէնդ-Էնյան ։ Կ'ուզէմ խորհուրդն իմանալ, իմ բոլոր զօրութեամբս քեզի պիտի օգնիմ :

— Վեհափառ — պատասխանեց Սէնդ-Էնյան — ևս ինքս տակաւին լսու չպիտեմ թէ ի՞նչ միջոց պիտի բռնեմ՝ այս նախատակին համար համար, բայց իրաւոնք ունիմ հաւտալու որ վաղուանէ . . .

— Վաղն ըսիր :

— Այս, Վեհափառ :

— Ո՛չ, ի՞նչ երջանկութիւն : Բայց ինչու համար սենեակիւ կը փոխես :

— Չեղ լաւ ևս ծառայելու համար :
 — Եթէ ի՞նչ բանի մէջ լաւ ևս կրնաս ծառայել, այսպէս սեռակի փոխի լով :
 — Գիտեք արդեօք թէ ուր են այն երկու սենեակները զորս պիշ կուսին սահմանուած էին :
 — Այս :
 — Ուրեմն դիտեք թէ ուր կ'երթամ :
 — Ընտարակոյս, բայց այդ դիտանալով դարձեալ բան մը հասկըսած չեմ լինիր :
 — Ինչո՞ւ, միթէ չեք հասկըսար, Վեհափառ, որ այդ բնակարանին վերեն երկու սենեակներ կան :
 — Որո՞նք են :
 — Մին՝ օրիորդ Մօնղալէ լինն է, և միւսը . . . :
 — Միւսը, Լա Վալենիք օրիորդ լինն է, Սէնդ-Էնյան :
 — Օ՞ն, երթանք ուրեմն, Վեհափառ :
 — Ո՛չ, Սէնդ-Էնյան, իրաւ է, այս, իրաւ է : Սէնդ-Էնյան, այդ ընափր խորհուրդ մ'է, բարեկամի խորհուրդ մը, բանաստեղծի խորհուրդ մը, երբ տիեզերքն իսկ զիս անկից կ'հեռացընէ, անոր մօտենալովս, գու աւելի մնծ արժեք ունիս իմ աշքիս քան թէ Պիլադէս Օրեւլի համար, քան Պատրոսկ Աքիւլ լսի համար :

— Վեհափառ — ըստ Սէնդ-Էնյան ժպիտով մը — չեմ կարծեր որ եթէ Չեր Վեհափառութիւնն իմ խորհուրդներս իրենց ամրապնդութեան մէջ զիտցած լինի, այդպիսի փառաւոր անուններ կ'առյ լինձ : Ո՛չ, Վեհափառ, ո թիշ աւելի զձուձ անուններ զիտցեր որ արքունեաց մաքրակիրօններն ինձի պիտի տան անշտ շտ եղբ իմանան Չեր Վեհափառութեան բնելիքս :

— Սէնդ-Էնյան, անհամերեատ թիւնէ սիրոս կ'մաշի, Սէնդ-Էնյան, կ'հալիմ, Սէնդ-Էնյան, մինչեւ վաղը չողիսի սպասեմ . . . վաղը, բայց վաղը, յա իտենականութիւն մ'է :

— Եւ սակայն, Վեհափառ, եթէ կ'հաճիք հիմակ դուրս պիտի ելնէք և այդ անհամերեատ թիւնդ սփոփել լաւ մը ժուռ զալով :
 — Քեզի հետ, շատ լաւ, դուրս կ'ենեմ, քու խորհրդոց վըրայ պիտի խօսինք, Լա Վալենիք վրայ պիտի խօսինք :

— Ո՛չ, բնաւ, Վեհափառ :
 — Ուրեմն որու հետ դուրս պիտի ելնեմ :
 — Կանանց հետ :
 — Կանանց հետ : Ա՛չ, Ճշմարիաը, այդ պէտք չէ :
 — Վեհափառ, այդ պէտք է :
 — Ո՛չ, ու, հազար անդամ ոչ : Ո՛չ, այսու հետեւ սոսկալիք տանջանաց շոկտի ենթարկիմ : անորմէ երկու քայլ հետու լինիլ, զանի տեսնել, անոր շրջազգեսալ շօշափել անցնելու ատեն և առ զանի ամենել, անոր շրջազգեսալ շօշափել անցնելու ատեն և առ երջանկութիւն կ'համարիս զայն, բաց տանջանք մ'է որ մարտ դուս աշքը կ'այրէ, որ ձեռներս կ'առչորէ, որ սիրաս կ'փշրէ :
 — զանի ամեն օտարականաց առ ջեւ տեսնել, և չկարենալ ըսել որ զինքը կ'սիրեմ, երբ իմ բոլոր էտ թիւնս այս սէրն երեան Շամէ և զիս տմնուն առ ջեւ կ'մատնէ : Ո՛չ, ես առանձին երկում ըստի որ այդպիսի բան մը չպիտի լնեմ, և ահա այդ երդաւմը պիտի պահեմ :
 — Սակայն, Վեհափառ, սա կ'ետք լաւ իմացնք :
 — Ո՛չ, բան մը մարիկ լնել չեմ ուզեր :
 — Ուրեմն, ահա կ'շարունակիմ : Սափառղական է, Վեհափառ, քաջ կ'իմանաք, սափառղական է, մեծապէս սափառղական, որ իշխանութիւն և իր պատոյ աղջիկները բնակարանէդ երկու ժամու չափ հեռանան :
 — Խելքս շամնիք ըստիդ, Պ. Սէնդ-Էնյան :
 — Ծանոթ է ինձ թարառորդի մը հրամայել, բայց այս պարագայիս մէջ, կ'հրամայեմ, Վեհափառ . ինձ որսորդութիւն մը երջադպյութիւն մը պէտք է :
 — Բայց այդ որսորդութիւնը, այն շրջադպյութիւնն անխորհ հարդ բան մը, այլանդամի թիւն մը պիտի լինէր : Այսպէս ցոյց տալով որ անհամերեատ եմ, բոլոր արքունեաց պիտի յատենմ՝ որ պիրտ մ'ունիմ որու աէրը չեմ : Միթէ արդէն չեն ըսեր որ երկիրս աշխարհակալութիւնը կ'երազեմ, բայց ամենէն առաջ պէտք է որ ինքընքիս աիրեմ :
 — Այդ ըստները, Վեհափառ, լիրք և խոռվարկու մարդիկ

են . բայց ո՞ք որ լինին , եթէ Զեր Վեհափառութիւնը կ'փափաքի անոնց խօսքին հետևիլ , ինձ ուրիշ ըսելիք չմնար : Այն ատեն վաղուան օրն երկու անորոշ ժամանակի մէջ կ'երկարածզի :

— Սէնդ-Էնյան , այս իրկոն պիտի դուրս ելնեմ : Այս իրկուն երթամ պիտի՝ ՚ի Սէն-Ճէրմէն օթևանիլ ջահերով , վաղը անդ պիտի մնամ , և ժամն երեքին մօտ Բարիղ պիտի վերադառնամ : Այդ չէ ուղածդ :

— Բոլորովին այդ է :

— Ուրեմն այս իրկուն ժամն ութին պիտի մեխիմ :

— Զեր Վեհափառութիւնը քաջ զուշակեց վայրկեանը :

— Եւ չես ուղեր ինձ բան մ'ըսել :

— Այսինքն բան մը չեմ կարող ըսել : Ճարտարութիւնն այս աշխարհիս վրայ բան մը կ'արմէ , Վեհափառ . բայց դիսլուածն այնպէս մեծ գեր մը կ'սաղայ անդ , որ սովոր եմ անոր ամենէն փոքր մասը թողուլ միշտ , սույզ լինելով որ այնպէս պիտի կարդադրի որ մեծագոյն տեղը պիտի բռնէ :

— Ուրեմն , ինչպիս բոլորովին քեզի կ'յանձնեմ :

— Եւ իրաւունք ունիք :

Այսպէս հանգստութիւն գտնելով թագաւորը շխատ իշխանուհոյն մօտ զնաց . և մտադրեալ շրջադայութիւնն անոր իմացուց :

Իշխանուհին կարծեց թէ այս յանկարծական խորհրդին մէջ թագաւորը զաւ մ'ունի որպէս զի Հա Վալիիրի հետ խօսակցի , կամ Ճամբռն վրայ , ՚ի շնորհս մօտթեան , կամ ուրիշ կերպով , բայց զդուշացաւ անոր բան մը յայնելու . և այս հրատերն ընդունեց :

Բարձր Ճայնով հբաման տուաւ որ իր պատոյ օրիորդներն իրեն ուղեկից լինին , միտքը դնելով ընելու այն ամեն բաներն որ կարող է ին իրկոնը թագաւորին սէրը զսպել :

Յետոյ , երբ իշխանուհին մինակ մնաց և խեղճ սիրահարն որ այս հբամանը տուեր էր կարծեց թէ Հա Վալիիր օրիորդը նոյն շրջադայութեան պիտի զտնուի , թերես այն միջոցին որ կ'սնանէր հալածեալ սիրահարաց տխուր երջանկութեան զաղափարով , որ է , աեւքով միայն իրացնել արգիլեալ ստացման ուրախութիւն-

ներլ , նոյն միջոցին իսկ , իշխանուհին , իր նամիշտներուն մէջ տեղ կեցած կ'ըսէր .

— Այս իրկուն բաւական են ինձ երկու օրիորդ , այս է օրիորդ Գօնէյ-Ճարանդ և օրիորդ Մօնդալէ :

Հա Վալիիր այս հարուածը զուշակեր էր , ուստի անոր կ'սպասէր . բայց հալածանքը զինքն արիացուցեր էր : Այս հարուածը սիրտը ծակեր էր , բայց իր երեսին վրայ անոր նշանը տեսնելու ուրախութիւնը չտուաւ իշխանուհոյն :

Ընդ հակառակին՝ քաղցր ժամանով մը ժպտեցաւ որ իրեն դէմ քին հրեշտակային երեսյթ մը կ'տար :

— Ուրեմն , իշխանուհիս , այս իրկուն ազատ եմ — ըսաւ անոր :

— Այս , անտարակայս :

— Ուրեմն ասկից օդուտ պիտի քաղեմ սա օթոցն առաջ տանելու , ինչպէս որ հաճեցաք տեսնելու և կանխաւ ձեզի ընծայեւ լու պատին ունեցայ :

Եւ յարգական խոնարհութիւն մ'ընելով՝ իր բնակարանը քաշուեցաւ :

‘Սոյնն ըրին օրիորդ Մօնդալէ ու Գօնէյ-Ճարանդ :

Ճը ջադայութեան լուրն իրենց միջոցաւ իշխանուհոյն սենեկէն ելաւ . և բոլոր պալատին մէջ տարածուեցաւ : Տամն վայրկեան ետք՝ Մալիկօրն իշխանուհոյն դիսաւորութիւնը դիտէր և Մօնդալէի զրան տակէն սա իմաստով առմասակ մը ներս կ'սպրդէր .

« Պէտք է որ Լ . Վ . զիշերն իշխանուհոյն հետ անցընէ » :

Մօնդալէ արգէն հաստատուած պայմանաց համեմատ՝ սկսաւ նախ թուղթն այրել , յետոյ մտածել :

Մօնդալէ հնարագէտ օրիորդ մ'էր , և շուտ մ'իր յատակադիմը շինեց :

Այն ժաման որ իշխանուհոյն սենեակը պիտի երթար , այսինքն ժամը հինդին , վավելով զաւ թէն անցաւ , և սպաներու խմբէ մը տասն քայլ հեռու կենալով աղաղակ մ'արձակեց , ծնկի մը վրայ շնորհալի կերպով ընկաւ , նորէն ոտք ելաւ , և իր Ճամբռն շարունակեց բայց կաղալով :

Սակայն գարձեալ՝ իր պարտուց հաւատարիմ՝ ուղեց վեր երնել իշխանուհոյն սենեակը գնալ :

— Ի՞նչ կայ, և ինչո՞ւ համար կ'կաղաս — հարցուց իշխանուշին — կարձեի թէ Լա Վալիերն ես :

Մօնդալէ սրամեց թէ ինչպէս, շուտ զալու համար վաղելուն սորբը դառնալով ընկեր էր :

Իշխանուշին ցաւ ցցոց և անմիջապէս վիրարցէ մը կանչել աւեց :

Բայց նա հաւաստելով որ սյդ դիսուածը ծանր բան մը չունի :

— Իշխանուշիս — ըստ նա — կ'ցաւ իմ միայն որ իմ ծառայութիւնս չպիտի կրնամ կատարել, և պիտի աղաշեմ ձեզ որ օքիորդ Լա Վալիեր իմ տեղս անցնի :

Իշխանուշին ունքը սրոսաեց :

— Բայց այս առաջարկութիւնն ընելուս զդջացի — շարունակեց Մօնդալէ :

— Եւ ինչո՞ւ համար զդջացիր — հարցուց իշխանուշին :

— Վասն զի խեղճ Լա Վալիեր այնքան զուարթ կ'երեէր իբր կուն մ'ե զիշեր մ'իր աղատութիւնը գանելուն՝ որ բերանս չերթար ըսելու որ զանի իմ տեղս առնուք :

— Ի՞նչ կ'ըսես, այդչափ զուարթ է — հարցուց իշխանուշին այս խօսքէն զարմանալով :

— Այսինքն ուրախութենէ ինդդ դարձեր է, ինք որ միշտ մելամաղձուտ է : Իշխանուշիս, դուք ալ դիմէք արդէն որ Լա Վալիեր կ'ատէ աշխարհս և իր բնութեան մէջ փոքր ինչ վայրենութիւն ունի :

— Հօ, հօ — մոտածեց իշխանուշին — այդ մեծ ինդութիւնն ինձի բնական շերեիր :

— Արդէն իր պատրաստութիւններն ըրաւ — շարունակեց Մօնդալէ — որ իր սենեակլ նստի ճաշն ընէ իր մէկ սիրական զրբին հետ գլուխ զլսի տալով : Ասկէ զատ՝ դուք ուրիշ եօթը հատ պատույ օքիորդներ ունիք որ ձեզի ընկերանալու զոհ պիտի լինին . ուստի այս առաջարկութիւնս Լա Վալիերի անշամ չեմ ըրած :

Իշխանուշին ըոեց :

— Արդեօք լաւ խօսեցայ — շարունակեց Մօնդալէ սրտի ան-

հանգստութեամբ մը, երբ տեսաւ որ այս հնարքը յաջող չ'նաց թէ և իր յոյսը բոլորսին անոր վրայ գրեր էր, և որիշ փնտւելն առելորդ կարձեր էր : — Արդեօք իշխանուշին հաւասար թիւն սիրտի տայ — շարունակեց նա :

Իշխանուշին կ'մասձէր որ կարելի է թա այսոք զիշերայն Սէն - ծէք բմէնէն ելներ, և որովհետեւ բարիւն մինչեւ Սէն-ծէքմն շորս ու կէս մղան կ'հաջուէին, կրնար մէկ ժամու մէջ բարիդ հանիլ :

— Ըսէ ինձ — յարեց իշխանուշին — զոնէ Լա Վալիեր առաջարկեց քեզ միասին ժամանակ անցնելու, տեսնելով որ ուրդ ցա ցա ցիր ես :

— Ո՛չ, տակար ին չպիտեր այս ցասս, բայց եթէ դիմանար իսկ դարձեալ իր խորհուրդները չխանդաբելու համար բան մը չպիտի իննիրէ իրմէ : Կարձեմ թէ մինակո կ կ'ուզէ իրացնել այս իբրկուն հանդացաւ թաւառը թիւն զուարթութեան ժամանակը, երբ Սէն-Մարտի կ'ըսէր . « Զանձրանանք, օ՛չ, Սէն-Մարտ, լաւ մը ձանձրանանք » :

Իշխանուշին համոզուած էր որ սիրային զաղանիք մը պիտի լինէր առանձին մնալու այս փափաքին մէջ, և այս զաղանիքն ուրիշ բան չպիտի լինէր եթէ ոչ թաղաւորին զիշերային վերադարձը յարքունիս : Տարակոյս չկար ալ, Լա Վալիեր այդ վերադարձին վրայ կանխաւ. լուր առած պիտի լինէր և ասոր համար տրախ զուարթ էր Բաշէ - Բուայալ մնալով :

Այս կանոն պատրաստուած յասակարիծ մ'էր :

— Ես չպիտի խարտիմ — ըստ իշխանուշին :

Ես վերջնական որոշում մ'ըրաւ :

— Օքիորդ Աօնդալէ — ըստ նա — բարեհաճ՝ օքիորդ Լա Վալիեր բարեկամուհոյդ իմաց տալու որ սաստիկ կ'ցաւ իմ իր սուանձնութեան խորհուրդները վրաւովելուս . բայց իր սենեակն սուանձնին ձանձրանալու տեղ, ինչպէս որ իր փափաքն էր, թողգայ կ'Սէն-ծէք բմէն մեղի հետ ձանձրանայ :

— Ո՛չ, իմեղճ Լա Վալիեր — ըստ Աօնդալէ ողբարին դէմքով մը, այլ սրտի խնդրամիք : — Ո՛չ, իշխանուշիս, արէնօք հնարը չկայ որ ուրիշ . . . :

— Բաւական է — ըստու իշխանուհին — այսպէս կ'ուղեմ։ Լազում և Պան օրիորդին բնկերակցութիւնն ամէն ընկերութենէ հասագաս կ'սեպեմ։ Գնաք զանի ինձ զբկէ և ոտքդ դարմանէ։

Մօնդալէ վերսախն չպնդեց։ Սենեակը դարձաւ իր պատասխանը դրեց Մալիքօրնի, և օթոյին տակէն սահեցոց։ Պէտք ճնան, կ'ըսէր այս պատասխանը։ Սպարդացի իին մ'ասկից աւելի լական ոճով չպիտի դրէր անշու շու։

Այս կերպով — կ'մտածէր իշխանուհին ճամբուն վրայ — անոր վրայ պիտի հսկեմ, դիշերն իմ քովս պիտի պառկի, և նորին Վեհափառութիւնը չափազանց ճարպիկ պիտի լինի եթէ օրիորդ Լա Վալիերի հետ խօսք մ'առնէ տայ։

Լա Վալիեր մեկնելու հրամանը նոյն անտարբեր անուշութեամբ ընդունեցաւ ինչպէս որ մնալու հրամանն ընդուներ էր։

Միայն 'ի ներքուստ մեծ եղաւ իր խնդութիւնը, և իշխանուհին այս դիտառորութեան փոփոխութիւնը նախախնամութեան մէկ միջնարութիւնը կ'համարէր։

Իշխանուհին չափ խորագէտ չլինելուն՝ ամէն ինչ դիպուածին կ'վերացրէր։

Մինչդեռ ամէն մարդ՝ երեսէ ընկած, հիամդ և ոտքի ցաւ ունեցող անձինքը դուրս ձգելով իշխանուհին կ'հետեւ ին դէպ 'ի Սէն-Ճէրմէն, Մալիքօրն իր զործառորը Սէնդ-Էնյանի մէկ կառքին մէջ կ'մոցնէր և Լա Վալիերի սենեկին համապատասխանող սենեակը կ'տանէր։

Այս մարդը գործի սկսաւ, իրեն խոստացուած փառաւոր վարձատրութենէ քաջալերուելով։

Որովհետեւ թաղաւորին ճարտարապետներուն ունեցած ամէն պատուական գործիներն առեր էին, և մանաւանդ անպարտելի ատամներով սղոց մ'որ երկաթի պէս կարծը թեղօշի տախտակներն անդամ ջրին մէջ կ'կտրէին, զործն արագութեամբ յառաջացաւ, և առաստաղին քառակուսի մէկ մասը, որ երկու դերանի մէջ ընտրուած էր, Սէնդ-Էնյանի և Մալիքօրնի, զործառորին և մասը սպասաւորի մը թերերուն մէջ ընկաւ, սպասաւոր մ'որ աշխարհ եկած էր ամէն բան տեսնելու, ամէն բան լսելու բայց բերնէն բառ մը չհանելու համար։

Միայն Մալիքօրնի ցոյց առուած նոր յատակագծի մը համեմատ ծակն անկեան մէջ բացին։

Աւասիկ պատճառը։

Որովհետեւ Լա Վալիերի սենեկին մէջ զարդարան մը չկար, Լա Վալիեր ինդրեր և սասայեր էր նոյն առտու իսկ՝ մեծ սրահակ մ'որ միջնորդի տեղ բռնելու սահմանուած էր։

Այս սրահակը տուած էին։

Բաւական էր այն բացուածքը զոցելու, որ միանգամայն հիւնութեան ամէն հնաբով պիտի ծածկուել էր։

Երբ ծակը բացին, ատաղձաղործը դերաններէն սահելով Լա Վալիերի սենեակը դառն ինքնինքը։

Երբ անդ հասաւ տախտակը ողարզապէս սղոցեց, և տապանին թերթերուլ իսկ կափուլ մը յօրինեց որ բացուածքին այնքան յարմար էր որ ամնէն վարծ աչքն անդամ ուրիշ բան չպիտի կարենար տեսնել եթէ ոչ դետնին ճեղքուածքին տեղերը։

Մալիքօրն ամէն ինչ զուշակեր էր։ Երախակալ մը և երկու հատ ծինի՛ զըրս կանխաւ զնած էր, այս փայտէ թեխն վրայ դրուեցան։

Ոլորուն սանդուղ մը, որմէ միջնայարկերու մէջ սկսեր էին զործածել, հնարագէտ Մալիքօրնի ձեռօք պատրաստ զնուեցաւ երկու հաղար ֆրանկի։

Պէտք եղածէն աւելի բարձր էր։ բայց ատաղձաղործն անոր ատամները պակսեցաց, և Ճիշտ չափը զտաւ։

Այս սանդուղը՝ որ այնպիսի նշանաւոր բեռ մը տանելու սահմանուած էր միայն երկու ակիշով պատակն կախեցին։

Խոկ վարի դին կամսին սենեկին յատակին վրայ պտուտակով մը միտեցաւ։ թագաւորն և իր խորհուրդը կարող էին ելնել և իջնուլ այս սանդղէն առանց երկիւղի։

Ամէն մուրճ խծուծէ բարձկի մը վրայ կ'զարնէր, ամէն խարսացի կոթը բուրդով պատած էր, սայըը իւղով օծուած և այսպէս անձայն կ'զործէր։

Ասկէ զատ՝ այս աղմկալի աշխատութիւնը գիշերն ու առաւօտ գլուխ տարեր էին, այսինքն այն միջնոցին որ Լա Վալիեր և իշխանուհին դուրս կ'զտնուէին։

Երբ ժամն երկոքին մօտ սղալստականք Բալէ - Բուայալ մտան
և Լա Վալիէր իր սենեակը մտաւ, ամէն ինչ իր սեղն էր, և
ոչ սղոցածքի կառը մը և տաշիղ մը չէին երեք:

Յիպայն Սէնդ - Էնյան, որ այս աշխատութեան մասնակից ուղա-
նուեր էր, իր մատերը վիրասորեր, շապիկը պատուեր և թագա-
ւորին համար շատ քրամինք թափիր էր:

Մանաւանդ իր ափերն ուռեցքով լիցուն էին:

Այս ուռեցքը սասցեր էր Սալիքօբնի և լնարանը բռնելուն:

Վակից զատ՝ սանցդին հինգ կտորները մի առ մի բերեր էր, ու-
բոց իւրաքանչիւնն երկու աստիճան անը:

Վերջապէս կլնանք ըսել որ եթէ թաղաւորն այսշտփ եռանշը
առեմնէր իր աշխատութեան ժամանակ, անտարակոյս յաւիտեան ե-
թախտադիտութիւն պիտի ուխտէր իրեն համար:

Ինչպէս որ Սալիքօբն զուշակեր էր՝ ատաղձագործը քսան չորս
ժամու մէջ իր գործն աւարտեր էր:

Քսան չորս սկիի ընդունեցաւ և ուրախութեամբ լի ճամբայ
ելաւ, այս դումարը սովորաբար վից ամիսուան մէջ կ'շահէր:

Ոչ ոք ամենաթեթև կասկած առեր էր օրիորդ Լա Վալիէրի
սենեկին ներքեւ անցած դարձածին վրայ:

Բայց երկրորդ օրուան իրկունը, այն միջացին որ Լա Վալիէր
իշխանուհի ոյն ընկերութենէ հեռացեր և իր սենեակը դարձեր էր,
պղափկ դգրիւն մը հնչեց սենեկին մէջ:

Զարմանքով չորս զին նայեցաւ որ հասկընայ թէ աղմաւկն ուս-
կից կ'զար: Եղմուկը վերսաբն սկսաւ:

— Ո՞վ է այն — հարցուց նա ահ ու դողով:

— Ես եմ — պատասխանեց թագաւորին ծանօթ ձայնը:

— Դո՞ք . . . դո՞ք — զուեց նորատի աղջիկը՝ որ պահ մը
կարծեց թէ երաղ կ'տեսնէ: — Բայց ո՞ք լ.ք, դո՞ք . . . դո՞ք,
Վեհափառ:

— Եստ — պատասխանեց թագաւորը սրահակին մէկ թել բա-
նալով, և սենեկին խորն երեւելով իրբե ստուեր մը:

Լա Վալիէր աղաղակ մը ձւեց և թեամսուի մը վրայ ընկաւ
սարսուելով:

Թագաւորն անոր մօտեցաւ յարդանօք:

Ի

ԵՐԵՒԱՆՑՄԸ

Լա Վալիէր շուտ մը սմափեցաւ. թագաւորն այնքան յար-
դանք ցցուց որ իր ներկայութեամբն աւելի վատահութիւն կ'առ-
գէր քան թէ իր երկումը ջնջեր էր:

Բայց որովհետեւ տեսաւ որ Լա Վալիէրի աւելի հոգ տուողն
իր սենեակը մանելու կերպն էր, իսկոյն անոր բացատրեց պա-
հակին միջոցաւ զոյտած սանդղին զիբըը, մանաւանդ ջրելով այն
կարծիքը թէ ինք զերբնական երեցիթ մ'է:

— Ո՞չ, Վեհափառ — ըստ անոր Լա Վալիէր իր դեղձան
զլու իր ցնցելով սիրուն ժպիտով մը — ներկայ լինիք թէ բա-
ցակայ՝ զարձեալ իմ մաքիս կ'երե իք որ և է ժամանակ:

— Ասով ինչ ըսել կ'ավես, Լու իլ:

— Ըսելիքս արլէն դիտեք, Վեհափառ. այսինքն չկայ վայր-
կեան մ'որ ձեր վրայ չմտածէ այն խեղճ աղջիկն որու զաղանիքն
իմացաք՝ ի ֆօնդենողլո, և զոր եկաք խաշին ուաքն ընկած ատենը
զանի առնել բերելու:

— Լուիլ, զիս ուրախութեամբ և երջանկութեամբ կ'լնուա:

Լա Վալիէր տիրութեամբ մպտեցաւ և շարոնակից:

— Բայց, Վեհափառ, միթէ լաւ մտածեցիք որ Զեր հնարա-
գիտութիւնը բնառ. օգուտ մը չպիտի բերէ մեզ:

— Եւ ինչն համար, ըսէ, քեզի կ'սովասիմ:

— Վամն զի այս իմ բնակած սենեակս, Վեհափառ, խուզա-
կութիւններէ զերծ չէ, ընդ հակառակն, իշխանուհին կրնայ զի-
պուածով զայ, օրուան մէջ ստէպ իմ ընկերու հիներս կ'ան-
եթէ ներսէն զուռս զոյտիմ ինքդինքս պիտի մատնեմ՝ յայտնապէտ
որպէս թէ անոր վրայ զրած լինէի. « Ներս մի՛ մանէք, թագա-
ւորին հոս է »: Եւ ահա, Վեհափառ, այս պահուս իսկ, արդեւք

մը չկայ որ դուս բացուի , և Զեր ՎԵՇԱՓԱԿՈՒԹԻՒՆՆ այսպէս իմ՝ քովս կեցած բոնուի :

— Ահա , այն ասեն — ըստ թագաւորը ծիծաղելով — իրօք ուրուականի տեղ պիտի անցնիմ , վասն զի ոչ ոք կրնայ ըսել թէ ուսկից եկայ այս աեղ : Արդ՝ ուրուականները միայն պատերան և առասաւաղներուն մէջէն կ'անցնին :

— Ո՛չ , ՎԵՇԱՓԱԿՈՒ , այդ ի՞նչ արկած է , լաւ մնածեցէք թէ ի՞նչ մեծ դայթակղութիւն պիտի լինի : Պատույ աղջկանց վրայ շլսուած բաներ պիտի ըսեն , այս խեղճ արարածները զոր անդղամշները բնաւ շեն խնայեր :

— Եւ այս ամէն խօսքէն ի՞նչ հետեւութիւն պիտի հանես , սիրելիդ իմ Լուիդ . . . նայինք , ըսէ , միտք բացատրէ :

— Պէտք է , աւաղ , ներեցէք ինձ , ըսելիքս շատ ծանր է . . . : Լուի ժաղացաւ :

— Պէտք է որ Զեր ՎԵՇԱՓԱԿՈՒԹԻՒՆԸ սանդուղը վերցնէ , նոյնպէս մեքենաներն և զործիքները . վասն զի եթէ այս աեղ բոնու իմ աւելի մեծ շարիք պիտի պատահի քան թէ նոյն տեղը տեսնուելու երջանկութիւնը :

— Լաւ ուրեմն , սիրելի Լուիդ — պատասխանեց թագաւորը սիրադին — փոխանակ այս սանդուղը վերցնելու , որու վրայէն վեր կ'ելնեմ , աւելի պարզ միջոց մը կայ որու բնաւ մսածած շպիտի լինիս :

— Միջոց . . . գարձեալ . . . :

— Այս , գարձեալ : Ո՛չ , իմ սիրածիս պէս դու ալ զիս չես սիրեր , Լուիդ , քանի որ ես քեզնէ աւելի հնարագէտ եմ :

Լա Վալիէր թագաւորին նայեցաւ : Լուի ձեռքն անոր կարառեց , և Լա Վալիէր զայն մեղմիկ սեղմեց :

— Արսես թէ — շարունակեց թագաւորը — պիտի բոնու իմ՝ այս տեղ ուր ամէն ոք ըստ հաճոյս կ'զայ :

— Ահա , ՎԵՇԱՓԱԿՈՒ , Ճիշտ այս միջոցիս որ կ'խօսիք , ես կը դողլողամի:

— Շատ աղէկ . բայց ոչ ոք քեզ պիտի տեսնէր եթէ այս սանդղէն իջնելով վարի սենեակները զայիր :

— ՎԵՇԱՓԱԿՈՒ , ՎԵՇԱՓԱԿՈՒ , ի՞նչ կ'ըսէք — զոչեց Լա Վալիէր ահաբեկ :

— Միտքս լաւ չհասկըցար , Լուիդ , վասն զի բերանս բանաւոս բարկո թեան բրդար . նախ , զիտեն որոց են այս սենեակները :

— Անտարակոյս , Կիշ կոմինն են :

— Ո՛չ , բնաւ , Սէնդ-Էնյանինն են :

— Իրամ — զոչեց Լա Վալիէր :

Եւ այս խօսքը նորատի օրիորդին խնդագին սրաէն ելնելով իբրև անուշ դուշակ մը թագաւորին սրտին մէջ փայլակի պէս շողաց :

— Այս , Սէնդ-Էնյանինն են , մեր բարեկամին — ըստ նա :

— Բայց , ՎԵՇԱՓԱԿՈՒ — վրայ բերաւ Լա Վալիէր — չեմ կարող Սէնդ-Էնյանի սենեակն իջնել ինչպէս չէի կարող և Կիշ կոմինը — համարձակեցաւ ըսելու այս հրեշտակը կին դարձած :

— Բայց ինչո՞ւ համար չես կարող , Լուիդ :

— Անկարելի՞ , անկարելի՞ :

— Կ'երեկի ինձ , Լուիդ , որ թագաւորին պահպանութեան ներքեա ամէն բան կարող ես :

— Թագաւորին պահպանութեանն ներքե — ըստ նա սիրալիր ակնարկով մը :

— Ո՛չ , իմ խօսքիս կ'հաւասա , այնպէս չէ :

— Կ'հաւասամ երբ աստ չէք , ՎԵՇԱՓԱԿՈՒ , բայց երբ աստ էք , երբ ինձ կ'խօսիք , երբ ձեղ կ'տեսնեմ , այլ ևս բանի մը չեմ հաւատար :

— Աստուած իմ , բայց ի՞նչ ընել պէտք է որ քեզ ապահով ցընեմ :

— Գիտեմ՝ որ անմարդավարական է այսպէս թագաւորէն կասկածիլ , բայց ինձի հոմար թագաւորը չէք :

— Ո՛չ , փառք Աստուծոյ , այդպէս կ'յուսամ . կ'տեսնես թէ ի՞նչպէս կ'փնտուեմ : Մտիկ ըրէ . եթէ երրորդ մ'ալ սերկայ կըտնուի , միթէ սիրտ կ'համուրատի :

— Սէնդ-Էնյանի ներկայութիւնը , շատ լաւ :

— Ճշմարիտը , Լուիդ , այդպիսի կասկածներով սիրաս կ'ծակես : Լա Վալիէր բան մը չպատասխանեց , միայն թագաւորին նայե-

ցաւ այն յատակ տինարկով՝ որ մինչեւ սրաւորու խորը կ'թափանացէ, և ցած ձայնով ըստ:

— Եփսո՞ս, ափսո՞ս, ձեզնէ չե՞ որ կ'կասկածիմ, ձեր վրայ չե՞ն տարածո իր իմ տարակոյներու:

— Արեմն կ'ընդգոնիմ — ըստ. թաղաւորը հառաշելով — և Պ. Սէնդ-Էնդան որ քեզ վասահացնելու բարեբաղդ արտօնութիւնն ունի, միշտ մեր խօսակցութեան ներկայ սկիտի լինի, ահա այս կ'խօսանամք քեզի:

— Իրա՞ն, Վեհափառ:

— Եմ՝ արսաւականի խօսքս կ'տամ: Խսկ դու քու կողմէդ . . . :

— Սպասեցէք, ո՞չ, չեռ ըսելիք ո՞նիմ:

— Գեր ըսելիք ո՞նիս, Առիզ:

— Ո՛չ, անշուշտ, շուտով մի ձանձրանաք, Վեհափառ, վասն զի գեռ չըմիցո ցինիք:

— Օ՞ն, խօսէ և նոր! ն իմ սիրստ ձակէ:

— Քաջ կ'զդաք, Վեհափառ, որ այս խօսակցութիւնները սկէտք է որ զէթ բանաւոր շարժաւիթ մ'ունենան:

— Բանաւոր շարժաւիթ — վրայ բերաւ թաղաւորն անուշ յանդիմանութեան մը ձայնով:

— Անշուշտ, Վեհափառ, մասձեցէք:

— Ո՛չ, ամեն փափակի մասձմանին ո՞նիս, և հաւտան ինձ, իմ միակ փափաքս է քեզ այս մասին հաւասարիլ: Լաւ ուրեմն ։ Առ իզ, ի՞շչիս որ կ'ուզիս այնպէս պ տի ընեմ: Մեր խօսակցութիւնները բանաւոր պատճառ մը սկիտի ունենան, և արդէն այդ պատճառը դառյա:

— Եյնպէս որ, Վեհափառ . . . — ըստ Լա Վալիէր ժպտելով:

— Եյնպէս որ վաղուանէ, եթէ կ'ուզիս . . . :

— Վաղուանէ:

— Ըսել կ'ուզես թէ շատ ուշ է — դոչեց թաղաւորն իր երակու ձեռացը մէջ Լա Վալի քի հրատապ ձեռքը սեղմելով:

Կոյն պահուն նրբադաւթիւն մէջ ոսքի ձայներ լսուեցան:

— Վեհափառ, Վեհափառ — դոչեց Լա Վալիէր — մէկը կը

մօտենայ, մէկը կ'զայ, կ'լսէր, Վեհափառ, կ'պաղատիմ, խոյս տուելք:

Թաղաւորը միայն ոստում մ'ըրաւ աթուէն և սրահակին ետեն անցաւ:

Ասենն էր, Ճիշտ այն միջոցին որ թաղաւորն իր վրայ կ'քաշէր փեղիերէն մին, դրան նիզը դարձաւ և Մօնղալէ սեմին վրայ երեցաւ:

Աւելորդ է ըսել որ Մօնղալէ բոլորովին բնական կերպով ներս մտաւ, առանց քաղաքավարական ձեեր ընելու:

Այն սմեղուկ Մօնղալէ քաջ զիսէր որ խոհեմութեամբ դրան զարնել փոխանակ հրելու, անվայել անվասահոթիւն մը յայտնել էր:

Աւստի՞ ներս մտաւ, արագ ակնարիլ մը նետելէն ետե՞ որով իսրալու մօտ երկու աթու աեւսաւ, այնչափ ատեն անցուց դուռը դոցելու համար, որ կ'ըմբռասմուր չղիտցուիր ինչպէս, որ թաղաւորը ժամանակ ունեցաւ կափուլը բառնալու և Անդ-Էնյանի սենեակին ի ջնելու:

Շշուկ մ'որ Մօնղալէի ականջին պէս սուր ականջի միայն լսելի էր, իրեն խմացոց իշխանին աներենյթանալը, այն ատեն ըմբռասմուր դուռը դոցելու յաջողեցաւ, և Լա Վալիէրի մօտեցաւ:

— Խօսակցինք, Լոիզ — ըստ անոր — ծանրօրէն խօսակցինք, յուսամք որ չես մերմեր:

Լոիզ՝ որ բոլորովին այլայլած էր, առանց ներքին սարսափի այս ծանրօրէն բառը չլսեց, զոր Մօնղալէ կամաւ ուժգին արտասաներ էր:

— Աստուած իմ, սիրելի Օր — միմնաց նա — զարձեալ ինչ կայ:

— Սա կայ, սիրելի բարեկամուհիս, որ իշխանուհին ամեն քանի վրայ կասկածներ ունի:

— Ի՞նչ բանի վրայ:

— Միթէ պէտք ունի՞ր բացարելու ըստած, և միթէ չե՞ն հասկանար միաքս: Ճիշտ ըսէ, անտարակցյա նիշանուհին յոյն յեղյեղուկ ընթացքը քանի մ'օրէ 'ի վեր, անշուշտ տեսար թէ:

ինչպէս իր քովի առաւ քեզ, յետոյ ձամբեց, վերջը նորէն քովէ
կոչեց :

— Իրաւի, այդ տարօրինակ բան մ'է, բայց իր այլանդակու-
թեանց վարժած եմ:

— Դեռ շլմիցոցի : Այս ևս գիտած ես որ իշխանուհին, քեզ
շրջադաշտ թեան շառնլու որաշելէն ետեւ երէկ հրաման վրկեց
քեզի որ այս շրջադաշտ թեան ներկայ դանուիս :

— Կ'հարցնես թէ գիտեցի՛, անտարակոյս դիտեցի :

— Լաւ, կ'երեւի թէ իշխանուհին այժմ բաւական աեղեկու-
թիւններ ունի, վամն զի խոռվը շիտակ բայցաւ, Գրանայի մէջ
ամէն խոչնդառը տապալուղ այն հեղեղին գէմ բան մը զնել չկա-
րենալուն . զիտես թէ հեղեղ ըսելով ինչ կ'իմանամ :

Լա Վալիեր իր գէմքը ձեռացը մէջ ստահեց :

— Ըսել կ'ուղեմ — շարայարեց Ֆօնդալէ անդթարար — թէ
այն հեղեղն որ Շայօի Կարմելեան վանուց դուները խորտակեց և
արքունեաց ամէն նախապաշարումները ջնջեց թէ՝ ի Գօնդէնպլօ-
և թէ՝ ի Բարիդ :

— Ափսոս, ափսոս — մրմուաց Լա Վալիեր միշտ իր ձեռօքն
երեսը վարագուրած, որոց մէջ իր արտառոքը կ'զլորէին :

— Ո՛չ, այդպէս մի՛ վշտանար քանի որ զեռ աղէակցի կէսը
քաշեցիր :

— Աստուած իմ — դուեց նորատի օրիորդն անձկութեամբ —
նորէն ինչ պատահեցաւ :

— Լաւ ուրեմն, աւասիկ իրողութիւնը : Խշխանուհին Գրանայի
մէջ օժանդակ չդտնելով, վամն զի նա երկու թագուհիները, իշ-
խանն և բոլոր արքունիքը զործածեց, իշխանուհին յիշեց անձ մը
որ քու վրայ հին իրաւոնքներ ունի :

Լա Վալիեր մոմէ արձանի պէս ձերմկցաւ :

— Այս անձը Բարիդ չդտնուիր այս ստահուս — շարունակեց
Ֆօնդալէ :

— Ո՛չ, Աստուած իմ — մրմուաց Լուիզ :

— Եթէ չեմ սիստիր այդ անձը Լոնտոն կ'զմնուի :

— Այս, այս — հառաչեց Լա Վալիեր կէս մը խորտակեալ :

— Միթէ Շարլ Բին արքունիքը չքնակիր այդ անձը : Խօսէ :

— Լաւ ուրեմն, այս իրկուն զիր մը զնաց իշխանուհին սե-
նեկէն Անկլիա զրկուելու Սէնդ-Ճէմսի համար, Հրաման տալու
սպատպամառին որ աւանց գաղար առնլու մինչեւ Համբթօն-Քըլուտ,
որ ըստ երեսյթին, արքայական տուն մ'է Լոնտոնին տամն երկու-
միլն հեռու :

— Այս, Ետքը :

— Արդ որովհետեւ կանոնաւորապէս տան հինգ օրն անդամ
մը կ'զրէ իշխանուհին 'ի Լոնտոն, որովհետեւ ծանրակշիռ զայ-
թակղութիւն մը մտածեցի որ միայն կարդէ գուրս պարագայէ միեւալ
զրիչը ձեռքն առած պիտի լինի : Խշխանուհին զրելու մասին զան-
գաղ է, ինչպէս որ զիտես :

— Ո՛չ, այս :

— Ուստի այս նամակը զրուած պիտի լինի, նախազգացում մը
կ'աղդարարէ ինձ այս բանս քեզի համար :

— Ինձի՞ համար — կրինեց հեք օրիորդը անդգայի մը հլու-
թեամբ :

— Եւ ես այն զիրը՝ իշխանուհին զրասենեակին մէջ տեսայ
դեռ ևս չկնքուած, և կարծեցի կարդալ . . . :

— Կարծեցիր կարգալ :

— Կարելի է սխալեցայ :

— Ինչպէս . . . խօսէ նայինք :

— Պրաժլօն անուն :

Լա Վալիեր դուրս ելաւ, ամենադառն յուզման ենթարկուելով :

— Ֆօնդալէ — ըստ նա հեծկլտանօք ձայնելով — արդէն եւ-
րիասարդութեան և անմեղութեան բոլոր զեղածիծաղ երազներս
զային : Այլ ևս քեզնէ պահելու բան մը չունիմ, ո՛չ քեզի և

ու մօրդ : Կեանքս բաց է, և զրքի մէջ կ'բացուի զար ամէն մար-
զիկ կրնան կարգալ, թագաւորէն սկսեալ մինչեւ յետին Համբոր-
դը : Օ՛ր, սիրելիդ իմ Օր, սիրելիդ իմ, ինչ ընենք, ինչպէս
վերագառնանք :

Ֆօնդալէ մօտեցաւ :

164

ՊՐԱԺԼՈՆ ԴԵՐԿՈՄԸ

- Ճշմարիտը, լսու մը խորհրդածէ առանձին — ըստու նա :
 — Լաւ, ես Պ. Պրաժլօնը չեմ սիրեր . երբ կ'ըսեմ թէ չեմ սիր, ըստու միտ առ, կ'սիրեմ զանի ինչպէս որ փափկասիրտքոյր մը կրնայ սիրել եղայր մը . բայց նա այս չպահանջեր իունէ, ես այս չխոստացայ իրեն :
- Աերջապէս, թաղաւորը կ'սիրես — ըստու Վօնդալէ — և այս բաւական լսու պատճառ մ'է :
- Այո՛, կ'սիրեմ թաղաւորը — մըմաց նորատի օրիորդը մեղմիկ — և այս խօսքն արտասանելու իրաւունքն ինձ շատ սուղի նստաւ : Լաւ ուրեմն, խօսէ՛, Վօնդալէ՛, ի՞նչ կարող ես ընել ինձի համար կամ ինձի գէմ այս իմ դանուած կացութեանս մէջ :
- Ինձի առելի բացայացտ խօսէ՛ :
- Ի՞նչ ըսեմ քեզի :
- Այսպէս, ուրիշ մասնաւոր բան մը չունի՞ս ըսելու :
- Ո՛չ — ըստու Լուիզ զարմանոօք :
- Լաւ ուրեմն, ինձի պարզապէս խորհուրդ մը կ'հարցնես :
- Այո՛ :
- Ռատուլի նկատմամբ :
- Ռւրիշ բան չեմ ուզեր :
- Չատ փափուկ կ'վարտիս — պասասնխանեց Վօնդալէ :
- Ո՛չ, փափուկ բան մը չկայ ասոր մէջ : Պէտք է անոր հետ կարդում որպէս զի ըրած խոստումն բռնեմ, կամ պէտք է շարունակեմ թաղաւորին ականջ կախել :
- Գիտե՞ս արդեօք որ զիս գծուարին կացութեան մը մէջ կը դնես — ըստու Վօնդալէ ժայռելով — կ'հարցնես եթէ սրաբա է Ռատուլի հետ տմուսնանալ, որու բարեկամուչին եմ, և որու մահաբեր ահաճութիւն մը պիտի պատճառեմ եթէ հակառակ կարծիք մը յայտնեմ : Յետոյ կ'հարցնես թէ թաղաւորին խօսքին հետեւ մէջ ոչ, թաղաւորը, որու ես հպատակուչին եմ, և զոր պիտի վիրաւորեմ եթէ ուրիշ կերպով խօսիմ քեզի : Ա՛չ, Լուիզ, Լուիզ, շատ թեթևութեամբ կ'խորհիս այս իմ գծուարին վիճակիս վրայ :
- Ըստու չհամելցար, Օր — ըստու Լա Վալեէր, վիրաւու

քուելով Վօնդալէի բանեցուցած թեթև ինչ հեղնական կերպէն — երբ կ'ըսեմ թէ Պրաժլօնի հետ կարդուիմ, պատճառն այն է որ կարող եմ ըսել այս բանս առանց անոր տհաճութիւն մը տաւ լու, բայց, մի և նոյն պատճառաւ, եթէ թաղաւորին հետեւիմ, պէտք է խիստ միջակ ստացուածքի մը յափշտակիչ ընել զանի, ստացուածքի մ'որու տեսակ մ'արժեք կ'ընծայէ սէրը : Աւստի իմ հարցմունքս սա է . կ'ուզեմ որ ինձ միջոց մը ցոյցնես որ պատուալ աղատիմ թէ այս և թէ այն կողմէն, կամ լսու ևս կը հարցնեմ քեզի թէ սը կողմէն կարող եմ աւելի պատւով աղատիլ :

— Սիրելիդ իմ Լուիզ — պատասխանեց Վօնդալէ լուութենէ մ'ետք — ես Յունաստանի եօթն իմաստաններէն մին չեմ, և ես ալ բոլորովին անփոփոխ կանոններ չունիմ բունաւելիք վարմունքի մասին, բայց՝ ասոր փոխարէն, քիչ մը փորձառութիւն ունիմ, և կրնամ ըսել թէ երբէք կին մը քու ըրած հարցմանդ պէս հարցում մը չըներ առանց զլիսովին շփոթած լինելու : Արդ՝ գուհանդիսաւոր խօստում ըրիր, գու պատիւ ունիս, արդ՝ եթէ գուշփոթած ես, այսպիսի խօստում մը տալէն ետեւ օտար աղջկան մը խորհուրդը չէ, սիրով լեցուն սրտի մը համար բոլորովին օտար, իմ խորհուրդս չէ որ, կ'ըսեմ, շփոթութիւնդ պիտի փարատէ : Հետեւապէս ես քեզի խորհուրդ չպիտի տամ բնաւ, նա մանաւանդ անոր համար որ եթէ ես տեղդ լինէի խորհուրդն առանցէն ետեւ առելի շփոթած պիտի մնայի քան թէ առաջ : Այսչափ միտին կրնամ ըսել և կրինել արդէն ըստօս . կ'ուզեմ որ քեզի օդնեմ :

— Ո՛չ, այո՛ :

— Լաւ ուրեմն, այս բառ է . . . : Ըսէ ինձ թէ ի՞նչ բանի մէջ կ'ուզեմ որ քեզի օդնեմ, ըսէ ինձ թէ որու համար և որու զէմ : Այս կերպով առելի աղատ կ'մնանք :

— Բայց նախ գու — ըստու Լա Վալեէր իր ընկերուհոյն ձեռքը սեղմելով — որու համար և որու զէմ կ'ելնես :

— Քեզի համար, եթէ Ճշմարտապէս իմ բարեկամն ես . . . :

— Միթէ իշխանուհոյն խորհրդակիցը չես :

— Այս ալ պատճառ մ'է որ քեզի օդտակար լինիմ. եթէ այս կողմէն բան մը չդիմնայի, չպիտի կարենայի քեզի օդնել, և հետևապէս իմ զիտութենէս օդուտ մը չպիտի քաղէիր: Բարեկամական յարաբերութիւններն այսպիսի փոխագարձ օդուտներով կը մնանին:

— Եսկից կ'հետեւ որ դու միանդամցին իշխանուհոյն բարեկամուհին պիտի մնաս:

— Անշուշտ: Միթէ կ'պանդատիս:

— Ո՞չ — ըստ Լա Վալիեր մամտալով, վասն զի ոյս լսկիշ համարձակութիւնը կնկան մ'եղած թշնամնիք և բարեկամուհոյ մ'անիրաւութիւն կ'երեւէր իրեն:

— Քաջ է — ըստ Մօնղալէ — վասն զի, եթէ ուրիշ կերպ մտածէիր յիմարի տեղ պիտի գնէի քեզի:

— Ուրեմն, ինձ պիտի ծառայես:

— Անձուիրութեամբ, մանաւանդ եթէ նոյն կերպով դու ալ ինձի ծառայես:

— Կարծես թէ իմ սիրոս չես ճանչեր — ըստ Լա Վալիեր Մօնղալէի նայելով զարմանօք և աչերը խոշոր բանալով:

— Երաւ որ, քանի արքունիքն ենք, սիրելիդ իմ Լուիդ, շատ փոխուած ենք:

— Ի՞նչպէս փոխուած:

— Չատ պարզ բան է. միթէ ՚ի ուղու Գրանսայի երկորդ թագուհին էիր:

Լա Վալիեր դլուխը ծոեց և սկսաւ լու:

Մօնղալէ անոր նայեցաւ անրացատրելի կերպով մը և սա խօսքը մըմնաց.

— Խե՞զ աղջիկ:

Յետոյ խօսքը գարձնելով,

— Խե՞զ թագաւոր — ըստ նս:

Լուիդին ճակտէն պատաւ և իր սենեակը քաշուեցաւ, որ իւրեն կ'սպասէր Մալիքօն:

ԻԱ

ՊՐԱՏԱԿԵՐ

Սէր ըստած Հիւանդութեան մէջ խանդը հետղէետէ կ'ըորբոքէ ողագոյն ժամանակի մէջ երբ հիւանդութիւնը կ'սկսի:

Աերջէն բորբոքումներն իրարմէ կ'հեռանան քանի որ բոյժը կ'սկսի:

Այս ըստէն ետեւ իրբե ընդհանուր առած և իրբե մասնառ զլուխ բանի, մեր պատմութիւնը շարունակինք:

Հետեւեալ օրը՝ Սէնդ-Էնյանի սենեակն առաջին տեսակցութիւնն ընելու համար թագաւորն որոշած լինելով, Լա Վալիեր, իր սրահակը բանալով՝ թագաւորին ձեռօք զրուած տոմսակ մը դտաւ տախտակամածին վրայ:

Այս տոմսակը ստորին դտիկոնէն վերի դտիկոնն անցեր էր տախտակամածին Ճեղքուածքէն: Ո՞չ անխոչեմ ձեռք մը, ոչ հետաքրիբ նայուածք մը չէր կարող ելնել այն տեղ ուր ելած էր այս թուղթը:

Այս Մալիքօնի մէկ հնարքն էր: Դիտելով որ Սէնդ-Էնյան որչափ օդտակար պիտի լինէր թագաւորին իր բնակարանին պատճառաւ, չուղեր էր որ պալատականն իրբե բանրեր անհրաժեշտ լինի, և իր յատուկ հերինակութեամբը՝ այս վերջին պաշտօնն իրեն վերապահէր էր:

Լա Վալիեր յետին հետաքրիբութեամբ կարդաց այս նամակը, որ իւսորէն երկու ժամ ետքը ժամանդրութեան միջոցը կ'յայտնէր և իրեն կ'ցուցնէր թէ ինչպէս պիտի բանար կափուլը:

— Կնքղինքդ զեղեցիկ ըրէ — կ'յարէր նամակին յետ գրութիւնը:

Այս վերջին խօսքը զարմացուց նորատի օրիորդը, և միանդամյն ապահովուցուց:

Ժամը ծանր ծանր կ'յառաջանար: Բայց վերջապէս հասաւ: Լուիդ Ճերո քրոմուհոյն պէս ժամապահ՝ ժամն երկու զարնեւ:

լուն կափուլը վերցաց , և թաղաւորն առաջին աստիճաններուն վրայ դաւա , թաղաւորն որ յարգանօք իրեն կ'սպասէր որպէս զի ձեռքը տայ :

Այս փափուկ ակնածութիւնն իր սիրաց սասահիկ յուղեց :

Սանդղին ստորոտը՝ երկու սիրահարները կոմը դասման՝ որ ընտիր ճաշակի տէր մարդու մը ժափտալ և խոնարհութեամբ Լա Վալիերի իր չնորհակալիքը յայսնեց ընդունած սրատոյն համար :

Յետոյ թաղաւորին կողմը դառնալով ,

— Աեհափառ տէր — ըստ — մեր մարդը հասաւ :

Լա Վալիեր մայոյզ թաղաւորին նայեցաւ :

— Օրիորդ — ըստ թաղաւորը — եթէ քեզ աղաւեցի որ վար իջնելու սրատին ընես ինձ , մի միայն շահախնդրութենէ էր : Ընտիր սրատիերշան մը բերել առաի որ յար և նման կենդանադիրներ կ'յօրինէ , և կ'փափաքիմ որ հրաման տայիր անոր սրատիերդ նկարելու : Ասիէ զատ՝ եթէ կ'հաճիս անսրատժառ , սրատիերը իրնաս քովդ պահել :

Լա Վալիեր կարմրեցաւ :

— Անսյիս — ըստ անոր թաղաւորը — միայն երեք հոգի պիտի չլինէ ինք , այլ աւասիկ չորս հոգի ենք : Ա՛հ , Սատուած իմ , քանի որ առանձին չափակի մնանք , որչափ հոգի որ կ'աւղու կրնան գտնուիլ :

Լա Վալիեր մեղմի սեղմեց իր արքայական սիրողին մատերուն ծայրը :

— Ֆօտակայ սենեակը , եթէ կ'հաճիք , Աեհափառ տէր — ըստ Սէնդ-Էնյան :

Դուռը բայցաւ և իր հիւրերը ներս մացաց :

Թաղաւորը Լա Վալիերի ետևէն կ'երթար , և դաղստակրի պէս սպիտակի վիզն աչօքը կ'կլէր , որու վրայ կ'ծածանէին օրիորդին արծաթափայլ մազերուն խիտ հիւսակները :

Լա Վալիեր հագեր էր մետաքսեայ թանձր կերպաս մ'որ մարտ զարտի զոյն ունէր վարդասառ , սե սաթէ զարդ մը իր կաշին սպիտակութիւնն աւելի երեան կ'հաճէր . իր նուրբ և թափանցիկ ձեռները , Պէնիալայի վարդէ և կէմարդիկի նրբաձեւ տես-

րններով վունջ մը կ'սեղմէին , որոց վրայ կ'բարձրանար իբրեւ բաժակ մ'անուշահոսութիւններ ընդունելու համար Հարլէմի կակաչ մը՝ մոխրագոյն և մանիշակագոյն երանդօք , յստակ և հրաշլի տեսակէն , որու համար պարտիզանը հինգ տարի բոլոր ճարտարակութիւնը թափեր էր և թաղաւորին ալ հինգ հազար ֆրանքի նստեր էր :

Թաղաւորն այս վունջը Լա Վալիերի ձեռքը տուեր էր զանի բարեկելով :

Այս սենեկին մէջ որու դուռն այն ինչ բայցեր էր Սէնդ-Էնյան , երիտասարդ մը կ'գտնուեր թեթե մնդուսէ զգեստ մը հազար , աղոյր սե աչերով և երկայն թուխ մազերով :

Այս էր պատկերհանը :

Իր կտաւը պատրաստ էր , իր զոյները պիտի վրայ շիներ էր :

Օրիորդ Լա Վալիերի առջեւ ծուեցաւ արհեստագիտի մը ծանր հետարբերութեամբ մ'որ իր օրինակը կ'քննէ , խոհեմարար թագաւորը բարեց , որպէս թէ չէր ճանչըր , և որպէս թէ ուրիշ աղմաւական մը կ'բարեւէր :

Յետոյ օրիորդ Լա Վալիերի համար պատրաստուած աթոռը տանելով զննորը հրախիրեց որ նստի :

Կորաաի օրիորդը չնորհալի և թոյլ դիբք մ'առաւ , ձեռքը զբաղած , ուրքը բարձերու վրայ դրած , և որպէս զի իր աչունքն անորոշ կամ կեղծ բան մը չունենան , սրատկերհանն աղաւեց որ զբաղմոնք մ'ընտրէ :

Այն առևն Լուի ժայռելով եկաւ բարձերուն վրայ՝ իր սիրուհոյն ուտից մօտ նստու :

Այսպէս որ Լա Վալիեր՝ ետեր ծուած , կոնակը թեաթուին տուած , ձեռքը ծաղկիները բանած կ'երևէր , մինչդեռ թագաւորն աշխին անոր վրայ դարձուցած և զանի ակնարկովը կլւելով՝ սրանչելի խումբ մը կ'կաղմէին , զոր ուստիկերհանը շատ մը վայրիեաններ զոհունակութեամբ նկատեց , և միւս կողմէն ալ Սէնդ-Էնյան նստանձու աչօք կ'նսայէր անսնց վրայ :

Պատկերհանն արալօրէն ուրուազրեց , յետոյ՝ իր վրձինին առաջին զծերուն ներքե կտաւին երեսին վրայ երեան եկաւ այն

մեղկ և բանաստեղծական դէմքն սնուշ աչերով, վարդադոյն այս տերով, զօրս կ'րոլորէին արծաթագոյն մազերը :

Սակայն երկու սիրահարները քիչ կ'խօսէին և իրարու շատ կը նայէին, մերթ ընդ մերթ իրենց աշունքն այնպէս կ'մեղկանային որ պատկերհանը կ'տոխողուէր իր զործն ընդմիջել որպէս զի հարիկենէ մը չներկայացնէ Լա Վալիերի մը տեղ :

Ահա այս տասն ԱԷնդ-Էնյան օդնութեան կ'զար, ոտանաւոր ներ կ'կարգար կամ այն փոքր պատմութիւններէն կ'ըսէր զոր Բադրիւ այնպէս լաւ կ'պատմէր և Թալման այնպէս լաւ կ'զրէր :

Կամ երբ Լա Վալիեր յոդնէր կ'հանդչէին :

Անմիջապէս չինական յախճառակէ ափսէ մը, որու մէջ ամենը լիսիր միրզեր կային, իսկոյն քաշը սի դինին՝ կ'հօսէր արծաթեայ բաժակներու մէջ, և այս պատկերին իբրև երկրորդական իբրև կ'ծառայէին, որոց վաղանցուկ և թեթե նկարը միայն պիտի դժաղրէր պատկերհանը :

Լուի սիրով կ'արքենար, Լա Վալիեր՝ երջանկութեամբ, ԱԷնդ-Էնյան փառասիրութեամբ :

Պատկերհանն իր ծերութեան համար յիշատակներ կ'յօրինէր :

Այսպէս երկու ժամ անցաւ, ուստի չորս ժամ զարդելուն՝ Լա Վալիեր ոտք ելաւ, և թագաւորին նշան մ'ըրաւ :

Լուի ևս ելաւ, պատկերին մօտեցաւ, և արհեստադիտին քանի մը զգուելի զովեսներ ուղղեց :

ԱԷնդ-Էնյան նմանութիւնը կ'զովէր՝ որ արդէն ակն յայտնի կ'երեէր, ինչպէս որ նա կ'պնդէր :

Լա Վալիեր ևս պատկերհանին շնորհակալ եղաւ կարմրելով, և մօտաւոր սենեակը մտաւ, ետքէն զնաց թագաւորը ԱԷնդ-Էնյանը կոչելէն ետք :

— Վաղը պիտի տեսնուինք նորէն, այնպէս չը՝ — ըստ Լա Վալիերի :

— Բայց, Վեհափառ, մոածեցէր որ անտարակոյս սենեակս պիտի մտնեն և զիս այն տեղ չպիտի դանեն :

— Ի՞նչ կայ :

— Այս տասն լինչ պիտի լինիմ :

— Շատ երկչու ես, Լուիդ :

— Բայց վերջապէս եթէ իշխանուհին զիս կանչել տայ :

— Ո՛չ — պատասխանեց թագաւորը — արդեօք պիտի չդայ օր մ'երբ գու ինձ պիտի ըսես թէ ամէն բանի դիմաղը աւեմ իշխարմէ ըրաժնուելու համար :

— Այս օրը, Վեհափառ, խենդացած պիտի լինիմ և դուք պէտք չէ որ ինձ հաւատք :

— Վաղը տեսնուինք, Լուիդ :

Լա Վալիեր հառաջ մը հանեց, յետոյ թագաւորին ինդրոյն դիմադրելու անկարող :

— Քանի որ կ'ողահանչէք, Վեհափառ — կրկնեց նա — վաղը տեսնուինք :

Եւ այս ըսելով թեթեակի վեր ելաւ սանդուղներէն և իր սիրովին աչքէն անհետ եղաւ :

— Լաւ որքին, Վեհափառ — հարցոց ԱԷնդ-Էնյան երբ օրիորդը մեխեցաւ :

— Լաւ, ԱԷնդ-Էնյան, երէկ ինքզինքս մարդոց մէջ ամենէն երջանիկը կ'կարծէի :

— Եւ արդեօք Զեր Վեհափառութիւնն այսօր դիպուածով ամենէն ապերջանիկը կ'կարծէ — ըստ կոմսը ժպտելով :

— Ո՛չ, բայց սցո սէքն անշիջանելի ծարաւ մ'է, ի զուր կ'ըմբեկի, ի զուր կ'ըմփեկի քու ձարաւորութեամբդ զտած կաթելներս, որչափ ըմպեկի այնչափ կ'պասկալիմ :

— Վեհափառ, փոքր ինչ յանցանքը ձերն է, և դուք ձեզէն ըրեք այդ ձեր կացութիւնն ինչ որ է :

— Իրաւոնիք ունիս :

— Աւքեմն, այսպիսի պարագայի մէջ, Վեհափառ, երջանիկ լինելու միջացն է ինքզինքտ դոհ զզալ և սպասել :

— Սպասել: Աւքեմն զու, զու այդ բառը դիտես, սպասել:

— Լաւ, լաւ, Վեհափառ, այդ չափ մի յուսահամփիք, արդէն հնարք փնտուեցի, նորին պիտի դիմառեմ :

Թագաւորը յուսահամփան դէմքով մը զլուխը ցնցեց :

— Է՛չ, Վեհափառ, արդեօք արդէն դոհ չէք :

— Ե՛ս, զո՞ւ իմ, սիրելի իմ ԱԷՆԴ-Էնյան, բայց դաիր,
Աստուած իմ, ուրիշ միջոց դաիր :

— Վեհափառ, խօսք կ'առամ գինառելու, աչա այս միայն կը բա-
նամ ընկել :

Յաղաւորը վերստին պատկերն ուզեց տեսնել, բնադիրը տես-
նել չկարենալով :

Քանի մը փոփոխութիւններ ցցց տուաւ պատկերհանին և դուրս
ելու :

ԱԷՆԴ-Էնյան անոր ետեւն պատկերհանը ճամբեց :

Մոյթ, դոյներ և պատկերհան դեռ ևս չդացած էին երբ Մա-
լիքօրն վարագոյներուն մէջէն իր զլուխը ցցոց :

ԱԷՆԴ-Էնյան բազկատարած լինդոնեց զանի, և սակայն կերպ
մը տրամութեամբ : Արքայական արևոտն վրայէն անցած ամսպէ
ըստ կարգի սրօղեր էր հաւատարիմ արքանեակը :

Մալիքօրն առաջին նայուածքով աեսաւ, ԱԷՆԴ-Էնյանի դեմ
քին վրայ ձգուած այս ուե քողը :

— Ո՛չ, կոմն — ըստ նա — ինչո՞ւ այդպէս սուզի մէջ ես :

— Ստուգիւ, պատճառ ունիմ լինելու, սիրելի իմ Պ. Մա-
լիքօրն, կ'հաւատան որ թաղաւորը զո՞ւ չէ :

— Իր սանդղըն զո՞ւ չէ :

— Ո՛չ, ո՛չ, ընդ հակառակն, սանդուղն իրեն շատ հաճելի
եկաւ :

— Ռւրեմն սենեկին դարդարանքն իր ճաշակին յարմար զտած
պիտի չլինի :

— Ո՛չ, այդ մասին խօսք մ'անդամ չըրաւ, ո՛չ. թաղաւորին
անհաճոյ թուածը . . . :

— Ես հիմակ պիտի ըսեմ քեզի, կոմն, այս է թէ սիրային
ժամադրութեան մ'ինք չորրորդը կ'զանուէր : Ի՞նչպէս, կոմն, այս
բանս գու, գու չկրցար գուշակել :

— Բայց ի՞նչու կարող էի զուշակել, սիրելի իմ Մալիքօրն,
քանի որ թաղաւորին հրահանդաց համեմատ կ'շարժէի :

— Իրան, միթէ թաղաւորը պահանջեց որ գու իր քովը մնաս
մինչեւ վերջը :

— Այս :

— Գարձեալ թաղաւորն ուզեց պատկերհանն որու հանդիպե-
ցայ վարը :

— Պահանջեց, Պ. Մալիքօրն, պահանջեց :

— Այս ասեն կ'համկընամ, թշուառական, թէ և Նորին Վե-
հափառութիւնը դժուհ եղեր է :

— Իր հրամանները կէտ առ կէտ կատարուելուն համար դժուհ:
Ես ալ քու ըսածդ չեմ հասկընար :

Մալիքօրն իր ականջը քերեց :

— Ժամը քանիին թաղաւորը զալու որոշեց սենեակդ — Հար-
ցոց Մալիքօրն :

— Ժամն երկուքին :

— Եւ միթէ սենեակդ կեցար թաղաւորին սպասելու :

— Ժամը մէկ ու կէսէն 'ի վեր :

— Ա՛չ, իրան :

— Կրող, որչափ անվայել սիրուի լինէր թաղաւորին առջե-
ճամապահ չցանուիլը :

Թէ և Մալիքօրն ԱԷՆԴ-Էնյանի համար յարդանք ունէր, սա-
կայն չկրցար համբերել և ուսերը բարձրացուց :

— Եւ միթէ թաղաւորն ուզեր էր որ այն պատկերհանը ժամն
երկուքին զայ :

— Ո՛չ, բայց ես, կէսօրէն 'ի վեր զանի այս տեղ պահեր էի,
Լաւ ես է, քաջ կ'իմանաս, որ պատկերհան մ'երկու ժամ՝ սպա-
սէ քան թէ թաղաւորը մէկ վայրիկեան :

Մալիքօրն սկսաւ լոիկ ծիծաղիլ :

— Կայինք, սիրելի Պ. Մալիքօրն — ըստ ԱԷՆԴ-Էնյան —
իմ վրաս նուալ ծիծաղէ և աւելի խօսէ :

— Աիթէ այդպէս կ'ողահանջես :

— Կ'պաղատիմ :

— Լաւ, ուրեմն, կոմն, եթէ կ'ուզես որ թաղաւորն ուրիշ ան-
դամ որ պիտի զայ աւելի զո՞ւ լինի . . .

— Վաղը պիտի զայ :

— Լաւ, միթէ կ'ուզես որ թաղաւորը փոքր ինչ աւելի զո՞ւ
լինի վաղը . . . :

— Կրոն, կ'հարցնե՞ս որ կ'ուզեմ, անտարակոյս կ'ուզեմ։
 — Լաւ ուրեմն, վաղը՝ թաղաւորը դալու միջոցին՝ դու զուրուը զործի ելիք, այնպիսի զործի մը զոր չես կրնար ուրիշ օրուան ձգել, անհրաժեշտ զործի համար։
 — Հօ, հօ։
 — Քսան վայրկենի չափ։
 — Քսան վայրկեան թաղաւորը մինալ թողում — զուեց Սէնդ-Էնյան ահարեկ։
 — Օ՞ն, բանե թէ բան մը չըսի — վրայ բերաւ Մալիքօրն դէպ, ի զուռն ուզլուելով։
 — Ա՛չ, սէ, սիրելի ու. Մալիքօրն, ընդ հակառակն, լմնցոր խօսք, հիմակ կ'սկսիմ հասկընալ։ Հասրա սպատիերհաճնը, սպատիերհաճնը։
 — Ա՛չ, սպատիերհաճնը սկսոք է որ կէս ժամու չափ ուշանայ։
 — Աէս ժամու չափ, այդպէս կ'կարծես։
 — Եյս, այդպէս։
 — Սիրելիք իմ պարան, բաածդ սիրակ ընեմ։
 — Եւ կարծեմ թէ ասով զոհ սկսի լինիս. կ'ներես ինձ որ վաղը գամ տեղեկութիւն առնում։
 — Անտարակիյս։
 — Պատիւ ունիմ ակնածու ծառակ լինելու, ու. Սէնդ-Էնյան եւ Մալիքօրն ետ ետ զնալով զորս ելաւ։
 — Ճշմարիսն այս երիտասարդը քան զիս առելի խելանի է — ըստ Սէնդ-Էնյան իր համազումն մզուելով։

ԻԲ

ՀԱՄԲԴՈՆ-ՔԸՐԴԻ

Խնչպէս որ մեր նախորդ մէկ զլսուն մէջ տեսանք՝ Մօնղալէի բրած յայտնութիւնը Լա Ալեկերի՝ բնականապէս մզ կ'բերէ

մեր սպատմութեան զլիսաւոր զիսցավնին, այն հեք ասպետին որ թագաւորի մը հանցից համեմատ կ'թափառի։

Եթէ մեր ընթերցողը կ'ուզէ մզ հետեկի՝ իրեն հետ պիտի անցնինք ուրեմն այն նեղոցէն որ քան զեւրիսէ աւելի փոխորկալի է, և Քալէն Տուվրէն կ'զատէ, սփափի անցնինք այն գալարաւուես և բազմաբոյս արտերէն որ հազար առուակներէ կ'ուռողտին և կ'բոլորն Զէրին, Մէտողըն և ուրիշ տասն քաղաքներ իրարմէտելի հանցական և վերջապէս Լոնտօն կ'համախիք։

Ասկից զատ՝ իրեւ սրսական բարակներ որ երին հետոց վրայ կ'քալեն, երբ կ'իմանանք որ նառու ամենն առաջ Վայթ-Ճալ բնակեր է, երկրորդ անգամ՝ ի Սէնդ-Ճէմն, երբ կ'իմանանք որ Մօնդ զանի բնակուներ և Շարլ Բի արքունեաց լաւագայն ընկերութեան մէջ մատ զաեր է, անոր ետեկն կ'վազենք մինչև Շարլ Բի մէկ ամարանոցը, Քինկսալնի քաղլքին մօս, ՚ի Ճամբէն-Քըրդ, որ թէմէ զետապ կ'եզրի։

Նայն վայրե՛ զետը զեռ ևս այն զուռով շաւիով չէ որ ամէն օր կէս միլիօն Ճամբորդ կ'տանի, և իր սե ջրերը կ'ալէ կոծէ Գօսսիսի նման, ըսելով. «Ես ես, ծովի եմ»։

Ա՛չ, դեռ միայն հանդարաւ և գալարուաւ զետակ մ'է, լոռուտ եղիներով, լայն հայլիներով՝ որոց մէջ կ'բեկբեկին ուռիներ և ոսկիներ, չորսած փայտէ նաւակով մ'որ ասղիս անդին եղէզներու մէջ կ'ննջէ, այլ և այլ տանկերով շրջապատեալ խորշի մը մէջ։

Դաշտերուն բոլորատիքը կ'տարածուին հանդարաւ և Ճոխ, աղիւսակերաւ տանն իր ծխնելոյներով՝ ուսկից կասպյատ մաւս մը կ'ել նէ, կանաչ դափնիէ թանձր զրահ մը կ'ծածկէ, տղան կարմիր թիկնոց մը հաղած՝ մեծ խոտերուն մէջ կ'երեկի և կ'անհետի իրեր վայրի կակաչ որ հովին շնչէն կ'ծուի։

Խոշոր սպիտակ ոչխարներ, կարճ բարախներու շուքին ներքէ կ'երեկին աչքերնին դոցած և հեռուանց հեռու՝ ծովային Ճայն որ զմբուխտի և սոկեզոյն կողեր ունի, իբրև մադական զնդակ ջրին երեսը կ'վազէ և իր ընկերակցին, ձկնորսին, զծէն անխոհեմարար քերելով կ'անցնի, ձկնորսն որ՝ իր փոքրիկ նաւակին վրայ հստած՝ ձկները կ'զիտէ։

Այս դրախտին վերելը, որ իր սև ստուերն և լուսաւոր դիմերը կ'յուցնէ, Համբգօն-Քըրդի ապարանը կ'բարձրանայ, զոր Վուսէյ կառոյց, բնակարան մը զոր զուռող կարտինալը նոյն իսկ թաղաւորի մը ցանկալի կերպով շիներ էր, և որ՝ իբրև երկչուտ պալատական՝ ստիպուեցաւ Հանրի Ըի տալու, թաղաւորն որ նախանձէն և ընչափաղցութենէ ունքը պոստեր էր նոր գղեակը տեսնելուն միայն :

Համբգօն-Քըրդ աղլուսէ պատերովը, մեծ պատուհաններովը, երկամեր աղլոր վանդակներովը, իբրև բի բաւոր աշտարակներովը, իր այլանդակի վանդակներովը, իր անձայն ձեմելիքով և իր ներքին աղղիւններով որոնք Ալհամպրայի կ'նմանին . Համբգօն-Քըրդ՝ վարդերու, յասմիկներու օրօրանն է, աչայ և հոստուելեաց հաջոյն է, այս պատկերին ամենէն չքնաղ շրջանակն է, սիրոյ պատկեր զօր Շարլ Բը պարզեց Գիտիէնի, Յօրանսոնի, Վան Տիերի շուայտ նկարներուն մէջ, այն որ իր թամարանին մէջ Շարլ Բին պատկերն ունէր, Շարլ Բ մարտիրոս թաղաւոր մը, և իր փայտակերտներուն վրայ 24 օդոսատո 1648, Քրոմվէլի վիճուրուներոք արձակուած մաքրակրօնեան դնդակներուն ծակերը, այն առենն որ Համբգօն Շարլ Բը զերի բռնուելով իբրև բանտառ որ Համբգօն-Քըրդ բերեր էին :

Աչա այս տեղ թագաւորը՝ խնդութեամբ արբշիու իր արքունի սպառը կ'պահէր, այս թաղաւորն եռանդով բանաստեղծ, այս երբեմնակի գժբաղդը՝ որ մի օրուան հեշտասիրութեամբ անձկութեան և թշուառութեան ամէն վայրիեան լիուլի վայրելելով :

Համբգօն-Քըրդի կակուղդալարին չէր, այնչափ կակուղը որ կարծես թէ թառիչներու վրայ կ'կոխես, այս թանձրախիտ ծաղիկներով զարդարուած քառակուսին չէր, որ ամէն ծառի ստորոտը կը շրջապատէ, և հրային որաներու նման բայ երկնից մէջ բացուող քսան ունաչափ մեծ վարդերու անկողին մը կ'շինէ, մեծ թմբիները չէին որոյ սստերն ուռիներու պէս մինչեւ զետինը կ'ծոյն, և ամէն ուր կամ ամէն անուրջ կ'քօղարկեն իրենց շուքին կամ դիսակին ներքեւ, այս ամէն բաները չէին Շարլ Բին սիրածներն իր Համբգօն-Քըրդի աղլոր պալատին մէջ :

Կարելի է այն ատեն այն աղլոր կարմիր ջուրն էր կասպից ծովուն ջրերուն նման, այն ահազին ծովակը, որ կ'շարժի զով հովէմը, Ալէոսատրայի զիսակին ծփանքին պէս, ջրկոտիմով, սպիտակ և հաստատուն կոճղեր ունեցող նունու ֆալմերով, որ կը բայցին որպէս զի ցոյց տան իբրև ձիւն ոսկեթել ծիլն կաթնաղոյն սպահարանին խորը, այն խորհրդաւոր և մրմռալից ջրերը, որոց վրայ սև կարապներն ու փոքրիկ անկուշու բաղերը, մետաքսէ փետրօք ձարուկներ, որ կանաչ ճանձին ետևէն կ'վագեն լուրջ շուշաններու վրայ և դորտերն իրենց լուռուտ որջերուն մէջ :

Թերեւո ահազին փշալից գտախնիներն էին երկոյն տերեններով, ջրանցքի վրայ ձզուած չքնաղ կամուրջները, անեղը ուղիներու մէջ դռաղ եղիկներ, և հովուիկներն որ կ'շրջաբջէին թուելով տուսախի և առուցյաններու եղերքը :

